Hratch Tchilingirian
Sociology Dept.
London School of Economics
Houghton Street
London WC2A 2AE

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ԱՂՈՒԱՆԻՑ

Ա. ՀԱՏՈՐ

Ի ՄԱԿԱՐ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի
1902

Ի Հայրապետութեան

Տ. Տ. ՄԿՐՏՉԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ի Պատրիարքութեան

ՍՐԲՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՑՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՅԱՐՈՒԹԻՒՆ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Եւ

Ի Պատրիարքութեան

Կ. ՊՈԼՍՈՅ

Տ. ՄԱՂԱՔԻԱ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Առ Ամենապատիւ

Տ. Մելքիսեդեկ Սրբազան Արքեպիսկոպոս

## ՄՈՒՐԱԴԵԱՆՑ

Շատ վաղուց ստացած եմ Ձեր պատուական նամակը, որով հարկադրում էիք զիս գրել «Պատմութիւն Աղուանից»: Ձեր այս պատուէրն շատ եւ շատ բարձր էր իմ կարողութիւնից. իսկ խոյս տալն՝ ծանրագոյն: Այս պատճառաւ խնդրած էի Ձերդ Բարձր Սրբազնութիւնից ժամանակ տալ ինձ, որ նախ անձամբ հետազօտեմ Աղուանից ամբողջ երկիրը, աչքովս տեսնեմ երկրի դիրքը, ձեռքովս շօշափեմ ողջ հնութիւնները, ուշի ուշով ականեմ արձանագրութիւնները, յիշատակարանները, խօսուն եւ անխօս քարերը, կանգուն եւ աւերակ շինութիւնները եւ կոթողները, ծանօթանամ ազգաբնակութեանց եւ լեզուներին եւ ապա գրեմ «Պատմութիւն Աղուանից»:

Արհամարհելով արիւնարբու աւազակաց երկիւղը եւ գիշատիչ գազանների վտանգը, որք անպակաս են Կովկասեան եւ Անդր-Կովկասեան երկիրներում, մանաւանդ անմարդաբնակ եւ մեծ մեծ անտառներում, աւերակ բերդերում, խոր խոր ձորերում եւ մութ մութ քարայրերում, ամբողջ 7 ամիս հետախուզեցի Դաղստանի (Խազրաց եւ Ալանաց երկիր) Դարբանդի, Ղուբայի (Ճղբաց եւ Լփնաց երկիր) Բաքուի, Շամախու, Շաքուայ, Ճառի եւ Բաղասականի գաւառները՝ լեռներով եւ դաշտերով միասին: Հետախուզութեանս արդիւնքն եղաւ «Աղուանից երկիր եւ Դրացիք» գիրքն: Յետոյ միւս 7 ամիս խուզարկեցի Մուղանի, Գար-

զարացւոց եւ Գաւզայ դաշտերը եւ Արցախի բոլոր գաւառները, որի արդիւնքն եղաւ «Արցախ»: Այս երկու տպագրուած գրքերից, որք արժանացած են Իզմիրեան մրցանակին, արդէն իւր ժամանակին մի մի օրինակ փոշտով յղած եմ Ձերդ Բարձր Սրբազնութեան:

Չբաւականեցայ միայն հետազօտութեամբս, այլ եւ զգուշութեամբ ականեցի հարկ համարուած մատենագրութիւնները եւ մի քանի ձեռագիրներ Ս. Էջմիածնի Մատենադարանիս, յորոց եւ քաղեցի պատմական հատուածներ, որք վերաբերում էին Աղուանից երկրին:

Գրաւոր խնդրեցի Արժ. Գարեգին վարդապետ Զարբհանալեանից, որ բարեհաճի կամ արտագրել եւ ինձ յղել եւ կամ մատնանիշ անել թէ ո՛ր թիւ ձեռագրի մէջ է գտնուում Գօշ-Մխիթարից յօրինուած «Տարք Հայրապետացն Աղուանից, որք կացին զկնի տեառն Եղիշայի, որ եկն յԵրուսաղէմ»: Բայց որովհետեւ հիւանդ եղած է Արժ. Զարբհանալեանն, իմ յանձնարարութիւնը կատարած է Արժ. Եսայի վարդապետ Տայեցին: Վերջապէս մեծ շնորհակալութեամբ ընդունեցի խնդրածիս արտագրութիւնը:

Աշխարհագրութեան քարտէզի բնագիրը ձրիաբար գծած է մեր հայրենակից պ. Գեղամ Սարգսեանն:

Այդ ամենը պատրաստելուց յետոյ՝ այժմ ապաւինելով յառաջատուող շնորհս Հոգւոյն Սրբոյ՝ ահա սկսեցի ի մխլամն կատարել Ձեր պատուէրը, որ յաւէտ օգտահար է Հայոց մատենագրութեան. օգտակար է ներկայ եւ ապագայ հայ բանասիրաց, որք կը հետաքրքրուին Աղուանից երկրով եւ նորա անցեալ պատմութեամբ:

Կաղաչեմ, Սրբազան Եղբայր, թէեւ աչքով չնայել գործիս վերայ, քանզի երկար տարիների դառնաքրտին վաստակ է այս եւ դժուարածին երկանց ծնունդ, թէեւ համառօտ:

Կարեւոր համարեցի յայտնել հետեւեալ կէտերը.



Ա. Որովհետեւ «Աղուանից երկ. եւ ժող.» եւ «Արցախ» գրքերում միանգամ նկարագրած եմ Աղուանից երկրի լեռները եւ դաշտերը, հովիտները եւ դաշտակները, գետերը եւ գետակները, ծովը եւ լճակները, մեծ աղբիւրները եւ հանքային ջուրերը: ոսկու եւ արծաթի, պղնձի եւ երկաթի, շիպի եւ պողպատի, երկանաքարի եւ նաւթահանքերի տեղերը, բոլոր ծառերի եւ մացառների, թփերի եւ ծաղիկների տեսակների անունները, սուրբ եւ անսուրբ կենդանեաց եւ գազանաց, թռչնոց եւ զեռնոց, եւն, եւն, տեսակները եւ անունները, վասն որոյ ծերութեանս եւ հիւանդութեանս պատճառաւ անկարող եղայ կրկնել այս տեղ:

Բ. Պատմութիւնս բաժանուած է երկու մասի. Ա. Հատորս սկսուած է Նահապետական օրերից մինչեւ Մէլիքութեան ծագումն. իսկ Բ. Հատորն լինելու է Մէլիքութեան ծնած օրից մինչեւ Աղուանից կաթուղիկոսութեան մահն:

Գ. Հակառակ իմ անխոնջ աշխատանաց անհնարին եղաւ գտնել Աղուանից շատ թագաւորների, կաթուղիկոսների եւ իշխանների գահակալած եւ վախճանած տարեթիւերը եւ ամբողջ գործերը: Այս պատճառաւ որոց տարեթիւերն ճշտիւ գտնուեցան, նոյնութեամբ գրուեցան, որոց տարեթիւը հնարաւոր եղաւ ուղղել, ուղղեցինք. իսկ որոցն անհնարին, նշանակեցինք գտնուածին պէս:

Դ. Համարիմ թէ ինքնաբերաբար նշանակուեցան համառօտակի Հայոց մի քանի թագաւորների գործերն, որպէս զի աւելի լաւ պարզապատուի Հայոց եւ Աղուանից ժողովրդոց, թագաւորների եւ հոգեւորականութեան մէջ եղած սերտ յարաբերութիւններն, ազգակցական, կրօնական եւ քաղաքական ամուր կապերն եւ շահերն:

Ե. Պատմութեանս լուսանցքներում նշանակեցինք 1, 2, 3, եւն թուանշանները Աղուանից կաթուղիկոսաց անունների հանդէպ, կարեւոր համարելով եւ օգտակար թուելով ցոյց տալ նոցա որքանութիւնը:

| ՍԽԱԼ | | | | | ՈՒՂԻՂ |
|---|---|---|---|---|---|
| Վերեւից հաշուելով | | | | | |
| 7 | եր. | 16 | տող | աշխատանած | աշխատանոց |
| 13 | » | 19 | » | համան | համար |
| 15 | » | 15 | » | հաստերը | հայերը |
| 45 | » | 12 | » | Ատուան | Աւան |
| 53 | » | 1 | » | սրը | որը |
| 56 | » | 27 | » | աստուապաշտ | աստուածպաշտու-թեան |
| 57 | » | 12 | » | երկիցն | երկիրն |
| 61 | » | 16 | » | Սասանեան | Սանեան |
| 70 | » | 16 | » | Հրովարտակու | Հրովարտակ |
| 72 | » | 21 | » | Զամաստակ | Զոմաստակ |
| 120 | » | 29 | » | Ապրամ | Սպրամ |
| 124 | » | 23 | » | բայց թէ | բայց հազիւ թէ |
| 127 | » | 16 | » | երկան եղած | երկան եղած |
| 166 | » | 7 | » | կածեցեալ | կարծեցեալ |
| 208 | » | 32 | » | Սիհոն գետի | Սիհոն գետի մօտ |
| 129 | » | 19 | » | Ներսէհ-գմըն-դակն | Ներսէհ-գմնդակի հայր Փիլիպէն |

# ԱՂՈՒԱՆԻՑ ԵՐԿՐԻ

## ՍԱՀՄԱՆՆԵՐՆ (1)։

Աղուանից երկրի պատմութեան ծանօթ սահմաններն էին Հայոց Վաղարշակ թագաւորի ժամանակ արեւելքից Կասպից ծովը եւ Երասխ գետը, հիւսիսից Դարբանդեան երկարաձիգ պարիսպն՝ որ ձգուած է Դարբանդից մինչեւ Ալազան գետի ակունքներն, արեւմուտքից՝ Ալազան գետը, Հնարակերտ ամրոցն եւ Զորագետն եւ հարաւից՝ Արցախեան բարձր սարերի գագաթնագիծն եւ Հագարի գետն մինչեւ Երասխի խառնուրդն։ Բայց երբ ծնւում է եւ Աղուանից Արշակունի թագաւորութիւնն, այն ժամանակ Կուր գետն է լինում հարաւային սահմանն։ Ե. դարում դարձեալ միանում է Աղուանից թագաւորութեան իւր նախկին սահմանն—այս է ամբողջ Ուտի եւ Արցախ նահանգներն։

Այս սահմանների մէջ ընկած երկիրն Հայերից կոչուած է Աղուանք, Աշխարհ Առանայ, Վրացիներից՝ Ռանի, Ջենդերից՝ Այրիանօ (առ. եւ ի Հայոց) Պարսիկներից՝ Առան կամ Առան-Տահ, Արաբացիներից՝ Ռանի, Թաթարներից՝ Առանի եւ Եւրոպացիներից՝ Ալբանիա։

## ՀՈՂ

Երկրի դիրքն թեքուած է արեւմուտքից արեւելք Կուր եւ միւս գետերի ընթացքով դէպի Կասպից ծովը։

1) Սահմանների մասին ընդարձակօրէն գրուածը տես «Արցախ» երես 1—2։

Իր տեսակին մէջ նշանաւոր, բարեբեր և բազմարդիւն է Աղուանից երկրի հողը։ Ջրարբի են դաշտային հողերն, որք աճեցնում են մի հայահատիկը 50-100 լրա անգամն. իսկ լեռնային անջրդի հողերն՝ 15-25, տեղ տեղ էլ 7-10։ Պատուական ամարանոցներ են մեծ մեծ սարերի վերնամասերն, որ գալարագեղ և ծաղկազարդ առողջական են ամռան անասնոց համար. մեծամեծ և գեղեցիկ անտառներ են միջնամասերն, որք տալիս են շինութեանց համար ատաղձներ, որոց մէջ լի են որսալու էրէներով, գազաններով և թռչուններով. մացառոտ են ստորին մասերն, որ մատակարարում են բնակչաց վառելու և ածուխ անելու փայտեր։ Արցախեան լեռների հիւսիսահայեաց և Կովկասեան մեծ սարի հարաւահայեաց լանջերից հոսում և Կուր գետի մէջ են թափւում աջ ու ձախ կողմերից գետեր և գետակներ։ Գետեզերքներն, մանաւանդ Կուր, Երասխ և Սամուր գետերի եզերքներն և Ղամնեան դաշտի ստորին մասերն դրեթէ մշտադալար են։ Դաշտերն և դաշտակներն ոչ միայն հացատու են, այլ և սիզաւէտ և սարընջական են իբրև ճարակ անասնոց և թռչնոց։ Մուղանի, Գարդմանացւոց և Ուտեաց դաշտերի անջրդի մասերում ամառ, գարուն, աշուն և ձմեռ հօտաններով շրջում և արածում են այծեամներ։ Գարնան և ամռան եղանակներում վխտում են այս տեղերում չուող—երթեւեկ—թռչնոց երամներն, ինչպէս են կռունկ, ջայլամ, որի, ճայ, արագիլ եւլն. Իսկ աշնան, ձմռան և գարնան եղանակներում լի են դաշտերս ոչխարի և այծի հօտերով, տաւարի և գոմէշի նախիրներով, ձիերի և ջորիների ջոկերով, ուղտերի և կողուակների երամակներով և զանազան թռչունների երամակներով։

Կասպից ծովը, Կուրն, Երասխն, Հագարին և Մեծ-Սամուրն լի են կարմրախայտ, երկարաքիթ և մի քանի տեսակ մեծ և փոքր ձկներով, որք մատակարարում են



պատուական ձկնահաւկիթ, ձկնապուխտ, միս, սոսինձ և կերակրեղէնի համար համադամ նիւթեր։ Ապշարան թերակղզուց և ուրիշ տեղերից հեղեղանման արտավիժում են առատօրէն սև նաւթ, որ զտուելով արտահանւում է Ասիա, Եւրոպա վաճառելու համար։ Մեծաւ մասամբ բարեխառն է երկիրն; պատուական օդն, առողջարար կլիման և ջուրն և առատ պտղաբերութիւնն։ Բայց ամռան եղանակներում խիստ ջերմագին է մեծ դաշտերի օդն, տենդաբեր կլիման և անպակաս թունաւոր և մահատու օձեր, կարիճներ և մորմեր։

Այժմ չկան Կաղանկատուացու յիշած ձիթենի ծառերն։

## ԲՆԱԿԻՉՆԵՐ

Երկրիս նոյն իսկ պատմական դարերի անցեալն դրեթէ ծածկուած է խորին մթութեան թանձր քողով։ Գիրն եւ մատենագրութիւնն, որք անգուգական հարստութիւններ են մարդկութեան ցեղերի համար, և հաւատարիմ աւանդապահ՝ քաղաքական և կրօնական անցեալ պատմութիւնները ապագայ սերնդոց յանձնելու համար, շատ ուշ ծնած են այս երկրում։ Դժբախտաբար այս յետածին գիրն եւ մատենագրութիւնն եւս խոպան կեր եղած են, հրկիզման՝ Պողմեանց հարուստ մատենադարանի նման. քանզի «Բեր այսօրիկ գերեցաւ ի Խազրաց աշխարհս Աղուանից, հրկէզ եղեն եկեղեցիք և կտակարանք» (Կաղ. Բ. հատ. Դ. գլ.)։ Ահա այս պատճառաւ մնում է չուարած դրողն, անբաւական՝ հետաքրքիր ընթերցողն, գժգոհ՝ խստապահանջ բանասէրն և տրտունջող՝ քննադատ կլիկոսն։ Ահաւասիկ այսչափ անեղանելի դժուարութիւններ

մէջ կաշկանդուած է ողորմելի պատմագիրն և պաշարուած տարակուսական տագնապներով։ Ինձ մնում է միայն մի ելք—այս է կարգաւ դասաւորել ստորև ինչ որ գտայ հեղինակներից—ազգային և օտար պատմաբաններից և արձանագրութիւններից։

Ոչ մի երկիր այնքան խճողուած չէ եղել բազմատեսակ ցեղերով և այլազան բարբառներով, ինչպէս Աղուանից երկիրն։ Պատճառն այն է որ նախ՝ բարեբեր է երկիրս, առատաջուր և անդաստու. երկրորդ՝ որ միակ կարճ և յարմար անցքն է հարաւից հիւսիս, հիւսիսից հարաւ և Եւրոպայից Ասիա և Ասիայից Եւրոպա անցուդարձ անելու ճանապարհի համար։ Հետքերից երևում է որ Աշտարակաշինութիւնից յետոյ, երբ օրըստօրէ աճում է Մարդկութիւնն, բազմանում են ցեղերն, անբաւական են լինում իւրաքանչիւր տոհմի նահապետի բնակութեան նախկին տեղին, անջատւում են Յաբեթական և Սեմական ցեղերից խումբ խումբ հատուածներ և յաճախակի տեղափոխւում այս և այն կողմերն Դարբանդի և Բաղ-Դրան մուտքերն փակուելուց շատ առաջ։ Այս հանգամանքին վերագրելու է այն բազմացեղ բնակիչները, որք տեսնուած են Աղուանից երկրում, ինչպէս են Գարդմանցիք, Խաչեանք կամ Խաչիննեանք, Ուտէացիք, Ծովդէացիք, Գարգարացիք, Աղուանք, Տակք կամ Սագք, Կազակք կամ Կազք, Մազքութք, Հեճմատակք, Բաղասականք, Խազիրք, Սևորդիք, Հրէայք և Պարսիկք։

Պատմական անխուսափելի օրէնքն պահանջում է փաստերով ապացուցանել այդ ամեն ցեղերի ծագումը, հատուած արտադրող արմատը, հատուածեալների բնակութեանց տեղերը, նոյն տեղերից հեռանալը, մնացորդ թողելը կամ չթողելը։—Ահաւասիկ դժուարալուծ խնդիրներ, որով ամեն քայլափոխում մնում է մտատանջութեան մէջ պատմագիրն։



Ա. ԳԱՐԴՄԱՆՑԻՈՑ ԾԱԳՈՒՄՆ. Պարտք եմ համարում կանխաւ յայտնել որ Աղուանից երկրում կայ երկու Գարդման գաւառ և երկու Գարդման բերդ։ Առաջին համանուն գաւառն և բերդն գտնւում է Արցախի նահանգում (Տես «Արցախ» եր. 258—300 իր 74 ծանօթութեան միասին)։ Երկրորդն է Շամախու գաւառներից մին, որ այժմ կոչւում է Գիրդիման—Գարդման—(տես «Աղուանից երկիր և դր. եր. 180—190)։ Այն երկու գաւառներում և բերդերում ևս բնակած են Գարդմանցիք և իշխած, որք եղած են Առանի նախնիք և հետագաները։ Տոհմիս իշխաններն կոչուած են Առանշահիկ կամ Եռանշահիկ, ինչպէս կը տեսնենք ստորև։ Հայոց և Աղուանից պատմիչներն անխտիր գործ ածելով Գարդման անունը և առանց որոշելու Արցախի Գարդմանը Շամախու Գարդմանից, պատճառած են ընթերցողին մեծ շփոթութիւն և մտատանջ տարակուսութիւն, այնպէս որ որոշակի պարզ չէ իմացւում թէ այս ինչ գործողութիւնն առաջնոյն մէջ կատարուած է թէ երկրորդին։ Այս շփոթութեանց միանգամ ընդմիշտ վերջ տալու համար՝ այսուհետև գործ կածենք Արցախի Գարդման և Շամախու Գարդման։

Աղուանից երկիրն բոլոր երկիրներից աւելի մօտ լինելով Մարդկութեան օրրանին—Արարատեան նահանգին, բնական էր, որ ամեն ցեղերից առաջ հայկական ցեղեր բնակութիւն հաստատէին Աղուանից երկրում։ Հետևապէս պէտք է ճշմարիտ ընդունել բազմաշխատ Խորենացու այս խօսքը, «զզաւակն Սիսական որ ժառանգեաց զդաշտն Աղուանից և զլեռնակողմն նորին դաշտի ի գետոյն Երասխայ մինչև ցամրոցն՝ որ ասի Հնարակերտ([1])»։ Բնականաբար հետևում է որ Գարդմանցւոց նահապետն՝ հատուածելով Սիսական ցեղից՝ եկած և իւրայիններով բնակութիւն հաս-

1) Ամրոցիս մասին տես «Արցախ» եր. 398—398։

տուտած է նախ Արցախի Գարդմանում։ «Ի սորա (Առանայ) զաւակէն առեն սերեալ զազգ Ուտէացւոց և Գարդմանցւոց և Ծովդէացւոց և Գարգարացւոց իշխանութիւնն»։ Փորձնայու այս խօսքերը ոմանք բանաստեղծ այնպէս ընդունած են, իբր թէ Առանից սերած են այդ 4 ցեղերն։ Բայց ի նկատի առնելով պատմութիւնը, աւանդութիւնը, Արցախի և Շամախու Գարդման գաւառներում և Գարդման բերդերում բնակող ժողովուրդը և կատարուած իշխանական կրողութիւնը, համոզուած ենք, որ նախ՝ Առան սերած է իւրայիններով Գարդմանցւոց նահապետի հետագաներից, երկրորդ՝ որ արդէն կային Գարդմանցւոց, Ուտէացւոց, Ծովդէացւոց և Գարգարացւոց տոհմերն։ Սակայն որովհետև Առան կուսակալ կարգուած էր Հայոց Վաղարշակ Թագաւորից այդ երկրի վերայ, վասն որոյ այնուհետև՝ ըստ նահապետական սովորութեան՝ Առանի տոհմն եղաւ իշխանական գերդաստան և իշխանական զարմ։ Հետեւապէս վերյիշեալ 4 ցեղերի վերայ շարունակաբար իշխում էին Առանի հետագաներն։ Այս կրողութիւնը հաստատում է Մովսէս Կաղան. (Բ. հատ. ԺԷ գլ.) Գրելով թէ Սասանեան Միհրանի ցեղից քաջն Վարդան Շամախու Գարդման բերդում հրաւիրում է ճաշի Առանշահիկ տոհմից 60 իշխան և նենգութեամբ կոտորում ամենը և ապա ինքն տիրում նոյն Գարդման բերդին և իշխում Աղուանից երկրին իբրև մեծ իշխան։ Այսու ամենայնիւ չպակասեց Առանշահիկ իշխողն թէ Արցախի Գարդման բերդից, թէ Ծար գիւղաքաղաքից և թէ միւս գաւառներից. վասն զի Վարազ-Պերոժ իշխում էր Շաքի քաղաքում, Եռանշահիկ Սմբատն իշխում էր Վերին-Խաչենում։

Գարդմանցւոց ցեղն ոչ միայն պատուաւոր տեղ գրաւած է Աղուանից ամբողջ հասարակութեան մէջ, այլ և Հայոց և Պարսից պալատներում, Մեծին-Ներսեսի վաւերացուցած իշխանական և զինուորական տախտակում «Թ. Գարդմանացի 1000 զինուոր»։ Սահակ-Պարթև հայրապետի և Պարսից Վռամ արքայի ժամանակ «Գարդմանաց Տէր» գահական նամակում (1)։ Աղուանից իւրաքանչիւր տոհմ ի պահանջել հարկին պարտաւոր էր պատերազմի ժամանակ օժանդակ զօրք տալ Հայոց Թագաւորին՝ բացի իւր գաւառը կամ երկիրը պահպանող զինուորներից և Աղուանից Թագաւորին տուած զինուորականներից։ Գարդմանցիք տալիս էին 1000 զինուոր։



Այժմեան ամբողջ Գարդմանցիք թէ Արցախի, թէ Շամախու Գարդման գաւառներում և թէ Շաքուայ գաւառներում խօսում են հայերէն։

Բ. ԽԱՉԵԱՆՔ կամ ԽԱՉԵՆԵԱՆՔ. Այս անուամբ պէտք է հասկանալ ոչ միայն Վերին և Ներքին-Խաչենը, այլ և ամբողջ Դիզակ և Վարանդայ, Բերդաձոր և Հարճլանք, Վակունիք և Ջրաբերդ գաւառների բնակիչ հայերը, որք սերած են նոյնպէս Սիսական ցեղից, որոց առանձին բարբառն այժմ յայտնի է գրականութեան։ Բայց որովհետև յիշեալ գաւառների վերայ իշխող Առան-Շահիկ տոհմն բնակում էր Սիսական-Ոստանում, որ գտնուում է Վերին-Խաչենում, վասն որոյ գաւառս անուամբ Խաչենք նշանակուած են յիշեալ տախտակներում։

Գ. ՈՒՏԷԱՑԻՔ. Ստոյգ է որ այս տոհմն ունի Յաբեթական ծագում. ստոյգ է նաև որ ունի առանձին լեզու (2) սակայն հարկ է յայտնել որ հայկական են իւր ծագման աւանդութիւնն, դիմագծերն, սովորութիւններն և ամեն ինչ, որոց շատերն խօսում են և հայերէն։ Ուտիներն՝ որ

1) Գահական թղթերիս պատճէններն ամբողջութեամբ կան «Արարատում» եր. 419—438 բացատրութեամբ հանդերձ. Յով. եպիս. Շահխաթ. Ստոր. Բ. հատ. եր. 58 պակասաւոր. և պ. Կ. Կոստանեանցի Հիւս. Գ. հատ. եր. 32։

2) Սորա բարբառի համեմատութիւնը տես «Աղուանից երկ. և Դր.» եր. 93—96։

սկզբում կենտրոնացած են եղել Կուր գետի աջ կողմում– Ուտի նահանգում և գրաւած հոմանուն դաշտը և Աղուէ, Տուչքատակ, Տիգրանակերտ, Ուտի-Առանձնակ, Շակաշէն և Կողթ գաւառները, Քրիստոսի ծննդենից շատ առաջ ամենամեծ մասամբ անցնում են Կուր գետի ձախ կողմերն և բնակութիւն հաստատում Արաշի (Արածանս գաւառ) Շաքուայ, Կապաղակայ (Ղապալա) և այլ գաւառներում. Ստուգւում է այս տեղափոխութիւնն այն հանգամանքով, որ երբ գալիս է Սակաց կամ Շակաց հատուածն և գրաւում Ուտի նահանգին Շակաշէն կամ Արշակաշէն և Կողթ գաւառները և Բուստի գաւառի ստորին մասերը, այն ժամանակ Ուտեաց մեծագոյն մասն՝ ստիպուած է լինում տեղի նեղութեան պատճառաւ, տեղափոխուիլ Կուր գետի ձախ կողմերն։ Հռովմայեցւոց և Յունաց հեղինակներն անուանում են Ուտեաց նահանգը Օղինէ, Օղինի և Ուտեաց ցեղը՝ Օղիք: Ագաթանգեղոս (եր. 593 տպ. Վենետ.) յիշած է ի շարս ցեղերի և իշխանաց «Երկոտասաներորդ իշխանն Ուտիացւոց աշխարհին» նոյնպէս Մեծն-Ներսէսի տախտակում (Գ. Ուռէջացիք 1000 զինուոր»։ Կարևոր է յայտնել որ թէ բազմամարդ եղած է Ուտեաց տոհմն և թէ զօրեղ ու տոկուն։ Այսու ամենայնիւ Արաբացւոց, Պարսից և Սև-Հոնաց բռնութիւններից տոկալով՝ Ուտիացիներից 15480 ծուխ դարձած է մահմետական Սուննի և Շիա աղանդներին (տես «Աղ. երկ. ու Դր. եր. 291—292)։ Բայց յայտնանէ 1820-ին 117 ընտանիք ևս ընդունած են յունադաւանութիւն։ Այժմ Ուտիներից անխախտ մնացած են ի ծոց Հայաստանեայց Առաքելական եկեղեցու 12,102 անհատ, որք բնակւում են Նիժ, Վարդաշէն, Սուլթան-Նուխի գիւղաքաղաքներում և Ջոլու, Միրզաբէկլու, Փաղառ, Վարդանլու, Արաշ, Բանդակ, Հաւարիկ, Սարով, Մարալեան-Սարով, Հասան-Ղոյա, Ղահրիլար կամ Խորողլու, Եարըմ-Ջան, Սէյսիւլան.



Գանձակի-Սարով և Կաղեն գիւղերում.

Դ. ԳԱՐԳԱՐԱՑԻՔ. Ժամանակաւ աւելի մօտիկ հայ պատմիչներն առհասարակ մասին ասում են թէ Գարգարացիք ծագած են Սկիւթական ցեղից. սակայն ցեղիս բարբառի զգալի տարբերութիւնն առիթ տուած է ոմանց բանասիրաց՝ կարծել թէ Գարգարացիք չեն սերած հայկական սերնդից. մինչև անգամ փաստ են բերում ասելով. Եթէ արդարև Գարգարացիք սերած լինէին Սիւնական հայերից, ինչ հարկ կար որ սուրբն Մեսրոպ ստեղծէր Գարգարացւոց կոկորդախօս, աղխազուր, խժական և խեցբեկագոյն լեզուի համար յատուկ գիր ([1]).

—Բարի է, մենք ևս բերենք փաստեր. Նախ՝ ամեն ազգերից ծագած ցեղերի մէջ ևս ակներև երևում է միևնոյն զգալի տարբերութիւնն լեզուի նկատմամբ.

Երկրորդ՝ Զոկերն էլ հայ են, Զէյթունցիք էլ. բայց ոչ սոքա հասկանում են նոցա աշխարհաբար լեզուն, և ոչ նոքա սոցա բարբառը. Կեսարացիք էլ հայ են, Նոր-Արմաւիրցիք էլ, սակայն երկուքն ևս ոչ խօսում են հայերէն և ոչ հասկանում միմեանց ասածը, քանզի մին խօսում է Թուրքերէն և միւսն չերքեզերէն. Յոյներ կան հայախօս, յոյներ կան Թուրքախօս. Վրացիք կան հայախօս, վրացիք կան տաճկախօս, վրացիք կան պարսկախօս, վրացիք կան չերքեզախօս, հայեր կան Թուրքախօս, հայեր կան վրացախօս, հայեր կան լեհախօս, Թուրքեր կան վրացախօս, ևն. Այսպէս հայերէնը մոռացած էին բոլորովին այն հայերն, որք գերի տարուած էին Սակաստան, որպէս վկայում է Պատ. Յովհան. կաթուղ. (եր. 90—91, տպ. Երուս.) «Իսկ Սմբատայ (Բագրատունւոյ) երթեալ հասեալ յաշխարհն այն,

1) Չյաջողեցաւ մեզ գտնել այդ գրերի հետքը. բայց գտանք Դարբանդի պարսպի արտաքին կողմում միայն մի քանի տառեր, որոց օրինակը տես «Աղուան. երկ. և դր.» եր. 119. Բայց թէ իրօք նոյն տառերն են, չգիտենք և չենք կարող երաշխաւորել։

դաւանէ անդ ազգս գերեալս ի Հայաստանեայցս և բնակեցուցեալս ի Թուրքեստան ի կողմանէ մեծի անապատին, որ Սարդատան անուանի, զկզու խօսեանց մնացեալ և գոյութիւնն նուազեալ յոյժ»։ Այս հանգամանքները վերագրելու է միմիայն անցեալ ժամանակների բաղաքական բուռն հոսանքներին։ Հետեւապէս զոր օրինակ Կեսարացին երկար ժամանակ ապրելով բարբարոս շրջապատող ցեղի մէջ տակաւ առ տակաւ մոռացած է հայերէնը և ակամայ իւրացրած թուրքերէնը, Նոր-Արմաւիրցին՝ չերքեզերէնը, գերի տարած հայերն սակերէնը, լեհաբնակ հայերն՝ լեհերէնը, հայաբնակ յոյներն՝ հայերէնը, ևն, ևն, նմանապէս Աղուանից ցեղի մէջ երկար ապրող Ուտիներն՝ Աղուանցւոց լեզուն Շակերի կամ Սակերի մէջ երկար ապրող Գարգարացիք մոռանալով հայերէնը՝ իւրացնում են Սակերէն բարբառը։

Հետքերից ակներեւ է որ Գարգարացւոց նահապետն, Սիսական ցեղից հատուածելով Մեծ-Սիւնիքից Գարգարացւոց դաշտն իջնելու ժամանակ, բաւական ժամանակ մնացած է Գարգար գետի վերնամասերում, ըստ որում մինչև ցայսօր Գարգար է կոչւում այդ տոհմի անուամբ գետն ակունքներից մինչև Կուր գետի խառնուիլն, նոյնպէս և դաշտն։ Կարևոր է յայտնել որ դաշտիս ստորին մասն հայ պատմիչներից կոչուած է Մուղան[1]. Գարգարացւոց բնակութեան տեղն՝ Գարգարացւոց դաշտ[2]. Գարգար, Կուր և Ալազան գետերի մէջ ընկած մասն Ուտիացւոց դաշտ[3]. Ալազան, Կուր և Ձորագետ-Խրամի խառնուրդի մէջ ընկած մասն՝ Գագայ դաշտ[4] Գագայ Ս. Սարգիս ուխ-

1) Կիր. եր. 154, Վարդ. Բարձր բերդ, եր. 198, տպ. Մոսկ.

2) Խորեն. Բ. գիրք ԶԸ. գլ. Թովմ. Արծ. եր. 177, տպ. Թիֆլ.

3) Ագաթ. եր. 83. Ուխտ. եր. 96, տպ. Վենետիկ.

4) Վարդ. Բարձ. եր. 161. տպ. Մոսկ։ Իսկ Կուր գետի ձախ ափունքն ընկածն կոչուած է դաշտ Աղուանից. (Խոր. Բ. գիրք. Ը. գլ.)։



տանեղու անուամբ։ Գարգարացւոց էին պատկանում Վարդանակերտ, Բեյլական և Լամբարան[1] քաղաքներն (այժմ աւերակ)։ Ուտիացւոց էին պատկանում Պարտաւ, Բօրոմ և Շամքոր քաղաքներն (այժմ աւերակ) նոյնպէս և Գանձակ քաղաքն։

Գարգարացւոց անունն յիշուած է նախ՝ Ագաթ. եր. 593, «Ութերորդ իշխանն Գարգարացւոց աշխարհին». ապա՝ Այրարատի եր. 432. «Գարգարացիք»։ Համոզեմ թէ մի դար սորանից առաջ Գարգարացւոց տոհմի մնացորդներն Բեյլական և Միլ[2] աւերակ քաղաքներից տեղափոխուած են Դիզակի և Վարանդայի գիւղերն[3] և խօսում են Արցախի յատուկ բարբառով։

Ե. ԾՈՎԴԷԱՑԻՔ. Աւանդութեամբ ասում են որ այս հատուածն անջատուելով Սև-Հոներից-Ալաններից Արտաշէս թագաւորի Սաթենիկ թագուհու հետ եկած են Հայաստան, և նոյն թագաւորի հրամանաւ նախ բնակութիւն հաստատած Սօդ գաւառում, Գեղամայ լճի արևելեան կողմում և գաւառը իւրեանց անուամբ անուանած Ծովք, բայց թէ ինչպէս Ծովքն փոխուած է Սօդ[4] անյայտ է մեզ։ Որպէս թէ յետոյ Ծովդէացիք Սօդի կողմից ևս տեղափոխուած են այժմեան Ճառի և Կախաւանի կողմերն[5]. Արաբացւոց ժամանակ սոցա մի մասն ընդունում է մահմետականութիւն և մեծ մասն անցնում է Կովկաս սարի հիւսիսային կողմն և կրկին միանում իւր արմատի—Սև-Հոնաց հետ։ Բայց հատուածիս անունն յիշուած է Ագաթ. եր. 593. «Երկոտասաներորդ իշխանն Ծովդէացւոց»։ Մեծին-

1) Այժմ ևս Լամբարան—Լամբարաւան. հուն Կուր գետի։

2) Տես «Արցախ» եր. 68—69 և 127—129։

3) Տես Արցախ եր. 27։

4) Սօդեցի անունն կայ երեք տախտակներումն ևս

5) Յով. կաթուղիկոս եր. 377 Գուգարք է անուանում կողմերս. իսկ Վարդան բարձ. եր. 135 տպ. Մոսկ. կոչում է Ծանար։

Ներսէսի դաշնական տախտակում. «Ե. Ծովդէացի 1000 գլխաւոր»։ Տոհմիս անունը յիշում է և Խորենացին և Եղիշէն (եր. 15 եւ 93 ազ. Երուս.) որ Ծովդէացիք ընդունած էին Քրիստոնէութիւնը։ Կարևոր է յայտնել որ հնանական են Ճառի և Կախաւանի կողմերում մահմէտականացածների տիպերն, դէմքերն և ունդութիւններն։ Այսու ամենայնիւ շատ գիւղերում դեռ կանգուն կամ կիսաւեր մնում են քարաշէն եկեղեցիներ (Աղուան. եր. եւ դր.» եր. 272—273)։

Զ. ԱՂՈՒԱՆՔ. Տոհմիս մասին հաւանութիւն գտած ենթադրութիւնն այս է։—Մօտ 600 տարի Քրիստոսի ծննդից առաջ արեւելեան կողմից գալիս են երկու զօրեղ հատուածներ ծագմամբ Յաբեթական ցեղից, յորոց առաջինն լինելով Հայկական ցեղից՝ միանում է Հայոց և բնակում Հայաստանում, իսկ երկրորդ հատուածն բնակում է Ագուանից երկրում և իր անուամբ Ալվանիա անուանում երկիրը։ Ալբանիա են անուանում միևնոյն երկիրը և Եւրոպացիք և Խորենացին իւր աշխարհագրութեան մէջ։ Բայց ոմանք էլ ասում են թէ Ագուանից հատուածն հատուածելով Կելտերից եկած և բնակած է Ագուանքում։ Վերջին մաքիս ուժ են տալիս. նախ՝ Մովսէս Կաղանկատուացին (Ա. հատ. Բ. գլ.) թուելով Յաբեթական ցեղերը՝ ասում է. «Իսկ որ ի կողմանս հիւսիսոյ են, ազգակից են Կեաւուրացւոց (Կելտաց) ունի և Ագուանք»։ Երկրորդ՝ Նկարա- ծութիւն սուրբ գրոց ուսման հեղինակ Տօքթոր Անկսէ, մասն երկրորդ եր. 38 գրում է. «Արդ՝ Յաբեթի սերունդին գալով... Գամերէ սերեցան Կիմմերացիք և Կեղտք (Կելտք) որ գրաւեցին Գերմանիա և Մեծ-Բրիտանիա»։ Կելտերն շատ վաղ ժամանակ բնակում էին այժմու Դրիմի կողմերում։ Կարապետ վարդապետ Շահնազարեան, խմնալով որ Ագուանք, առանց մնացորդ թողնելու Ագուանից երկրում, Քրիստոսի ծննդից մօտ 180 տարի առաջ անյա-



փոխուած են Եւրոպա, Ալլա անունից հետևացնում է թէ Ալլա, Ալբի, Ալբիօն, Ալբանիա, են. տեղերում բնակող Եւրոպացիք, այսինքն նոցա նախնիք եկած են Ագուանքից։

Ագուանից տոհմի այս բացակայութիւնն է պատճառն, որ այս ցեղի անունն բնաւ յիշուած չէ ոչ Ագաթանգեղոսում և ոչ տախտակներում և ոչ Հայոց պատմութեան մէջ ի չարս իշխանացն Ագուանից և ցեղերի, որպէս յիշուած են «Իշխանն Գարդմանցւոց, իշխանն Ուտիացւոց, իշխանն Գարգարացւոց» են։ Կարևոր է յայտնել որ 137 տարի Քրիստոսից առաջ երբ Առան՝ Հայոց Վաղարշակ թագաւորից կուսակալ է կարգւում Ագուանից երկրի վերայ, այնուհետև Աւխարնակ ցեղերն առհասարակ յանուն Առանայ են մկրտում այս երկիրը, օրինակ Հայերն Աղու անունով կոչում են Անուանք, Վրացիք՝ Առան անուամբ՝ Ռանի, Պարսիկներն՝ Առան-Շան, Արաբացիք՝ Ռանի, Թաթարներն՝ Առան կամ Առան-Շան. իսկ Եւրոպացիք պահում են Ալբանիա անունը։

Է. ՇԱԿ կամ ՍԱԳ, ՍԱԿ. Հատուածս սերած է Սակաստանի Սկիւթայիններից։ Սակաստան գտնւում է Պարսկաստանի հիւսիս-արևելեան կողմում, դաշտային է և ունի ամրան խիստ ջերմագին օդ և մշտական կլիմայ(1)։ Շակերն կամ Սակերն բազմանալով և հետզհետէ զօրանալով տիրում են Բակտրիային. որից մի մասն հատուածելով չքւում է Կասպից ծովի արևելեան եզերքներով, անցնում Բահլ-գանից բնակութիւն հաստատում Փայտակարան նահանգում, այս ըստ Մարքուանի ԺԱ. գիրք եր. 511—512։

Քսենոփոն, խրատ Կիւրոսի եր. 160, Հայկազեան Մեծն-Տիգրանի մասին խօսելով՝ ասում է. Տիգրան եկն

1) Պարսից Յազկերտ Բ. սպառնում էր երդմամբ Սագաստան աքսորել Հայոց հոգևոր և մարմնաւոր իշխաններն, ինչպէս աքսորից յետոյ (Եղիշէ եր. 85—86)։

իւր զօրքով և միացաւ Պարսից Կիւրոս Թագաւորի հետ (Մարաց և Ասորոց Թագաւորութիւնները կործանելու) «Տիգրանէս եկեալ հասեալ կայր ընդ-ակազմ և 4000 հեծեալք գումարեալ էին և բիւր (10,000) աղեղնաւորք և այլ ևս շերտաւորք նոյնչափ—10,000»։ Ընդամենն Հայոց զօրք 24000։ Իսկ Տակաց մասին ասում է եր. 270—285, Տակերն և Վրկանցիք, որք իբրև հպատակ ազգեր եկած էին Մարաց օգնելու ընդդէմ Կիւրոսին, միաբանում են Կիւրոսի և Հայոց հետ։ «Ի Տակաց աղեղնաւորք բիւր մի և աղեղնաւորք հեծեալք 2000» (եր. 288—289)։ Մարաց և Ասորոց Թագաւորութիւնները կործանելուց վերջն Մարաց Թագաւորութիւնն բաժանւում է Պարսից և Հայոց մէջ։ Այնուհետև Փայտակարան նահանգն միանում է Հայաստանին։ Մեզ անյայտ ժամանակում Տակերն մտնում են Գուգարացւոց երկիրն, բնակում մի ժամանակ նոցա հետ։ Վերջապէս բնակութիւն հաստատում Գանձակի գաւառում, որը և յանուն իւրեանց անուանում Տակաշէն(1)։ «զոր յիւրեանց անուն կոչեցին Սակասենի» (Ստրաբոն եր. 511—516)։ Տակերն իւրացնում են և Կողթ գաւառը և Բուաուի գաւառին սարին մասը։ Այդ ժամանակ Ուտիք, նեղուելով տեղի նեղութեան պատճառաւ, մեծ մասամբ անցնում են Կուր գետի ձախ կողմերն, որպէս ասած ենք կանխաւ։ Այս պատմում է Ստրաբոն թէ այս հասուած Տակերն ամբողջապէս արշաւեցին Պոնտացւոց և Կապադովկիացւոց կողմերն և գինեցին կոտորեալ և կողոպտեն. այն ինչ կատարում էին իւրեանց յաղթութեան տօնը, գիշերով յարձակուեցին Պարսից (Հայոց) նախարարները Սակերին վերայ և կոտորեցին ամբողջապէս։

Ը. ԿԱՋՔ, ԿԱՍՊ, ԿԱՍՊԻՔ. Տակերն անյայտանալուց

1) Խորենացին, իւր աշխարհագրութեան մէջ եր. 606 և Կաղան. եր. 141 աշ. Մոսկ. անուանում են Տակաշէն. վերջինս եր. 265՝ Արշակաշէն։



յետոյ գալիս է միևնոյն Բահլ-նեղուցով Կասպից հատուածն, որ նոյնպէս սերած է Սկիւթական ցեղերից, բնակութիւն հաստատում Փայտակարան նահանգի ծովեզերեայ մասում և ծովը իւրեանց անուամբ անուանում ծով-Կասպից. «Երատոսթենէս առ Ստրաբոնի գիրք ԺԱ. թուղթ 514 ... յետ Աղուանից յիշէ ... զԿասպս իւր սահմանակիցս, որ էր Փայտակարան նահանգ, և նոյն ինքն Ստրաբոն գիրք ԺԱ. թուղթ 528, պատմէ թէ Կասպք կամ որպէս կոչէ անդէն նա ինքն Կասպիանք (Փայտակարան նահանգ) Մարաց առաւ և դրուեցաւ ի սահմանս Հայաստանեայց» ... իսկ թուղթ 502 ... «ի Կասպից ազգէն զանունն ընկալեալ, ասելի կոչի և ծովն» (Ղ. Վ. Ինճ. Հին Հայաստան եր. 320—321)։ Կասպից ցեղս մնում է հպատակ Հայոց Թագաւորներին մինչև Արշակունի (միջին) Տիգրանի օրերն, այս ապստամբում է Արտաշէս Բ-ի ժամանակ. «Իսկ Սմբատայ (զօրավարին Հայոց) երթեալ հնազանդ է զամենեսեան, բայց երկիրն Կասպից աւերեալ, առեալ քան զԱրտաշեան վերին ածէ ի Հայս, ընդ որս և Զարդմանոս անուն Թագաւոր նոցին» (Խոր. Բ. գիրք, ԾԹ. գլ.)։ Կասպից անունն յիշուած է Դ. դարում Ագաթանգեղոս եր. 27. Մեծին-Ներսէսի՝ տախտակում «Դ. Կասպեցի 3000 զինուոր». Դ. դարում Կասք, Կասքանիք. Ե. Կասպից աշխ։ Այնուհետև չգիտենք որ դարում ցեղս մնացորդն շրջելով Կասպից ծովի արևմտեան ափերով անցնում է Դարբանդի դռնով, հասնում Կազբէկ սարի հիւսիսային ստորոտներն, ուր մնում է ցարդ։ Ասում են որ Կազբէկ սարն իւր անունը ստացած է նոյնպէս Կասպից այն ցեղից։

Թ. ԲԱՂԱՍԱԿԱՆ. Տոհմիս ծագման մասին խօսելուց առաջ հարկ ենք համարում յայտնել որ Հոներն գլխաւորապէս բաժանուած են երկու ցեղ — Սպիտակ-Հոնք և Սև-Հոնք։ Սպիտակ-Հոներն բնակում էին Կասպից ծովի արևելեան կողմում, որոց մասին ասում է Եղիշէն (եր. 18)

«Խաղաց գնաց (արքայն Պարսից) միադամայն ի վերայ տէրութեան Հայոց աշխարհին, զոր Ռշտունիս անուանեն»: Արևելեան Հոներս կոչուած են նաև Հեփթաղ, Թետալք, Թետալացիք, Փար. եր. 506: Այս Հեփթաղներից սպանուեց Պարսից Պերոզ թագաւորն: Իսկ նոյն ծովի արևմտեան կողմերում բնակուածներն կոչուած են Սև-Հոնք, որք տարածուած են նոյն ծովի ափերից մինչև Դոն գետն Կովկաս մեծ սարի հիւսիսահայեաց լանջերով, բաժանուած բազմութիւն ցեղերի և լեզուների և ունին առանձին անուններ, ինչպէս են Լեկք, Խազիրք, Ալանք, Հոնք, Չերքէզ, Չէչէն, ևն. այսուամենայնիւ ամենքն միասին թէ հայ և թէ օտարազգի պատմագիրներից կոչուած են առհասարակ Սարմատացիք, իսկ սոցա բնակավայրն Սարմատիա:

Դառնանք բուն խնդրին: Բաղասականի սահմի ծագումն ճշտիւ յայտնի չէ մեզ. յայտնի է միայն որ եկամուտ ցեղերից էր: Ցեղիս անունն յաճախակի յիշուած է միայն Ե. Զ. և Է. դարում. երևի թէ յետոյ մուտ գործած են Աղուանից երկիրն: Բոլորովին հաստատ է որ այս ցեղն բնակւում էր Բաղասականի գաւառում: տես «Աղուան. երկ. և Դր.» եր. 103 և 277: Եղիշէն եր. 142—143 ասում է թէ Բաղասականի թագաւորազներից ոմանք սպանցին Հայոց Մուշը և վիրաւորեցին Գուրգէնը: Իսկ եր. 257 ասում է. «Իւրն իսկ թագաւոր (Պարսից) սպան զԲաղասական արքայ». որովհետև սպանուած թագաւորն Սև-Հոնաց Հեռան թագաւորին հետ դաշնի բարեկամանալով կռուել տուած էր Պարսից զօրքը Հեռանի ձեռնով: Խորենացին, Գ. գիրք, Կ. գլ. ասում է թէ Ս. Մեսրոպ անցանելով որ հեթանոսական աշխարհի դառն արմատն և չար սովորութիւնն գտնւում է Բաղասականի կողմերում: Սրբոյն Մեսրոպայ «երթեալ ի Բաղասական գաւառն յաջողութիւն ածէ և զաւակս անդարձ յիշխանութիւն



(Սև) Հոնաց հալածականս առնէ»: Բազմիցս յիշուած Ե. դարում նշանակուած են յատկապէս Բաղասականք անունն: Ցեղիս մեծ մասն Արաբացւոց ժամանակ միանալով Սև-Հոնաց հետ՝ ընդունած է մահմետական Սուննու աղանդն, նոյնպէս և Բաղասականում մնացած մասն: Այժմ բոլոր եղելութիւններն առիթ են տալիս մեզ ենթադրել որ Բաղասական ցեղն ծագած է Սև-Հոներից:

ժ. ՄԱԶՔՈՒԹՔ. Հաստուածս սերած է Կասպից ծովի արևելեան կողմում եղած Մազքթաց արմատից: Պլինիոս, Զ. հատ. եր. 17 գրում է. «Ցայնկոյս են (Կասպից ծովի արևելեան կողմում) Սկիւթացւոց ժողովուրդ ... բազմութիւն ժողովրդեան անհամար ... հռչակաւորք են ի նոսա Սակք և Մասսագետք (Մազքութք)»: Սեբ. եր. 53—54. Աստղ. եր. 112—113:

Այսուհետ եկած Մազքութ հաստուածն բնակւում է Դարբանդի մօտ եղած գաւառում, որ այժմ կոչւում է Մուսկուր(1) (Մազքթաց գաւառ): Տոհմիս անունն ամենևին յիշուած չէ երեք տախտակներում. պատճառն այն է, որ երբ ծնւում է Աղուանից Արշակունի թագաւորութիւնն, որի մայրաքաղաքն էր Չողա քաղաքն(2), Մազքութք անցնում են Դարբանդեան պարսպի հիւսիսային արտաքին կողմն, ինչպէս Եղիշ. եր. 387 և Խոր. Մատ. եր. 605 մատնացոյց են անում այս հաստուածի բնակութեան տեղին նոյն պարսպի արտաքին կողմում: Մազքթաց հեռանալուց յետոյ տախտակներում նշանակուած է Դաղստանեանք անունն:

ժԱ. ԼՓՆԻՔ. Հաստուածս ծագած է Պարսկական հին սերնդից. ապացոյց իւրեանց բարբառն, դէմքերն, աւանդութիւններն, սովորութիւններն և կրօնն, որք յատուկ են

1) Տես «Աղ. երկ. և Դր.» եր. 105—110 և 124:
2) » » » » եր. 145—148:

Պարսից այգին։ Լփնաց անունն յիշուած է Ագաթանգեղոսի մէջ եր. 27, Եղիշ. եր. 15, 93, և 143 և Կաղանկ. եր. 189։ Լփնիք եկամուտ ցեղերից են, այժմ էլ բնակում են իւրեանց նախկին տեղում. այսինքն Դուաչի և Սուղայիդ գետերի, Կովկասեան մեծ-լեռնաշղթայի գագաթնագծի և Կասպից ծովի մէջ ընկած տարածութեան վերայ։ Լփնաց բարբառի նմուշները տես «Աղ. երկ. և Դր» եր. 91—92։

ԺԲ. ՃՂԲԱՑ ԾԱԳՈՒՄՆ. Սոյն հատուածն էլ եկամուտ ցեղերիցն է և ունի Լփնաց բարբառը, ազգութիւնը և ծագումը։ Հատուածիս անունն յիշուած է Ագաթ. եր. 27, Եղիշ. եր. 178 և 246, Կաղանկ. եր. 189. և տախտակներում Ճիղբ անուամբ։ Հատուածիս ամենամեծ մասն մինչ գրկած լինելով Քրիստոնէութեան կրօնը և պատկանելով Հայաստանեայց Ս. Լուսաւորչի դաւանութեան, տոկալով Լեկզիների անընդհատ ասպատակներից, կոտորածներից և մոլեռանդ բռնութիւններից, վերջապէս ակամայ ընդունում է Սուննու աղանդը և մնում իւր բնակավայրում (Աղ. երկ. եւ Դր. եր. 126—145)։ Հայադաւան մնացածների ամենամեծ մասն ԺԸ. դարի վերջում Ռուսաց Զուբով զօրավարի հետ տեղափոխուած է Ռուսաստան և բնակութիւն հաստատած Մոզդոկի Մաջառ և Ղուրա և Ղզլարի Շարախան գիւղերում, որք մինչև ցայսօր հայերէն լեզուի հետ պահպանած են և իւրեանց յատուկ բարբառը։ Իսկ փոքրիկ մասն, որ մնացած է Ղուբա քաղաքի Քիլվար և Խաչ-մազ գիւղերում, մաքառելով ամեն տեսակ բռնութեանց դէմ՝ մարտիրոսաբար պահպանած է իւր հայադաւան կրօնը և ս. եկեղեցին։

ԺԳ. ԹԱՒԱՍՊԱՐԱՆ. Եկամուտ ցեղերից է և սա. որի ծագումն անծանօթ է մեզ։ Հատուածս շատ առաջ ընկած էր Դարբանդեան մեծ պարսպի ներսի կողմում, ինչպէս Եղիշ. եր. 178, յայտնում է թէ ուրացեալ Վասակն, տեսնելով որ բացի Դարբանդեան ելևմուտ դռնից ներս խուժած Սև-Հոներից՝ ոչ ոք օգնական չգտանուեցաւ Վարդանեան Հայոց և Աղուանից միացեալ զօրքին, փակեց պատուարի դռները. կոտեց Պարսից այրուձին, գումարում էր (պատուարի ներսում եղած) «զզօրսն Լփնաց և զՃղբաց և զԼասն և զԳաւն և Գզուարն և զԽրսանն, և զՀեճմատակն, զՓասխն և զՓուխն և զՓիլքանեան և զամենայն զօրսն Թաւասպարան, զլեռնային և զդաշտային և զամենայն ամրակողման լերանցն»։ Խօսքերիցս պարզ երևում է որ Վասակի ժամանակ այդ ամեն ցեղերն բնակում էին մեծ պատուարի ներսի կողմում. բայց մեզ անյայտ ժամանակաւ Թաւասպարան հատուածն անցած է պատուարին արտաքին կողմն, որի այժմեան ընակած գաւառն այժմ կոչւում է Թաբասարան, որ հեռի չէ Թաւասպարան հնչիւնից։



ԺԴ. ԳԱՒ. Անյայտ են մեզ ցեղիս ծագումն և բնակութեան տեղին։ Այն գաւառն, որ ընկած է նոյն պատուարի ներսին կողմի շարունակութեան և փոքր-Սամուր գետի մէջ, այժմ կոչւում է Գուրի գաւառ. Թերևս այս եղած լինի Եղիշէի Գաւն: Գաւառիս գաւառագլուխն է Ղասում-քենդ, որի մօտ է Գուր անուն մի գիւղ։

ԺԵ. ԳՂՈՒԱՐ. Նմանապէս անծանօթ է մեզ և սորա ծագումն։ Գուրի և Ղուբա գաւառների մէջ ընկած է Գուսար գաւառն և Գուսար գետն։ Երկու անուններն հնչիւններից հեռի չէ Գղուարն, հետևապէս այս է Գղուարն, որը ժամանակի մշտափոփոխ գրիչն փոխած է Գուսար։

ԺԶ. ՀԵՃՄԱՏԱԿ. Համոզուած ենք թէ յետածին է Սամուր անունն; որ մի ընդարձակ գաւառ է եռանկիւնաձև մտած Կովկաս մեծ սարի հիւսիսահայեաց լանջերի և Դարբանդեան երկարաձիգ պատուարի-պարսպի-մէջ։ Այժմ գաւառիս գաւառագլուխն է Ախտի քաղաքն, որ նոյնպէս նոր անուն է։ Բայց գաւառումս կայ Մաճակ անուն մի

մեծ գիւղ, որ կրճատեալն է Հնձնատակ անուան, որ յիշուած է 2 տախտակների մէջ եւ։

Պարզ ենք համարում յայտնել թէ բացի վերև գրուածներից կան նաև հետևեալ անունները. Խուրցիկ, որ մերձաւորն է Խորանից անուան. Խիլ, որ թերևս կրճատեալն է Խիլղւնա-ին, (որ գտնւում է Գուրի գաւառում) Փիլ—Փալխ?, Փուր—Փուխ?, Հեթում—Հափթաղ?(1) Կաղանկատուացին, Ա. Հատ. ԽԵ. Գլ. գրած է. (Սուրբն Մեսրոպ) «նորոգեալ եկեղեցւոյ հաւատս հաստատէր, և ծգէր զքարոզութիւն աւետարանին յաշխարհն Ուտիացւոց և յԱղուանս և ի Լփնիս և ի Կասպս և ի Դուռն-Ջորա և յայլ ազգի ազգիս, զորս գերութեամբն էր ածեալ Աղեքսանդրի Մակեդոնացւոյ և նստուցեալ զմեծ լերամբն Կովկասու, գդարդարն (սխալ է գդրշադրի, պէտք է լինէր զդղուարն) և զկամիճնիկ Հեփթաղն դարձուցեալ ի հաւատս՝ զկարգ աստուածպաշտութեանն ուսուցանէր, զոր ի վաղնջուց ունեալն էին և մոռացեալք»։ Այժմ պարզւում է խնդիրն, որ այս ցեղերն հրամանաւ Աղեքսանդր Մակեդոնացու գերի բերուած են Սղխատկ-Հօնաց-Հեփթաղների և Պարսկաստանի երկրներից և բնակեցրած վերոյիշեալ գաւառներում։ Ուրեմն Հեփթաղական ծագում ունին այդ ցեղերն, ինչպէս գրում է Կաղանկատուացին։

ԺԷ. ԴԱՐԲԱՆԴԵՑԱՆՔ. Որ յիշուած են Ալիշանի և Կոստանեանի տախտակներում, կոչւում էին Աղուանից Արշակունի թագաւորազուններ, իշխաններ և իշխանազուններ, վասնզի այդ դարերում տակաւին Պարտաւ փոխադրուած չէր թագաւորանիստ աթոռն, այլ մնում էր Ջողայում։ Նոյնպէս և թագաւորայններն և իշխաններն։ Սակայն համոզուած ենք որ Դարբանդեանք բուռն հակա-

1) Սոյն անունները գտնւում են Սամուր գաւառի լեռնադաշտում։



նալու ենք վերևի գլուխ բերուած ցեղերը ամենը միասին, քանզի առանձին առանձին յիշուած չէ տախտակներումն, այլ միայն Լեռնականք անուամբ։

ԺԸ. ՍԵԽՈՐԴԻՔ. Տոհմն սերած է Հայկական զարմից. բայց որովհետև Թխալէմ եղած է Սևորդեաց նահապետն, վասն որոյ կոչուած է Սև, Սևուկ, Սևիկ. հետևապէս և իւր հետադայններն յորջորջուած են Սևորդիք (Յով. Կաթ. եր. 162 և 275. Հայկ. բառագիրք Բ. Հատ. եր. 711. Ղուկ. Ինճ. եր. 335)։ Սևորդեք սկզբում բնակում էին Ջաւէ գաւառում, (այժմեան Ղազախի) Սաւի (Նորագեղ կամ Դլիջ-քենդ) Մէլէք, Նոր-Պիլլա, Նոր-Ոսկեպար, Բաղանիս, Դօշղօթան, Ճճեվանք են գիւղերում (տես «Արցախ» եր. 376—392)։ Յետոյ մեզ անյայտ ժամանակուա Սևորդեք բարձրանում են Զորագետի վերանմասն և բնակութիւն հաստատում ցարդ. այս պատճառաւ այնուհետև կոչւում են Զորայնակք, Զորագետացիք, ինչպէս նշանակուած են նոյն տախտակներում։

ԺԹ. ԽԱԶԻՐՔ. Խազիրք յաճախակի արշաւում էին Աղուանից երկրի վերայ. Խազիրներից մի հատուած բնակելով Բուտի գաւառում, իւրեանց անունով Խազիր անուանեցին այդ գաւառը, որ ժամանակի փոփոխմամբ այժմ կոչւում է Խազախ կամ Ղազախ։ Խազրաց մնացորդներին, որ մահմեդականն են, բնակում են Աղստև և Ոսկեպար գետերի հովիտներում։

Ի. ՊԱՐՍԻԿՆԵՐ. Է. դարում Սասանեանն Միհրան իւր հետ բերում է Աղուանից երկիրն 30,000 երդ (ծուխ) պարսիկ ժողովուրդ և բնակեցնում Աղուանից ցեղի (որ վաղուց հեռացած էր Ներսոյա) բնակած գաւառում, այս է Կաղից ծովի, Կուր և Աղ-սու գետերի և Բօղ-դաղ սարի մինչև տարածուած դաշտի վերայ, իսկ քաղաքներից բերածները բնակեցնում է Աղ-սու քաղաքում։ Այժմ եւս սրա բնակում են նոյն տեղերում։

ԻԱ. ՀՐԷԱՅՔ. Հանրածանօթ է ցեղիս ծագումն. բայց թէ երբ մուտ գործած են երկիրս, տակաւին յայտնի չէ մեզ։ Այժմ ամփոփ մի տեղում չեն Հրէայք, այլ Դարբանդում, Ղուբայում, Բաքուում, Վարդաշէնում, Շամախու Գարգման գաւառի Մխժի գիւղում, ձառում, ևն, սակայն առանձին առանձին թաղերում։

Ի վերջոյ պարտք ենք համարում յայտնել հետևեալը.

Ա. Բացի Հրէաներից և Միհրանի բերած պարսիկներից վերոգրեալ այդ ամեն ցեղերն ընդունած էին Քրիստոնէական կրօնը Լուսաւորչական դաւանութիւնը «Որք էին ամենեքեան հաւատացեալ ի մի կաթուղիկէ առաքելական եկեղեցի (Հայոց)» (Եղիշէ եր. 15. 32. 33. 93. և 246—247)։

Բ. Այդ ցեղերից ոմանք ունեցած են կարճատև կեանք ունեցող թագաւորութիւն, ինչպէս էին Կասպ, Մազքութք, Լփնիք, Բաղասականք. բայց ամենից երկարատև և զօրեղն եղած է Աղուանից Արշակունի թագաւորութիւնն, որ իշխած է երկրի ամբողջ ցեղերի վերայ։

Գ. Աղուանից երկրի քրիստոնեայ ժողովուրդն սկզբից մինչև ցայսօր թէ կրօնական և թէ քաղաքական խնդիրներում միշտ հպատակ և անբաժան եղած է Հայոց ընդհանրական կաթուղիկոսներին և թագաւորներին՝ բացի մի քանի ինքնակոչ (ըստ Գաղանկքի) ճըռ կաթուղիկոսներից։

## ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻ(1)

Պատմագիրս զինքն անուանում է Կաղանկատուացի և իւր ծննդավայր Կաղանկատ գիւղի տեղը մատնանիշ անելու համար պատմում է երկու ցաւալի դէպք։

1) Մինոյն 1860 թուին տպագրուած է Փարիզում Կ. վարդ. Շահնազարեանի և Մոսկվայում պրօֆ. Էմինի ձեռնով. տպուած է նաև գաղղիերէն և ռուսերէն լեզուներով.



Առաջին՝ Յունաց Հերակլ կայսեր զօրքն—«անթիւ բազմութիւն յոյժ՝ բանակեցան յՈւտի (առանձնակ) գաւառի առ հեղեղատաւն, որ ի մէջ սահմանաց դեղջն Կաղանկատուաց ... առ հեղեղատաւն Տրտու (Թարթառ գետի) մօտ ի գիւղն Դիւդական» (Կաղ. Բ. հատ. եր. 103)։ Երկրորդ՝ գրում է. Հերակլի հրամանաւ մեր աշխարհն թափուեցան Խազիրք. ամեն ոք սկսաւ փախչել Պարտաւից դէպի Արցախի ամրութիւններն. «Խազիրք սնդեցան զհետ փախըստէից և հասեալ մասն ինչ նոցա առ ստորոտով լերինն, որ է յանդիման գեղջն մեծի Կաղանկատուաց՝ որ ի նմին յՈւտի (առանձնակ գաւառի) յարմէ և եա» (Կաղ. եր. 104—107)։ Այժմ մի քանի տան մահմեդականներ են բնակում Կաղանկատ գիւղի աւերակում, որ գտնւում է Դիւդական աւերակ գիւղի և Մատաղիս չէն գիւղի միջև Թարթառ գետի ձախ կողմում Պառաւի կամրջի (Ղառըքէօրփի) մօտ։ Աւելի պարզ խօսելով՝ Ուտի-առանձնակ, Զարաբերդ կամ Ջրաբերդ և Մեծ-կողմանք, այժմ Կիւլստան կամ Իգիրմիդիօրդ գաւառների մէջ ընկած սահմանագլուխ է կազմում Կաղանկատ գիւղի աւերակն, որի արևելեան կողմն է Թարթառ գետն, հարաւայինն՝ Վարնկաթաղի կամ Լիւլասաղի սարն և Մատաղիս գիւղն արևմտեանն Մեծ-կողմանց գաւառն և հիւսիսայինն՝ Դիւդական աւերակն և Թալիշ գիւղն։

Ինչպէս երևում է, Մովսէս Կաղանկատուացին ծագմամբ Ուտի ցեղից էր. իւր պատմութեան մէջ Ս. Գրքից յաճախակի վկայութիւններ և օրինակներ գործ ածելուց երևում է, որ Կաղանկատուացին ոչ միայն Ս. Գրքից տեղեկութիւն ունեցած է, այլ և վարդապետ եղած է. իւր երկրի հանքերի և բերքերի մասին տուած տեղեկութիւններից էլ ակներև է, որ բաւական իմաստասիրած էր իւր երկրի արդիւնաբերութիւններն։ Անյայտ են պատմագրիս ծննդեան և մահուան տարեթիւերն. բայց յիշած են սորա

անունը և պատմութիւնը Մխիթար Այրիվանեցին, Կիրակոս Գանձակեցին, Ստեփաննոս Օրբելեան և ուրիշները:

Այդի բանասէրներից ոմանք Ժ դարու պատմիչ են համարում Մովսէս Կաղանկատուացին՝ հիմնուելով Մխիթար Այրիվանեցու այս հակիրճ խօսքի վերայ «Աստ Աղուանից պատմագիրն Մովսէս Կաղանկատուացի եւ Դպիրս Նարեկացի եւ Ուխտանէս պատմագիր» եր. 56—57 և ամ Տեառն 981: Տպ. Մոսկ.: Ոմանք Է. դարու պատմիչ՝ հիմնուելով միենոյն Այրիվանեցու հետեւեալ խօսքի վերայ, եր. 23, որ պատմագիրները դասաւորում է այսպէս. «Ագաթանգեղոս, Զենոբ ասորի, Փաւստոս Բիւզանդ ... Ղազար Փարպեցի, Եղիշէ վարդապետ, Շապուհ Բագրատունի, Եսայի որ ի Հերակլին, Մովսէս Աղուանից, Ղեւոնդ երէց. Ուխտանէս»: Ահա այսպէս Ղեւոնդից էլ, Յովհաննէս կաթողիկոսից էլ առաջ է դասում Կաղանկատուացին: Այրիվանեցու նշանակած այդ երկու թուականների տարբերութիւնն է 980—1000 թիւն Քրիստոսի: Այդ՝ քանի որ Կաղանկատուացին Յովհաննէս կաթողիկոսից և Ղեւոնդ պատմագրից էլ առաջ է. ինչպէս հաստատում է՝ յետոյ իւ կութիւնը ճշտող Մխիթար Անեցին եր. 15, դասելով «Շապուհ, և Սեբէոս, որ ի Հերակլին է, և պատմութիւն Աղուանից, և Ղեւոնդ երիցուն, տէր Յովհաննէս, ևն»:

Ուրեմն ի՞նչ պատճառաւ են համարում Ժ. դարու պատմիչ և ի՞նչ փաստով. արդեօք սխալ չէ՞ այս համարումը:—Այս հանելուկը օրինաւոր կերպով պարզաբանում է Հայոց Մոկացի Անանիա կաթողիկոսի մի ինքնագիր թըղթով, որ գտնուում է ըստ Գէորգեան ցուցակի 102 թ. ձեռագրում և տպագրուած է «Արարատ»ի 1897 ամի մայիս ամսաթուի 129—144 երեսներում(1). շնորհանօք Գալ. Տ. Մկրտչեանի աշխատութեամբ. Հայրապետս յայտնում է.

1) Այս եղելութիւնը նոյնութեամբ պատմում է և Ս. Օրբելեան Բ. հատ. եր. 17—23 տպ. ի Փարիզ



Մայր-Աթոռից առանձնել էին Աղուանից ինքնակոչ Գագիկ կաթողիկոսն և Աղուանից Իշխանակ թագաւորն, որ Ադրներսեհ թագաւորի որդին էր և բարեպաշտ Համամ թագաւորի թոռն, և Մեծ-Սիւնեաց Յակոբ եպիսկոպոսն: Այս երեքն բաղկեդոնիկութեան էին ծաւեցրել Աղուանից և Մեծ-Սիւնեաց ժողովուրդը: Հայոց ՅԳ.—941—942-ին գնացի Խաչէն գաւառն Գրիգոր մեծ իշխանի տունն, որ յուղղութիւն ածեմ այդ ապստամբները, ինչպէս ածած էին իմ նախորդներն: Կազմուեցաւ հոգեւորականաց և իշխանաց մեծ ժողով, որի մէջ պնդում էին թէ Աղուանից բնակիչներն Հայերից առաջ հաւատացած են Քրիստոսին: Խնդրեցի Աղուանից պատմութիւնը որ իմանանք թէ ինչպէս նշանակած է Կաղանկատուացին, այլ «գրաւեալ գաղէնի զպատմութիւնն Աղուանից»:

Անակնկալ երեւան եկն նոյն պատմութեան(1) թերեւս բնագիրն, ամօթահար մնացին ամենն: Աղուանք 440 տարի հպատակ մնացած էին Մայր-Աթոռ Էջմիածնին Ս. Լուսաւորչից սկսեալ մինչև Աբրահամ կաթողիկոսի օրերն: Հայոց Աբրահամ և Յովհաննէս կաթողիկոսի օրով Աղուանք ունենում են երկու ինքնակոչ ապօրինի կաթողիկոս. բայց Հայոց Կոմիտաս կաթողիկոսն կրկին միաբանում է Աղուանից հոգեւորականները և ժողովուրդը Մայր-Աթոռ Էջմիածնի հետ. այսպէս միաբանեալ մնում են 82 տարի եւս. իսկ կրկին ապստամբում են Հայոց Եղիա Արճիշեցու ժամանակ, որ Աղուանք գնալով ձեռնադրում է նոցա համար Ներսէս Բակուրը. սա եւ սկսում է խմորել ժողովուրդը Քաղկեդոնեան խմորով. դարձեալ գնում է Եղիա հայրապետն և

1) Քանի որ Կաղանկատուացու Ա. և Բ. հատորներն միասին արդէն կազմուած գիրք էր Քրիստոսի 941—942-ին, ապա ուրեմն տակաւին գրուած չէր Գ. հատորն: Բաց յայդցանէ չատ և չատ վաղուց վերջացած էին Ա. և Բ. հատորներն, որոց հեղինակն գիրքը Կաղանկատուացի է անուանում և ոչ թէ Դասխուրանցի:

Աղուանից համար կաթուղիկոս օծում Միքէոն սարկաւագապետը։ Այնուհետև փախչում է Հայոց Գէորգ կաթուղիկոսի դրան Յոհան եպիսկոպոսն Աղուանից երկիրն և ինքնակոչ օծւում կաթուղիկոս։ Գնում է Գէորգ հայրապետն և Աղուանից Համամ թագաւորի միջնորդական թախանձանքով Յոհանը հաստատում կաթուղիկոս Աղուանից։ Սորանից յետոյ ինքնակոչ և ապօրինաբար կաթուղիկոս են նստում Աղուանից Միքէոն, Դաւիթ, Սահակ և Գագիկ։ Վերջապէս, տանում է Տէր Անանիա կաթուղիկոսն Հայոց ՅՂԸ—950-ին Բրիտոսի մեռան Աղուանից ինքնակոչ Գագիկ կաթուղիկոսն էր, Մեծ-Սիւնեաց Յակոբն էր. Աղուանից համար կաթուղիկոս օծեցի Խոստակերաց վանքի միաբան Դաւիթը ՆԷ—958-ին։

Հայոց ընդհանուր հայրապետի այդ քաղուածքը մէջ բերելիս այն պատճառաւ՝ որ ընթերցողն չշփոթուի տեսնել թէ այն ինքնակոչներն հարկաւոր տարիներ թագցրած բանտարկած պահել են Աղուանից պատմութեան ցուցակը, որպէս զի ոչ ընդօրինակուի և ոչ տարածուի, որ կարողանան տալ քշել իւրեանց խաբեբայութիւնները։ Կաղանկատուացու ընագրի այս զաղումն է գլխաւոր պատճառն, որ նորանից օրինակներ և վկայութիւններ չեն գրել իւրեանց պատմութեան մէջ Ղևոնդ երէցն, Յովհաննէս կաթուղիկոսն, և այլք, և Կ. Մովսէսի ծննդեան և մահուան ժամանակը ստուգիւ չեն գիտեր։

Աղուանից ինքնակոչ կաթուղիկոսների այս խաբեբայութիւնն երևան գալուց վերջն Մխիթար Անեցին հայ պատմագիրները դասաւորում է այս կարգաւ. «Նախ և առաջին պատմող Ղերուբնայ, Ագաթանգեղոս, Բիւզանդացին Փաւստոս, պատմութիւն Ներսէսի, Կորեան պատմութիւն, Ղազարիկ Փարպեցի, Եղիշէ, Մովսէս Խոր. պատմութիւն, Սեբէոս, պատմութիւն Աղուանից, Ղևոնդ երէց, Տէր Յովհաննէս, են։ (Հայ. Հին. Դպ. եր. 727)։



Բայց յայտնէ չարայարողի անունն ևս Մովսէս լինելով և վերջինս իւր չարայարութիւնը մինչև Քրիստոսի 1000 թուականը հասցրած լինելով, ոմանք չփոթելով կարծած են թէ միևնոյն Կաղանկատուացին է, ուրեմն և Ժ. դարու պատմիչ է Կաղանկատուացին։

Ի նկատի ունենալով Կաղանկատուացու պատմագրութեան ժամանակամիջոցը, համարեա թէ սկսած է նա մօտաւորապէս 625 Փրկչական թուականին և դադարեցուցած Աղուանից Եղիազար և Հայոց Սահակ Գ. կաթուղիկոսի և Վարազ-Տրդատ մեծ իշխանի կենդանութեանց ժամանակ, այս է 684—685 թւին Փրկչի։

Աղուանից պատմութիւնն(1) բաղկացած է երեք հատորից, որից Ա. և Բ. հատորներն պատկանում են Մովսէս Կաղանկատուացու յատուկ գրչին. բայց տեղ տեղ նոյն առաջ դասաւորուած են, մանաւանդ Բ. հատորի վերջի գլուխներին։ Իսկ Գ. հատորն պատկանում է համանուն Մովսէս Դասխուրանցու գրչին։

Իբրև ակնառու պատճէի, Կաղանկատուացու գրածներում կան այնպիսի փաստեր, զորս դժուարին կը լինի խեղաթիւրել կամ ջրջել։ Օրինակ Բ. հատ. ԺԴ. գլ. Աղուանից Վիրոյ կաթուղիկոսին հետ Մովսէս Կաղանկատուացին ևս գնում է Խազրաց Ճաթ արքայորդւոյն մօտ, որպէս գրում է ինքն. «Անդ տեսաք զբազմոցս նոցա ի գուճս ի վերայ ծնգաց .... և զընծայս ողջունին բարձեալ ի վերայ բազկաց մերոց զկնի կաթուղիկոսին» (Տողերս առիթ են տալիս մեզ ասել Կաղանկատուացին կամ Վիրոյի ձեռնասուն սարկաւագն եղած է և կամ աբեղան)։

Երկրորդ՝ Իբրև ակնառու է նկարագրում Ջիւանշիր

1) Կաղանկատուացին թարգմանուած է և տպագրուած Փարիզում Սէն-Մարտինի ձեռնով և Մոսկվայում Ք. Պատկանեանին։ Մեծապէս յարգի է Եւրոպական ազգերին Աղուանից պատմութիւնն։

իշխանի չքեղ և արքայավայել գլխանոցը, պարգևները, սիրամարգը, փիղը և թութակը, գրելով. «Յայնժամ լինէր անդ (ի Պարտաւ աւագի պալատան իշխանին) համաշխարհական ժողով, ուր տեսանէաք զնա (զՋիւանշիր) ... արքայական չքով պճնեալ. պերճացեալ. տեսանէաք եւ զարքայական հաւ ... Զի ի զգեստս խաղուց տեսանէաք ... արտաքոյ պարսպին ... զմահապատիժ փիղս» (Բ. հատ. ԻԸ. գլ.),

Երրորդ՝ Աղուանից Եղիազար կաթողիկոսի օրով Գիս վանքում յայտնուած կենաց փայտի հրաշալի պատմելուց մասին, որը սուրբն Մեսրոպ ծածկել էր, ակնատես լինելով, ասում է. «Լուսոյ Խաչին երևումն ... ամենեցուն տեսեալ զատակութիւն լուսոյն բոցաճաճանչ փայլմամբ եկեալ ընդ ամպս երկնից ... զել և զէջ շողոցն ի վերայ ամենասուրբ Խաչին ... զոր ոչ մեք (միայն) այլ աշխարհս ամենայն եղեն տեսողք մեծապայծառ ճառագայթից» (Բ. հատ. ԼԳ. գլ.)։

Իսկ որ ուշադրութեամբ կարդացած է Աղուանից պատմութիւնը և զգուշութեամբ համեմատած Ա. և Բ. հատորները Գ.-ի հետ, նա ինքնին համոզուած է որ Մ. Դասխուրանցին չարաչարած է Կաղանկատուացու պատմութեան թելը կտրած տեղից։ Վասն զի ամենամեծ և զգալի տարբերութիւն կայ երկուցունց ոճի, նկարագրութեանց, նմանութեանց, բարդութեանց, առանձնայատկութեանց և դարձուածոց մէջ։ Մինչդեռ վառվռուն, յստակ, երկարապատում և գեղեցիկ դրուագ և ճոխաբան են Կաղանկատուացու գրածներն, ընդհակառակն համառօտ, աղքատագին, և օտարազգի բառերով խառն են Դասխուրանցու գրածներն։ Բաց յայսմանէ մինչդեռ Կաղանկատուացին գործ չէ ածում թուական՝ ընդհակառակն Դասխուրանցին թուական է նշանակում ամեն քայլափոխում։ Որովհետև մեր նպատակից դուրս է այս մասին երկար խօսելը, վասնորոյ բաւականանում ենք մատնացոյց անելով միայն վերոյիշ-



նոյ կէտերը։ Որ Գ. հատորի չարաչարողն է Մովսէս Դասխուրանցին, ժամանակաւ աւելի մօտ Գօշ-Մխիթար վարդապետն վկայում է՝ գրելով. «Համարեցաք և զայս եւս հարկաւոր լինել, զի դժար կարգի հայրապետացն գիւտուք զԱղուանից .... զի եթէ ոք յօժարեսցի գրել պատմութիւն զկնի գրեցելոյն պատմութեանն Մովսէսի Դասխուրանցւոյն, որ զբովանդակ պատմէ զազգս Աղուանից, դիւրին լիցի յայսմանէ զկար հայրապետացն առնուլ» (Հայ. Հին. Դպ. պատմ. եր. 696)։

Մասամբ Աղուանից պատմիչներ համարուած են նաև Ղևոնդ Երէցն, Կիրակոս Գանձակեցին, Վարդան Բարձրբերդցին, Յովհաննէս-սարկաւագ Փառխոնցին, վանական վարդապետ Տաւուշեցին, Գօշ-Մխիթար Գանձակեցին, Յովհաննէս վարդապետ Ծարեցին և Եսայի կաթուղիկոս Ջալալեան։

Ի Ս. Էջմիածին Մակար եպիս. Բարխուդարեանց

## ՆԱՀԱՊԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆ

### Ա. գլ.

Տոհմային սովորութիւն.—Նախնի բնակարան.—Ժառանգական իրաւունք.—Իրաւարարներ.—Տնտեսական արտաքին և ներքին գործեր.—Փոքր և մեծ աստուածներ.—Կրօն և պաշտամունք.—Քրմութիւն:

Հայկական ծագում ունեցող ցեղերն Գարգմանցիք, Խաչենեանք, Ուտիացիք և Գարգարացիք իւրեանց հետ բերած էին Հայոց յատուկ սովորութիւնները ամեն բանի

նկատմամբ։ Հայոց բնակարանների նման գետնափոր էին սկզբում Ազատանցոց տները, որ ունէին նեղ նեղ երդիկներ և միջակ մեծութեամբ դռներ։ Բնակարանների մի անկիւնում բնակւում էին գերդաստանները և միւս անկիւնում իւրեանց անասունները, որպիսին նկարագրում է Քսենոփոն Հայաստան մտած ժամանակ։

Ժառանգական էր նահապետական իրաւունքն, ինչպէս իւրաքանչիւր գերդաստանի արու անդրանիկի համար, նոյնպէս և իւրաքանչիւր ցեղապետի արու անդրանիկի համար։ Ամեն տուն ունէր իւր նահապետը, ամեն գիւղ՝ իւր տանուտէրը և ամեն տոհմ՝ իւր ցեղապետը, որ հարազատ հօր նման խնամում և պահպանում էր իւր ցեղակիցները ամբողջապէս, իշխում նոցա վերայ, ի պահանջել հարկին հաւաքում էր նոցանից քաջ տղամարդիկ և ուժեղ ու ընտիր երիտասարդներ, պատերազմում թշնամեաց դէմ և պաշտպանում իւր և իւր տոհմակիցների իրաւունքը, պատիւը և ինչքը։

Իւրաքանչիւր որդւոց և թոռանց մէջ իրաւարարն լինում էր տան նահապետը, բայց երբ չէին լսում տան նահապետին, դիմում էին գիւղի տանուտէրին։ Բնակարանների, վարելահողերի և խոտահարքի հողերը բաժանում էր ցեղապետը, որ չծագէին ներքին խռովութիւններ։ Հասարակաց և անբաժան էին առհասարակ դաշտային և լեռնային արօտատեղերն և ամարանոցներն ընդհանուրի անասունների արածելու համար։

Տնտեսական գործերն բաժանուած էին երկու մասի ընդհանրապէս։ Արական սեռի պարտաւորութիւնն էր հովուութիւն, երկրագործութիւն, շինարարութիւն ամեն ինչով։ Կանայք մանում, հիւսում և գործում էին ոչխարի և այծի և ուղտի բրդից տան անդամոց վերնազգեստի համար շալեր, կարպետներ, պայուսակներ, չուալներ. իսկ բամբակից ներքնազգեստի համար կտաւներ։ Շատ անգամ



էլ որսում էին տղամարդիկ և երիտասարդներն արջ, գայլ, աղուէս, եղջերու, այծեամ և եղնորդ, որոց մորթիները և կաշիները գործ ածում իբրև սփռոց և մաշտակ՝ ձմրան հագուստ։ Կթել, մակարդել, խնոցի հարել, եփել, հունցել, թխել, կարել, կարկատել իգական սեռին էին պատկանում։ Ահա այսպէս բաժանուած էին տնային և անդային գործերն։

Դրսից նոր եկած փոքր հատուածներն հնազանդում էին կանխաւ մուտ գործած մեծ հատուածներին, բնակում նոցա որոշած տեղերում և մասնակցում դրսի թշնամեաց յարձակումների և պատերազմների ժամանակ՝ կանխաւ եկածների հետ։ Բայց դրսից նոր եկող մեծ և ուժեղ հատուածներն, ինչպէս էին Ազատանից և Մակաց հատուածներն, բռնանում էին տեղացի համարուած բնիկների վերայ։

Սկզբում միայն երկինքն եղած է Ազատանից կռօնի, այս է արեգակն, լուսինն և աստղերն։ Արեգակը պաշտում էին իբրև արական սեռի աստուած(1). լուսինը պաշտում էին իբրև իգական սեռի աստուած(2) և աստեղները(3) պաշտում էին իբրև բախտի աստուած։ Սկզբում ամեն տան կռօնապետն եղած է իւր նահապետն (միշտ արական) որ կատարում էր հոգևոր պէտքերը և պաշտամունքը տանց մեհենի։ Սակայն երբ խառնուում են Ազատանք

---

1) Ազատանից քրիստոնեայ ժողովուրդն դեռ մինչև ցայսօր էլ երդւում է միմեանց արեւով-արեգակով։

2) Լուսինն խաւարած ժամանակ զգում են անհնարին ցաւ, աղօթում և ծեծում են պղինձներ, նոր լուսինը տեսածին պէս նուիրում են յարգանք։

3) Գործերն անյաջող գնացողին ասում են. «Աստղը ծոյլ է ընկել. ճակատագիրն է ընկել։ Կրակի վերայ բնաւ ջուր չեն լցնել, դիմաց է. «Գրողը տանի քեզ». «Ճակատին այնպէս էր գրուած»։ Անծանօթ մնացին մեզ Ազատանցւոց պաշտած կուռքերն։

զանազան ցեղեր, որոց մասին խօսած ենք, իւրաքանչիւր տոհմ իւր հաստուածի հետ բերում է իւր նախկին երկրի կրօնը և պաշտամունքները, այնուհետև բաղադրւում և բարդւում են պաշտամունքները։ Որովհետև միմեանցից օրինակում էին պաշտել նաև կրակ, Հրատուխը, գրող, ծառատունկը, և կուռքերը, այս չէնում են մեհեաններ և տաճարներում քուրմեր և քրմապետներ։ Մեհեանների բեկորներն նշմարւում են Սուրբխանում, որ կոչւում է Ծօթնաղբիւրեան բագին, Արտաշեան Խոսրով գիւղի մօտ, կատուն Ղուբայի հիւսիսային կողմում Մալական գիւղի մօտ, Միհրան Բաւրից վերև, որ ի հնումն կոչւում էր Հոմեր. կատուն Ճարի քաղաքի արևմտեան հանդէպ. Քուրմախ Կախաւան գիւղի մօտ (այդ մասին հմմտ տես «Աղ. երկ. եւ Դր.» եր. 80—82)։

Մեծ պատիւ և կարւածներ են ունենում քրմապետները. անպակաս են լինում կախարդութիւն և հմայութիւն և վհկութիւն։

## Բ. ԳԼ.

Ազուանից պատմութեան պակասութիւնն.—Աժդահակի նենգութիւնն.—Ազուանից եւ Վրաց բնիկ զօրերն Հայոց զօրաց մէջ.—Տիգրանի պատերազմն.—Աժդահակի յաղթութիւն եւ սպանութիւն.—Դերութիւն,—Կիւրոսի դաշնակցութիւնն Տիգրանի հետ.—Մարաց եւ Սաւրոց թագաւորութեանց կործանումն:

Հայոց Արամ նահապետն, որ գեղեցիկ կարգերով և կանոններով բարեկարգեց Հայաստանը, յայտնի չէ թէ ինչ արած է Ազուանից համար. նոյնպէս յայտնի չէ թէ



ինչ արած են և նորա հետագայ նահապետներն[1]։ Արամ նահապետի օրից մինչև հայկազն Երուանդեան Տիգրան թագաւորի օրերն անցած է մօտաւորապէս 742 տարի Քրիստոսից առաջ. Ազուանից պատմութեան մէջ պակաս են այդ 742 տարուայ գործերն և եղածներն։ Միայն յայտնի է Խորենացու պատմութիւնից (եր. 77—78 տպ. Տփղիսի) որ Հայոց Տիգրան Երուանդեան թագաւորին և Մարաց Աժդահակին մէջ ծագում է պատերազմ։ Տիգրան Հայոց զօրքի հետ հաւաքում է նաև Ազուանից և Վրաց բնիկ զօրքը և անձամբ դիմաւորում Մարաց բանակին։ Պատերազմի սաստիկ խռնուած ժամանակ սպանւում է Աժդահակ Տիգրանի նիզակի ուժգին հարուածից. Հայաստանի ազատութեան հետ ազատւում է և իւր քոյր Տիգրանուհին. և Աժդահակի Անուշ կինը 10,000 գերիներով միասին բնակեցնում է Մասեացոտն գաւառում։

Պարսից Կիւրոս թագաւորն, որ Մարաց Աժդահակ թագաւորի թոռն էր, հետամուտ է լինում կործանել Մարաց և Բաբելացւոց թագաւորութիւնները. տեսնելով Հայոց թագաւորի զօրեղ դիրքը, կապում է Տիգրանի հետ բարեկամական դաշն՝ օգտակար համարելով իւր նպատակին։ Տիգրան, դարձեալ հաւաքելով Ազուանից և Վրաց—իբրև հպատակ ազգերի—ընտրելագոյն զօրքերը իւր զօրաց հետ, միևնոյն 558 թուին Քրիստոսից առաջ, միանում է Կիւրոսի զօրաց և կործանում Մարաց և Բաբելացւոց թագաւորութիւնները՝ ըստ կանխաձայն մարգարէութեան Երեմիայի (ԾԱ. 24—27) որ ասում է Աստուծոյ կողմից. «Եւ հատու-

1) Արցախի Փառիսոս գաւառում կայ Ճամբռամ անուն մի բերդ (Վարդ. բարձր. եր. 134—135. և «Արցախ» եր. 326—327 Գ. զղեակ իւր ծանօթութեամբ միասին) որի մօտի ձորն էլ Գօշ-Մխիթարն անուանում է Ճամբռամաձոր։ Չգիտենք թէ Արայ-գեղեցիկի յաղթուելուն Ազուանից երկիրն եւ ընկա՞ւ Ասորոց գերիշխանութեան տակ։ Ասորիք շինեցին բերդս թէ Աղուանցիք յանուն այն զզուելի թագուհուն։

ցից Բաբելոնի և բնակչաց Քաղդէացւոցն ըստ ամենայնի չարեաց նոցա ... զի յապականութիւն յաւիտենից եղիցին. ասէ Տէր, Առէք նշան ի վերայ երկրին. փող հարէք ընդ ազգս ամենայն. հրաւիրեցէք ի վերայ դորա (Բաբելոնի) գունդս: Պատուէր տուք յինէն Արարատեան թագաւորութեան և Ասքանազեան գնդին»

Պատերազմն վերջանալուց յետոյ մնում է Հայաստանին Փայտակարան նահանգն, որպէս ասած ենք կանխաւ:

## Դ. ԳԼ.

Պարսից եւ Հայոց դաշանց խախտումն.—Աղուանից եւ Վրաց զօրերն Հայոց զօրքի մէջ իբրեւ օժանդակ.—Պարսից Դարեհ Ա.-ի եւ Հայոց Վահագնի մէջ ծագած երկարատեւ պատերազմն.—Արբելայի պատերազմն.—Հայկազեան եւ Կիւրոսեան թագաւորութեանց փոխանցք:

Մեզ անյայտ պատճառաւ Կիւրոսի և Տիգրանի մահուամբ քանդւում է դաշն և քաղաքական ինչ ինչ հանգամանքներից ծնում է ոխերիմ թշնամութիւն Պարսից Դարեհ Ա.-ի և Հայոց Վահագն թագաւորի մէջ: Տիգրան Ա.-ի օրից սովորութիւն եղաւ որ Հայոց թագաւորներն պատերազմների դէպքերում իւրեանց զօրաց հետ գումարում էին և Աղուանից և Վրաց զօրքերը և ինչպէս հպատակ ցեղերից օժանդակ:

Ինքն Դարեհ Բեհիսթոնի ժայռի սեպաձև արձանագրութեան(1) մէջ նկարագրած է թէ երկարատև եղաւ

1) Արձանագրութեանս պատճէնն բացատրութեամբ հանդերձ կայ 1879 թուի «Արարատ» ամսագրում, իսկ համառօտեալն՝ պատմութ. Հայոց Ս. Պալաս. եր. 44—47:



պատերազմն, այնպէս որ վեց անգամ միմեանց ետևից յղուած Պարսից զօրքն անկարող է լինում յաղթել Հայոց զօրաց: Թէև անորոշ է մնում յաղթութիւնն ըստ արձանագրութեան, սակայն ի նկատի ունենալով որ Հայոց բանաստեղծներն և երգիչներն անմահացուցած են զՎահագն և Վրացիք անգամ աստուացուցած և իբրև աստուած պաշտած(1), երևում է այս հանգամանքից թէ յաղթող հանդիսացած լինի Վահագն, ինչպէս յաղթած էր և վիշապազուններին:

Աղուանից և Վրաց զօրքն 330 տարի Քրիստոսից առաջ մասնակցած է նաև Հայոց Արբելայի պատերազմում ընդդէմ Աղէքսանդր Մակեդոնացւոյ: Այս պատերազմում յաղթում են Մակեդոնացիք, Հայոց Վահէ թագաւորի և Պարսից Դարեհ-Կոդոմանոս թագաւորի մահուամբ վերջանում է Հայկազեան և Կիւրոսեան թագաւորութիւնն և տիրում են Հռովմայեցիք այնուհետև:

# ԿՈՒՍԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՇՐՋԱՆ

## Դ. ԳԼ.

Արշակունեաց ծագումն եւ զօրանալն.—Սելեւկացւոց դէմ կռուիլն եւ յաղթելն մասնակցութեամբ Հայոց եւ Աղուանից.—Արշակ հիմնադիր **Արշակունի** թագաւորութեան Պարսից եւ Հայոց.—Վաղարշակ Հայոց թագաւոր եւ իւր կարգադրութիւններն.—Առան կուսակալ Աղուանից:

Խորենացու վկայութեամբ՝ Արշակունիք կամ որ նոյն է Պարթեւք սերած են Աբրահամ նահապետի Քետուրա կնոջից: «Իսկ օտար պատմիչների վկայու-

1) Թերևս Վրացիք անձամբ տեսնելով Վահագն թագաւորի

թեան նոյնը՝ Պարթեւների իւրեանց ծագումը առնում են այն բարբարոս ցեղերից, որոնց շատ հին ժամանակ Սկիւթացիք աքսորեցին Մէջին-Ասիայից: Նոյն անունը Սկիւթական լեզուով նշանակում է եղել աքսորեալ» (Պատ. Հայ. Ս. Պալաս. եր. 62)։

Պարթեւները իբրև անջատ հաստատուած երկար ժամանակ բնակում են Կասպից ծովի հարաւ-արեւելեան լեռնային վայրերում և հպատակում տիրող կառավարութեանց. 255-ին Քրիստոսից առաջ ապստամբում են Սելեւկացւոց դէմ, տիրում Պարսկաստանին և Հայոց օգնութեամբ իսպառ քշում թշնամին մինչև Ասորոց կողմերը: Այս թագաւորութիւնն՝ իւր հիմնադիր Արշակ Ա-ի անունը կոչուեցաւ Արշակունի և իւր թագաւորութիւնը յանուն Պարսից հաստատեց Պարսկաստանում. իսկ սորա ազգակից թագաւորութիւնն՝ որ մնաց Բագդրիայում, կոչուեցաւ Պարթեւ կամ թագաւորութիւն Պարթեւաց:

Արշակ Ա. Հայոց ամենակալութեան ծառայութիւնը փոխարինելու համար՝ իւր եղբայր Վաղարշակը թագաւորեցնում է Հայոց և Ազուանից վերայ 149-ին Քրիստոսից առաջ: Վաղարշակ Արշակունի Հայոց Ա. թագաւորն հաստատում է իւր աթոռը Մծբին քաղաքում և ի չորս բարեկարգութեան Հայաստանի՝ բաժանում է և Ազուանից երկիրը: Թագաւորն Ազուանից երկրին սահման է որոշում արեւելեան կողմից Երասխ գետը և Կասպից ծովը, արեւմուտքից՝ Հնարակերտ ափերը(¹), հարաւից՝ Արցախեան ամենաբարձր սարերի գագաթնագիծը և հիւսիսից՝ Կովկասեան մեծ սարերի գագաթնագիծը (եւ Դարբանդեան երկաթաձիգ պարիսպը): Վաղարշակ թագաւորն կանչեց ե-

դիւցազնական քաջագործութիւնները, կանգնեցին Վրաստանում արձան յանուն Վահագնի, որը և երկար ժամանակ պաշտեցին իբրև աստուած:

1) Տես «Արցախ» եր. 398—399։



կամուտ վայրենի ազգերը, որք բնակում էին հիւսիսային (Վատնեան) դաշտում, Կովկաս մեծ սարի ստորոտներում կամ հովիտներում և կամ նոյն սարի հարաւահայեաց լանջերի խոր խոր ձորերում և ամբողջ դաշտի բնակիչները, որոց և պատուիրում էր թողնել աւազակութիւնը և մարդասպանութիւնը և հնազանդ կենալ թագաւորական հարկերին: Սա կարգում է իւրաքանչիւր ցեղերի վերայ իւրեանց ցեղապետ նահապետը առաջնորդ և կառավարիչ, իսկ ամբողջ Ազուանից բնակիչների վերայ կարգում է կուսակալ ծագմամբ Յաբեթական տոհմից և Սիսական ցեղից Առանը, որ ամեն գործի մէջ խելացի, հանճարեղ, անուանի և առաջնակարգ մարդ էր: Ցեղս Աղուանի քաղցր բարուց բնութեան պատճառաւ Աղուանք կոչուեցաւ երկիրն. «քանզի Աղու ձայնէին զնա»: Կարծես չկայ որ խելացի և հանճարեղ Առան կուսակալն արած լինելու է շատ օգտակար կարգադրութիւններ և հանրօգուտ բարեկարգութիւններ, որոց մասին սակայն ոչինչ տեղեկութիւն չունինք: Մինչև անգամ յայտնի չէ թէ քանի տարի իշխեց Առան. որ թուին վախճանեցաւ. յաջորդ ունեցաւ և քանի կուսակալ յաջորդեցին միմեանց:—Ոչ ինչ չգիտենք:

## Ե. գլ.

Անյայտ պատմութիւն.—Ազուանից զօրքի նոր կըրթութիւնն.—Ազուանից զօրքն Արտաշէս Ա-ի եւ Տիգրան Բ-ի բանակում:

Կաղանկատուացին, Ա. Հատ. Զ. գլ. գրած է: «Պատմութիւն ճշմարիտ առաւել քան զնախադասեալն Առանայ ի Վաղարշակայ տանս Աղուանից այլ ինչ ոչ գտաք

մինչև ցքաջն Վաչական, որ միանգամայն ազատեց կողմանցս Աղուանից»։ Եւ ես շատ և շատ աշխատեցի, շատ պատմութիւններ թերթեցի և ջանացի լրացնել Առանի օրից մինչև Վաչական Ա. թագաւորի աթոռակալութիւնն, մօտ 100 տարուան պատմութիւն, անկարելի եղաւ այդ։ Միայն գաղ որ Աղուանից զօրքերն ես Արտաշէս Ա.-ի կարգադրութեամբ ստացած են զինուորական նոր կարգ, նոր կրթութիւն և նոր վարժութիւն, ինչպէս գրում է Ս. Պալասանեան եր. 72—73. «Արտաշէս իւր բոլոր ուշքն ու միտքը դարձրեց զինուորութեան վերայ և իւր հպատակներից պատերազմական բանակներ կազմեց, որոնց բազմութեան վերայ մի գաղափար տալու համար՝ հները պատմում են որ եթէ իւրաքանչիւր զինուոր մի մի քար ձգէր մի տեղ, ահագին բլուր էր ձևանում. և եթէ մի մի նետ արձակէին՝ արեգակի լոյսը խաւարում էր»։

Աղուանից զօրքն այնուհետև, ըստ սովորութեան պատերազմների ժամանակ, օգնում էր Հայոց բանակներին, ինչպէս Արտաշէս Ա.-ի, նոյնպէս էլ Տիգրան Բ.-ի և Արտաւազդ Ա.-ի ժամանակ։

## Չ. Գ.

Օտար ազգաց վկայութիւնն Աղուանից զօրաց և նոցա քաջութեանց մասին։

Թէպէտ Հայոց և Աղուանից պատմիչներն ոչ ինչ չեն գրում Աղուանից զօրաց քաջութեանց համար, սակայն մեծ գովեստիւ են խօսում օտարազգի պատմիչք նորա մասին։

Տակիտոս (եր. 254) Հռովմայեցւոց պատմիչն տալիս է մեզ հետևեալ տեղեկութիւնը. Տիբերիոս կայսեր հրամանաւ Գերմանիկոս (զօրավարն) մտաւ Արտաշատ քաղաքն և Հայոց վերայ թագաւոր կարգեց Պոնտոսի Պոլեմոն թագաւորի Զենոն որդին (մօտաւորապէս Քրիստոսի թուի 16-ին) Արտաշէս Գ. անուամբ։ Արտաշէսի մահից յետոյ Պարթևաց Արտաւան (Վաղարշակ) թագաւորն մտաւ Հայաստան, որի վերայ և բռնի թագաւոր հաստատեց իւր երկրորդ որդի Արշակը՝ Հայաստանին տիրելու նպատակաւ։ Տիբերիոս Արտաւանի դէմ հանեց երկու հակառակորդ՝ որք էին Հրահատ և Տրդատ (ազգաւ Արշակունի էին սոքա) և յանձնեց Վրաց Փարսման թագաւորի եղբայր Միհրդատին, որ նուաճէ Հայաստանը և թագաւորէ նորա վերայ։ Միհրդատ օգնութիւն խնդրեց իւր եղբայր Փարսմանից։ Փարսման, դաշնակից անելով Աղուանցիները... յարձակւում է Պարթևաց զօրաբանակի վերայ, որի զօրավարն էր Արտաւան թագաւորի Օրոդ որդին։ Պատերազմի խառնուած ժամանակ սաստիկ վէրք է ստանում գլխից Օրոդ. յաղթող են հանդիսանում Աղուանցիք և յաղթւում են Պարթևները։



Վրացիք և Աղուանցիք, բնակելով անտառային տեղերում, աւելի սովոր են աշխատանաց և խստութեանց մէջ... Վրացիք և Աղուանցիք ընկան թշնամեաց (Պարթևների) վերայ... և ձգեցին կռուին վտանգի մէջ. որովհետև ձիաւորներն բարձրից տեղում էին նոցա վերայ նետերի տարափներ, և հետևակ զօրքն մօտից տագնապում էր հարուածելով... Վրաց Փարսման թագաւորն զարկեց Օրոդի սաղաւարտին վերայ, բայց չկարողացաւ կրկնել հարուածը... Աղուանցիք տարան կատարեալ յաղթութիւնը։ Այն ժամանակ աճապարեց Արտաւան թագաւորն Աղուանցիներից վրէժ լուծել իւր բոլոր զօրութեամբ. բայց Աղուանցիք, քաջածանօթ լինելով տեղերին, կրկին անգամ զօրացան... ապարդիւն հեռանում է Արտաւան (Տակիտոս եր. 254—256)։

# ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ

## Է. դ.

Աղուանից Վաչական Ա. Ներսէս թագաւորն եւ իւր Կոզիս(1) որդին.—Պոմպէոսի պատերազմն Վրաց եւ Աղուանից դէմ եւ միաւորութիւն.—Ստրաբոնի վկայութիւնն Աղուանից երկրի, թագաւորի, քրմապետի, պաշտամանց եւ զօրքի մասին:

Մօտաւորապէս Փրկչական 60 թուականին աթոռակալում է Աղուանից Բաչն-Վաչական Ա. Ներսէս թագաւորն, որի ծագումը Կաղանկատուացին եր. 32. համարում է Արշակունի, իսկ Կիրակոս Գանձակեցին, եր. 112. համարում է ծագած Առանի հետնորդներից, այս է Առանշահիկ տոհմից։ Իսկ մենք համոզուած ենք որ ծագած է Հայոց Արշակունի թագաւորներից, ինչպէս և Հայրապետութիւնն՝ Հայոց ընդհանուր Հայրապետութիւնից Ս. Գրիգորիսով՝ Ս. Լուսաւորչի թոռնով։ Բայց թէ ինչ հանգամանքից և ինչ անհրաժեշտ ստիպմունքից և կամ ինչ բարեպատեհ առթից ծնած է այդ թագաւորութիւնն, մնում է մթութեան մէջ։ Սակայն պարզ է որ «Բաչն Վաչական, որ միանգամայն տիրեաց կողմանցս Աղուանից» (Կաղ. եր. 8). թագաւորեց տիրելով ամբողջ բնիկ և եկամուտ ցեղերի վերայ իւր քաջութեամբ և հաստատապէս հիմնեց Աղուանից թագաւորութիւնը։

Քրիստոսի 65—66 թուականին Հռովմայեցւոց Պոմպէոս զօրավարն յաղթում և հալածում է վերև յիշուած Միհրդատ թագաւորը։ Յաղթուած Միհրդատն փախչում

1) Մովսէս պատմագիրն եր. 130—133 անուանում է Կոզիս:



է դէպի Սև-Հնաց կողմն, որին հետևում է և Պոմպէոս հետապնդելով։ Պոմպէոսին, ասում է, դիմաւորեցին Վրաց թագաւորից յղուած պատգամաւորներն և խնդրեցին ներել Միհրդատին։ Զայրանում է Պոմպէոս, կոտորում Վրացիներից 9000 մարդ և գերեվարում 10,000-ից աւելի։ Այդ միջոցին հասնում է գուժկան թէ ապստամբեցան Աղուանցիք։ Սաստիկ բարկութեամբ լցուած դառնում է Պոմպէոս վրէժ լուծել Աղուանցիներից։ Մեծ դժուարութեամբ և վտանգալի գնացքով անցնում է Կուր գետից, որը տեղ տեղ չերպափակելով ամրացուցած էին բարբարոսներն (Աղուանցիք)։ Ապա խաղում գնում է թշնամիների (Աղուանցւոց) վերայ և գտնում է Աբանտ (այժմ Գեօգ-չայ) գետի ձախ ափին(1) բանակած վաթսուն հազար հետևակ և տասն եւ երկու հազար ձիաւոր զօրքով, որի զօրավարն էր Աղուանից Օրոզէս (Բաչն-Վաչական) թագաւորի որդի Կոսիս, որ կռուի տաք ժամանակ յարձակւում է Պոմպէոսի վերայ և նետը զարկում նորա զրահի կարուած տեղին և վիրաւորում. բայց ինքն էլ վիրաւորւում է Պոմպէոսից (Պլուտ. Զուգ. եր. 286—288)։

Իսկ Ստրաբոն Թ. գիրք, եր. 481, գրած է. «Աղուանցիք(2) սիրում են խաշնարածութիւն. վայրենի են բարքով. քաջ են և թափառական։ Նոցա բնակութեան սահմաններն են արևելքից՝ Կասպից ծովն, արևմտքից՝ Վրացիք, հիւսիսից՝ Կերաւեան (Կովկասեան) լեռներն և հարաւից՝ Հայերն։ Աղուանից միջով հոսում է Կուր և ուրիշ գետեր՝ պաղաբեր գործելով երկիրը, որ առանց վարուցանքի տալիս է մէկին յիսուն։ Այն տեղ մշտադալար կանաչն մատակարարում է անասնոց առատ ճարակ. բարեխառն է երկրի օդն. բնաւ չէ թաղուում խաղողի որթն և հնդ-

1) Ըստ Մովսէսի եր. 130—133։
2) Հատուածս գրաբարն կայ և Կ. մ. Շահ. առաջաբանի մէջ։

տարին մի անգամ յանելով պտղաբերում է միայն. իսկ այծերն ծնում են մի տարում երկու անգամ: Բարձրահասակ են Ագուանցիք և գեղեցիկ, բնաւորութեամբ պարզ և անշահասէր. չգիտեն հարկերից աւելի համբերել, չունին գաղափար չափուց և կշռոց մասին, սակայն առանց բարւոք խելամուտ լինելու՝ բնաւ չեն մտել իրենց անձերը պատերազմական գործի, քաղաքական իրերի և անդաց հերկման: (Ագուանցիք) տալիս են մարմնոյ հեշտասիրութիւնը, գնում և վաճառում են փոխանակութեամբ. պատերազմում են հետի և ձի հեծած՝ զինուած թեթևազէն և սպառազէն Հայոց ձևով: Նոցա (Ագուանից) զինուորներն թւով աւելի են Վրացւոց զինուորներից, որովհետև Պոմպէոսի դէմ պատերազմի հանեցին 60,000 հետևակ և 20,000 ձիաւոր: Թեթև են իրենց զէնքերն, զեղարդներն և տէգի կոթերն, զրահն, վահանն և գազանների մորթուց (չինուած) սաղաւարտ: Ագուանից մասն են կազմում Կասպերն, յորոց առաւ ծովն իր անունը: Որսորդութեան մէջ արագաշարժ և ճարտար են Ագուանցիք և իրենց շուներն: Ագուանցիք այժմ ունին միայն մի թագաւոր (Քաջն Վաչական): Առաջ իւրաքանչիւր ցեղ ունէր իր առանձին թագաւորը: Լեզուների թիւն հասնում է 26-ի. ուստի և չկայ նոցա մէջ սերտ միաբանութիւն: Ագուանից աշխարհն սնուցանում է մահաբեր կենդանիներ, նաև կարիճ և մորմ: Ագուանցիք պաշտում են արեգակը, որից աւելի լուսինը: Նոցա կռատան մէջ կայ քրմապետ, որ թագաւորից յետոյ ունի պատուոյ նախապատւի բարձր և տիրում է շատ գաւառների: Այնտեղ կատարած ներսում ի պատիւ իրենց աստուածուհուն (լուսին) զոհում են զմարդիկ մորթելով: Մեծապէս պատւում են ծերունիները, ազգականները և օտարները. բայց անարժան են համարում պահել մեռելոց յիշատակները, որոց հետ թաղում են և նոցա ստացուած-



ները. իրենց հարց ժառանգութիւնը չվայելելու պատճառաւ ապրում են չքաւորութեան մէջ»:

## Ը. գլ.

Եղիշէ կամ Եղիա առաքեալն Աղուանքում.—Սրա քարոզութիւնները.—Գիս առաջին եկեղեցի Աղուանից.—Սոյն առաքեալի նահատակութիւնը.—Սրա նշխարաց փնտրութիւնը Վաչագան Գ-ի ձեռքով:

Յիսուս Քրիստոսի համբարձմանից յետոյ 34—35 թւին Թադէոս ս. առաքեալն յղւում է Հայաստան քարոզելու, որ իր քարոզութեան սկիզբը սկսում է Աբգար թագաւորի պալատից: Եղիշէն, որ սոյն առաքեալի աշակերտն էր, իր վարդապետի—Թադէոս առաքեալի—նահատակութիւնից յետոյ գնում է Երուսաղէմ, Տեառնեղբայր Յակոբոս առաքեալից ձեռնադրւում եպիսկոպոս և Փրկչական 70 թւին Պարսկաստանի կողմից մտնում Աղուանից երկիրն և իր քարոզութիւնը սկսում Զողա քաղաքի թագաւորական պալատից, որ այն ժամանակ մայրաքաղաքն էր, որի մէջ գահակալում էր քաջն-Վաչական: Ապա այնուհետև Առաքեալս շարունակ քարոզելով և աշակերտելով Ճղբաց, Լփնաց, Բաղասայ, Տամախու գաւառներով հասնում է Ուտեաց Կապաղակ (այժմ Ղապալա) գաւառի Սրհաւն քաղաքն(1) իր երեք աշակերտներով միասին, որոց ետևից գալով ոմանք անօրէն մարդիկ, յորոց նահատակւում է աշակերտներից մին(2): Երկու աշակերտներն՝ թողով իրենց վարդապետը՝ գնում են նա-

1) «Աղուան. երկ. և Դր. եր. 254.
2) « « « « եր. 244.

հասակորդների ձեռքից, իսկ Ս. Եղիշէ հասնում է Գիս(1), կանգնում Աղուանից առաջին եկեղեցին, մատուցանում ս. պատարագ, ապա դառնալով Կապաղակ գաւառն, շարունակ քարոզելով անցնում է Զարդունի գաւառակով, հասնում Հոմենք(2) կոչուած մահապարտների հորին. որի մօտ եղած է և կռատուն. այդտեղ նահատակւում է ս. առաքեալս, որի մարմինն ձգւում է մահապարտաց հորին մէջ։ Անյայտ է նահատակութեան թուականն, յայտնի է միայն որ շատ յետոյ Վաչական Գ. բարեպաշտ թագաւորն ս. առաքեալի ժառանգները փոխադրում է Արցախ, կառուցանել տալիս Ջրվշտիկ վանքը(3) յանուն Եղիշէ առաքեալի, որի նշխարները հանգուցանում նորա մէջ. իսկ առաքեալի պատուական գլուխը ամփոփում է Գիլոյ վանքում(4)։

## Թ. գլ.

Ինքնակալ թագաւոր Հայոց.—Արտաշէս Բ. թագաւոր.—Օժանդակութիւն Աղուանից.—Սպանումն Երուանդայ.—Արշաւանք Ալանաց.—Յաղթութիւն Արտաշէսի եւ ամուսնութիւն.—Վաչէ Ա. թագաւոր։

Երուանդ անուն մի նախարար Հայոց ջնջում է Սանատրուկ թագաւորի արական ցեղը և ինքնակալ թագաւորում Հայոց վերայ, մօր կողմից Արշակունի լինելով։ Կոտորածից ազատւում է միայն Արտաշէս անուն մի որ-

1) «Աղուան. եկեղ. և Դր. եր. 269—270.
2) «Աղ. եր. և Դր.» 256,
3) «Արցախ» եր. 234, իւր 36 ծանօթութեամբ.
4) « եր. 228 « 33 « միասին։



դի, որը Սմբատ Բագրատունին փախցրած էր Պարսից արքունիքն։ Փրկչական 85 թւին Արտաշէս Բ. Պարսից Դարեհ թագաւորից թագադրուած մտնում է Ուտի նահանգն պարսկական ստւար զօրքով։ Թագադիր Սմբատ Բագրատունին, որ Արտաշէսի փախցնողն, ազատողն և դայեկի դեր կատարողն է լինում, հաւաքում է և Աղուանից զօրքը և միացեալ ուժով յարձակւում Երուանդի վերայ Սևանայ լճի մօտ։

Յաղթւում է Երուանդեան բանակն և սպանւում է ինքն մարդասպան Երուանդն իւր շինած Երուանդակերտում և թագաւորում է Արտաշէս Բ.։

Վրացւոց դրդմամբ Ալանք հիւսիսային ցեղերով և Վրաց զօրքի մի մասով մտնում են Աղուանից երկիրն, անցնում Կուր գետի աջ ափն և գործում աւերմունքներ։ Հասնում է իւր զօրքով Արտաշէս Բ., որի զօրացն միանում է և Աղուանից զօրքն. սաստկանում է պատերազմն, յաղթւում է Ալանաց և Վրաց զօրքն և անապարանօք անցնում Կուր գետի ձախ ափն, բայց Հայոց ձեռքն գերի է ընկնում Ալանաց թագաւորի որդին, որի հայրն իւր Սաթենիկ դուստրը կնութեան տալով Արտաշէս Բ-ին ազատում է իւր որդին և հեռանում գնում իւր երկիրն։

Յովսեպոս, Յաղ. պատերազ. Հրէից եր. 466—469 ապ. Էջմիածին 1787, գրած է թէ Վեսպիանոս կայսեր չորրորդ տարում Ալանները խորհուրդ արին որ ասպատակեն և աւարեն Մարաց երկիրը և ուրիշ գաւառներ. բայց որովհետև ճանապարհին անցքը (Դարբանդի դռները) Մակեդոնացւոց Աղէքսանդր թագաւորն փակած էր երկաթի դռներով. բանալ տալով համարձակութեամբ կողոպտելով հասան մինչև Հայաստան, որի թագաւորն էր Արտաշէս, որ երբ պատահեց նոցա զօրքով, քիչ մնաց որ կենդանի բռնուէր նոցանից. քանզի Ալաններից մին ձգեց պարանը և ըմբռնելով զԱրտաշէս՝ ուժգին քաշեց, բայց Արտաշէս

սրով խոյն կտրելով պարանը, փախաւ և ազատուեցաւ։

Վաչէ Ա. յաջորդում է Բաշն-Վաչական թագաւորին Աղուանից Վաչական Ա-ի մահից յետոյ։

## Ժ. գլ.

**Խազրաց և Բասլաց արշաւանքը.—Վաղարշակ Բ-ի ճակատամարտը, և մահը.—Խոսրով Ա. թագաւորի վրէժխնդրութիւնը.—Հայոց և Աղուանից երկիրները Պարսից իշխանութեան տակ։**

Փրկչական 213-ին Դարբանդի դռնով հեղեղի նման թափւում են Աղուանից երկիրն Խազրաց և Բասլաց ցեղերն, և սկսում են աւերելով, քանդելով և կոտորելով անցնել Կուր գետից և ասպատակել Հայոց երկիրը։ Հասնում է իւր զօրքով Վաղարշակ Բ. Հայոց թագաւորն, անում մեծ կոտորած, հայ և աղուան զօրքով դուրս հալածում միացեալ թշնամին Դարբանդի դռնից, բայց անբախտաբար յաղթանակի վերջին րոպէին սպանւում է Վաղարշակ նետահար խոցուելով թշնամուց։

Միևնոյն 213-ին հայ և աղուան միացեալ զօրքով Հայոց մեծն Խոսրով անցնում է Դարբանդի դռնից, լուծում իւր Վաղարշակ հօր սպանման վրէժը հիւսիսային ցեղերից, յորոց և առնում հարիւրից մին պատանդ, ի յիշատակ իւր փառաւոր յաղթութեան կանգնում է յունարէն գրերով մի արձան, և դառնում Հայաստան։

Փրկչական 261-ին նենգութեամբ սպանւում է մեծն Խոսրով Հայոց թագաւորն. 26 տարի մնում են Պարսից իշխանութեան ենթարկուած Հայաստան և Աղուանք. փախչում է Հռոմ Խոսրով թագաւորի որդի Տրդատն և Պարսիկներն չեն թողնում, որ վախճանուած Վաչէ թագաւո-



րին տեղ դահակալէ մէկին. վասն որոյ համարեա թէ աւերւում և քանդւում են երկու անտէր մնացած երկիրները։

## ԺԱ. գլ.

**Տրդատ թագաւոր Հայոց և պատերազմ Պարսից դէմ.—Ուռնայր անձնական քաջութեամբ օժանդակ Տրդատի և յետոյ թագաւոր Աղուանից.—Հայոց և Աղուանից հոգևոր լուսաւորութիւնն Ս. Լուսաւորչի ձեռնով։**

Թագով պսակուած Հռոմից դառնում է Հայաստան Տրդատ թագաւորն զրահապատուած Հայոց և Հռոմէացւոց զօրքով 287—289 և հալածում Հայաստանից և Աղուանքից վերջին պարսիկը։ Հայոց և Աղուանից զօրքով Տրդատ թագաւորն Ուռնայրի հետ արշաւում է Պարսկաստանի վերայ, գողցես հրաշքներ գործելով հասնում է Պարսկաստանի խորքերն, տարածում սարսափ չքնաղ ցեղերի վերայ, նորոգում Հայաստանի և Աղուանից նախկին փառքը, կարգերը և կանոնները։ Ուռնայր Վաչականեան թագաւորական տոհմից էր և Պարսից Շապուհ Ա. թագաւորի քրոջ ամուսինն, որ ամէն ժամանակ օգնած էր Տրդատին բոլոր պատերազմներում և իւր նշանաւոր քաջութեան պատճառաւ ժառանգած յաղթող անունը, ըստ վկայութեան Կաղանկատուացու (Ա, հատ, Թ. գլ.) «Եւ էր Ուռնայր արքայ Աղուանից քեռայր Շապհոյ (Ա.) Պարսից արքային, քաջազօր այր, որ ի մեծամեծ պատերազմունս գնդակալ անուն ժառանգեալ, ի մէջ Հայաստանեայց նշան յաղթութեան կանգնեալ»։ Ուռնայր դաշնակցած է երեւում Տրդատի հաճութեամբ, մօտաւորապէս Փրկչական 300—301 թուականին։

Հայոց հոգևոր լուսաւորութիւնն սկսած էր Փրկչական 34-ին Թադէոս և Բարդուղիմէոս Ս. Առաքեալների ձեռնով Ս. Աւետարանի քարոզութեամբ։ Սոցա աշակերտներից մին Թադէոս անուն հիմնարկում է Տաթևի վանքը Մեծ-Սիւնիքում և յետոյ գնում և ծածկաբար կրօնաւորում է Փոքր-Սիւնիքում. և այս նորս ճգնած անցում Թաթայի ձորում վանք չինուեցաւ Թադէոսի վանք, այժմ Դաւաճի կամ Խութայ վանք (Միք. Աս. Յազգ. Քամ. եր. 33)։ Նոյն հեղինակն նոյն երեսում գրում է. ցնցիշէ և Խադ. երկուքն սոքա յեօթանասնիցն են և գնացին ի կողմանս Աղուանից հրամանաւ Թադէի և անդ կատարեցան։ Թերևս Խադի անուամբ կառուցուած լինի Խաթրայ վանքն։ Ղազար Ջահկեցի եր. 577—578 կրկնում է նոյնը Թադէոսի համար, որ եօթանասնիցն էր, որի անուամբ չինուեցաւ և Տաթև վանքն։

Սակայն Աստուծոյ նախախնամութիւնն Հայաստանի և Աղուանքի ընդհանուր Լուսաւորութիւնը վերապահած էր աւելի բազմաչարչար Առաքեալի Ս. Լուսաւորչի ձեռնով մատակարարելու։ Ինչպէս ձմրան ձիւներն նստելով երկրի վերայ՝ փափկացնում և զօրացնում են հողը՝ գարնան ընդհանուր բուսականութիւնը աճեցնելու և ծաղկեցնելու համար, նոյնպէս Թադէոս և Բարդուղիմէոս Ս. Առաքեալների և սոցա աշակերտների Հայաստանում և Աղուանքում թափած ս. արիւնն և ամփոփուած մարմիններն և Աստուծոյ կենաց խօսքերն փափկացրած էին բնակչաց կարծր սրտերը՝ ընդունելու Քրիստոնէութեան հաւատը, խոնարհեցնելու Քրիստոսի քաղցր լծի տակ, ծաղկեցնելու և աճեցնելու Ս. Աւետարանի սերմերը և բերելու աստուածահաճոյութեան պտուղներ։

Ուռնայր թագաւորն, երբ լսում է Ս. Գրիգոր Լուսաւորչի Կեսարիայից գալուստը, առնում է իւր հետ Գարդմանցւոց, Կասպից, Լփնայ, Ճղբայ և Գղուարայ իշխան-



ները և իւր զօրքը և Տրդատ թագաւորի հետ դիմաւորում Ս. Լուսաւորչին Եփրատ գետի վերայ, որի մէջ նախ մկրտւում են երկու թագաւորներս իւրեանց գերդաստաններով և զօրքով և նախարարներով և ապա ժողովուրդն, նոյնպէս և Կեսարիայից դարձած Ուտիացւոց, Գարդմանացւոց և Ծովդէացւոց իշխաններն։ Կործանում են այնուհետև Հայաստանի կռատուններն, չինում են եկեղեցիներ, ձեռնադրւում են եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ և եկեղեցւոյ ստորին սպասաւորներ։

Հայաստանը լուսաւորելուց յետոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ, շրջապատուած Աղուանից թագաւորով և իշխաններով, մտնում է Աղուանից երկիրն։ Մարդազոհութիւնից զզուած, հեթանոսական խայտառակ պաշտամունքներից ձանձրացած ժողովուրդն աճապարում է լսել Ս. Հայրապետի աստուածաբան քարոզները. հեռանում է հեթանոսական սովորութիւններից, ընդունում է վերստին ծնունդ Ս. Մկրտութիւնը, գրկում է Քրիստոնէութիւնը և կործանում է կռատունները։ Ս. Լուսաւորիչ նախ անձամբ հիմնարկում է առաջին եկեղեցին Արցախի Վարանդայ գաւառի Ամարաս գիւղաքաղաքում(1). և անդ եպիսկոպոս վերակացու կարգում Աղուանից բնակչաց համար։ Քանդւում են այնուհետև կռատուններն, չինում են տաճարներ, ձեռնադրւում են քահանաներ և հոգևոր պաշտօնեաներ օժանդակութեամբ և ջերմագին ջանքով Ուռնայրի. «Իջ թագաւորն (Ուռնայր) յամենասուրբ ջուրն և ամենայն զօրքն ընդ նմա։ Եւ կատարեաց զնոսա քահանայապետն (Ս. Լուսաւորիչ) ի վերստին ծնունդն յերկնաւոր որդեգրութիւն և եղին ամենեքեան լցեալ Հոգւովն Սրբով ....։ Այսու երկնաւոր բարեօք լցեալ՝ եկն Ուռնայր արքայ նստաւ յաշխարհն Աղուանից, ասայց և կատարեաց

1) «Արցախ» եր. 113—115 և եր. 422։

զնոսա առաքելական կանոնք. ընկալան ամենքեան զգիրս երկնաւոր» (Կաղանկ. Ա. հատ. ԺԱ. գլ.): «Երթեալ (Ս. Լուսաւորիչն) լուսաւորէր զՎրաց և զԱղուանից աշխարհն: Երթեալ ի Հաբանդ (Վարանդայ) գաւառ՝ ուսուցանէր և խրատէր պահել զպատուիրանս Աստուծոյ և արկանէր հիմն եկեղեցւոյն ի գիւղաքաղաքին Ամարասայ....» (Նոյն ԺԴ. գլ.):

Աղուանից առաջին հայրապետն համարուած է
1) Եղիշ կամ Եղիշէ առաքեալ.
2) Ոմն օտարազգի(¹) ձեռնադրեալ Ս. Լուսաւորչից:

## ԺԲ. գլ.

Պարսից չար նախանձն.—Սեւ-Հոնաց արշաւանքն.—Տրդատի եւ Ուռնայրի յաղթութիւնն.—Շապուհի պատժուիլն:

Մի քանի տարուան ընթացքում քրիստոնէութեան արագ ծաւալումն ողջ Հայաստանում, Աղուանքում և Վրաստանում, համարեա թէ մշտախայտ փուշ է դառնում հրապաշտ Պարսից աչքին: Չար օրինակ Հռոմայեցւոց կայսերաց ժամանակ երկար պատերազմեց Հեթանոսութիւնն Քրիստոնէութեան դէմ, և Խաչակրաց ժամանակ՝ Ղուրանն Աւետարանի դէմ, նմանապէս Սասանեան թագաւորների ժամանակ Զրադաշտական կրօնն երկար պատերազմում է Հայոց, Աղուանից և Վրաց ջերմ աստուածպաշտութեան դէմ:

1) Ըստ Գիւտ եպիսկոպոսի «Տրդատ թագաւորի հետ եկած Հռոմ քաղաքից և ձեռնադրուած Լուսաւորչից». ըստ Գոշ-Մխիթարի «Սուրբն Շուփխաղիշոյ». իսկ ըստ Կիրակոսի. «Եւ ձեռնադրէ Ս. Գրիգոր զայր մի ի սպասաւորաց եպիսկոպոս» (վասն Աղուանից).



Սասանեան Շապուհ Բ. ախտածելով Տրդատի հուժկուութից՝ նախ սկսում է գրգռել Սեւ-Հոնաց ցեղերը Հայոց և Աղուանից դէմ: Ուռնայր թագաւորն իմանալով այս՝ ազդարարում է Տրդատ թագաւորին, որ իւր զօրքով միանում է Աղուանից զօրքին Գարգարացւոց դաշտում: Այդտեղ ճակատում են միմեանց բանակները, խառնւում են երկուստեք զօրքերն, սաստկանում է կռիւն. այդ միջոցին Բասլաց Գեղեհոն թագաւորն, տեսնելով իւր զօրաց յաղթուիլը, ձգում է իւր կռուէ պարանը՝ որ ըմբռնէ Հայոց թագաւորը: Բայց Տրդատ զօրեղ ուժով քաշում է պարանը, մօտեցնում իրան հակառակորդը և թրի մի ուժգին հարուածով միջնակտուր անում Բասլաց թագաւորը—ամբարտաւան Գեղեհոնը և կոտորելով հալածում նորա յաղթուած զօրքը մինչև Սեւ-Հոնաց երկիրն, առնում պատանդներ և դառնում:

Շապուհ Բ.-ը խրատելու համար Տրդատ թագաւորն 319—320-ին Հայոց և Աղուանից զօրքով արշաւում է Պարսից վերայ և գրաւում ամբողջ Ատրպատականը: Եւ այն ինչ պատրաստւում էր խաղալ դէպի խորին Պարսկաստան, Շապուհ ստիպուած դիմում է Կոստանդիանոս կայսեր միջնորդութեան և խնդրում հաշտութիւն: Տրդատ յարգելով Կոստանդիանոսի միջնորդութիւնը, անում է հաշտութիւն, թողնում իւր զօրաց մի մասը Թաւրիզում և դառնում Հայաստան:

## ԺԳ. գլ.

Գրիգորիս կաթողիկոս Աղուանից.—Նորա քարոզութիւնները եւ նահատակութիւնն.—Տէր Մաշտոց Ս.—Սանեսան թագաւորի արշաւանքն եւ մահն:

Վախճանում է Ս. Լուսաւորչից ձեռնադրուած Աղուանից կաթողիկոսն. վասն որոյ Ուռնայր թագաւորն խնդրում է Ս. Լուսաւորչից որ Ս. Գրի-

գորխը Աղուանից համար կաթուղիկոս ձեռնադրել. «զի Ուռնայր արքայն մեր խնդրեաց ի Սրբոյն Գրիգորէ նորին ձեռնադրութեամբ լինել եպիսկոպոս աշխարհին իւրոյ, որ և այսու կանոնաւ կացին աշխարհն Հայոց և Աղուանից համակամ եղբայրութեամբ և անքակ ուխտիւ մինչև ցայսօր» (Կաղ. Հատ. Ա. գլ. Թ.):

Ս. Լուսաւորչի թոռն և Ս. Վրթանեսի որդին էր

3) Ս. Գրիգորիս, որ փոքր հասակում կաթուղիկոս ձեռնադրուեցաւ Ս. Լուսաւորչից Աղուանից և Վրաց համար (¹)։ «Գրիգորիս՝ որ կոչուեցաւ իւր պապի անունով և հաւատարմեցաւ համանման նորա առաքինի վարուց, չանուանացաւ աշխարհական անուանութեամբ, այլ փափագելով ցանկանում էր հայրենի հոգևոր ժառանգութեան։ Եւ արդէն սպայական հասակից վարժեցնում էր զինքը աստուածաշունչ գրոց կրթութեամբ, և պարկեշտացուցանում էր իւր մարմնոյ զգայարանքները պահօք և աղօթքով. լուսաւորում էր սիրոյ հաւատով իւր հոգին և իւր վերայ փայլեցնում էր իւր պապի՝ Գրիգոր Մեծի գերաշխարհիկ երկու բարձր պատիւները—Քահանայապետութեան պատիւ և աթոռը և ամեն տեսակ բարութեանց մաշտիպառութեան՝ պսակը։ Որովհետև տասնեհինգ տարեկան հասակում Վրաց և Աղուանից համար եպիսկոպոս ձեռնադրուեցաւ մանուկ (պատանի) Գրիգորիսն, որ գնալով լուսաւորում էր երկու աշխարհները և հաստատում էր զդենալ Քրիստոսի հաւատոյն. շինում էր եկեղեցիներ քաղաքների և գիւղերի համար ընդունուած կարգով և ձեռնադրում էր երէցներ. յորդորում էր սուրբ պաշտօնեա-

1) Ղազար Ջամ. եր. 612—613, գրած է. «Իսկ աթոռ կաթուղիկոսութեան Աղուանից ի Լուսաւորչէն միրմէ հաստատեցաւ. քանզի ... ձեռնադրեաց կաթուղիկոս զքենաղագեղ թոռն իւր ըզսուրբն Գրիգորիս և յղեաց յԱղուանս և անդ եղև աթոռ կաթուղիկոսութեան»։



րով միշտ կատարել սրբոց յիշատակը։ Եւ նախանձելով առաքելական ուղղութեան բարի նախանձով՝ կատարում էր մարմնացեալ Աստուածորդուն հրամանը—շրջելով ամեն հեթանոսների մէջ՝ մկրտում էր յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, սովորում էր պահել տէրունական ամեն պատուիրանները և չառնել իւր հետ ոսկի, արծաթ և պղինձ, և պարկ անգամ և ցուպ։ Երանելին զգուշանալով այս բոլորից՝ իբրև թոշակ առած էր իւր հետ մեծ քահանայապետին և մարտիրոսին, այսինքն Յովհաննէս Մկրտչի հօր Զաքարիայի պատուական նշխարից մասը և Ս. Պանդալիոնի մասը. .. այս մասունքները տանելով Աղուանից իշխանութեան մէջ եղած Ցաի (¹) մեծ քաղաքն՝ շինում էր մի փոքրիկ եկեղեցի և գնում էր այնտեղ մեծ զգուշութեամբ ս. նշխարները և թողում էր մի սպասաւոր քահանայ. . . . Ս. Գրիգորիս գնալով Մազքթաց աշխարհն, ներկայանում է Մազքթաց Սանեսան թագաւորին և քարոզում անճառելի Ս. Երրորդութիւնը, Փրկչի մարմնանալը, հրաշագործութիւնները, խաչելութիւնը, երկինք համբառնալը, և երկրորդ գալուստը։ Սկզբում ըն-

1) Տես «Աղ. երկ. և Գր.» եր. 143—145։ Գօշ-Մխիթարն դասաւորած է այսպէս. «Ա. Ս-ն Շուփհալիշոյ. Բ. Մատթէ. Գ. Սահակ. Դ. Կարէն. Ե. Պանա. Զ. Ղազար. սա շինեաց զՂազարապատ գանալ ի Բեղամէջս (բոլորովին անյայտ անգանուն) և զոր եկեղեցին Պանդալիոնի և շինէ ահաւոր տեսլեամբ։ Եւ ի սրբոյն Եղիշայէ մինչ ցՍուրբն Գրիգոր ամք Յ. (300). և ապա խնդրեցին Աղուանք ի Հայոց կաթուղիկոս զՍուրբն Գրիգորիս ի ԵԺ. ամի (հնգետասան ամաց) ձեռնադրեալ ի հայրապետութիւն»։ Իսկ Դասխուրանցին գրած է. «Սուրբն Եղիշայ ... եկն լուսաւորիչ երից աշխարհացս Չորայ, Լփնաց և Աղուանից։ Ս. մանուկն Գրիգորիս։ Սուրբն Շուփհաղիշոյ։ Տէր Մատթէոս։ Սկր. Գանձ. Մատթէ։ Այրիվանեցի եր. 19. Ս. Եղիշայ, Ս. Գրիգորիս, Տէր Շուփհաղիշայ, Տէր Մատթէոս, Տէր Սահակ, Տէր Մովսէս, Տէր Ղազար։ Միքայէլ Ասորի Ցաղ. Քահան. եր. 33—35. «Գրիգորիս .. կաթուղիկոս Աղուանից եկաց 6 ամ»։

գտնում են քրիստոնէութիւնը, խնդութեամբ հաստատում են Քրիստոսին։ Բայց որովհետև իր քարոզութեան մէջ ասում էր Աստուծոյ կամքն այս է որ ամեն մարդ աշխատէ իր ձեռքով և ապրի իր աշխատանքով. ոչ յափշտակութիւն անէ, ոչ ստրկութիւն և ոչ գողութիւն... Յետոյ ասում են. «Հայոց թագաւորի կեղծաւորութիւնն է այդ՝ արգելել զմեզ Հայաստանի ազատութիւնից. եթէ ազատութիւն չունենք, ինչի՞ պէտք է ապրենք»։ Յետոյ թագաւորը եւս համոզելով բռնում են Գրիգորիսը, կապում մի ամեհի ձիու ագուից և արձակում Վատնեան դաշտում և նահատակում (Այս պատմութեան մասին տես «Աղ. եղկ. եւ Դր.» եր. 105—106)։ Յով. կաթ. եր. 56. ասում է թէ Սանատրուկ ինքնակոչ և ապստամբ թագաւորի հրամանաւ նահատակուած է Ս. Գրիգորիս.

Աշակերտները վերցնում են Ս. Գրիգորիսի մարմինը և տանում Ամարաս և ամփոփում այն եկեղեցում, որը հիմնարկած էր Ս. Գր. Լուսաւորիչ։ Նահատակին յաջորդում է 4) Տէր Մաթէոս Ա.։

Ապարդիւն չեն մնում Ս. Գրիգորիսի հոգեւորական քարոզութիւնն, սերմած ս. Աւետարանի սերմերն և իր թափած արիւնը։ Սանեսանայ երեք որդիքն Մովսէս, Դանիէլ և Եղիա և միանգամայն 3870 անձինք հաստատում են Քրիստոսին, մկրտւում Ս. Գրիգորիսի ձեռով յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ապա իւրեանց հոգեւոր ծնողի նահատակուելուց յետոյ միասին գալիս են Արցախ և բարձրանալով Դիզափայտ բարձր սարի գագաթն ճգնում են այնտեղ։

Պարսից թագաւորի գրգռմամբ՝ 343-ին Սանեսան Մազքթաց թագաւորն հաւաքում է Սև-Հոնաց ցեղերը (մանաւանդ լսելով ահարկու Տրդատի մահը) նախ համարձակ արշաւում է Դիզափայտ, անձամբ խողխողում իր երեք որդիքը օգոստոսի 9-ին, ապա կատարել տալիս այն



3870 նորահաւատ ճգնողները (1)։ Ապա հասնում են Հայոց նախարարներն իւրեանց զօրքով և Ուռնայր թագաւորն իւր. սպանւում է Սանեսան և բնաջինջ են լինում իր զօրքերն։

## ԺԴ. ԳԼ

Քաղաքական փոփոխութիւն.—Պարսից զօրանալը. Հայոց եւ Աղուանից տկարանալը.—Հիւսիսային ցեղերն Աղուանքում.—Ուռնայր Մեհրուժան զօրքի.—Զիրաւ դաշտի պատերազմը.—Պարսից յաղթութիւնը. Ուռնայր բազուկի վէրքն եւ մահն:

Սասանեան պետութիւնն գնալով գնում է և զօրանում. իսկ Հայոց և Աղուանից տէրութիւնները իջնելով իջնում են և տկարանալով տկարանում։ Վախճանւում է ահարկուն Տրդատ, սպանւում է Յունաց կայսրն չար Յուլիանոս, յաղթող են հանդիսանում Պարսիկները. դժոխքից աւելի է բորբոքւում Զրադաշտական կրակն, որին ենթարկւում են այնուհետև Հայոց, Վրաց և Աղուանից թագաւորութիւնները. միմեանց ետևից փոփոխւում են Պարսիկներին խաղալիք եղած աթոռակալները. 343—388 թուականին վախճանւում և դաւաճանելից են լինում Խոսրով Բ. Տիրան Բ. Արշակ Բ. և Պապ Հայոց Արշակունի թագաւորները։ Հիւսիսային ցեղերն չորս տարի բնակւում են Աղուանքում և պատճառում Հայոց եւ նեղութիւններ. ապստամբում է Հայոց դէմ Արշակունի Սանատրուկ՝ գրգռմամբ Շապուհին՝ թագ. կա-

1) Մխ. Այրիվ. առ. Մոսկ. այս նահատակութիւնը դնում է 352-ին. «Արցախ» եր. 422։ Սարգս վերայ Վաչական Գ. թագաւորն Աղուանից՝ շինել տուած է եղել մի նշանաւոր վանք ի պատիւ նահատակաց. այժմ մի մատուռ է։

պելով Ինքնագլուխ. Շապուհ Բ.-ի գործիք է դառնում ուրացեալն Մեհրուժան Արծրունին. ենթարկւում են աւերմանց Հայաստան և Աղուանք. տեղի է ունենում Ձիրաւ դաշտի արիւնահեղ պատերազմն. բարձրանում է Ներպատ սարի գլուխն Մեծն Ներսէս, բազկատարած աղօթում է Մովսէս մարգարէի պէս, միախառնում է հայյոց և աղուան զօրաբանակն և ճակատում Պարսից բանակի դէմ։ Սաստկանում է պատերազմն, սպանւում է Լեկաց Շերգիր թագաւորն, լցւում է դաշտն պարսիկ դիակներով, յաղթւում է նոր աւագէկ թշնամի բանակն. հրացեալ շամփրով պսակւում է ուրացեալ Մեհրուժանն. սակայն մահացու վէրք է ստանում բարեպաշտ Ուռնայր թագաւորն և վախճանւում(1)։

Միմեանց ետևից գահակալում են և մեզ անյայտ պատճառաւ վախճանւում Աղուանից Վաչական Բ. Միրհաւան, Սատոյ, և Ասայ թագաւորներն նոյնպէս և.

5) Տէր Սահակ Ա.
6) Տէր Մովսէս Ա.
7) Տէր Պանդ.
8) Տէր Ղազար.
9) Տէր Զաքարիա Ա.
10) Տէր Դաւիթ Ա. (Դօշ-Մխիթար. «Այսոքիկ են, որ ի Զօլ (Զօղա) հայրապետք նստան Զաքարիա, Դաւիթ, Սուրբն Յոհան, Երեմիա)։ Ահա այսպէս էր 343—399 Հայոց և Աղուանից հոգևոր և մարմնաւոր կենաց պատկերն։

1) Պատ. Աղ Ա. հատ. ԺԴ. գլ.



## ԺԵ. գլ.

Հայոց եւ Աղուանից ճակատագիրն.—Սրտաճմլիկ տեսարան. — Յաջորդութիւններ. — Հայկական ցանկագիր Հայոց, Վրաց եւ Աղուանից։

Տեսանք թէ ինչպէս կապուած էր Աղուանից ճակատագիրն Հայոց ճակատագրի հետ, կուսակցութիւնն՝ կուսակցութեան հետ, տէրութեան բարձրանալն՝ բարձրանալուն հետ. տկարանալն՝ տկարանալուն հետ. վերջապէս քրիստոնէական լուսաւորութիւնն լուսաւորութեան հետ, փառքն փառաց հետ. ուրախութիւնն՝ ուրախութեան և տրտմութիւնն՝ տրտմութեան հետ։

Խիստ ողորմելի է լինում Աղուանից դրութիւնն և միանգամայն անտանելի, քանզի խախտւում է իր թև ու թիկունք Հայոց թագաւորութիւնն. Հայաստանի բաժանմամբ ջլատւում է Հայոց միացեալ ուժն. անտանելի բռնութիւններ են գործում Պարսիկներն Հայաստանում և Աղուանքում, ժողովուրդն դրացի լինելով օձերի բներին-հիւսիսային ցեղերին-որք յաճախակի արշաւելով աւարում, աւերում, քանդում, կողոպտում, կոտորում, գերի վարում բնակիչները և գոյքերը. չկար օգնութիւն ոչ մի տեղից։ Այդ սրտաճմլիկ տեսարանը տեսնող Աղուանից թագաւորներն և կաթուղիկոսներն, անկարող լինելով տանել և փրկութեան ճար հնարել, ինչպէս մեռնում էին միմեանց ետևից կամ լաւ է ասել թափւում էին աշնան տերևների պէս։

11) Տէր Դաւիթ Ա.-ն յաջորդում է Տէր Յոհան, և Ասայ թագաւորին յաջորդում է Արսվաղէն կամ Եսվաղէն թա-

12) դաւուրն և Տէր Յոհաննէն(1) յաջորդում է Տէր Ներսէս Ա.։

Ե. դարի Ա. քառորդում եթէ կայ մխիթարական մի նշոյլ, հայ տառերի գիւտն է այն ս. Մեսրոպ մեծ վարդապետի ջանքով։ Թարգմանւում է Ս. Գիրքն, բացւում են դպրոցներ, հետզհետէ ծաղկում են ուսումն, գրականութիւն, հայերէն լեզուն և յաջող թարգմանութիւններ։

Այս շնորհքից անմասն չեն մնում Վրացիք և Աղուանք, այլ ինքն ս. Մեսրոպ այդ աստուածատուր շնորհքից մասը և բաժինն է հանում այդ երկու դաւանակից և հարեւան ժողովրդոց և եկեղեցեաց համար, քանզի ս. Մեսրոպ անձամբ իջնում է Վրաց Բագուր թագաւորին և Մովսէս կաթողիկոսին մօտ, ստեղծում և նոցա բարբառին համաձայն նշանագիր ա, բ, գ, են, որոշում է Ջաղա անուն մի թարգման Վրաց լեզուի համար, հաւաքում է աշակերտաց բազմութիւն և յանձնում Ջաղայի տեսչութեան։ Ապա գալիս է ս. Մեսրոպ Աղուանից Արսվաղէն թագաւորին և Երեմիա Ա. կաթողիկոսին մօտ, կանչելով Բենիամին շնորհալի թարգմանը, ստեղծում է և գիր Գարգարացւոց կոկորդախօս, աղխազուր, խժական, խեցբեկագոյն լեզուին համար։ Եւ վերակացու թողնելով իւր Յովնաթան աշակերտը և արքունի դրան քահանաները, ինքն դառնում է Հայաստան (Մով. Խոր. Գ. գիրք ծԴ. ԿԼ)։

1) Կիր. եր. 113, Տէր Յոհան, որ և Հոնացն եղև եպիսկոպոս Կ. վ. Տ. աւելացնում է հայրապետական շնորհիւ Տոհմական. որ էր եպիսկոպոս Հոնաց։



ԺԶ. գլ.

## Ս. ՄԵՍՐՈՊԱՅ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ

Թէպէտ Աղուանքում կային կաթողիկոս, թագաւոր, եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ և իշխաններ, այսու ամենայնիւ հրապաշտ մոգերն բռնութեամբ յաճախակի թուլացնում էին Աղուանից երկրի մի քանի ցեղերի հաւատը քրիստոնէական կրօնից. քանզի այն երկրի ամեն ցեղերն Ս. Լուսաւորչի հոգեշունչ քարոզութիւններով հաւատացած էին Քրիստոսին, մկրտուած Ս. Երրորդութեան անուամբ և ընդունած Քրիստոնէութիւնը. բայց մի քանիսն խմորուած էին հրապաշտութեան քացախած խմորներով։ Սուրբն Մեսրոպ, նկատելով հրապաշտ մոգերի այս ձեռնարկութիւնը, աճապարում է առնել այս վտանգի առաջը. արմատախիլ անել կենաց խոտի տապարով հրապաշտութիւնը և վերահաստատել Քրիստոնէական կրօնը նոյն ցեղերի մէջ։ Այս նպատակը իրագործելու համար առնում է իւր հետ իւր բանիբուն աշակերտներից մի քանիսը. առնում է և Կենաց Փայտի մասը կրող խաչը, հանում Գիս և անդադար քարոզելով վերահաստատում եկեղեցուն հաւատը։ Կաղանկատուացին, Ա. հատ. ԻԷ. գլ. գրած է. «Եւ նորոգելով եկեղեցու հաւատը հաստատում էր. և ձգում էր Աւետարանին քարոզութիւնը, այս է քարոզում էր Ս. Աւետարանը Ուտեաց, Աղուանից, Լփնաց, Կասպից գաւառներում, Զաղայ Դռնում, Դարբանդում—և ուրիշ ուրիշ ցեղերի մէջ, զորս մոլեգնացի Աղէքսանդր թագաւորն գերի բերելով նստեցուցած էր (բնակեցրած էր) Կովկաս մեծ սարի վերայ՝ Գղուարները

և Կամբեճիկ Հեփթաղները(1), դարձնելով հյուսարքի՝ հաստատում էր աստուածպաշտութեան կարգը, որը վաղուց սովորած էին և մոռացած, և բոլորովին քաղաքից և առաքեալ լինելով սարի ստորոտում բնակողներին ծանօթացնում էր նոցա քաղաքական դրութեան համեմատ։ Եւ այնտեղից դառնալով գնում և բնակւում էր մօրում (ճախճուտ տեղ) ծածկուելով անողորմ իշխանների սպառնալիքներից։ Եւ այն տեղ անտառումն պահուելով օրըստօրէ հաստատում էր Աստուծոյ եկեղեցիները—ժողովուրդները։ Այն տեղ մոլորութեան ոգին գրգռում էր գազանացեալ բնակիչների միտքը՝ ջանալ, բռնել և սպանել զնոսա—զՄեսրոպ և աշակերտս նորա։ Իսկ երանելի Մաշտոցն՝ աղօթելով Ս. Հոգւոյ՝ փութով փորում էր մի փոս և առնելով աստուածային գանձը, որ է Տէրունական խաչն, դնելով մի տապանի (տուփ) մէջ ծածկում էր փոսին մէջ» (Գիւղ մետերքում, որ գտնւում է յետոյ)։

Այնուհետև Ս. Մեսրոպ գնում է Արցախի Գարդման գաւառն և ոչնչացնում տեղւոյն Խուրս իշխանի ձեռնտուութեամբ հեթանոսական աղանդը։ Հաստատում կրթարաններ, թողնում իւր աշակերտներից վերակացուներ և ինքն դառնում Վաղարշապատ։

## ժէ. գլ.

Չամ. Բ. հատ. Ա. գլխից համառօտում ենք հետևեալ։

(Մօտաւորապէս 425-ին) Արևելեան կողմում գտնւում էին զրոյցներ, որք չեն պատմագրուած։ Զօրս պատշաճ համարեցինք գրել այս տեղ։ Պարսից Շապուհ (Բ) Որմզդեան,

1) Այն ժամանակ ցեղերն են սորա, որոց ծագման մասին խօսեցինք ԺԱ—ԺԶ. հատուածներում



կամեցաւ քննութիւն անել և իմանալ թէ որ ազգ և որ նախարարութիւն ունի բարձ և պատիւ. մնաց մատենադարակէս Հայոց մասին. «Զիմացանք գիտել Հայոց ազգատոհմը և նոցա նախապատուութիւնները ոչ մեր թագաւոր հայրերից և ոչ մեր մատենագիրներից։ Այժմ Հայոց նախարարներ, եթէ ցոյց չտաք ամեն ոք իւր տան նախնական գիրը, աստիճանը և պատիւը, Պարսից ազատանիներին կը շնորհեմ ձեր բարձերը, պատիւը և տունը, հողը և ջուրը։ Հայոց նախարարները ցոյց են տալիս Ագաթանգեղոս գիրքը։ Եւ իմանալով թէ սկսած է այն իւր նախնիքեց Արտաշիրից, և գտաւ 17 բարձի գիր, որի համեմատ էլ թագաւորական ճաշկերոյթի վերայ պատրաստեց իւրաքանչիւր նախարարի նստելու տեղը։ Տանուտէրութեան տեղը յատկացուց Մեծ-Սիւնեաց Անդոկ նախարարին, որ վիրաւորուելով ոչ ինչ չկերաւ։

Այն ժամանակ գումկան է համում թէ Խազիրները մեծ զօրքով ներս մտան Ձորայ Դռնով մեր աշխարհն։ Շապուհ, հաւաքելով Ասորոց, Խորասանի, Խորազմի, Ատրպատականի, Հայոց, Վրաց և Աղուանից և Կովկասեան 12 ցեղերից անհամար զօրք, գնաց դիմադրել։

Իսկ Անդոկ 1700 ձիաւոր հայ քաջ ազատագունդ զօրքով մտնում է Պարսից Տիզբոն թագաւորանիստ քաղաքն և կողոպտում արքունիքի գանձը և անհամար ոսկի, արծաթ, գոհար. աւարում է և մեծամեծների տներից և փախչում Մեծ-Սիւնեաց Բաղաբերդն. ապա հրաման է տալիս Անդոկ բոլոր գաւառներում բնակող հայերին այրել իւրեանց տները, դաշտերը և խոտերը և արտերը և փախչել Մեծ-Սիւնիքից. ժողովում են բոլոր եկեղեցեաց զարդերը և մասունքները և անօթները, լալով համբուրում մասունքները, լցնում Շաղաթի եկեղեցուն մէջ. և հողակոյտով ծածկում ամբողջ եկեղեցին և իւրեանք ցրւում զանազան երկիրներ։ 25 Տարի անմարդաբնակ է մնում Մեծ-Սիւնիքն։

Պատերազմից դառնում է Տապուհ, խմանում եղած աղէտը. հրամայում է իւր զօրաց աւերել Մեծ-Սիւնիքը, բայց եկողներն ոչ ինչ չեն գտնում: Իւրեանց Աթաշխուդայ զօրապետի հետ աշխատում են գրաւել Բաղաբերդը, սակայն չեն կարողանում։ Անդոկ թողնում է բերդը և իւրայիններով անցնում Հռոմայեցւոց երկիրն, ուր և գտնում մեծ պատիւ, այն տեղ էլ վախճանւում։

Անդոկի որդի Բաբիկն, փափագելով իւր հայրենիքին, գնում է Տապուհի մօտ, առանց ծանօթութիւն տալու գործում շատ քաջութիւններ։ Այն ժամանակ Հոնաց (Սեւ թէ Սպիտակ) Հոնազուր անուն հսկան՝ կոչում է մարտ Տապուհի մօտ և ասում. «Ի՞նչ հարկաւոր է պատերազմելով արիւններ թափել, եկ մենամարտենք դու և ես»։ Հոնազուրն զինուած է լինում սարսափելի զէնքերով։ Տապուհ կանչում է իւր մօտ Բաբիկը, որին և տալիս թագաւորական հրովարտակ և փառաւորակ կերպով և ասում Բաբիկին. «Եթէ դու վերջ կը տաս այս մեծ քինախնդրութեան, կը հասնես մեծագոյն խոստմանցս»։ Բաբիկն, յանձն է առնում մենամարտել, կոչում է. «Եկեղեցիք Սիւնեաց, օգնեցէք ինձ»։ Յարձակւում են միմեանց վրայ, Բաբիկի սրի ուժգին և յաջող հարուածից սպանւում է Հոնազուրն։ Տապուհ մեծ ցնծութեամբ կոչում է. «Բաբիկ, խնդրիր ուրեմն ինչ կամենում ես, որ կատարեմ խոստումս»։ «Վերցուր ազգի սանդն քո դրանից — ասում է Բաբիկն»։ Հնոցի մոխրով լցուն էր սանդն, որին զարկում էին այնտեղ եկողներն և ասում. «Այս մոխրի հետ աղորանոյ Սիւնեաց տէրութիւնն և նոցա կեանքն և խորհուրդն»։ Տապուհ մեծ զարմացմամբ հրամայեց վերցնել մէջ տեղից սանդը։ Ապա խնդրում է Բաբիկ իրան դարձնել իւր հայրենիքը—Մեծ-Սիւնիքը։ Տապուհ շնորհում է հայրենիքը. մեծ պատւով յղում զինքը և Բաբիկի պատիւը հաւասարեցնում է Բագրատունեաց և Մամիկոնեանց պատուին։ Բաբիկ գալիս է



իւր հայրենիքն և որոշ ժամանակ պատահմամբ գտնում է Տաղաթի եկեղեցին հոռի ամսի մէկին (Սեպ. 10-ին) մօտաւորապէս 428-ին և դուրս հանում բոլոր անօթները։ Երկու հարուստ եղբարք Գորն և Գաղանն, որք իւրեանց զօրքով եկած էին Բաբիկի ետևից, վիճակ է ձգում Բաբիկն՝ Խոտ աւանն ընկնում է Գորին և Տաղատ գիւղն՝ Գաղանին։ Ապա կրկին պայծառանում է Մեծ-Սիւնիքն։

## ԺԸ. ԳԼ.

Ս. Մեսրոպի աշակերտներն.—Ռոսմոսոքեան թագաւորի արշաւանքն.—Թոփիլոսեան կամ Թոբելեան զօրագունդը.—Նահատակութիւն.—Կապոյտ կողոպուտ եւ սպանութիւն:

Ս. Մեսրոպի մահից յետոյ 441-ին նորա Աղուանքում մնացած աշակերտներն բաժանւում են երեք մասը. երկու մասն քարոզում են Աղուանքում, իսկ երրորդ մասնախումբն գնում է Երուսաղէմ մի վարդապետ բերելու։ Իւրեանց դարձին Զատկի ճրագալոյց երեկոյին հասնում են Արցախի Ըռատ գաւառի (այժմեան Հալթերք գիւղի մօտ) Թարթառ գետի ձախ հովտում եղած Վիժան բլուրըն, որպէս զի անտառում ապահով կատարեն Զատիկը։

Այդ իսկ օրերում Ռոսմոսոքեան(1) թագաւորն իւր զօրքով և Թոփելեան գնդովն և Սև-Հոնաց զօրապանակաւ մտած էր Աղուանից երկիրն և Կուր գետի աջ կողմում Խաղխաղ քաղաքի մօտ բանակած և իւր զօրքը երեք գնդի

1) Ռոսմոսոքայ և Թոփելայ անուններն գործածուած են Եզեկիէլի մարգարէութեանց ԼԸ. և ԼԹ. Գլ. իսկ Խաղխաղ քաղաքի մասին տես «Արցախ» եր. 57—59 և 420—421։

բաժանած, որ ասպատակէին Աղուանից, Հայոց և Վրաց երկիրները։ Երկրորդ զօրագունդն Թէոփիլոս գնդապետի զօրավարութեամբ նոյն իսկ Զառնի երեկոյեան պատահում է Երուսաղիմից դարձողներին, որ անապատով հողի մէջ թաղում են երկու արծաթեայ սուրբ մասանց արկղիկները։

Աշակերտաց խմբի մէջ լինում է և Աթանաս վարդապետն մի քանի քահանաներով և Ռուսաց նահանգի Բոգ-նոյ գիւղացի իշխանազն տիկին Թագուհին, որ ուխտի գնացած է լինում Երուսաղէմ։ Թէոփիլոսի հրամանաւ նահատակւում են Աթանաս վարդապետն և սրիչ մի քանիսին. բանտարկւում են միւսները. Վկման բլրի վերայ առանձնապէս նահատակւում է Թագուհի տիկինն, մի աստեղաձև լոյս մինչև առաւօտ համատարած փայլում է բլրի շուրջն, վասն որոյ Վկման անունն անցել է տալիս Աստղաբլուր([1]) անուան։ Այդ սրբոց կարգի լոյսը տեսնելով հաւատում են ինքն Թէոփիլոս գնդապետն, իւր երկու որդիքն Մովսէս և Անտրադոդէս և ամբողջ զօրագունդն։ Արձակւում են ողջ կալանաւորուած և բանտարկուած քրիստոնեաներն և իւրաքանչիւր տիրոջ են թողնւում կողոպտուած իրերն։ Գնդապետի հրամանաւ դառնում է զօրագունդն դէպի Կուր գետի Զաւաստակ կամրջի մօտ, ուր քրիստոնէական հաւատքի վերայ հաստատ մնալով Ռոմանոս թագաւորի հրամանաւ նահատակւում են Թէոփիլոս գնդապետն և քահանայական դասն։ Իսկ Մովսէս, Անտրադոդէս և Ագաթարոսեան գունդն հեծնելով իւրեանց ձիերն փախչում են դէպի Հայաստ. և հասնում ամենամեծ և ամենաբարձր սարի (Մասիսի) գագաթն([2]) ուր և նահատակւում են հալածող զինուորներից. հաստատ մնալով Քրիստոնէութեան մէջ (Վաղ. Ա. Հատ. Լ. Գլ.):

1) Տես «Արցախ» եր. 201. Մ. Այրիվ. եր. 47. «Կատարեցան աշակերտքն Մաշտոցի յԱստղաբլուրն» Ամբ Տեառն 423:

2) « « եր. 238—139:



Ցեսոյ Ռոմանոսեան թագաւորի հրամանաւ դերում, կողոպտում և աւերում են Աղուանից և Վրաց գաւառները և հեռանում։

## ԺԹ. ԳԼ.

Արշակունի թագաւորութիւնը.—Սասանեանների ոտնձգութիւնն Արշակունի պետութեանց դէմ.—Պարսից պատերազմն Քուշանաց-Սպիտակ-Հոնաց-Հեփթաղների դէմ.—Հայոց, Աղուանից և Վրաց Քրիստոնէութիւնը ջնջելու չար նպատակ.—Աստուածպաշտութեան ազդեցութիւնն Նիւթապաշտութեան վերայ.

անի որ Հայաստանում, Աղուանքում, Պարսկաստանում, Վրաստանում, Պարթևաց երկրում և Սև-Հոնաց կողմում թագաւորում էին Արշակունի կամ Պարթևազն թագաւորներ, պաշտպանում էին մէկզմէկ և զօրանում միմեանց օգնութեամբ։

Սասանեան Արտաշիր հետապնդելով ոչնչաց Պարսկաստանի Արշակունի թագաւորութիւնը, հետապնդեց ոչնչել և Հայոց թագաւորութիւնը, բայց չյաջողեցաւ այդ իրան։ Արտաշրի հետ չմեռաւ ամբողջ Արշակունի թագաւորութեանց դէմ տածած այդ ոխերիմ թշնամութիւնն, այլ մնաց աւանդական ժառանգութիւն նորա յաջորդների մէջ, և հետզհետէ աւելի և աւելի զօրացաւ այդ նպատակի կատարումն, մանաւանդ Յունաց կայսրութեան տկարանալումն։ Քանի որ Սասանեան թագաւորներն տեսնում էին զիրենք շրջապատուած Արշակունի թագաւորութիւններով, հեռատեսում էին անապահով կեանք Սասանեան թագաւորութեան համար և մինչև անգամ գոյու-

կում էին մահ։ Այս թագաւորութեանց մէջ զօրեղագոյնն էր Հայաստանինն, որը սպանելու համար գործ դրին ամեն անարգ միջոց, ջանք, հնարք և գազանաբարոյ բռնութիւն և սպանեցին Վռամի օրով Փրկչական 432-ին։ Արդէն սպանուած էր Վրաստանի Արշակունի թագաւորութիւնն 256-ին[1]։ Հիւանդագին վիճակի մէջ է լինում Աղուանից Արշակունի թագաւորութիւնն. Դարբանդեան ամրագոյն պատուարաւ արգելուած էր Սև-Հոնաց Արշակունի թագաւորութիւնն։ Հետևապէս միայն մնացած էր բուն Պարթևական թագաւորութիւնն—Արշակունի թագաւորութեան արմատն, որ տակաւին պահում էր իւր առոյգ և զօրեղ ուժը։ Յազկերտ Բ. հետամտում է սպանել և Պարթևաց կամ Բուշանաց թագաւորութիւնը։

Այս պատճառաւ 442-ին Յազկերտ Բ. Բահլ-դրան արևելեան կողմում գումարում է Հայոց, Աղուանից, Վրաց, Լփնաց և Ծովդէից կիրթ զօրքերը—Քրիստոնեայ ազգերի ներքին ուժերը,—որք էին ամենքեան հաւատացեալք ի մի կաթուղիկէ առաքելական եկեղեցի Հայաստանեայց (Եղիշ. եր. 15 տպ. Երուս.)։ Այն տեղ բնակեցնելով 442—449 պատերազմելով երկու տարի չօգտեցաւ և ոչ ինչ, քրիստոնէից զօրքերը արձակեց իւրեանց տուներն և պահանջեց նոր արձակուածների տեղ։ Վերջապէս եօթն տարուայ ընթացքում բոլորովին սպառեցաւ Սպիտակ-Հոնաց-Բուշանաց-Հեփթաղների զօրութիւնն։ Յազկերտ մոգերի խորհրդով նախ քաղցրութեամբ, ապա յորդորմամբ, ապա սպառնալիքներով և ապա բռնութեամբ տանջում է իւր բանակում գտնուած Հայոց, Աղուանից, Վրաց, Լփնաց և Ծովդէից զինուորները պաշտել արեգակը և կրակը որ յետոյ պաշտել տայ այդ ազգերին առանց դժուա-

1) Արշակունի կամ Փառնաւազեան կոչուած Վրաստանի վերայ իշխող թագաւորութիւնն, որ ծնած էր 147-ին Քրիստոսից առաջ և մեռած Փրկչ. 265-ին։



րութեան։ Բայց երբ տեսաւ որ քրիստոնեայ զինուորների հաւատն և հաստատակամութիւնն աւելի ամրագոյն և անպարտելի են քան Բուշանաց բերդերինն, վասն որոյ առ ժամն թողեց իւր չար դիտաւորութիւնը և վարագուրած թողեց այդ չար խորհուրդը։ Սակայն յետոյ Պարսկաստանում արգելելով այդ ջերմագոյն քրիստոնեայ զօրականները—Քրիստոսի զինուորները—ենթարկեց անտանելի տանջանքների, այս է՝ նուաղեցնում էր թոշակները, բնակեցնում էր ձմրան մահաբեր կլիմաներում, յղում էր դժուարին պատերազմների և ջարդել տալիս։

## Ի. Գլ.

Գահակալութիւն.—Պարտաւ քաղաքի շինութիւնն.—Կրակի մեծ պաշտպանն Աւետարանի դէմ.—Աստուածպաշտութեան զօրեղ ուժն մարմնաւոր զէնքի դիմաց։

Փրկչական 444-ին Վաչէ Բ. յաջորդում է իւր հօր Արսվաղէն թագաւորին։ Վաչէ թագաւորն, որ սկզբում իւր նախորդաց պէս նստում էր Զօղոյ քաղաքում, Պարսից Պերոզ թագաւորի հրամանաւ շինում է Պարտաւ քաղաքը[1] ապահովուած հիւսիսային աւերիչ արշաւանքներից։ Վաչէ հիմնարկում է Պարտաւը Ուտեաց նահանգի Ուտիական գաւառի ստորին մասում Թարթառ գետի ձախ ափին մօտ, պարսպապատում կրկնապարիսպ պատերով և փոխադրում այս տեղ իւր աթոռը։

1) Կաղ. եր. 33, Ա. հատ. Ժ.Ե. գլ.։ «Պարտաւ շինեցաւ ի Վաչէէ 452 (թւին)» Մխիթ. Այրիվանեցի. Պարտաւի մասին տեսնել «Արցախ» եր. 29—30. եղածէ վաճառաշահ քաղաք։

Սպիտակ-Հոնաց — Բուզանդներին երկիրը անցնելուց յետոյ Յազկերտ աստուած է կարծում զինքը, վասն որոյ գործ է դնում ամեն բռնութիւն հրապաշտ դարձնելու Հայերը և Աղուանցիք։ Յունաց կողմից սպասուած օժանդակութիւն չէ հասնում Հայոց. Պարսից մոգերն Հայաստանում և Աղուանքում շինում են ատրուշաններ և չաւերը բռնի հրապաշտ անում, որոց հետ և Վաչէ Բ. թագաւորը. լեռներն են փախչում Աղուանից նախարարներն և իշխաններն. յուսահատում է քահանայ և ժողովուրդ. կրակատանց են փոխուում եկեղեցիք. անլուր չարիքներ են գործում մոգերն և զինուորներն. Սեբուխտ զօրավարն Պարսից ահագին բանակով մտնում է Աղուանից երկիրն՝ ուրացող Վասակ Սիւնու թելադրութեամբ։ Քաջն Վարդան Մամիկոնեան 450-ին հասնում է իւր զօրքով և բանակով դիմաւորում Խաղխաղ(1) քաղաքի մօտ Սեբուխտին. միանում է հայկական բանակին և Աղուանից ազատաւորեալ զօրքն, ահագին ճակատամարտ բաղխում են երկու բանակներն, յաղթուում և ցիրուցան է լինում պարսկական բանակն. կոտորուում են մոգերն, կործանուում են ատրուշաններն, լեռներից դառնում են փախած նախարարներն և իշխաններն. վերստին շինուում են եկեղեցիներն և տաճարներն և կրկին շարունակում է ազատ աստուածպաշտութիւնն ժողովրդականաց և զինուորականաց մէջ. Այնուհետև Քաջն Վարդան գրաւում է Դարբանդի Պահակը, կոտորում պահակապահ պարսիկ զինուորները, Աղուանից Վահան թագաւորազնի(2) ձեռնով կապում Սև-Հոնաց ցեղերի հետ միաբանութեան ուխտ և երդման հաստատութիւն։ Ապա Վարդան յանձնում է Վահան

1) Խաղխաղ քաղաքիս մասին տես «Արցախ» եր. 57—59 և 420—421։

2) Թէ Աղուանից ո՞ր թագաւորի որդին է Վահանը, ստուգիւ չգիտենք. ենթադրում ենք որ Վաչէ Բ-ի եղբայրն եղած լինի։



թագաւորազնին Դարբանդի Պահակին պահպանութիւնը և ինքն դառնում Արարատեան նահանգն։

## ԻԱ. գլ.

Դաժանակալութիւն Պերոզի.—Վաչէ Բ-ի պատերազմն Պերոզի դէմ.—Վաչէ Բ. առնում է 1000 երդ եւ հրաժարում թագաւորութիւնից.—Գիւտ եպիսկոպոսի առ Վաչէ գրած երկու նամակներն:

Մեռնում է չարն Յազկերտ. դահակալութեան պատճառաւ ծագում է նորա երկու որդւոց մէջ արիւնահեղ կռիւ. վերջապէս սպանուում է Որմիզդ և թագաւորում է փոքր որդին Պերոզ։ Վաչէ Բ. յարմար ժամանակ համարելով Պարսկաստանի ներքին խռովութիւնը, թօթափում է իրանից ոչ միայն մոգակրօնութիւնը այլ և Պարսից լուծը և վերջապէս վճռում է «Մեռնել պատերազմաւ քան թագաւորել ուրացութեամբ»։ Ահա թէ ինչ է գրում Վաչէի և Պերոզի պատերազմների մասին ժամանակակից Եղիշէն, եր. 387—390. Պերոզ «Թէպէտ մեծապէս խաղաղութիւն էր անում Պարսից աշխարհին, սակայն Աղուանից թագաւորն (Վաչէ) չէր կամենում կրկին նուաճուիլ ծառայութեան մէջ. այլ պատառեց Ճորայ Պահակը, և անցոյց այս կողմն Մազքթաց զօրքերը, միաբանեց լեռնաբնակ տասն և մէկ թագաւորները և պատերազմաւ դէմ կացաւ Պարսից գնդին և տուաւ շատ վնասներ արքունի (Պարսից) զօրացն։ Թէպէտ և երկու և երեք անգամ տուին աղաչանաց հրովարտակ, չկարողացան հաւանութիւն բերել—հաւանեցնել Վաչէն. այլ գրով և պատգամով յանդիմանում էր Պարսից թագաւորը և մեծամեծները Հայոց աշխարհը զուր աւերելուն համար։ Յիշեցնում էր նոցա նախարարներին մահը և կապուածների չարչա-

րանքները։ Հայոց այնքան սիրոյ և ծառայութեանց փոխարէն լաւութիւն անելու տեղ, արևից զրկեցէք—նախատակեցիք Հայոց նախարարները։ Ես նախընտրած եմ յանձն առնուլ նոցա չարչարանքը, քան թողուլ քրիստոնէութիւնը։

Եւ երբ տեսան թէ ոչ սիրով և ոչ բռնութեամբ չկարողացան հաւանեցնել, շատ գանձեր տալին տանել հիւսիսային ցեղերին, բացին Ալանաց դռները և հանեցին Սև-Հոներից շատ գունդեր և մի տարի կռուեցին Աղուանից թագաւորի հետ։ Թէպէտ և ցրուեցան զօրքն իրանից, սակայն չկարողացան հնազանդեցնել Վաչէ թագաւորը. այլ և մեծամեծ հարուածներ էլ հասցրին Աղուանից երկրին վերայ, կար որ կռւով և կար որ չարչարանքով։ Եւ պաշարման այսչափ երկար ժամանակից աւերուեցաւ Աղուանից երկրի մեծ կէսը. բայց ոչ որ երկմտելով բաժանուեց—հեռացաւ—Վաչէից։

Պերոզ դարձեալ մարդ ուղարկեց Վաչէ թագաւորին մօտ՝ ասելով. «Զբոյրդ իմ և զքեռորդին ի բաց տուր ածել, զի ի բնէ մոգք էին և դու քրիստոնեայ արարեր և աշխարհդ քեզ լիցի»։ Իսկ սքանչելի մարդն—Վաչէն—ոչ թէ կռւում էր տէրութեան վերայ, այլ աստուածպաշտութեան համար։ Իւր մայրը և կինը տուաւ որ տանեն, և ինքն թողեց աշխարհը խաղաղ, տուաւ ուխտարանը և կամենում էր հեռանալ աշխարհից։

Այս բանը երբ լսեց Պերոզ, շատ զղջաց և խղճահարւում էր և իւր հօր վերայ էր ձգում բոլոր եղածների մասնները։ Կնքում էր անուստ երդումը և տալիս էր տանել Վաչէին, միայն թէ մի գնար աշխարհից. և ինչ որ ասեր, կը կատարէ։ Վաչէն խնդրեց իւր մանկութեան ժամանակից սեփական 1000 ծուխ ժողովուրդը, որը իւր հայրն շնորհած էր իրան փոքրութեան ժամանակ, առաւ այն Պերոզից և նստաւ նորա մէջ միայնակեցներով միա-



սին(1)։ Եւ այսպէս հանապազորդեաց զինքն յաստուածային պաշտաման, զի և չյիշէր ամենևին՝ թէ և թագաւոր լեալ իցէ առաջ։ Վաչէս հեռանում է թագաւորութիւնից մօտաւորապէս 470-ին։

Կաղանկատուացու եր. 14—22 գրուած են Գիւտ Եպիսկոպոսի (Թերևս յետոյ կաթուղիկոս) երկու նամակները, որ գրուած են առ Վաչէ Բ. իմաստալից յորդորներով, հայրական սիրով և կրօնական քաջալերութեամբ։ Նամակներումս պատկերացնում է Գիւտ Արքաղանն զՎաչէ իբրև մի մեծամարտիկ զինուոր՝ զինուած աստուածային զէնքերով և պատերազմող ախոյեան ամեն մոլութեանց դէմ, մանաւանդ կրակապաշտութեան դէմ։

## ԻԲ. ԳԼ.

Պերոզի չարութիւնները.—Սայիսակ-Հոնաց արշաւանքն.—Սպանւում է Պերոզ իւր որդիներով.—Վաղարշակ թագաւոր Պարսից.—Վաչագան Գ. թագաւոր—Շուփհալիշոյ կաթուղիկոս։

Պերոզ չարութեամբ գերազանցում է ամեն հրապաշտ թագաւորներից. Հայոց, Վրաց և Աղուանից աշխարհը շատերը բանի մոգպաշտ էր անում, այլ և կանայք. ուղարկեց հանդերձ արտօսրահատաչ ձայնիւ գերեալ լինելին, յօտար աշխար ի դառն ստրկութիւն... կապանօք և բանդիւք նեղէր և ակամայ ի մոգութիւն խոնարհեցուցանէր։ Ընդհանուր և Վաչական» զուր խողխողում է ծերեր, երիտասարդներ և գերի տանում անմեղ կիներ և աղաներ։

1) Աւանդութեամբ ասում են որ Վաչէ Բ. շինել տուած է Թառնագիւտի վանքը և ցմահ ճգնած նորա մէջ կուսակրօն հոգևորականներով։ Վանուցս մասին տես «Արցախ» եր. 28 և 414։

Արշաւում են Հեփթաղներն, Պերոզի առաջ նախ սրախողխող սպանեցին նորա որդիքը և ամեն զաւակները, բոլոր նախարարները և կուսակալները և ապա Պարսից խառնիճաղանճ զօրքերը. ամենից յետոյ սրախողխող սատակեցին և Պերոզը և խայտառակեցին նորա կանայքը և չէին ողորմում նորա աղայոց և աղջկանց (Պատմ. Ա. հատ. ԺԶ։ ՂԸ։

Պարսից վերայ թագաւորում է Պերոզի հօրեղբայր Վաղարշակը. Քրիստոսի կենսատու խաչի զօրութենից մարում է Զրադաշտական կրակը. նորա պաշտօնեաներն ակամայ իջնում են աստուածացեալ գոռոզութենից ի վար մարդկային սահմանն և տեսնում են զիրենք հասարակ մահկանացուաց շարքում: Վաղարշակ կամ Վաղարշ տալիս է կատարեալ ազատութիւն և արձակում է կրօնի պատճառաւ բանտարկեալները։

Աղուանից ժողովրդեան ընտրութեամբ և իշխանաց խնդրանօք՝ Հայոց Բաբգէն կաթուղիկոսից ձեռնադրւում է 13) Տէր Շուփհաղիշոյ(1) կաթուղիկոս Աղուանից, որ մին է Յովհան Մանդակունու աշակերտներից (Տե՛ս պատ. Մ. Մուրատ. եր. 254)։

Աղուանից նախարարներն մտածում են օգուտ քաղել ժամանակի ազատութենից. 30 տարի անցած էր Վաչէ Բ-ի թագաւորութենից հրաժարուելուց, որ առանց թագաւորի մնացած էր Աղուանից երկիրն։ Նախարարներն 487—488 Պարսից Վաղարշ թագաւորի ձեռնով թագաւորեցնում են Աղուանից համար Վաչագան Գ. որ Վաչէ Բ-ի Յազկերտ եղբօր որդին էր։ Վաչագան Գ-ի յաղթութեանց մասին ասում է Կաղանկատուացին, Ա. հատ. ԺԷ. գլ. «Վաչագան ի թագաւորական զարմէն քաջարութեամբ, իմաստուն և վարժ խոհականութեամբ, բարձր և վայելուչ հասակաւ, որդի Յազկերտի՝ եղբօր Վաչէի Աղուանից արքայի, տարեալ թագաւորեցուցին ի ձեռն Վաղարշու արքային Պարսից»։ Վաչագան Գ-ն, որ նոյնպէս ենթարկուած էր բանի մոգակրօնութեան, հեռացնում է իրանից այդ արատը և իսկապէս լինում բարի մարդ, բարի քրիստոնեայ և բարի թագաւոր։

1) Որովհետև Շուփհաղիշոյ ժամանակակից և գործակից է Վաչագան Գ-ի (բարեպաշտի) ուղղում են այն հեղինակների սխալներն, որք առաջ էին դասում սորա անունը: Մ. Այվազեանցին գրած է եր. 47—48. «Սուրբն Շուփհաղիշոյ ամք Տեառն 500» (կաթուղիկոս)։



Վաչագան Գ-ս ձեռնարկում է ներքին բարեկարգութեան, նոյնը սկսելով նախ իւր անձից իբրև գործնական օրինակ իւր հպատակ հասարակութեան։ Իւր նախանձելի աստուածպաշտութեամբ և ընտրելագոյն վարքով և բարքով բերում է դէպի ճշմարիտ քրիստոնէութիւն այն նախարարները, իշխանները և հպատակները, որք գարշելի պաշտամունքներով և հեթանոսական զզուելի բարքով ապականած էին իւրեանց և այլոց հոգիները։

Երկրորդ՝ դէպի Զրադաշտական կրօնն հակուածները հաստատում է ապաշխարութեամբ, մկրտել տալիս անկնունքները յորդորմամբ և հաղորդել տալիս Շուփհաղիշոյ հայրապետի քարոզութեամբ։

Երրորդ՝ Վաչագան Գ-ս, որ ըստ օրէ համոզելով ջերմացնում է հասարակութեան մէջ կատարեալ աստուածպաշտութեան սէրը, քաղցրացնում է եկեղեցական պաշտամունքները և սրբոց յիշատակներ կատարելը։

Չորրորդ՝ Շուփհաղիշոյ կամ Շուփհաղիշէ հայրապետի հետ միասին գումարում է եպիսկոպոսներ, վարդապետներ, վանականներ, քահանաներ, նախարարներ, իշխաններ և իշխանազներ և անում մեծ ժողով Աղուէն կոչուած հովասուն տեղում. ժողովականաց համաձայնութեամբ խմբագրւում են ԻԱ (21) յօդուածներից բաղկացած կանոններ, որք վերաբերում են քահանայից, սարկաւագաց, եպիսկոպոսաց, վարդապետաց, վանօրէից, թագաւորազանց, նախա-

բարաց, իշխանաց, իշխանազանց, քաղաքականաց, շինականաց, աղքատաց են, են պարտականութեանց համար, և յարաբերութեանց համար, որ առ Աստուած, առ միմեանս, առ բարձրագոյնս և առ աղքատս ողորմածութեամբ։ Այնուհետև. ստորագրում են անձինքն և վաւերացնում այն վերջաբանութեամբ. «Եւ զայս հրամանս մատանեցին (կնքեցին) Մուծիկ արքայի հրամանատար. Միրհաւիկ հազարապետ, ազգապետք Մարութ, Տիրադէ, Ասպրակոս, Շամոյ, Բակուր, Առասան, Արշէս, Վարդան քաջ Դարդմանատէր (Շամախու) Խուրս, Դերմանաան. Խոսդևան, Փիրոկ նաև ամենայն ազատք Աղուանից։ Վասն առաւել հաստատութեան դրոյս՝ Վաչականայ արքային Աղուանից մատանին եդաւ ի վերայ» (Կաղ. Ա. հատ. ԻԶ. գլ.)։

Հինգերորդ՝ վերադարձնում է թագաւորս իւրաքանչիւր նախարարի և իշխանի և վանքի սեփհական կալուածները և իրաւունքները, զորս յափշտակած էր չար Պերոզ թագաւորն։

Վեցերորդ՝ սահմանում է պատիժ այն մարդոց և կանանց համար, որք կը համարձակին շինել բագին, հնարել կախարդութիւն կամ նուիրել պաշտամն որ և է դիւցազնի՝ նոյնպէս և այն անձանց համար, որք ըստ օրինի չեն պահել քրիստոնէական պաշտամանց համար սահմանուած կարգերը և կանոնները։

Եօթներորդ՝ Շուփհաղիշոյ հայրապետի ձեռնով կարգել է տալիս բոլոր թեմերի վերայ եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ, սարկաւագներ, նոյնպէս և վանօրէից համար. կարգել է տալիս մանաւանդ հսկողներ Կամբէճ կամ Կապիճան և Աղուէ գաւառների վերայ, որոց մէջ բուն դրած էին կանխաւ մոգեր, դիւթեր և կախարդներ։ Թագաւորն արձակում է սաստիկ և սպառնալից հրաման չարաչար պատժել այնպիսիները, եթէ խա-



պառ չեն հեռանալ նոյն չարութիւններից։ Շատերը, որ չար Յազկերտի և Պերոզի բռնութեանց ժամանակ մոլորած էին անկնունք, մկրտել տալով սովորեցնել է տալիս քրիստոնէական պաշտամունքները։

Ութերորդ՝ Վաչական Գ. հայրապետի աջակցութեամբ բաց է անում դպրոցներ, ժողովել տալիս կախարդաց, քրմաց, դիւթաց և մառնահարաց երախաները և կրթել տալիս աստուածային ուսմամբ և քրիստոնէական վարուց դաստիարակութեամբ, որպէս զի խոր տպաւորուի նոցա փափուկ սրտերում ճշմարիտ քրիստոնէութիւնն։

Իններորդ՝ հետախուզել տալով գտնում է մառնահարաց աղանդի (Կաղ. Ա. հատ. ԺԸ. գլ.) գլխաւորները և պատժում։ Վերջապէս յաջողում է արմատախիլ անել բոլոր աղանդները։

Տասներորդ՝ իւր հպատակների, մանաւանդ թագահաւատների և թերահաւատների հաւատը, յոյսը, սէրը և ջերմեռանդութիւնը և աստուածպաշտութիւնը հաստատելու, ամրապնդելու և տաքացնելու հետաեռութեամբ հետամուտ է լինում աջակցութեամբ Շուփհաղիշոյ հմուտ կաթուղիկոսի և մի քանի սրբակեաց եպիսկոպոսների և վարդապետների գտնում Ս. Եղիշէ առաքեալի նշխարները և մեծ հանդիսով փոխադրում և ամփոփում Ջրվշտիկ վանքում[1]. և պատուական դլուխը՝ Գիլոյ վանքում[2]. Գտնում է Ս. Գրիգորիս կաթուղիկոսի մարմինը Ամարասում[3]. Յոփ քաղաքի մասունքները[4]. Յակովկայ և Իրաւափառայ[5] Մամասէի և իւր ընկերաց մասունքները[6].

---

1) Ջրաբերդ գաւառում «Արցախ» եր. 234—237 և 428։
2) » Հոռեկայ վանք » եր. 228—229 ծան. 33։
3) Վարանդայ գաւառում » եր. 113—115. » 15։
4) «Աղ. եր. և Դր» եր. 143—144։
5) Դիզակ գաւառում «Արցախ» եր. 71։
6) Վարանդայ » » եր. 103։

Մանեսանոյ որդւոց և միւս վիմների(¹). և կատարել տալիս իւր ներկայութեամբ շքեղագոյն հանդէսներ, որք խիստ լաւ ազդում են հասարակութեան զգացմանց վերայ։ Այս պատճառաւ կոչւում է «Վաչական բարեպաշտ»։

Այնուհետեւ Վաչական թագաւորն շինել է տալիս տարւայ օրերի թւով 365 եկեղեցի, վանք և մատուռ, որոց մէջ են բացի ծանօթութիւններիս մէջ յիշուածներից Կատարոյ վանք Թէոփիլոսի որդւոց և Ագխարսեան գնդի նահատակուած տեղի վերայ(²). և Դիւտականի փոքր եկեղեցին յանուն Ս. Պանդալիոնի («Արցախ» եր. 230 և ծանօթ. 34) որի մէջ մկրտած է անձամբ Տուփհաղեցւոյ կաթուղիկոսն խնդրանօք Վաչական թագաւորին և Տուչանիկ թագուհոյն իւրեանց թագաժառանգ մանուկը՝ անուանելով Պանդալիոն։ Մկրտութեան օրում թագաւորն պատրաստած է հանդիսականաց համար մեծ խնճոյք (Կաղ. Ա. հատ. ծթ. գլ.)։

## ԻԳ. գլ.

Վաղարշապատի ժողովն.—Բաղկեդոնի ժողովի մերժումն.—Աղուանից երկրի խաղաղութիւնն Վաչականի օրով.—Բարեպաշտ թագաւորիս մահուան մասին։

Հայոց Բաբգէն կաթուղիկոսի հրաւիրմամբ 491-ին հաւաքւում են Ս. Էջմիածին Աղուանից Տուփհաղեցւոյ և Վրաց Գաբրիէլ կաթուղիկոսներն իւրեանց եպիսկոպոսներով և Հայոց ողջ եկեղեցական դասն։ Ս. Էջմիածնի Մայր-Տաճարում Բաբգէն կաթուղիկոսի նախագահութեամբ

1) Դիզակ » Դիզափայտ » եր. 85։
2) Տես «Արցախ» եր. 238—239 «Մռաւի սարը»։



բացւում է ժողովն։ Նախ կարդւում են Զենոն կայսեր հրովարտակը, հաւանում և նորա միայն համաձայն դատապարտում են Բաղկեդոնի ժողովը հետեւեալ պատճառներով.

Նախ՝ թէ Բաղկեդոնի ժողովն ընդունեց Մոպսուեստացւոյ գրերը և նորա ջատագովները։

Երկրորդ՝ թէ այն ժողովն, Նեստորի միայն համեմատ՝ բաժանած է Քրիստոս երկու դէմք և երկու որդի(¹). վասն որոյ Ս. Էջմիածնի ժողովն վճռով սահմանում է ասելով. «Մեք Հայք և Հոռոմք, Վիրք և Աղուանք մի խոստովանութեամբ եմք հաստատեալ ճշմարիտ հաւատով ի լաւանդը, զոր աւանդեցին մեզ Ս. Հարքն յերիս ժողովս, ոչ ընդունեմք զայսպիսի բանս հայհոյութեան, այլ նզովեմք միաբան զնմանիս նորա»։

Ժողովն, ուշադրութեան առնելով նաև որ արդէն Բաղկեդոնի ժողովի վարդապետութիւնը ընդունած չէ Հռովմայեցւոց և Յունաց ողջախոհ մեծամասնութիւնն և նոյն իսկ Զենոն և այլ Անաստաս կայսրներն, մերժում է Բաղկեդոնի վարդապետութիւնը (Կաղ. Բ. հատ. ԽԷ. գլ. Լեոյի պատ. Մուրատ. եր. 255—262. պատ. ժող. Աբէլ եալխ. եր. 76—78)։ Բաղկեդոնի ժողովի մասին խօսելու եմք և յետոյ։

Ոչ մի ժամանակ չէր վայելած Աղուանից երկիրն այնքան երկարատև խաղաղութիւն, բարոյական և նիւթական փառաւոր շինութիւն, հիմնաւոր բարեկարգութիւն ևներքուստ և արտաքուստ յարատև ապահովութիւն, որքան վայելեց Վաչական բարեպաշտի և Տուփհաղեցւոյ հայրապետի օրերում։ Նոյնպէս ոչ մի ժամանակ այնպէս արտաքուստ

1) Այս սխալ միտքը հերքելու համար գրած է Ներսէս-Շնորհալին՝ Քրիստոսի երկու բնութեան անճառ միաւորութիւնը ապացուցանելու. «Ոչ այն ուժեղ և զօրաւոր և այն անզօր վտանգաւոր, այլ միևնոյն դու միաւոր կրէր զկիրս կամաւոր» (Շարական)։

չէին եկամուտ մոլութիւններն և չար աղանդների հերձուցիչ որոմներն Աղուանքից և վերահաստատուած ու ծաւալուած կատարեալ աստուածպաշտութիւնն, հիմնաւորապէս արմատակալած քրիստոնէութիւնն և ծաղկած եկեղեցիներն, վանքերն և ուսումնարաններն Աղուանից երկրում, ինչպէս սոյն հոգևոր և մտաւոր ամոլների օրերում։

Սակայն ցաւալի է ասել որ Կաղանկատուացին, ոչինչ չասելով այս երկու նշանաւոր գործիչների մահուան մասին, բոլորովին լռում է։ Երևում է որ տեղեկութիւն ունեցած չէ։

Մ. Օրբելեան, Ա. հատ. ԻԱ. գլ. գրած է թագաւորիս մասին՝ թէ Պարսից թագաւորի Արլ-Արաս անուն որդին գալիս է Մեծ-Սիւնեաց նահանգի Երկրորդ Երուսաղէմ կոչուած վանքն, որ մօտ է Երասխի Բարսեղ անուանեալ տեղին, Թուում Գիւտ ճգնաւորի մօտ, հաւատում Քրիստոսին, մկրտւում և լինում կատարեալ աստուածապաշտ մարդ։ Այսպ պատմում է. «Արլ-Արաս փեսայացուցին Վաչականայ Աղուանից արքային, և շինեցին բերդ յեզր գետոյն, զի անդ բնակեալ պահեսցէ զերկրարան։ Իսկ Արլ-Արաս և Վաչական խնդրեալ յիշխանէն (Մեծ) Սիւնեաց սահման հատին վանիցն և ետուն հինգ գիւղ ... Այսպ մեռան ի Բարկուշատ թագաւորքն Արլ-Արաս և Վաչականն»։ Դարձեալ Մ. Օրբելեան, Ա. հատ. ԽԵ. գլ. ասում է. «Ի դրան եկեղեցւոյն (Վահանայ վանուց) վիմադրեան մահարձանօք, յորում հանգուցեալ կան ի շիրմի բազում թագաւորք և թագուհիք Աղուանից և Բաղաց»։ Եթէ հաւատանք Ջրվշտիկ (Եղիշ առաքեալ) վանքի հիւսիսային կողմի Գ. Մայրան սոյն արձանագրութեան (տես. եւ. «Արցախ» եր. 235—236) «Այս է հանգիստ Վաչականայ թագաւորին. Աստուած ողորմի Հայրապետայ և որ (իւր) ծնողացն, որ շինեաց զեկեղեցիս առաջնորդութիւն տէր Սիմոնի թիւ ՉԼԶ—1287 էր»։



## ԻԴ. գլ.

Խազրաց արշաւանքն եւ վնասներն.—Հայրապետական աթոռի փոխադրութիւնն եւ Տէր Աբաս կաթողիկոս.—Կոնդակ Տէր Յովհաննէս հայրապետի Հայոց առ Տէր Աբաս.—Առ որ թուղթ Երուսաղէմի Յովհաննէս յայն եպիսկոպոսից։

Վաչական բարեպաշտ թագաւորի և Տուփհաղիշոյ հայրապետի վախճանելուց յետոյ՝ հեղեղի նման թափւում են Աղուանից երկիրն Խազիրները, կողոպտում, գերեվարում, սպանում, աւերում են երկիրը, այրում եկեղեցիները և հրոյ ճարակ տալիս մատենագրութիւնները և կտակարանները([1])։

Աղուանցիք ազատելով «Քրիստոսի Խաչին թշնամիներից» հիւսիսային ցեղերի գործած անլուր չարութիւնից 551—552-ին հայրապետական աթոռը Դարբանդից փոխադրում են Պարտաւ մայրաքաղաքն և վաղուց վախճանած Տուփհաղիշոյ կաթողիկոսի տեղ ընտրում են Մեծ-Իրանաց գաւառի առաջնորդ
14) Տէր Աբաս և ձեռնադրել տալով հայրապետ, նստեցնում են Պարտաւում։ Այնուհետև սովորութիւն է դառնում գրել Աղուանից կաթողիկոսներին ուղղեալ նամակներին, կոնդակներին և հրովարտակներին ծրարների երեսին. «Աղուանից, Լփնաց եւ Չողայ կաթողիկոսին»։

1) Հաւանական է թւում մեզ որ ամբողջ ձեռագիրմատեանների պատմութեան համար իբրև նիւթ պահուած թղթերն՝ մեծ մասամբ զետեղուած են եղել Դարբանդի հայրապետական դիւանի մէջ, որ վառուած են ամբողջապէս, նոյնպէս և Գարգարացւոց լեզուի գիրն և թարգմանուած աստուածաշունչն։

Դունայ ժողովի որոշումը մի կոնդակաւ հաղորդում է Հայոց Յովհաննէս Բ. կաթուղիկոսն Տէր Արտաւին այսպէս. «Լուսոյ ճշմարտից աստուածասիրաց՝ սիրելի եղբօր և աթոռակցի մերում Տէր Արտաւայ[1]» ասելով նախ՝ ողջունում է։ Երկրորդ՝ զգուշացնելով յայտնում է թէ Նեստորի աղանդը Աղուանքում տարածելու համար եկած են ձեր կողմերն Թոմաս, Եղիա, Բնոս և Իսաս և այլք Պետրոսի վանքից, «Որ անուամբ աղքատական կոչի և գործովք Քրիստոնէակաց»։ Երրորդ՝ զգուշացնում է ամուր և անխախտ պահել Ս. Լուսաւորչի և երեք Տիեզերական ժողովների դաւանած վարդապետութիւնը, դաւանութիւնը, աւանդութիւնը և կանոնները, ընթանալ անշեղ ի «Մի բնութիւն ասել աստուածութեան և մարդկութեանն Քրիստոսի»։ Հանգանակաձև դաւանութեան վերջում ասում է. «Այսպէս հաւատամք և փառաւորելով ասեմք. «Սուրբ Աստուած, Սուրբ և հզօր, Սուրբ և անմահ, որ խաչեցար վասն մեր՝ ողորմեա մեզ[2]»։ Այսպէս վերջանում է կոնդակն։

Տէր Արտաւ, նախ անմիջապէս հետախուզել տալով, գտնում է Նեստորական խումբը և անմիջապէս կազմում եպիսկոպոսաց ժողով, որով մանրամասն քննութեամբ երևան է գալիս որոմնացանների խմորեալ դաւանութիւնն. աղանդաւորներն փախչին և եթ տարագրւում են Աղուանից երկրիցն։ Այս նոյն ժողովում ընդունում են Դունայ ժողովից հաստատուած դաւանութիւնը։

Երուսաղէմի Ցանոց Յովհաննէս եպիսկոպոսն ևս ուղղում է մի թուղթ Աբաս հայրապետիս այն վերնագրով

1) Ամբողջ կոնդակի պատճէնն կայ Կաղ. Բ. հատ. Է. գլ. և Ուխտանէս Բ. հատ. եր. 131։

2) Հայաստանեայց առաքելական ս. եկեղեցին ս. պատարագի ժամանակ Սուրբ, Սուրբ, Սուրբ, երգում է ի դէմս Ս. Երրորդութեան. իսկ ժամերգութեանց ժամանակ բառ պատշաճի ի դէմս Որդւոյն կամ Հոգւոյն Աստուծոյ։



(դուցէ թարգմանչինն է վերնագիրս) «Այս թուղթ Յովհաննու Երուսաղէմի եպիսկոպոսի է. առ Աբաս Աղուանից կաթուղիկոս (տպուած է 1896 թ. ի «Արարատի» մայիսի ամսատետրի մէջ։ Ինչպէս ասես, գտնւում է թղթիս մէջ.— «Սուրբ Աստուածի դաւանութեան մասին մեղադրութիւն, խրատ, յորդոր, պատմածք, ինքնահաւանութիւն, վկայութեանց խմողումն, նախատական ճառ, են։ Վերջապէս հեղինակի երկարաբանութեանց գլխաւոր նպատակն կայանում է մի կէտում — այս է Հայք, Վիրք և Աղուանք ինչի չեն ընդունում չորրորդ (Քաղկեդոնի) ժողովը։ Որպէս թէ Յովհաննէս եպիսկոպոսն թուղթս գրած է Ս. Երուսաղէմի Աղուանից սեփհական Պանդւայ վանից վանական Թումաս խնդրանօք[1]։

Տէր Աբաս կաթուղիկոսն ստանում է և Դունայ ժողովից Նոր-տոմարը — ուղղուածը և սկսում գործածել։

Հայրապետիս օրով գտնում է Վեհիկ անուն սրբակեաց ոմն՝ Ս. Ստեփաննոս նախավկայի, Թէոդորոս նահատակի, Վարսափ, Մամասայ, են մասունքները[2]։

1) Կաղ. Բ. հատ. ԾԲ. գլ. յիշում է Երուսաղէմում եղած Աղուանից վանքերի անունները։

2) Մասունքներս գտնուած են Վարանդայ գաւառի Մաչաա կոչուած գիւղում Մամասէի վանքում («Արցախ» եր. 103)։

# ԻՇԽԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

## ԼԵ. գլ.

Առանձնակի իշխաններ.—Սասանեան Միհրան Աղուանից մեծ-իշխան.—Վիրոյ կաթողիկոս Աղուանից.—Բաժանումն Վրաց, Հայոց եւ Աղուանից Առաքելական ս. եկեղեցւոյ։

Վաչական Դ-ի մահուամբ վախճանւում է և Աղուանից Արշակունի թագաւորութիւնը։ Այնուհետեւ Աղուանից երկիրն կառավարւում է Առանշահիկ իշխաններով, որք բնակւում էին Ծար, Ճառախու Գարդման, Արցախի Գարդման ամրոցներում, Շաքի քաղաքում և Արաշում։

Սպանւում է Պարսից Որմիզդ Դ. որի տեղ գահակալում է Խոսրով Բ.(1) 490 թուին. բայց հակառակ կուսակցութիւնից հալածուելով ապաւինում է Յունաց Մօրիկ կայսեր, որի օժանդակութեամբ վերստին ժառանգում է Պարսկաստանի գահը և վրէժխնդիր լինելով իւր հօր սպանման՝ կոտորել է տալիս իւր մօր եղբայրներին, այս է Բնդոյ(2) և Վստամ և սրբիններ՝ 60 ազգականս. Սպանման և Խոսրովի հալածման ժամանակից է լինում և Միհրան, որ սպանուելուց վախենալով, Խոսրով Բ-ի գահակալութեան ժամանակ իւր հետ առնում է 30,000 երդ—ծուխ—պարսիկ ժողովուրդ և փախչում դէպի Խաղիր. Միհրան Ճառախու դաշտաքերանում Խոսրով Բ-ից առնում է մի հրովարտակ,

1) Տես. Կաղ. Բ. հատ. ժէ. գլ. Թով. Արծ. եր. 112—113։

2) Տես. Վնդոյ է անուանում։

3) Այժմ կոչւում է Աղ-սու, որի բնակիչներն ամբողջապէս պարսիկներ են. Թէև այժմ մի մեծ գիւղ է, սակայն սակաւին երեւում են պարսպի հետքերն և քաղաքի աւերակներն։



ուր ի միջի այլոց լինում է խօսք. «Եղբայր իմ և հարազատ, մի լիցի քեզ հեռանալ յինէն թշնամութեամբ և եթէ ոչ հաճեցար ընդ իս բնակել, ուր հրովարտակդ իմ հասանէ. երկիրդ այդ քեզ լիցի ի բնակութիւն, որչափ և հասանեն գնացք ոտից քոց»։ Միհրան, այնուհետեւ ապահով լինելով իւր կեանքի մասին, այլ եւս չէ անցնում Խաղբաց երկիրն, այլ կանգ է առնում հրովարտակը առած տեղում. շինում է սարի ստորոտում Միհրաւան(3) անուն մի քաղաք և իւր հետ բերած ծխերի ամենամեծ մասը բնակեցնում է Աղուանից դաշտի (Կուր գետի ձախ կողմով ընկած) Հեճար և Բաղայ գաւառներում (տես «Աղ. երկ. եւ Դր.» եր. 100) իսկ փոքր մասը բնակեցնում է Միհրաւան նորաշէն քաղաքում։

Միհրան հետեւեալ գարնան բարձրանում է Ճառախու Գարդման բերդն(1) պաշարում ամրոցի անմատչելի դիրքի վերայ, իւր մօտ հրաւիրում Առան-շահիկ Առանի սերնդից 12 իշխան պարսկական յատուկ խորամանկութեամբ և 12-ը եւս գլխատելով տիրում Աղուանից երկրին և լինում Ա. մեծ իշխանն։

Տէր Աբաս 44(2) տարի գահակալելուց յետոյ վախճանւում է, որին յաջորդում է 15) Տէր Վիրոյ, որ օծումը ստանում է Հայոց Տէր Աբրահամ Ա. կաթողիկոսից 596-ին. Երկու տարուց յետոյ Աբրահամ Ա. հայրապետն մի շրջաբերական կոնդակով ինչպէս Հայոց ազգին և առաջնորդներին, նոյնպէս և Վիրոյ կաթողիկոսին միջոցաւ Աղուանից ժողովրդեան հաղորդում է՝ թէ երկար բարակ համոզելուց և խրատ. համբերութեամբ յորդորելուց յետոյ՝ յամառեալ մնաց Վրաց Կիւրիոն և բաժանեց Վրացիները Հայոց և Աղուանից միացեալ եկեղեցւոյ. վասն որոյ իմաց-

1) Բերդի նկարագրութիւնն կայ «Աղ. երկ. և Դր.» եր. 186—190։

2) Ըստ Մխիթար Գօշի ԻԴ տարի։

նում են որ պատՀեան Հայոց և Աղուանից Առաքելական եկեղեցւոյ կտրուած են Վրացիք(3)։

## ԻԶ. գլ.

Քրիստոնեայ Մօրիկ կայսեր նախանձի մի պարագայութիւն.—Աղուանից ապստամբութիւն.—Վիրոյ կաթողիկոսն 25 տարի Պարսից Արքունիքում:

Աղուանք ապստամբում են Պարսից դէմ։ Ապստամբութեան գլխաւոր պատճառն լինում է Մօրիկ կայսեր ձեռնարկած բռնի միջոցներն. քանզի կայսրն նախ աշխատում է բռնութեամբ ընդունել տալ Քաղկեդոնի ժողովը Հայոց և Աղուանից. բայց անհնարին է լինում այդ։ Երկրորդ՝ Հայոց և Աղուանից անմեղ ժողովրդոց սարսափելի հարուած տալու վրէժխնդրութեամբ՝ քրիստոնեայ Մօրիկ կայսրն գրում է Պարսից Խոսրով Բ. թագաւորին, ի միջի այլոց Հայոց և Աղուանից մասին. «Ազգ մի խոտոր և անհնազանդ են, կան ի միջի մերում և պղտորեն։ Բայց եկ ես զիմս (Յունաց բաժնում և իշխանութեան տակ եղած Հայերը) ժողովեմ և ի Թրակէ գումարեմ և դու զքոյդ (Պարսից բաժնում և Աղուանքում եղած Հայերը) ժողովեա և հրամայեա յարևելս տանել» (Սեբ. եր. 62—95)։

Ահա այս պատճառաւ ապստամբում են Հայք և Աղուանք բռնութիւնից ազատելու։ Հայոց Ատատ Խոռխոռունի և Սամուէլ Վահեւունի նախարարներն իւրեանց զօրքով

3) Մանրամասնութիւններն կան Յովհ. կաթ. եր. 92, Ուխտ. Բ. հատ. Մ. Անեցի եր. 79 բաժանումը դրած է ՈԻԷ. 627—628, Առաքել վար. Թուե. ԿԲ=613, Արէլ եղ. բաժանումը դրած է 596:



ապստամբելով հանում են Ուտի նահանգն, հասնում է նաև Պարսից զօրքն և անխնայ կոտորում շատերը, գերի տանում Աղուանից նախարարները և վիրաւորում ևս աւելի շատերը։ «Որք ապստամբեցան յարքայէն Պարսից և կորեան, անկան բազումք ի նոցանէ ոմանք ի սուր, ոմանք ի խեղութիւնս անդամոց և ոմանք տարագրեալք յաշխարհս հեռաւորս։ Իսկ նա (Վիրոյ կաթողիկոս) փախստեայ անկանէր ի դուռն արքունի... ի դուռն թագուհւոյն» (Շիրինայ որ քրիստոնեայ էր ասորի ազգաւ) որի շնորհիւ կաթողիկոսն հազիւ թէ կարողանում է ազատել իւր կեանքը, բայց 25 տարի իբրև պատուաւոր բանտարկեալ մնում է արքունիքումն (Կաղ. Բ. հատ. ԺԴ. գլ.)։

Ահա այսպէս անմեղ Հայոց մի մեծ բազմութիւն փոխադրւում է Թրակիա, իսկ Աղուանիցն՝ փոխադրւում է Ասպահան....։

Վիրոյի բացակայութեան ժամանակ տեղապահ է նըստում Զաքարիա վարդապետն (ըստ Շահխաթունեանցի Տիրանուն վարդապետ)։

Վախճանում է Սասանեան Միհրան, որին յաջորդում է իւր որդի Արմայէլն։

## ԻԷ. գլ.

Յունաց Հերակլ կայսեր արշաւանքներն Պարսից դէմ:

Մօրիկ կայսեր անհեռատես քաղաքականութեան հետևանքն այն եղաւ, որ Պարսից և Յունաց մէջ յարատևեց արիւնահեղ պատերազմներ և սոսկալի աւերմունքներ. գերի վարուեց Քրիստոսի խաչափայտն, Կոստանդնուպոլսում սպանուեցաւ ինքն Մօրիկ և

իւր որդիքն (Սեր. եր. 113). միւսանց եւս էից գահակալեցին Փոկաս, Կոստանդիանոս և Հերակլ, որ սոսկ զօրավար էր։

Հերակլ, Ցանաստանում, Հայաստանում և Պարսկաստանում Պարսից հետ երկար պատերազմելուց յետոյ, փոյթ ակարանից մտնում է Աղուանից երկիրն զօրքով և շատ գերիներով հասնում Պարտաւ քաղաքն։ Խազրով Բ-ի հրամանաւ Պարտաւի բնակիչներն առաջուց թողնում են քաղաքը և փախչում Արցախի ամուր լեռներն։ Տեղապահ Զաքարիա վարդապետն, որ մնացած է լինում Պարտաւում, ազատում է շատ հայ, հրեայ և պարսիկ գերիներ։ Հերակլի զօրքն աւերակ թողլով Ուտի—առանձնակ գաւառի շատ գիւղեր և այգիներ, բանակում է Դիւտականի և Կաղանկատու գիւղի մօտ։

Պարսից մի զօրագունդն Շահրվարազի զօրավարութեամբ Ուտի նահանգի Տիգրանակերտ աւանում սպասում է Հերակլի առաջը առնելու, իսկ միւս զօրագունդն Շահէն զօրավարի առաջնորդութեամբ երեսուն հազարով բանակում է Հերակլի թիկնաց կողմից. յունական բանակն մնում է պարսկական երկու սրի մէջ։ «Ապա եկեալ հասին զհետ նոցա զօր Պարսից, զորս նոր զօր անուանեն և էր զօրագլուխ նոցա Շահրապղականն(1) և ի հաստատիմ նախարարաց թագաւորին... այլ մի զօր զրանիկ Սալար անուանէին, եւն էջ ընդդէմ նորա (Հերակլի)... և զարձուցեալ զՀերակլեանս ընդ կրունկն վարեցին ընդ աշխարհն (Մեծ) Սիւնեաց։ Որովհետեւ թէպէտ մեծամեծ հարուածներ կրեց Պարսից զօրքն, սակայն հանեցին տարան Հերակլի զօրքը իւր աշխարհն» (Կաղ. Բ. Հատ. Ժ. գլ. Սեր. եր. 146)։

Արմայէլին յաջորդում է Վարդ Ա.։

1) Սեբէոս՝ Շահր Վարազ. Կ. Վ. Շահ. Շահրապղականն։



## ԻԸ. գլ.

Դարբանդից Ալազան 400 վերստ երկարութեամբ ձգուած մեծ պարսպի մասին։

Դարբանդի անունը, որ Ջինական պարսպի նման մի երկարաձիգ պատուար է մինչև Բալաքեան հասած և երկաթեայ ամուր դռներով փակուած, տուած է զանազան ժամանակներում զանազան անուններ, զանազան յատկութիւններից առնելով այդ անունները, ինչպէս են Դուռն երկաթեայ, Դուռն Ալանաց՝ Ալանների անուամբ, Դուռն Չողաց՝ Չողա քաղաքի անուամբ. Դուռն Աղուանից՝ Աղուանից երկրի անուամբ. Դուռն Խազրաց՝ Խազիր ցեղի անուամբ. Դուռն Հոնաց՝ Սև-Հոնաց անուամբ. Դուռն Ճորայ՝ Չողայի անուամբ. Դուռն կամ Դրունք Կասպից՝ Կասպից ցեղի կամ ծովի անուամբ. Կապան, Կապան Ճորայ. Կապան Չողայ, Պահակ, Պատուար, Ամբարտակ, Գումարտակ, Դրունք Դրանց (արաբերէն) Բաբ-էլ-աբուաբ. Դարբանդ—Նեղ անցք—Դամիր Ղափու, եւն։

Դարբանդի պարսպի և դրան հիմնարկութիւնն սկզբում եղած է Աղեքսանդր Մակեդոնացու հրամանաւ, ինչպէս վկայում է Ցովսէպոս (Ցաղագս պատերազմին Հրէից ընդ Հռովմայեցիս եր. 468 Ուլթ. Դպ.) «զի զանցս ճանապարհին հիւսիսայնոց դէմ Աղեքսանդր թագաւորն Մակեդոնացւոց երկաթի դրօքն փակեալ էր»։ Աւելի պարզ հաստատում է որ Աղ. Մակեդոնացին հիմնարկելով ամրափակած է այդ պարսպով հիւսիսային ցեղերը, մի այլ հրեայ պատմիչ Ցովսէպոս որդի Կորիոնի, գիրք Զ. գլ. 96. գրելով հիւսիսային ցեղերի, մանաւանդ Ալանաց մասին. «Սոքա յամենայն կողմանց փակեալ կային ի թիկանց լերանց

զի փակեալ էր զնոսա Աղեքսանդր Մակեդոնացի արքայն մեծ՝ երկաթի փականօք և ամրակուռ դղեկաւ ի մուտս անդ լերանցն, որք շուրջ պատեալ կան (Կովկաս մեծ սարն) զսահմանօք նոցա»։

Բաւական ժամանակ անցնելուց յետոյ Պարսից թագաւորներն հիմնաւոր նորոգութիւն արած են նոյն երկաթաձիգ պարսպին, ինչպէս վկայում է Եղիշէն եր. 247 ապ. յերուս. «Որպէս և յոյժ իսկ սրտմտեալ էր թագաւորն (Պարսից) ոչ միայն ընդ աւեր աշխարհացն և ընդ անկանել զօրացն այլ եւս առաւել ընդ աւերել պահակին, զոր ի բազում ժամանակաց հազիւ ուրեմն կարացին շինել, որ և յայնմ ժամանակի (Վարդան Մամիկոնեանի Աղուանքում արած յաղթութեան ժամանակ) դիւրաւ առեալ քանդեցաւ»։ Նոյնը վկայում է և Կաղանկատուացին, Բ. Հատ. ԺԱ. գլ. ասելով. «Բայց հայէր տեսանել թէ զինչ անցք անցանիցէն ընդ պահապանս մեծ քաղաքին Չողայ և ընդ Գումարտակս ցանկելի պարսպաց նորա, զոր բազում ծախիւք թագաւորացն Պարսից մաշեալ էր զաշխարհս իւրեանց՝ գումարելով ճարտարապետս և հնարելով ազգի ազգի նիւթս ի շինուածս մեծամեծաց գործոյն, որով փակեցին ալխեցին ընդ լեառն Կովկաս և ընդ մեծ ծովն արեւելից—Հոնաց»։ Բաւական ենք համարում այսչափ հին նոր վկայութիւնները Դարբանդի մասին, որի համար տես և «Աղ. երկ. և Դր.» եր. 115—118, և 275—276։



## ԻԹ. ԳԼ.

Խազրաց արշաւանքը.—Դարբանդի ծովամասի աշտարակի կործանումը.—Խազրաց կերպարանքը.—Պարտաւի բնակչաց ցրուիլը.—Խազրաց զօրքը առնում է Թիֆլիսը.—Դարձ Վիրոյի եւ նախարարաց։

Խոսրով Բ-ի սպանուած տարում 628-ին Հերակլ կայսեր դրդմամբ հիւսիսային ցեղերն Խազրաց Ջեբու Խաքան թագաւորի զօրավարութեամբ դիմում են Աղուանից երկրի վերայ։ Բայց որովհետև շատ ամրացրած էին Դարբանդի մուտքը, գրեթէ ապահով էին Աղուանից բնակիչներն մասամբ իսկ, որ չեն կարող ներս խուժել։ Ջեբու Խաքանի արշաւելու դրդիչը երբ լսում է Պարտաւի պարսիկ կառավարիչ Դայշակն, շրջակայ գաւառների բնակիչները ժողովում է Պարտաւի ամրոցն՝ որ աւելի ապահով լինի։

Ներհակաբար սաստիկ ալեկոծում է Դարբանդի ծովը և կործանում ծովի մէջ ամուր շինուած աշտարակը (¹) «Նախ զնա (զպարիսպն Չողայ) բաղխեցին ալիք ծովուն ծաւալեալ և ի հիմանց տապալեալ»։ Որովհետև տեսնելով սաստկացեալ ահը, այն «ժանտատեսիլ, ժպրհերես, լայնադէմ, անարտեւանունք բազմութեանն ի ձև իգական վարսարձակս գիսեալս ի վերայ, դողումն կալաւ զնոսա»։ Հիւսիսայինք անխնայ կոտորում են Չողա քաղաքի արական և իգական, մեծ և փոքր սեռերը և արշաւում Պարտաւի վերայ։ Դայշակ՝ անակնկալ այդ հրոսակաց Դարբանդի դռնից խուժելը լսելով, իսկոյն պապանձւում է, ուզում է խօսել, խօսքի կէսը անկարող է լինում արտա-

¹) Խորենացին վկայում է (Մատ. եր. 605) «Որ ածեալ է զպարիսպն Դարբանդայ աշտարակ ահագին ի ծովուն կացեալ»։

սանել։ Պարտաւի չորս դռներից դուրս է խուժում ժողովուրդն և անապարանոք փախչում դէպի Արցախի ամուր լեռները, իսկ Դպչակն՝ դէպի Պարսկաստան։ Մտնում է ճոխ Պարտաւն և կողոպտում. հետապնդում են փախստէից հետևիցն։ Սակայն շուտով թողնում են Պարտաւը և արշաւում Թիֆլիսի վերայ։

Սպանուած Խորով Բ-ին յաջորդում է Կուստ Բ., որ մի ժամում կորցնել է տալիս իւր 40 եղբայրները։ Դարձնում են Հերակլ կայսեր Քրիստոսի Խաչափայտը և ազատ արձակում են Վիրոյ կաթուղիկոսը և Ազնուանից նախարարները։ Երբ կաթուղիկոսն մտաւ իւր ծննդեան տաճարներն, ամեն տեղ երեսանկեալ փարում էր եկեղեցեաց դռներին, և յատակի քարերին, թափում էր յորդառատ արտասուքներ և ձայնը կլկնելով մրջում գետինը. և դարձեալ կանգնում էր և մխիթարում իւր հեռ եղածները և քաջալերում։ Այսպէս է խօսում պատմիչն կաթուղիկոսի մասին. «Այր հանճարեղ և իմաստուն, զօրաւոր ի բանս իմաստութեան. և լեզու նորա իբրև գրիչ երագագրի ի պատմութիւնս խօսից խորհրդականաց և ի մտաւոր խօսս թագաւորաց և մեծամեծաց։ Նա և խանդարհախօսութիւն նորա քաղցրալուր ռամկաց և խառնիճաղանճ ժողովրդոց, որ երկայնէր զխօսս իւր համեմատ ընդ ճաշս իմաստնոց և ընդ ռամկս նոցա։ Ճարէր յօրինէր զառակս բերանոյ իւրոյ, զոր օրինակ զմարգարիտ յօնկէ յեռուցու, մանաւանդ ի թարգմանութեան լեզուին Պարսից վարժեալ զամս քսան և հինգ»։ Ահա ամբողջ 25 տարի իբրև պատուաւոր բանտարկեալ գերի մնում է Պարսից արքունիքում Վիրոյ հայրապետս և ապա ազատւում ողորմութեամբ Ամենակարողին։

Միհրանեան Վարդ Ա-ին յաջորդում է իւր որդի քաջն Վարդան, որ երեք տարում չինում է Տամախու Գարդման բերդը. ապա նենգութեամբ ճաշի հրաւիրում



րուն Հայկազեան Առանշահիկ—Առանի սերնդից իշխաններ—տոհմից 60 մարդիկ և գլխատում ամենը, թողլով միայն իւր փեսայ Ջարմիհր-Առանշահիկ իշխանը։ Բայց Վարդանս հնազանդեցնում է իրան նաև Կովկասեան վայրենի ցեղերը, և վախճանում, որին յաջորդում է իւր որդի Վարդ Բ. (Կաղ. Բ. Հատ. ԺԱ—ԺԴ. գլ.)։

## Լ. գլ.

Թիֆլիսից դառնում է Խազրաց բանակն.—Ջեբու Խաքանի պատուէրն.—Փախուստ Պարտաւցւոց եւ գաւառայնոց.—Վիրոյ կաթուղիկոսն Շաք-խազրի վրանում.—Սով, մահ եւ կեսութիւն.—Խազրաց հեռանալն Աղուանքից։

Ջեբու Խաքան առնում է Թիֆլիս քաղաքը, կոտորում շատ մարդիկ, կողոպտում քաղաքը, բռնում պարսիկ կուսակալը և Վրաց իշխանը, ողջ ողջ քերթելով տիկ հանել տալիս երկուսեան մորթիները, որոց մէջ խոտ լցնել տալով հրամայում է կախել Թիֆլիսի բերդի պարսպի արտաքին կողմից։

Ապա դառնալով բանակում է իւր զօրքով Պարտաւի մօտերքում, յանձնում դաստիարակին իւր Տաթ որդին այս պատուէրով. «Եթէ երկրիս մեծամեծներն և առաջնորդներն դուրս կը գան իմ որդու առաջն և կը տան սորա ձեռքն իւրեանց երկիրը ինձ ծառայելու համար, և կը բանան իւրեանց քաղաքները և ամրոցները և վաճառները իմ զօրաց առաջ, թողէք և դուք նոցա ապրել և ծառայել ինձ. ապա թէ ոչ, կը կոտորէք ամեն արուները»։

Արդէն Արցախի լեռներում ամրացած է լինում դաշտաբնակ ամբողջ ժողովուրդն, Պարսկաստան փախած Սե-

մա Վշտնաս կուսակալն և Կողթ ագարակում (1) ամփափած Վիրոյ կաթուղիկոսն, բայց ներգուելով խուզարկուներից՝ ձիով փախչում է և մտնում Զարաբերդ կամ Ջրաբերդ ամրոցն (2), ժողովում թագաւորազուններից, իշխաններից և հոգևորականներից ոմնք, արծաթ և զգեստ և այս տանում Շաթ արքայորդուն։ Այս տեղ թողնում ենք որ ինքն Կաղանկատուացին պատմէ իւր աչքով տեսածը և ականջով լսածը։ «Անդ տեսաք զբազմացս նոցա ի դուռն ի վերայ ծնկաց ըստ նմանութեան փաղանգաց ծանրաբեռն ուղտուց, իւրաքանչիւր կինք մի լցեալ մով յանուրբ անասնոց, ըստ նմին և սկտեղք, յորում թանայքին յուսեղն իւրեանց յաղաչուր և զպաժակս և զըմպելիս արծաթեղէնս քանդակուն յոսկի համակեալս, զորս բերեալ էին յաւարէն Տփխեաց, ընդ նմին և զըմպօղս եղջիւրեղէնս և չափաձևս փայտեղէնս մեծամեծս, որովք զարգանակն լափէին . . . և զընծայս ողջունին, որ բարձեալ ի վերայ բազկաց մերոց զինի կաթուղիկոսին. այս ընթացան ընդ առաջ նորա . . . զոփառն ի բազուկս իւրեանց՝ տարան զկաթուղիկոսն միայն ի ներքոյ խորանին, ուր նստէր արքայորդին»։

Մեծ սիրով ընդունում է Շաթ իւր պատուաւոր հիւրը, և յուսադրելով ասում. Այսուհետև այլ ևս տարատակութիւն չլինիլ. Քո բերանից ելած հրամանին հնազանդ կլինին իմ ամեն զօրքերն. «Ես էլ իմ հօր Ջեբու Խաքանի արևով ուխտում եմ քեզ երդմամբ, որ ինչ որ կը խնդրես ինձանից, անտարակոյս կը կատարեմ։ Դու էլ պատուէր տուր Քո ամեն իշխանութեան տակ եղածներին, որ իւրաքանչիւր ոք դառնայ իւր բնակարանն՝ իւր վաստակն և իւր ձեռագործին . . . որովհետև հայրս

1) Այժմ Կթղուկտարան (կաթուղիկոսարան) «Արցախ» եր. 225։

2) «Արցախ» եր. 239—240։



տուացաւ Աղուանից, Լփնաց և Չողայ այս երեք աշխարհը»։ Վեր է կենում կաթուղիկոսն, խոնարհութիւն անելով ասում. Քո և քո հօր ծառաներն ենք ես էլ, երկրիս ամեն բնակիչներն էլ. խնդրիր այսուհետև քո ծառաների անձերին և գործուր քո սուրը մեզանից, որ ծառայենք քեզ էլ քո հօրն էլ, ինչպէս ծառայեցինք Սասանեաններին...»։

Այնուհետև ամեն ոք ազատ դառնում է իւր տունն և սկսում է վերստին շինութիւն անել երկիրն։ Կաթուղիկոսի խնդրանօքն ազատւում են ողջ գերիներն. Պարտաւ է գնում հայրապետն իւր հետ եղած հոգևորականներով. Շաթ խուզարկել տալով յետ է դարձնում իւրեանց տէրերին բոլոր կողոպտուած իրերը։

Նոյն տարուայ մեծի պահոց օրերում երևում են անհամար մժեղ, ուտում արտերը և կանաչ խոտը. տեղի է ունենում սաստիկ սով և ճարակիչ մահտարաժամ. շատ շատերն մեռնում են սևացած մարմնով և կոնտ եղած գլխով։ Կաղանկատուացին (Բ. Հատ. ԺԵ. գլ.) կաթուղիկոսի բերանից անում է քամելի նկարագրութիւն, սոսկալի համաճարակ մահուան և սրտաճմլիկ տեսարան, որք սարսափ են ազդում թէ գրողի վերայ և թէ ընթերցողի։ Ականատես կաթուղիկոսն խորին վշտօք ասում է. «Ես Վիրոյ՝ Աղուանից և Լփնաց և Չողայ կաթուղիկոս, թողում առել զայլ ամենայն պէսպէս զազրալիս՝ զմարմնոյ սևութիւն և զգլխոյ կնտութիւն. զի յայսմ ևս յայտնի լիցի բան մարգարէական եթէ «ածից ի վերայ ամենայն հասարակաց քուրձ և ի վերայ ամենայն գլխոց կընտութիւն»։

Հետևեալ տարում Շաթ արքայորդին հրաման է ստանում իւր հօրից թէ մեռնում եմ, շուտով հասիր։ Այս պատճառաւ դառնում է Խազիր իւր ամբողջ զօրքով (Կաղանկ. Բ. Հատ. ԺԴ—ԺԶ. գլ)։

## ԼԱ. գլ.

Վարազ-Գրիգորի ծագումն եւ իշխանութիւնը.— Տէր Զաքարիա Բ-ի գահակալութիւնը. Ցեսկոյս նայուածք.—Արաբացւոց արշաւանքը, ձգտումները եւ քաղաքականութիւնը:

Վարդ Բ-ից ծնում են Վարազման, Ճուշիկ տիկին եւ Վարազ—Գրիգոր, որ հաւատում է Քրիստոսին եւ մկրտւում Վիրոյ կաթուղիկոսից. Վարդ Բ-ին յաջորդում է Վարազ-Գրիգոր, բայց ոչ իբր նախորդ Սասանեան իշխանների նման ինքնակոչ, այլ քրիստոնեայ հաստատակամութիւնից ընտրուելով. Այս օրինաւորութեան պատճառաւ կոչուած է «Վարազ-Գրիգոր առաջին իշխան Աղուանից». Հնութեան հետքերից եւ աւանդութիւնից երեւում է որ Վիրոյի ձեռնով մկրտուած են եւ Սասանեան Միհրանի ամեն յետագայներն եւ իւր հետ եկած 30,000 ծխից ամենամեծ մասն.

Վիրոյ հայրապետան Պարսկաստանում եղած ժամանակ խնդրած էր Խոսրով Բ-ից «Դրել ի պատիւ Գարդմանայ (Ճամախու եւ ոչ Արցախի) տեառն իշխանացն Աղուանից ի վերայ թղթոց (1) եւ «Առ կուսակալս աշխարհին, զոր դեռ ես գրեմ» (Կաղ. Բ. հատ. ԽԱ. գլ. եւ Գ. հատ. ԻԴ.):

34 տարի (2) գահակալէն, բայց անբասիր հայրապետական պաշտօն վարելուց յետոյ վախճանւում է Վիրոյ եւ աթոռակալում է 16) Տէր Զաքարիա Բ. «Այր սուրբ» (3) որ

1) Այսինքն է ծրարների երեսին՝ գրել «Առ Գարդմանայ (Ճամախու) տեառն իշխանին Աղուանից» «Առ կուսակալս (որ միշտ պարսիկ էր լինում) աշխարհին»։

2) Կիր. Մ. Այր. 33 տարի։

3) Մ. Այրիվ. եր. 19. «Տէր Զաքարիա ԺԵ. (15) տարի»։



տեղապահ էր Վիրոյի բացակայութեան ժամանակ եւ ազատեց շատ գերիներ Պարտաւում. Մեզ համար մութն է մնում միայն թէ ինչ պատճառից ստիպեալ այսպիսի սուրբ մարդն եպիսկոպոս է ձեռնադրում Մեծ-Սիւնեաց Վրդանէս վարդապետը, քանզի այդ ձեռնադրութեան իրաւունքն պատկանում էր միայն Մայր-աթոռ Ս. Էջմիածնին.

Մինչեւ այս տեղ տեսանք որ Աղուանից ժողովուրդն անանջատ սիրով կապուած էր Հայոց հետ. տեսանք որ միացած էին կրօնական, դաւանաբանական եւ քաղաքական խնդիրներում. Տեսանք որ Աղուանից ժողովուրդն, իբրեւ Հայոց գերիշխանութիւնը ճանաչող եւ յարգող միշտ օժանդակ զօրք տուած էր ի պահանջել հարկին. Տեսանք նաեւ որ Պարսից Սասանեան գահակալներն, ըստ ձախողակի քաղաքականութեան իւրեանց՝ ճգնեցին երկար ժամանակ հրապաշտ դարձնել Հայերը եւ Աղուանքը. Ուշադրութեան արժանի կէտն այս է — Հայոց եւ Աղուանից թագաւորութիւնները տկարացնելով եւ կործանելով, տկարացան եւ կործանուեցան Սասանեան տէրութիւնն էլ, Յունաց պետութիւն էլ.

Այդ միջոցներում երեւան են գալիս Արաբացւոց (1) արշաւանքներն. Ինչպէս Հայոց եւ Աղուանից եւ Պարսից կառավարութիւններն միապետական էին, նոյնպէս միապետական էր եւ Արաբացւոց կառավարութիւնն, միայն թէ Հաւատացելոց պետն թէ հոգեւոր գլուխ համարուած էր (եւ այժմ եւս է) եւ թէ մարմնաւոր գլուխ եւ կոչւում էր Ամիրապետ մի եւ նոյն գահակալող անձն. Արաբացւոց քաղաքականութիւնն էր գլխաւորապէս տարածել Մահմետականութիւնը եւ Ղուրանը եւ ընդարձակել իւրեանց տէրութիւնը, վասն որոյ Փրկ. 637—641 պատերազմեցին Պարսից հետ Պարսկաստանում Յազկերտ Գ-ի օրով.

1) Սոքա կոչւում են Արաբ, Արաբացի, Հագարացի, Իսմայէլացի, Սարակինոսի, Տաճիկ, Մահմետական:

## ԼԲ. գլ.

Յազկերտ Գ-ի տագնապը.—Ջիւանշիր սպարապետ եւ պարգեւատրեալ.—Պարսից անակնկալ արշաւանքն Աղուանից վերայ.—Ջիւանշիրի յաղթութիւնները.—Դաշնակցութիւն Տէր Յովհան Բ-ի:

Յազկերտ Գ. աշխատում է առնել Աղուանից յարձակմանց առաջը Պարսից զօրքով, բայց երբ տեսնում է որ չէ կարելի, պահանջում է հարկատու հպատակ ազգերի զօրքը և զօրավարները։

Աղուանից Վարազ-Գրիգոր մեծ իշխանից ծնուած էին Վարազ-Պերոժ, Ջիւանշիր, Յեսու-Խոսրով և Վարազման, չորս որդիք։ Մեծ իշխանն չէ կամենում անձամբ գնալ իւր զօրաց հետ, վասն որոյ չորս որդիներից ընտրում և իբրև զօրավար յղում է Ջիւանշիրը, որի մասին գրում է Կաղանկատուացին (Բ. Հատ. ԺԸ—ԺԹ. գլ.) «Խոհեմ և սիգաճեմ, չքնաղակերպ ունելով տեսիլ, դեռ ևս կամէր ծաղկիլ ի ծնօտան տեղ մօրուացն Ջիւանշիրի», որ զօրավար կարգուելով իւր հօրից 3000 զօրքով գնում է Պարսկաստան։

Բաջութեամբ կռուելով Արաբացւոց բանակի դէմ ստանում է 3 վտանգաւոր վէրք և իւր ձին՝ 4 վէրք։ Մնում է Պարսկաստանում 7 տարի և շարունակ պատերազմում։ Յազկերտ Գ. տեսնելով Ջիւանշիրի սրտանց աշխատութիւնը, նախ անուանում է զինքը Սպարապետ և ապա պարգևում է նորընծայ սպարապետին «Աշխա (թագաւորական ցեղի յատուկ դրօշմ) և փողս ազդարարութեան, երկուս նիզակս ոսկիս և երկուս վահանս ոսկեքանդակս, զորս միշտ առաջի նորա շրջեցուցանէին. ընդ մէջ ածեալ զօտի ոսկի ընդելուզեալ մարգարտով և



ստանը ոսկեարեայ և ապարանջանս բազկացն. և պսակ ցանկալի ի գլուխ նորա։ Տուեն նմա և զանգապանս մարգարտով և զմարգարտակ նշանգունակ շուրջ զպարանոցաւն. ազուցին նմա արջնաթոյր (մթնագոյն) մորթ չորիւք դրօշակօք և զրահս (զինուորական բարձր աստիճանի խանկադին զգեստ) մետաքսաւէշ ոսկեթելեան փայլուզով և հրամայեցին զիւղատամանեայս ընաբար ծառայութեան և զկառս ձիանցս։ Վերջապէս Ջիւանշիր վերջին անգամ ատեղադին պատերազմելով ստանում է 11 ծանրագոյն վէրք ևս և հայրենիք դառնում իւր զօրքով։

Պարսից մի զօրագունդ արշաւանք է գործում Աղուանից երկրի վերայ որպէս թէ ապստամբած և հեռացած Ջիւանշիրը պատժելու համար։ Պարսից այս զօրագունդն, փոխանակ պաշտպանելու իւրեանց ջախջախուող թագաւորութիւնը, բաժանւում է երեք մասի։ Հասնում է իւր զօրքով Ջիւանշիր անձամբ սպանում թշնամու մի մասի գնդապետը, որ լինում է Դելմ(1) ցեղից, ապա կոտորում շատ պարսիկ զինուորներ, առնում գերիներ, ձիեր, ջորիներ, ժողովում կապուտ և կողոպուտ և դառնում Պարտաւ։

Երկրորդ անգամ պատերազմում է Սպարապետս Հերակլ կայսեր պատերազմած տեղում և յաղթում երկրորդ զօրամասին. բայց ստանում է գոյժ թէ հայրդ Վարազ-Գրիգոր և եղբայրներդ գերի տարան պարսիկ զինուորներն։ Ջիւանշիր սպարապետն սաստիկ զայրացած անցնում է Կուր գետի ձախ կողմն և Կապիճան գաւառում (2) հանդիպում թշնամու երրորդ զօրամասին, որը և կոտորում ամբողջապէս, սակայն ինքն ևս վէրք է ստանում իւր գլխից, վէրքը անձամբ կապում է Վրաց Ատրը-

1) Պրյաց ցեղերից մի տեսակի անունն է Սեբ. Գ. Դպ. ԼԷ. գլ.։
2) Գաւառիս մասին տես «Աղ. երկ. և Դր.» եր. 271—275:

ներսէհ իշխանն. բայց այս անգամ էլ չէ գտնում իր հայրը և եղբայրները։ Վերջապէս երկու պատերազմներ ևս մղելով Զիւանշիր Շակաշէն գաւառում (1) խոշոր յաղթում է թշնամուն և ազատում իր հայրը և եղբայրները։ Մնացեալ պարսիկ զինուորներն հեռանում են դաշինք կապելով։

Զիւանշիր ամուսնանում է Մեծ-Սիւնեաց Սրուխեան (2) տոհմից Խոսրովանուշ օրիորդի հետ։

Պանկուելու պատճառաւ Սպարապետիս բացակայութեան ժամանակ, Պարսից գնդապետն՝ դաւաճանելով իր տուած դաշանց պայմանին, վերստին գերի է տանում Վարազ-Գրիգոր մեծ իշխանը։ Դառնում է պատրաստուած Զիւանշիրն և կրկին ազատելով իր հայրը՝ բոլորովին ջնջում ուխտադրուժ և դաւաճան թշնամին. և այլ ևս հարկ չէ վճարում Պարսից։

15 տարի հայրապետութիւն անելուց յետոյ վախճանում է Տէր Զաքարիա Բ. (3) որին յաջորդում է 17) Տէր Յովհան Բ. Ամարասայ եպիսկոպոսութիւնից 647-ին։

## ԼԴ. գլ.

Զիւանշիր մեծ իշխան Աղուանից.—Կործանումն Սասանեան թագաւորութեան.—Կոստանդին կայսրն և Զիւանշիր.—Տէր Ուխտանէս.—Պարգևներ Թուրքաստանի թագաւորից.—Արշաւանք Խազրաց.—Ս. Նշան տաճարի շինութիւնն և օծման հանդէսն։

Երուանդազարդ Վարազ-Գրիգորին յաջորդում է Զիւանշիր իբրև մեծ իշխան և խաղաղացնում Աղուանքը։

1) Դաւաղիս մասին տես «Արցախ» եր. 23 և 35—59.

2) Կաղանկ. Տիպ. Մոսկ. Բ. Հատ. ԺԹ. գլ. Առանձնական։

3) Գոշ Մխիթ. տես 17. Կիր. «Տէր Զաքարիա ամս հնգետասան»



Արաբներից կործանւում է Պարսից Սասանեան թագաւորութիւնն 641—642, թափառական շրջում է Յազկերտ, վերջապէս 650-ին սպանւում է Սպիտակ-Հոնաց-Բուշանաց-Հեփթաղներից։ Արաբացիք տիրում են Պարսկաստանին և երեսները դարձնում դէպի հիւսիս։

Յունաց Հերակլ կայսեր թոռն Կոստանդին կայսրն մտենում է Հայոց և Աղուանցոց՝ քրիստոնէական միացեալ ուժով Արաբացւոց դէմը առնելու նպատակաւ։ Կայսեր մտենում են Հայք և Աղուանցիք աներկմիտ հաւատով և սիրով։ Նոյն կայսեր հրաւիրմամբ Զիւանշիր մեծ իշխանն մի պատուաւոր իշխանի հետ ներկայանում է կայսեր Կոստանդնին Մարաստանի՝ Բուներ գիւղում։ Բայց որովհետև այդ միջոցին վախճանուած է լինում Զիւանշիրի Խոսրովանուշ տիկինն, սև հագած է լինում մեծ իշխանն։ Կայսրն իսկոյն փոխել է տալիս սևերը և հագցնել տալիս թագաւորական զգեստ և պարգևում Կենաց Փայտից մի մասը։ Իսկ յետոյ նոյն կայսրն Վաղարշապատում պարգևում է Զիւանշիրին ոսկեղէն և արծաթեղէն թագաւորական սպասներ, և իր պատկերը «Հերակլի և Նիկիտա հանոյն զարքունական զօտին ածին ընդ մէջ նորա (Զիւանշիրի) և ծիրանի պատմուճան և դրօշս երկուս. և զորդիս նորա (Զիւանշիրի) առնէր պատրիկս տղայականս։ Եւ որ միանգամ առաջին թագաւորացն Աղուանից գիւղաստանեայք և սահմանք լեալ էին, զամենայնն ի նմա ընծայեաց յազգաց յազգս սեփհականս արքայաբար առնել տեսչութիւնս» (Որպէս թէ այդ ամենը սեփհականներ Զիւանշիրին. մինչդեռ արդէն Զիւանշիրինն էին)։

25 տարի (1) հայրապետութիւն անելուց յետոյ վախճանում է Տէր Յովհան Բ. որին յաջորդում է 18) Տէր Ուխ-

1) Կիր. տես 25, Այրիվանեցի՝ 27 տարի, Գոշ-Մխիթ. 25. Շահխաթ. Բ. Հատ. 25 տարի

տանէս 670-ին, որի հետ Ջիւանշիր հիմնարկում է մի նշանաւոր տաճար Ծամախու Գարդմանի ամրոցում—իւր ծննդավայրում Կենաց Փայտի մասը բազմեցնելու համար. որը ստացած էր Կոստանդին կայսրից. շինում է և իւր համար պալատներ Պարտաւում։

Թուրքեստանի Թագաւորն էլ բարեկամութիւն հաստատելով Ջիւանշիր մեծ իշխանի հետ, որին նուէր է յղում ծառաներ, աղախիններ, ընտիր ձիեր, և զանազան գեղեցիկ մորթիներ։ Այլ և Սարբեստանից, Վրաստանից և Հնդկաստանից տեսութեան են գալիս մեր այս նոր Սողոմոնին-Ջիւանշիրին։ Այնուհետև Աղուանքը հարկատու են լինում միայն Յունաց։

Խազիրք նորից արշաւում են Աղուանից երկրի վերայ, սակայն խիզախ հալածւում են մեծ իշխանից հաւ-կու թերից՝ ասելով. «Գնա մնա ընդ. դուռն Ջողայ»։

Ուխտանէս հայրապետն, տանելով Կենաց Փայտը և ամեն եպիսկոպոսներ, նախարարներ, Ջիւանշիր իշխանի հետ Պարտաւից անցնում են Կուր գետի ձախ կողմն և գնում դէպի Ծամախու Գարդմանի բերդն, բայց չհասնելով գիշերում են Ջիւանշիրի բերդում (1)։ Հետևեալ օրն բարձրանում են Գարդման (2) ուր հայրապետն շքեղ նաւակատիք կատարելով մեծահանդէս թափորով և հանգիստ օծում է տաճարը յանուն Սուրբ Նշանի և բազմեցնում Ս. Սեղանի վերայ Կենաց Փայտի մասը (3) (Կաղան. Բ. Հատ. Ի—ԻԶ. գլ.)։

---

1) Այժմ էլ կոչւում է Ջիւանշիրի Դղյա. «Աղ. երկ. և Դր. եր. 210։

2) Բերդին կամ ամրոցին նկարագրութիւնը տես «Աղ. երկ. և Դր» եր. 186—190։ Այժմ գրեթէ անմարդաբնակ է։

3) Այժմ աւերուած է բոլորովին այս հրաշալի տաճարն, որի մէջ օծումից վերջն այնքան ջերմագին աղօթած էր Ջիւանշիր։



## ԼԴ. գլ.

Ջիւանշիրի երկրորդ ամուսնութիւնը.—Ջիւանշիր իշխանն Ամիրապետի մօտ.—Պարգևաբաշխութիւն.—Դիւց մատանց.

Մև-Հոնաց Թագաւորն իւր զօրքով և օժանդակ գալիս է Աղուանից երկիրն և իւր դուստրը հարսնացնում Ջիւանշիր մեծ իշխանին, հաստատում սէր և միութիւն և դաշնում։

Ամիրապետն լսելով Աղուանից իշխանի գիրքը և խոհեմութեան համբաւը և Յունաց, Թուրքեստանի և Հոնաց Թագաւորների հետ ունեցած բարեկամութիւնը և պարգևատրուելը և միանգամայն իշխանին խելացի կառավարութիւնը, կարծես նախանձում է։ Աշխատում է իւր կողմն գրաւել մեծ իշխանը և պարգևատրել, վասն որոյ պատուաւոր պատգամաւորների ձեռնով իշխանը հրաւիրում է Դամասկոս, որ ներկայանում է Ամիրապետին։ Ամիրապետին ներկայանալու համար եկած են լինում նաև Բիւզանդիոնից-Յունաց կողմից, որ յանձնառու լինէին հարկ վճարել Արաբացւոց. «Վասն այնորիկ յերեսներորդ ամի (սխալ է 30 տարին) թագաւորութեան Կոստանդնի կերպաձեռն եղեն ներքինիքն սպանանել զնա, որոց ի թագաւորէն լինէր հրաման մնալ մինչև եկեսցէ անդ իշխանն արևելից։ Իսկ բազմագով այրն» Ջիւանշիր Ամիրապետի հրամանաւ խօսակցելով Բիւզանդացի պատգամաւորների հետ հաստատում է խաղաղութիւն Ամիրապետի և Կոստանդին կայսեր և պատգամաւորների մէջ, որով գոհ են լինում երեք կողմերն էլ։

Այնուհետև Ամիրապետն պարգևում է Ջիւանշիրին փիղ, թութակ, ոսկեպատեան և մարգարտազարդ թուր, թա-

գաւառական ծիրանի պատմուճան. 52 տարական նժոյգ և Մեծ-Սիւնեաց իշխանութիւնը, որ իւր հզօրութեամբ իշխէ Մեծ-Սիւնեաց վերայ։ Պարգևատրւում են և իշխանի հետ գնացած 50 հոգի պատուաւոր անձինք։ Բայց որովհետև Ջիւանշիր, ի նկատի ունենալով Աղուանից երկրի խաղաղութիւնը և շինութիւնը, խոստացած էր հարկ վճարել Արաբացւոց, վասն որոյ խնդրեց թեթևացնել հարկի քանակութեան չափը։ Հրամայում է Ամիրապետն պակասեցնել Աղուանից երկրի հարկի կէս բաժինը։ Ամիրապետի տիկիններն ևս նուիրում են Ջիւանշիրի կնոջ համար տանելու մետաքսեայ թանկագին կտորներ և կերպասներ։

Աղուանից Ուխտանէս հայրապետի վերջին տարիներում գտնւում են այն մասունքները, զորս ամփոփած էին Ս. Մեսրոպի աշակերտներն Աստղաբլրի մօտ։

12 տարի պաշտօն վարելով վախճանւում է Տէր Ուխտանէս, որին յաջորդում է 683-ին 19) Տէր Եղիազար Ճաքուայ աստիճանաւորութիւնից։ Վերջնոյս մասին ասում է Կաղանկատուացին, Բ. Հատ. ԼԲ. գլ. «յաջորդէ զաթոռ նորին (Ուխտանիսի) Եղիազար՝ այր բարի և ազնուական։ Սա էր եպիսկոպոս Ճաքուայ, որ ի վախճանելն Ուխտանիսի ի ժողովի անդ գիւտեալ». այս ինքն է կաթուղիկոսացու ընտրողներից մէկն էր Եղիազարս էլ։ Վիճակն երևում է Եղիազարին, որ ձեռնադրւում և օծւում է նոյն իսկ ժողովում. երևի թէ Հայաստանի խառնակ դրութեան պատճառաւ։

Հայրապետիս օրով գտնւում է Գիս այն խաչն Կենաց Փայտի մասով միասին, որը Ս. Մեսրոպ անձամբ ամփոփած էր։ Սահմանւում է կատարել նաւակատիք Գիսի վանքում՝ ամեն տարի Խաչվերացի տօնի հանդիսին։ (Կաղ. Բ. Հատ. ԻԷ—ԼԳ. գլ.)։



## ԼԵ. գլ.

Ջիւանշիր ամեն կողմից յաղթում է փառաւորութիւններով.—Սպանւում Ջիւանշիր իշխանը.—Ընտրութիւն Վարազ-Տրդատի.—Արշաւանք Սև-Հոնաց.—Վարազ-Տրդատի մասին։

Կաղանկատուացին, Բ. Հատ. ԻԲ. գլ. գրում է Ջիւանշիր իշխանի մասին. Աստուածային նախախնամութեամբ Ջիւանշիր ի ծնէ իսկ ստեղծւա փառքերի և մեծութեան մէջ, և մինչև ցայսօր Տէրն ընդարձակեց սորան ամեն փառքով ամեն իշխանութեանց մօտ. մենք տեսանք որ Սա ամեն բանով ամեն թագաւորներից պակաս չէր, ունէր շատ ոսկի, արծաթ, պատուական ծիրանիներ, և գեղեցիկ զգեստներ. պատուական և լուսափայլ մարգարիտներ ու ակաւ, նաև ունէր ամեն ինչ լի և բաւական առատութեամբ։ 33 Տարի է որ Աստուած սկսաւ բազմամեծար և բարեյաղթ անել Աղուանից իշխանը. զորս աշխարհակալ ազգաց թագաւորներից շատ պատուել և մեծարել, ընաւ պակաս չլինելով այն բանակալներից, այլ ամեն բանի մէջ վեհ և մեծ լինելով։ Ուրեմն չլինի թէ մէկն փոքր համարելով իշխանիս տիրապետութիւնը իւր գլխին թագ չունենալու համար միայն։ Ջիւանշիր այդ բոլոր փառաց հետ ունէր կատարեալ աստուածպաշտութիւն։

Սորանից մի քանի տարի յետոյ, նաւակատեաց Ս. Խաչի տօնի օրն ամարանոցից գալիս է Պարտաւ Ջիւանշիր, որ ներկայ լինի հանդիսին այն գեղեցիկ տաճարում, որը շինել տուած էր ինքն։ Իւր սեպհական բուրաստանում անզէնք և միայնակ զբօսնելու ժամանակ, գիշերուայ առաջին պահուն սպանւում է իշխանն Ջիւանշիր Ենիքա անուն

ումն վատազգի անձից(1) որ փախչելով անյայտանում է մութին մէջ։ Արշաւում է որընթաց Լեզգեաց սպանողի ետեւից, բայց չէ յաջողում գտնել, վասն որոյ քանդում և աւերում են սպանողի հօր տունը և կողոպտում։ Ջիւանշիր իւր վերջին շնչում կարգադրում է իւր որդւոց հաւանելի բաժինները և վախճանում։ Մեծ սուգ է անում ամբողջ երկիրն և Դաւթակ անուն մին յօրինում է ողբերգական կարգաւ եղերերգական ողբ որի կիսատն—Ա-Ճ տառն—կայ Մովս. տպուածում, իսկ ամբողջ Փարիզում տպուածում 1860 թիւ Բ. հատ. ԼԵ. գլ.։

Հաւաքւում են Եղիազար հայրապետի մօտ Աղուանից երկրի ամեն տեղից իշխաններ և մեծամեծ նախարարներ կուսակալներ և միաձայն հաւանութեամբ մեծ իշխան ընտրում Ջիւանշիրի Վարազ-Պերոժ եղբօր որդի Վարազ-Տրդատը, որի մասին գրում է Կաղանկատուացին (Բ. հատ. ԼԶ. գլ.) Վարազ-Տրդատ (Ա), որդի Վարազ-Պերոժի եղբօր Ջիւանշիրի ... հզօրիմաց հանճարով գերագոյն յոյժ ցուցանելով ամենեցուն զսէր խնամակալ բարեկամութեան... ի ձեռն խաղաղիկ և քաղցրաբոյր խօսից նուաճէր և յինքն հանդուցանէր զամենեցուն սիրտ և երկայնամիտ հեզութեամբ հնազանդեցուցանէր զաշխարհն ըստ ասխարական իւրոյ տէրութեանն։

Սեւ-Հոնաց Ալփիլզի-թուրքն, որ Ջիւանշիրի աներորդին է լինում, իւր փեսայի սպանման վրէժը լուծելու համար՝ մեծ զօրքով արշաւում է Աղուանից երկրի վերայ, որի հետ գալիս են և Գողգայ երկրիցն շատերն զինուած և պատրաստ սպասում Կապաղակ (այժմ Կաբալա) գաւառում։ Վարազ-Տրդատ մեծ իշխանի կողմից գնում է իւրև պատգամաւոր Եղիազար կաթուղիկոսն և համոզկեր խօսքե-

1) Շարայարողն, հատ. Գ. ԺԷ. գլ. գրած է «Ի սմին ժամանակի (683-ին) զՋիւանշիր իշխան Աղուանից սպանին Անհղուքն. իսկ ըստ Կաղանկատուացու՝ Եհիա։



րով համոզում Ալփիլզի-թուրքը՝ ասելով. Ջիւանշիր իշխանի սպանման բնաւ հաղորդ չեն Աղուանցիք, այլ սպանուած է նա մի վատազգի անձի ձեռնով, որի հօր տունն արդէն քանդուած է։ Ապա հեռանում է Ալփիլզի—թուրքն իւր զօրքով և ամեն եկամուտներով։

«Այնուհետև ստուածարեալ իշխանն Վարազ-Տրդատ օր ըստ օրէ յառաջանայր ի պետութեան իւրում և ընդունէր զգերագոյն պահն ի հզօր և յարքայակերպ իշխանէն Տաճկաց (Ամիրապետէն) սահմանեալ լինել կողմանն արևելից. իշխել ամենայն թագաւորութեանն Աղուանից և Ուտէացւոց գաւառին (նահանգին) և նուաճել ընդ ինքեամբ զամենեսին, յարագուարճ ցնծութեամբ յաղթող և հզօր գոլով ի վերայ սահմանաց իւրոց» (Կաղ: Բ. հատ. ԼԶ-ԼԷ. գլ.): Այս առաջին անգամն է որ Աղուանից մեծ իշխանն հաստատւում է Ամիրապետից։

## ԼԹ. գլ.

Պարտաւի ժողովն.—Խորհրդի նպատակն.—Իսրայէլ եպիսկոպոսի առաքելութիւնն.—Սեւ-Հոնաց պատգամաւորները.—Իսրայէլ եպիսկոպոսի գործունէութիւնը.—Սեւ-Հոնաց Քրիստոսի հաւատալն եւ նոցա մեծ իշխանի առաջարկութիւնն.—Պատգամաւորութիւն.—Կաղանկատուացու Բ. հատորի վերջն։

Պարտաւում կազմւում է մեծ ժողով Եղիազար հայրապետի նախագահութեամբ և Վարազ-Տրդատ Ա. մեծ իշխանի և ամեն նախարարների ներկայութեամբ։

Ասում է Վարազ-Տրդատ Ա. Ահաւասիկ մեր վերայ ծանրացել են Արաբացւոց հարկերն, որ պատճառում է մեզ մեծ տարակուսութիւն։ Երկրորդ՝ աւերուեցաւ մեր

երկիրն հիւսիսայիններից, որ ամեն տարի արշաւելով կողոպտում են և աւարառում: Ուրեմն կարևոր է ընտրել մի մարդ, որ գնայ և այդ ամբոխութեան հետ բանակցելով հաստատէ սէր և հաշտութիւն: Եւ այն ընտրում են Իսրայէլ եպիսկոպոսը, որ մի սրբասէր անձն է լինում և Մեծկողմանց առաջնորդն:

Իսրայէլ եպիսկոպոսն մեծ ներողութեամբ հասնում է Սև-Հոնաց Վարաչան (այժմ Թարկուի մօտ) մայրաքաղաքն և ընդունւում մեծ սիրով:

Ս. եկեղեցու այս մեր մշակն ոչ միայն յաջողում է խոհեմութեամբ հաստատել սէր, խաղաղութիւն և անքակ հաշտութիւն, այլ և յաջողում է արմատախիլ անել նոցա մոլորապաշտութիւնները, վասն զի ունենում էին կուռք մեհեաններ, պաշտելի ծառեր, Թանգրի-խան անուամբ հսկակայի արձան, որին համար զոհում էին խորոված ձի: Ունենում էին քրմապետ, կախարդներ և վհուկներ, պաշտում էին նաև կրակ, կայծակ, ջուր և լուսին:

Հաւաքւում են եպիսկոպոսին մօտ և խնդրում որ մի բան խօսէ նա կրօնի մասին: Բարեպաշտ [illegible] համարելով բացատրում է թէ՝ սնոտի են իրեանց պաշտամունքներն, ճշմարիտ Աստուածն երկնքումն է. բացատրելով հասկացնում և համոզում է Քրիստոնէութեան ճշմարտութիւնը ժողովրդեան հասկանալի ոճով: Վերջապէս նախ հաւատում և մկրտւում է իշխան Ալփ-իլիթուերն իւր զօրքով և ապա ժողովուրդն. որք սրբութեամբ պահում են մեծ պասը:

Այնուհետև կտորում են պաշտելի ծառերն, շինւում խաչեր և անկւում շատ տեղերում ի տես ժողովրդեան, կործանւում է Սպանդեան կուռքն. մկրտւում են այս և գիմադրող քուրմերն, քրմապետն, կախարդներն, վհուկներն, շինւում է եկեղեցի, կատարւում է ուրախութեան տօների տօն և ժողովների ժողով; իսկ իրեանց



լուսաւորութեան ամենամեծ և ամենանշանաւոր օրն և ի հաստատութիւն Հոնական-հայադաւան եկեղեցու ձեռնադրւում են քահանաներ:

Դիմում է եպիսկոպոսին Հոնաց մեծ իշխանն իւր նախարարների և իշխանների հետ և խնդրելով ասում. «Աղաչեմք զքո սրբութիւնդ, զի հաւանեսցիս լինել մեզ տեսուչ և վարդապետ՝ կանգնելով ի Վարաչան քաղաքիս մերում զաթոռ հայրապետական. և յուսամ Տեառն մերոյ ես Իլիթուեր[1] ընդ քեզ՝ զամենայն հեթանոսական պաշտամունս բնաջինջ խլեցից յերեսաց Հոնաց երկրիս»: — Պատասխանում է Իսրայէլ եպիսկոպոսն. Այդ կախուած չէ իմ կամքից, այլ Աստուծոյ, Եղիազար կաթուղիկոսի և Վարազ—Տրդատի կամքից (Կաղ. Բ. Հատ. ԼԲ-ԼԵ. գլ.):

Իլիթուեր մեծ իշխանն պատրաստում է նամակներ. մին ուղղեալ Աղուանից Եղիազար կաթուղիկոսին և Վարազ—Տրդատին և միւսն Հայոց Սահակ Գ. կաթուղիկոսին և Գրիգոր Մամիկոնեան զօրավարին. երկու նամակներն էլ միևնոյն իմաստով — Հոնք էլ ընդունեցին Հայոց և Աղուանից կրօնը և դաւանութիւնը՝ այդ Աստուծոյ Իսրայէլ եպիսկոպոսի քարոզութեան շնորհիւ. խնդրում ենք նոյն եպիսկոպոսը շնորհեցէք մեզ Տեսուչ և առաջնորդ, որի ձեռնով գտանք մեր փրկութիւնը և ճանաչեցինք ճշմարիտ Աստուածը: Այնուհետև կը հաստատուի Հայոց, Աղուանից և Հոնաց մէջ սէր անքակ: Նամակներս յղւում են Իրթգին Խուրանից և Ճաթ Խաղրի ձեռնով[2] Իսրայէլ եպիսկոպոսի հետ:

1) Մովսիսյան ասլ. եր. 184 Ալփիլիթ թուեր. եր. 206 Իլիթուեր. Փարիզում ասլ. Ալբիլիթ թուել. իսկ եր. 394 Իլու թուել: Միևնոյն անձն է երկոցունց տպածն էլ և ոչ տարբեր անձինք. Թերևս գրչագրերի կամ տպագրերի սխալներ են և ոչ թէ ջոկ ջոկ անձեր:

2) Փարիզ. ասլ. Իրթգին Խուրանից և Կաթն Խաղրաց:

Պատգամաւորներին մեծ սիրով ընդունում են Հայոց Սահակ Գ. հայրապետից, որ մի յատուկ կոնդակաւ յայտնում է Հոնաց իշխանին՝ նախ իւր թղթի առնալը. Քրիստոնէական կրօնը ընդունելու համար Հայոց և Աղուանից խնդակցութիւնը. երկրորդ՝ գրում է կոնդակում. «Բայց այդ Իսրայէլ եպիսկոպոսն, որը խնդրեցիք մեզանից, մեծ է Ձեր այդ խորհուրդն. քանզի կարելի չէ հօտն առանց հովուի լինել. այդ ծանր և դժուարին է մեզ չկատարել ձեր խնդիրքը... այլ Իսրայէլ եպիսկոպոսը յուղարկելու իշխանութիւնն պատկանում է Եղիազար կաթուղիկոսին»։ Կոնդակն վերջանում է օրհնութեամբ։

Պատգամաւորներն դառնում են Եղիազար կաթուղիկոսին մօտ, որ պատճառաբանում է թէ՝ Իսրայէլ եպիսկոպոսն առաջնորդ է Մեծ-կողմանց գաւառին, վասն որոյ ձեզ հետ գալն և չգալն թողնում է իւր կամքին։ Վերջապէս եպիսկոպոսն սիրով յանձնառու է լինում և պատգամաւորներին հետ դառնում են Վարաչան քաղաքն (Կաղ. Բ. Հատ. ԼԹ-ԽԵ. գլ.)։

Կաղանկատուացին վերջացնում է իւր պատմութիւնը Բ. Հատորում Հայոց Սահակ Գ. հայրապետի և Գրիգոր Մամիկոնեանի, և Աղուանից Եղիազար կաթուղիկոսի և Վարազ—Տրդատ մեծ իշխանի կենդանութեանց օրերով, մօտաւորապէս 685-ին. յիշելով Հայոց և Աղուանից Երուսաղէմում ունեցած վանքերի անունները, որք այժմ աւերակ են և անյայտ տեղերով։



## ԼԷ. գլ.

Մովսէս Դասխուրանցի(1) տարեգիրը.—Մահ Եղիազար կաթողիկոսի եւ յաջորդութիւն Ներսէս Ա. կաթողիկոսի.—Աղուանից Ճամարակութեան Ճիւղական եւ քաղաքական տագնապն.—Բանդարկութիւն Վարազ—Տրդատի եւ իւր որդւոց.—Դաւանաբանական յուզումն։—Աղուանից եկեղեցին ստորադրելու պատրուակ.—Գահընկեցութիւն եւ յաջորդութիւն.—Հայաստան եւ Աղուանք երկու սուրերի մէջ։

Շարայարող համանուն Մովսէս Դասխուրանցին շարունակում է պատմութեան թելը Կաղանկատուացու կտրած կէտից Գ. Հատորով. որի մէջ կայ ԻԳ. գլ.։ Ա. և Բ. գլուխներն վերաբերում են Արքայից ծագման. զօրանալուն և աշխարհակալութեան(2)։ միւս գլուխների պատմական գլխաւոր կէտերին կը ծանօթանանք կարգաւ առաջիկայում։

Վեց տարի հայրապետական պաշտօն վարելուց յետոյ 687-ին վախճանում է Տէր Եղիազար, որին յաջորդում է **20)** Տէր Ներսէս Ա. Բակուր կոչուած Շամախու Գարդման գաւառի առաջնորդութիւնից։ Ընտրութիւնն կատարւում է Պարտաւի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցում. ընտրութիւնից վերջն Ներսէսից առնում են գրաւոր երդմնաթուղթ, որ ինքնին նզովում է ողջ Հերձուածողաց և Հերետիկոսաց դասը և ուխտում է հրապարակաւ հե-

1) Դասխուրան գիւղի աւերակն՝ որ այժմ կոչւում է Դասսափար, գտնւում է Արցախի Գարդմանում. տես Արցախ, եր. 275։

2) Որովհետև լուսահոգի Քեր. Պատկանեան հիմնաւոր փաստերով և հմտութեամբ և գեղեցիկ բացատրութեամբ բաւական խօսած է Արքայից մասին Սէբէոսի հրատարակութեան առթիւ, աւելորդ համարեցինք կրկնել այստեղ։

տևել ուղղափառ ս. Հօրը և բացի 3 տիեզերական ժողով-ներիցն չընդունել և չճանաչել այլ տիեզերական ժողով։

Անտանելի է լինում Աղուանից ժողովրդեան քաղաքական, նիւթական և կենսական վիճակն և տագնապն. քանզի մի կողմից Արաբացիք աշխատում էին ձգել իւրեանց իշխանութեան տակ Հայաստանը և Աղուանքը, և միւս կողմից՝ Յոյներն։ Հայոց և Աղուանից ժողովուրդն ողորմելի օչխարի պէս մնացել էր գիլի և աղուէսի կտիճների մէջ տանջուելիս և ջարդուելիս. եթէ բռնում էին Յունաց կողմը, կոտորւում էին Արաբներից. եթէ բռնում էին Արաբացւոց կողմն, կոտորւում և պատանդ էին տանւում Պօլիս Յոյներից. կարծես թէ ամայանում էր երկիրն։

Հայաստանում և Աղուանքում արդէն քանիցս բարբարոսութիւններ գործած էր քրիստոնեայ Յունաց զօրքըն։ Որպէս թէ բաւական չէր այս, մանաւանդ գալիս է Յուստինիանոս Բ. կայսրն և անում աւերմունք և անգթութիւններ, թողնում 30,000 զօրք. որ պահպանեն Հայաստանը և Աղուանքը Արաբացւոց դէմ. իսկ ինքն պատանդ է առնում Հայոց և Աղուանից նախարարներների որդիքը և միանգամայն Վարազ-Տրդատ Ա. և իւր երկու որդիքը Գագիկ և Վարդան և տանում Պօլիս և պահում իբրև բանտարկեալ։ Աւելորդ է գրել թէ Աղուանից համար որքան ծանր և որքան վտանգաւոր եղաւ մեծ իշխանի բացակայութիւնն այսպիսի մի ճգնաժամում և անտանելի պարագայում։ Վերջապէս Հայք և Աղուանք զզուելով Յունաց հակաքրիստոնէական արարմունքից՝ վերջնականապէս մտնում են Հագարացւոց տիրապետութեան տակ 693-ին Աբդլ-Մէլիք ամիրապետի օրով։

Արիոսեան, Մակեդոնեան, Նեստորեան, Ապոլինարեան և Եւտիքեան աղանդներն յուզած էին արևմտեան եկեղեցեաց միտքերը, վրդոված սրտերը, ցամաքեցրած քրիստոսաւանդ սէրը, անկեղծ եղբայրութեան յօդակապ



միութիւնը և թշնամի յարուցած եղբայր եղբօր դէմ և ազգ ազգի դէմ։ Հայոց և Աղուանից միացեալ եկեղեցին ընթանում էր քրիստոսաւանդ և առաքելական ուղղութեամբ։ Թէև վրդովուած էր քաղաքական բուռն հոսանաց յորդութեամբ, բայց անվրդով էր նախնական անխառն դաւանութեամբ և ազատ ու անխառն արևմտեան խոտորեալ աղանդներից։ Այս միացեալ եկեղեցին իւր մարտիրոս զաւակաց անգին արեամբ 400 տարի պաշտպանած էր իւր կուսութիւնը—անխառն դաւանութիւնը(1) անընդհատ մաքառելով Զրադաշտական լափլիզող կրակի և անյագ սրի դէմ, Ու-Հոնաց, Խազրաց, Ալանաց, Ոսմոռքեանց, Յունաց և Հագարացւոց սպանիչ զէնքերի դէմ։ Հայոց և Աղուանից միացեալ եկեղեցու այս յարատև տոկունութիւնն և նախնական անխախտ պահպանած մաքուր դաւանութիւնն ծանր է թւում Արևմուտքին։ Այս պատճառաւ սկսում է Արևմուտքն հետզհետէ գործ դնել գաղտնի, յայտնի և բռնի միջոցներ, և մինչև անգամ հակաքրիստոնէական բարբարոսութիւններ, որպէս զի քայքայէ և անջատելով բաժանէ այն միացեալ եկեղեցին միմեանցից և պղտորէ այդ նահատակութեամբ պահպանած միութիւնը և անեղծ գրկած դաւանութիւնը։

Յոյները նախ՝ բազմիցս յուզում են Քաղկեդոնի ժողովի խնդիրը, որն արդէն նզովուած էր Զենոն և Անաստաս կայսրների հրովարտակներով։

---

1) «Վասն զի ուղղափառ հաւատոյ քո լոյս ծագեալ եկեղեցւոյ Հայոց, ոչ նուազեցաւ ի բարի սերմանս ցորենոյդ՝ որոմն ոչ խառնեցաւ. զաղբիւր յստակ աւանդութեանց քոց՝ աղտաղտուկ ջուր ստապատի ուսմանց ոչ պղտորեաց. ի սրբութեան և ի ճշմարտութեան հացն քո կենդանական՝ մեռելական խմոր և հնացուած քացախութեան չարութեանն ոչ զանգեցաւ. յակի անբիծ Հաւատոյն և յարծաթ լուսաւոր Բանին՝ պղինձ ժանգահոտ և կապար սնոտի ոչ զտաւ» Յովհան Երզնկացի։

Երկրորդ՝ յարուցանում են աստիճանաց կամ դասակարգութեանց խնդիր. իբր թէ ըստ ինն դասակարգութեանց Հրեշտակաց խնդիր, բայց այդ արդէն գոյութիւն ունէր եկեղեցիներում Պօղոս Ս. առաքեալի օրից սկսեալ։

Երրորդ՝ միւս քրիստոնեայ եկեղեցիները ստորադասելու նպատակաւ յաճախ յուզում էին Չորս աւետարանչաց խնդիր—152 աթոռների խնդիր, որպէս թէ միւս ութ Առաքեալներն ստորագրեալ էին Եփեսոսին, Անտիոքայ, Աղէքսանդրիոյ և Հռոմայ,—Հայք և Աղուանք պատասխանում են ժողովով թէ. Յիսուս Քրիստոս նշանակած չէ իւր եկեղեցու համար նոյնէն մարդ կամ քաղաք մեծ և գլուխ, քանզի ինքն Յիսուս Քրիստոս է իւր եկեղեցու Գլուխն և մեծն, ինչպէս չկար և Առաքելոց մէջ փոքր և մեծ. այլ հաւասար ամենայն նուաստութիւն և անկեղծ եղբայրութիւն։ Ամէն երկիրներում, ուր քարոզած և նահատակուած են Առաքեալներ, արդէն հաստատուած են ինքնուրոյն եկեղեցիներ։ Հայաստանում և Աղուանքում քարոզած և նահատակուած են Թադէոս և Բարթուղիմէոս, Յուդայ ոչ Իսկարիովտացին, Եղիշէն, մանաւանդ Առաքեալներից աւելի չարչարանք կրող Ս. Գրիգոր Լուսաւորիչն, որ արդիւնաւոր մշակ եղած է Քրիստոսի Ս. եկեղեցուն համար Հայաստանում և Աղուանքում։

Վերջապէս Յոյներն, փոխանակ ամփոփելու իւրեանց ուժերը և դիմադրելու Արաբացւոց. փոխանակ ամրապնդելու իւրեանց քաղաքական պետութեան միութիւնը, այն, քրիստոնեայ Յոյներն բանտարկում են Աղուանից Վարազ-Տրդատ Ս. իշխանը և իւր երկու որդիքը. Վրացի մի անձի միջոցաւ ձեռք են առնում բանտարկեալ իշխանի կինը Սպրամ իբրև յարմար գործի, վերջինս էլ զՆերսէս Ս. կաթուղիկոսը՝ բաժանել Աղուանքը Հայաստանեայց եկեղեցուց, որպէս բաժանած էին Վրացիները Կիւրիոնի ձեռնով։



Յովէլ եպիսկոպոսի մօտ պահուած է լինում Ներսէս կաթուղիկոսի տուած նզովաթուղթն։ Յովէլի մահից յետոյ Ներսէս ձեռք է բերում իւր տուած ձեռագիրը և ոչնչացնում. սակայն Սև-Հոնաց կողմն է քշում Իսրայէլ եպիսկոպոսը. պաշտօնից հեռացնում է և Շամախու Գարդման գաւառի առաջնորդ Եղիազար եպիսկոպոսը և այնուհետև սկսում ազատօրէն խմորել Քրիստոսի բանաւոր հօտը։ Այդ միջոցին Կապաղակայ Յովհաննէս եպիսկոպոսն, Ամարասայ Սահակ եպիսկոպոսն և Հողի գաւառի Սիմէօն եպիսկոպոսն և Շերոյ մեծ իշխանն, որ անդադար էր Վարազ-Տրդատի բացակայութեան պատճառաւ, իւր ամէն ազատաններով գումարում են ժողով և նզովում հերձուածող Ներսէսը և անմիջապէս հաղորդում Հայոց Տէր Եղիա կաթուղիկոսին, որ 700 թուին գալիս է Պարտաւ, ժողովով գահընկեց անում զՆերսէս. որ «Կալաւ զաթոռն ուղղափառութեամբ ամս 14 և ի չարափառութեան՝ ամս երեք և կէս (1)։

Նոյն ժողովում ընտրւում և օծւում է՝ Եղիա Հայրապետի ձեռնով Տէր Սիմէօն Ս. որ սարկաւագապետ է լինում Աղուանից կաթուղիկոսարանին։ Երկու հայրապետները որոշմամբ և հրամանաւ չարափառ Ներսէսի (որ 8 օրից յետոյ վախճանւում է Սպրամ տիկնոջ հետ միասին) բոլոր գրքերը հանւում են Բերդակից (Կաթողիկոսարան «Արցախ» եր. 225) ամբարանոցից և ոչնչացնում Թարթառ գետի մէջ թափելով (Դասխ. Գ. Հայն. Գ—ԺԶ.)։

---

1) Դոյ—Մ. ամս ԺԵ (15) Կիր. ամս եօթն և տասն. Մ. Այր. 17 տարի

## ԼԲ. գլ.

Ի նշան անքակ միութեան Հայոց եւ Աղուանից մէջ.—Տէր Սիմէոնի գործերը.—Տէր Միքայել.—Ապստամբութիւն Վարազ-Տրդատի եւ իւր որդւոց.—Արաբացւոց եւ խազրաց արշաւանքները.—Յաջորդութիւնները:

Աղուանից Տէր Սիմէոն Ա. իւր ամեն եպիսկոպոսներով, վանականներով, հոգեւորականներով, իշխաններով, ազատներով եւ տանուտէրներով տալիս է մի թուղթ՝ Հայոց Եղիա կաթուղիկոսին, որով Աղուանից հոգեւորականներն եւ իշխաններն պարտաւորւում են այնուհետեւ Հայոց Ազգի եւ Ս. Էջմիածնի հետ պահել անքակտելի սէր եւ միաբանութիւն, եւ առանց Հայոց հայրապետի գիտութեան ոչ ոք նստեցնելու չէ Աղուանից կաթուղիկոս. եւ ուխտում են ցմահ հեռի մնալ բոլոր ատելի եւ մոլարձագանգներից, որի տակ ստորագրում են ամենքն եւ տալիս Եղիա հայրապետին։ Նոյնպէս Տէր Եղիա կաթուղիկոսն էլ գրում է նոյնպիսի մի պայմանաթուղթ, որի վերջաւորանի մէջ ասում է. «Ես Եղիա Հայոց կաթուղիկոս հանդերձ իմ եպիսկոպոսօքս տուի զմիաբանութեան գիրս ի ժողովոյդ Աղուանից. եւ ետու զայս պայմանի գիր ձեզ, զի մի ոք յանդգնեսցի թիւրել ինչ զեղեալ ուխտադրութիւնս։ Եւ զերկոսեան նամակն կնքեալ իմով մատանեաւ եդու ի պահեստի Ներսմերհի (Ջրվշտիկ վանքի վանահօր) ուխտին ի ձեռն սրբասիրի Բշկոյ հօր՝ պայման անհաւաթեան։ Սիմէոն կաթուղիկոսին տուած պայմանաթղթին ստորագրած են հետեւեալ անձինք, որոց անունները եւ ազգանունները օգտակար համարելով դասաւորում եմ այս տեղ. Հայոց հարիւր քառասուն եւ ութին—Փրկ. 700-ին.



«Սիմէոն Աղուանից կաթուղիկոս.
Յովհաննէս Կապաղակոյ եպիսկոպոս.
Սիմէոն Հողւոյ եպիսկոպոս.
Սահակ Ամարասոյ եպիսկոպոս
Սրբասէր Բշիկ Ներսմերհի տանուտէր (վանահայր)
Գտայ (Գոչայ) վանաց »
Կատարոյ (Մռաւի) վանաց »
Յովսէփայ վանաց տանուտէր
Դաւիթ Կաղանկատուց վանական.
Գեորգ Տիւանակերտոյ (Տիգրանակերտ) վանական
Գողոս Աղածորայ վանական.
Ներոյ Աղուանից իշխան.
Ջուանշէր Աղուանից Սպարապետ. (1)։
Վարդան պատրիկ եւ նորին եղբայր Գագիկ.
Բաբ ի Հրահատեան ազգէ.
Վախտանկ ի Վարազմանեան ազգէ
Պատրիկ ի Բարոյեան ազգէ Թագաւորաց։
Վահան ի Վարազ-Յոհանեան.
Թէոդորոս ի Յանոտեան ազգէ.
Ռոստամ ի Վարազ-Աքրեան (ազգէ).
Զարմիհր ի Վարազ-Բուրդակեան ազգէ Թագաւորաց.
Մահմատ ի Ներոյեան ազգէ, եւ այլ ամենայն ազատք աշխարհիս»։

Այս միեւնոյն մարդիկ ստորագրած են եւ այն թղթին, որը Աբդլ-Մէլէք ներքինին տարած է Ամիրապետի դիւանում պահելու համար։ Թուղթս էլ գրուած է միեւնոյն մաքով, այս է խոստանալ հեռի մնալ երկաբնակ աղանդէն-Քաղկեդոնի ժողովը ընդունելուց։

Տէր Սիմէոն Ա. անելով եկեղեցական ինչ-ինչ բարեկարգութիւններ՝ փոխւում է առ Աստուած յամի եւ կէս,

1) Սոյն անունների մասին տես Սամ. Անեց. եր. 286։

տարի պաշտօն վարելուց յետոյ. որին յաջորդում է 22) Տէր Միքայէլ, որ առաջ սարկաւագ եղած է Ծաբուայ առաջնորդարանում։

Կ. Պօլսում հինգ տարի բանտարկուած մնալուց վերջը մի հնարքով ազատուում է և դառնում տուն Վարազ-Տրդատ։ Իսկ իւր որդիքն Գագիկ և Վարդան 12 տարի մնում են մութն և խոնաւ տան մէջ իբրև պատանդ մինչև Յուստինիանոս կայսեր գահընկեց լինելն և քիթը կտրելն (1) բայց երբ թագաւորում է Յունաց Վարդան-Փլեպիկոս հայազգի կայսրն, հանել է տալիս խաւարային բանտից անմեղ Գագիկ և Վարդան պատանդները, որոց աչքերի լոյսը ծածկած է լինում խաւարն՝ խաւար տեղում երկար մնալուց։ Հետզհետէ կազդուրւում են օր աւուր ընտելանալով լուսին։ Կայսրն շնորհում է Գագկայ Կենաց Փայտի մասը և ազատ արձակում. Գագիկ բերելով սրբութիւնը յանձնում է Տէր Միքայէլ կաթուղիկոսին։

704-ին Արաբացւոց Մանսուր զօրավարն տանում է Ասորեստան Աղուանից Ծերոյ իշխանը իւր ամեն ազատանիներով և բանտարկում այն տեղ։

709-ին գալիս է Պարտաւ Արաբացւոց Աբդլ-Ազիզ բռնաւորն և նահատակել տալիս Քրիստոնէութեան հաւատը չուրանալու համար Մանիկ և Մերտազատ եղբայրները, որոց մարմինները ամփոփուած են Պարտաւի Ս. Գրիգոր-մայր եկեղեցում (Դասխ. եր. 259)։

714-ին գալիս է Արաբացւոց Մսլիմ զօրավարն Դարբանդ և արշաւում Խազրաց վերայ, բայց հազիւ թէ կարողանում է ազատուիլ թշնամու ձեռքից։ Այս հաւաքում է և Աղուանից զօրքը՝ քաջ աղեղնաւոր Պատրիկեան Նաւաշահիկ Վաչական իշխանի զօրավարութեամբ և կրկին արշաւում Խազրաց վերայ. սակայն դարձեալ յաղթուում է

1) Ղևոնդ պատ. եր. 180։



Մսլիմ և դառնում գլխակոր

725-ին խալիֆ աշխարհագիր անելով ամեն մարդ և անասուն՝ սահմանում են ծանր հարկեր։

729-ին Խազրաց վերայ արշաւում է և Ջառահն, սակայն դարձեալ պարտւում։ Միւս տարին Խազրաց թագաւորի որդուցն սպանուում է Ջառահ և ձերբակալւում Ջաղիկ (1)։

731 Մսլիմն շինում է Դարբանդի քանդուած պարիսպը, բայց անձեռնմխելի պահում է Աղուանից կաթուղիկոսարանը։ Այս տեղ ժամանակակից Ղևոնդ, (եր. 40-41) այսպէս է պատմում. «Գումարէր զօրս բազումս և տայր ի ձեռս զօրավարին Միսլիմայ . . , Որոց եկեալ և մարտ եդեալ ընդ զօրս Հոնաց՝ որ ի Դարբանդ քաղաքի՝ հարին զնոսա և հալածեցին և քանդեալ աւերեցին զդղեկապարիսպ ամրոցին։ Եւ մինչդեռ քանդէին զպարիսպ ամրոցին, գտին վէմ մի մեծ ի հիմունս նորա՝ որ ունէր վերնագիր գրոշմեալ օրինակ զայս. «Մարկիանոս ինքնակալ կայսր շինեաց զքաղաքս և զաշտարակս զայս բազում տաղանդօք յիւրոց գանձուց. և ի յետին ժամանակս որդիքն Իսմայէլի քանդեսցեն զսա, և յիւրեանց գանձուց վերստին շինեսցեն»։ Եւ իբրև գտին զգրոշմն գրոյն՝ զոր ունէր քարն՝ դադարեցին ի քակելոյ զպարիսպն, և կացուցեալ զգործավարս ի վերայ՝ վերստին շինեցին զկործանեալ պարիսպն (2)»։

35 տարի հայրապետական պաշտօն կատարելով (3)

1) Ղևոնդ պատ. եր. 101—102 ասում է. Խազրաց Թարմաչ զօրավարն Հոնաց (Սև) զօրաց հետ միաբանելով անցնում է Ճորայ Պահակից, մտնում Փայտակարան և աւերում բոլոր գաւառները։ Դիմաւորում է Ջառահ, բայց սպանուում է իւր զօրքով. սակայն յետոյ յաղթուում է Թարմաչ Արաբացիներից։

2) Դրեթէ նոյնութեամբ կրկնուած է հատուածս Ասող. եր. 127. Ղևոնդ. եր. 40—41., ևյն։

3) Մխ. Այրիվ. 35. Կիր. 35, Շահխաթ. 35 տարի, Դասխուրանցի 37 տարի են տալի Միքայէլին։

վախճանում է Տէր Միքայէլ և յաջորդում է 23) Տէր Անաստաս (1) որ վարում է պաշտօն միայն 4 տարի. որին տեղակալում է 24) Տէր Յովսէփ Ամարասայ առաջնորդութիւնից։

## ԼԹ. գլ.

**Պարտաւի խլումն.—Խալիֆայութեան Արեւմտեան կեդրոնը.—Արաբական խաղաղութ.—Տէր Յովսէփ և Տէր Դաւիթ.—Հայոց Տէր Սիօն և Տէր Եսայի կաթողիկոսներն Աղուանքում.—Յաջորդութիւններ։**

որ օրինակ ամիրապետներն աթոռանիստ ընտրած էին Դամասկոս իրենց համար, նոյնպէս Աբասեանց ոստիկաններն աթոռանիստ ընտրած էին իրենց համար Պարտաւ քաղաքը. որի մէջ բնակութիւն հաստատելով, տզրուկի նման ծծում էին Աղուանից երկրի պարարտութիւնը։ Այդ միջոցներում աւելի են ծանրանում արքունի հարկերն, անտանելի են դառնում տուրքերի վճարումներն. սաստկանում են բռնութիւններն. սովորական են դառնում նախատակութիւններն, խլում Պարտաւ քաղաքն. փչում են դուրս Աղուանից իշխաններին. Պարտաւում նահատակուում են Արծրունի երկու իշխան եղբարք-Սահակ և Համազասպ. երկինք գոգցես սև է մթնում Աղուանից գլխին (2)։

Խազրաց Թամթարխան զօրավարն առաջին զօրքով գրաւում է Կուր գետի ձախ կողմի գաւառները, որք են

1) Կաղկ. 4, Այրիվ. 3, Շախաթ. 14 տարի
2) Կաղկ. Ի. գլ.



Հեճարի (1) Բաղա (2) Ոստանի (3). Մարզպանեան (4) Համբանդ (5) Գեղաւու (6) Շաքէ (7) Բեխ (8) Խենի (9) Կամբեխճան (10) Խողմաղ (11) և Բաղասականի (12) գաւառները և գերում, և աւերում և թալանում են (Ղևոնդ. պատ. եր. 132,) նոյնպէս Վրաց 7 գաւառներ։

17 տարի (13) հայրապետութիւն անելուց յետոյ վախճանում է Տէր Յովսէփ և փոխակալում է 25) Տէր Դաւիթ Բ. որ ազատում է գրաւուած եկեղեցական կալուածները և սպասները. բայց նենգաւորներից սպանուում է մահացու դեղով՝ պաշտօն վարելով միայն չորս տարի։ Սրա փոխակալում է 26) Տէր Դաւիթ Գ. և ծախում եկեղեցական կալուածների մի մասը այլազգիներին։

768-ին Հայոց Տէր Սիօն կաթուղիկոսն, առնելով իւր հետ ականաւոր եպիսկոպոսներ, վարդապետներ, վանականներ և իշխաններ, իջնում է Պարտաւ, գումարում մեծ ժողով, արմատախիլ անելու համար երևան եկած անկարգութիւնները և վերստին հաստատելու կանոնական համարուած Ս. Գիրքը։ Ժողովը Պարտաւում անելու պատ-

1) «Աղ. եր. և Դր. եր. 100 Ա. գաւառ։
2) » » » եր. 100 Բ. « :
3) » » » եր. 100-101 Գ. » :
4) «Աղ. երկ. և Դր.» եր. 101, Ե. գաւառ և 180—190։
5) » » » » եր. 100 Դ. » և եր. 277—282։
6) » » » » եր. 101—102, Է.» և եր. 239—248։
7) » » » » եր. 102 Ը.» եր. 260—271։
8) » » » » եր. 101 . . . Զ.» եր. 190—210:
9) » » » » եր. 103 . . . ԺԲ.» եր. 229—239։
10) » » » » եր. 102 . . . Թ.» եր. 271—277։
11) » » » » եր. 103 . . . ԺԱ.» եր. 212—229։
12) » » » » եր. 277։
13) Ըստ Դօշ Մխիթարի 15 տարի։ Շահխաթունեան Անաստաս և Յովսէփի հայրապետների միջև նշանակած է Սնանիա անուն մի հայրապետ 4 տարի տևող, բայց միւսների մէջ չկայ բնաւ։

ճառն այն է՝ որ այն միջոցին խիստ դժուարին եղած է ժողով գումարել Դուինի քաղաքում, վասն որոյ ընտրած էր Պարտաւը, ուր հրաւիրուում են և Աղուանից հոգևորականաց և իշխանաց դասն։ Ժողովը բացւում է Տէր Սիօն կաթուղիկոսի նախագահութեամբ. «Իսկ ներկայ էին Գէորգ՝ Ռստան եպիսկոպոս, Ստեփ՝ (Մեծ—) Սիւնեաց եպիս. Եսայի՝ Գողթան եպիս. այլովքն հանդերձ և քանի մի իշխաններ-Սահակ պատրիկ Բագրատունի, Ասրներսեհ (Փոքր) Սիւնեաց տէր (Առանշահիկ տոհմից), Սմբատ Բագրատունի, Մեհրուժան Արծրունի, Վահրամ Խոռխոռունեաց տէր, Արտաւազդ Աշոցայ տէր, Վահան Վանանդայ տէր, Սահակ Գողթան տէր, և այլք, որոց համաձայնութեամբ կը խմբագրուին 24 կանոնք. (որոց մեծ մասն առաջուց կային) գլխաւորապէս հոգևոր հովուաց և առաջնորդաց պարտուց վերայ և այս Ս. Գրոց ընթերցանելի գրքերը (եկեղեցում հրապարակաւ կարդալու գրքերն) կարգաւորին» (Եկեղ. Պատ. Մ. Օրմ. եր. 315)։

9 տարի պաշտօն վարելուց յետոյ վախճանւում է Տէր Դաւիթ Գ. և գահակալում է 27) Տէր Մաթէոս Բ. Կապաղակոյ առաջնորդութիւնից մի և կէս տարի։

28) Տէր Մովսէս մի և կէս տարի։

29) Տէր Ահարոն 2 տարի։

30) Տէր Սողոմոն Ա. կէս տարի.

31) Տէր Թէոդորոս 4 տարի։

32) Տէր Սողոմոն Բ. 11 և կէս տարի։ Սորա օրով մօտ 781-ին հարկերը և միւս ծանրութիւնները թեթևացնելու նպատակաւ՝ Հայոց ժողովրդեան թախանձանքից ստիպեալ՝ Հայոց Եսայի կաթուղիկոսն իւր եպիսկոպոսներով գնում է Աւբեթլա կամ Օբեթլա ոստիկանին, որ նստում էր Պարտաւում, ուր նախ Տէր Եսայի և Տէր Սողոմոն Բ. աղօթելով նզովքից և բանադրանքից ազատում են տիկին Վարդուհին, որ մերձաւոր ազգականութեամբ պսակուելուն պատճառաւ նզովուած և բանադրուած էր Աղուանից Տէր Միքայէլ կաթուղիկոսի և Մաքենոցաց վանքի վանահայր Սողոմոն եպիսկոպոսից Շամքոր բերդում (1)։ Սոքա աշխատում են Ոստիկանի միջոցաւ բարեփոխել և թեթևացնել տալ հարկերը, բայց ոչինչ չեն շահում (Դասխ. ԺԷ—Ի. գլ. Առող. եր. 133—134)։



## ԽԳ.

Շարունակութիւն ազգաբանութեան Միհրանեան տոհմի.—Տէր Յովհաննէս Գ.—Շիկաքարի պատերազմը.—Վարազ-Տրդատ Բ.-ի սպանութիւնը.—Առանշահիկ-Աշոտեան մեծ իշխան.—Բաբան եւ Քաջն Եսայի իշխան.—Խազր-Փասգոսի որդու արշաւանքը.—Գանձակ քաղաքի հիմնարկութիւնը:

Վարազ-Տրդատ Ա.-ից ծնած էին Գագիկ և Վարդան, որք ազատուելով Կ. Պօլսից եկին հայրենիք։ Շերոյ իշխանն Ատրներսեհ տարուելուց յետոյ մեծ իշխանն լինում է Վարդան Բ. որդի Վարազ-Տրդատի Ա.-ոյն, որ արդէն վախճանուած էր։ Վարդան Բ.-ից ծնւում է Ներսեհ-Դժնդակն։ Իսկ Ա. Վարազ-Տրդատից ծնւում է և Ստեփաննոս անուն մի որդի, որ երիտասարդ վախճանելով թողնում է մի որդի Վարազ-Տրդատ Բ. անուամբ, որից ծնւում է Ստեփաննոս (Բ.) անուն մի որդի։ Երկրորդ Տրդատս իւր Ստեփաննոս Բ. որդւով սպանւում է Դատի վանուց խոր ձորում Ներսեհ-Դժընդակից։ Սպանուած Վարազ-Տրդատս Վարազ-Գրիգորից հաշուելով ութերորդն էր (2)։ Այնուհետև Սասանեան թա-

1) Տես Շամքորի բերդի մասին «Արցախ» եր. 55—56։

2) Ա. Վարազ-Գր. Բ. Ջիւանշիր, Գ. Վարազ-Տրդատ. Դ. Վար-

*գաւառական այս շրջան բաժանւում է երկու առանձին իշխող ճիւղի. առաջինն Սմբատեանս Բ-ի Սպրամ անուն օրիորդով միանում է Առանշահիկ տան իշխան Ատրներսեհին, ինչպէս գրում է շարայարողն. «Եւ ի նոյն ամի 821-ին Տէր Ներսեհ ի Փիլիպեան սպան զՎարազ-Տրդատ (Բ.) ի Սմբատեանսն և զորդի նորին ի մօրն Դաղ. զենին» (Դաս. Բ.) և Գ. Հատ. ԻԳ. «Զայս Վարազ-Տրդատ (Բ.) և զորդի նորա Սմբատեանս, Ներսեհ Փիլիպեան ազգակիցն նորա սպան ի միում ժամու ի խորանօրն, որ կոչի Դատայի վանք: Ապա յայն աղէտիցն զատն զգեցեալ զարութիւն կնոջն սպանելոյ, առեալ զմնացեալ իւր զաւակն Սպրամ գիշերահէն տաժանելի ուղևորեալ մտանէ ի բերդն Խաչենոյ՝ (Մար գիւղաքաղաք) և բարւոք խորհեալ տան իւրում ամուսնացուցանէ զՍպրամ ընդ Ատրներսեհի Սահլի որդւոյ»: Սպանուածի կինն որ ունենում է միայն Սպրամ օրիորդը, որը առնելով այն գաւառն գիշերում տանում է Վերին-Խաչէն (այժմ Մար. իսկ հնումն Սիսական Ոստան) ամուսնացնում Առանշահիկ Սմբատեան Սահլի որդու՝ իշխանողն Ատրներսեհի հետ, որ տիրում էր Մար, Վերին-Վակունիք, և Բերդաձոր գաւառներին և Գեղամայ լճի արևելեան գաւառին: Այնուհետև մեծ իշխանն Աղուանից լինում է Ատրներսեհ:*

*Իսկ միւս ճիւղն սկսում է Ներսեհ—Դժնդակով(1), որ իւր իշխանանիստը հաստատում է Դիզակ գաւառի Տումի գիւղում և իշխում Դիզակ և Վարանդայ գաւառների վերայ, որք են*

---

դան, Ե. Ներսեհ, Զ. Գագիկ, Է. Սմբատեանս Ը. Վարազ-Տրդատ Բ.: (Մ. Աբրիլ. եր. 19):

1) Դժնդակ կոչուելու պատճառն է սորա գործած անլուր չարութիւնները ինչպէս գրած է Ս. Օրբել. Ա. եր. 292, «Ռաք սատակելոց պարտաւանդելով կապեցան ի շղթայս երկաթեղէնս (ձեռամբ Դժնդակիս) վասն որոյ բազումք խորշակահար և հեղձամղձուկ սատակեցան»:



*Փիլիպէ ազգական Վարազ-Տրդատ Բ-ի.*

*Ներսեհ-Դժնդակ որդի Փիլիպէի.*

*Գագիկ իշխան Ա. որդի Ներսեհ-Դժնդակի.*

*Սմբատեանս և Սպրամէն զաւակներ Գագկայ Ա-ն.*

*Եսայի քաջազօր իշխան, քաջածանօթ Աբու-Մուսէ(1) անուամբ:*

*Մովսէս իշխան որդի Եսայեայ:*

*Գագիկ Թագաւոր, որդի Մովսէս իշխանի և քոյր Գագիկ Թագաւորի՝ Ոսկի(2)*

*Այս թագաւորական տոհմի յետածին սերնդից էին Սարգիս և Վրդանէս եպիսկոպոսները, որք ոչ միայն իւրեանց ծախքով շինեցին Գուշայ գեղեցիկ վանքը սրբատաշ քարով, այլ և ապահովեցին վանքի ապագան ընդարձակ կալուածներ նուիրելով իւրեանց հայրենի սեպհականութիւնից, որպէս վկայում է նոյն վանքի ընդարձակ արձանագրութիւնն. «...ես Սարգիս և Վրդանէս եպիսկոպոսք հիմնարկեցաք զեկեղեցիս ի ՈՂ=1241-ին=, ևն: Արձանագրութիւններից և աւանդութիւններից այնպէս երևում է որ այս տոհմի իշխանութիւնն Տումի գիւղում տևած է մօտաւորապէս Փրկչական 800—1271-թուականն: Այնուհետև իշխանանիստը լինում է Դիզակ գաւառի Վերիջան*

---

1) Արաբական ցեղերի առանձնայատկութիւնն է անդրանիկ որդու անուամբ կոչել հայրը, օր. Աբու Մանսուր, նշանակում է Մանսուրի հայրն, Աբու Ջաֆր, Ջաֆարի հայրն, այսպէս է և Աբու Մուսէ՝ Մովսէսի հայրն:

2) «Ի ՆԽԹ.=1000=ին. և ի թագաւորութեան տեառն Գագկայ որդւոյ Մուսէի ես Ոսկէ դուստր Մուսէի շինեցի տուն Աստուծոյ» Այն տեղ Տումի գիւղի մօտ են նաև Գագիկ թագաւորի աղբիւրն, պալատի տեղն և գերեզմանն «Արցախ» եր. 79—80: «Ես Աջամի որդի իշխանս» («Արցախ» եր. 67): «Ես Մելիք-Ադամ որդի Մէլիք-Պապին, որդւոյ Հախիջանայ, թոռանց որդւոյն Թոմասին որդոյ մեծ իշխանին Աւանայ. կանգնեցի զխաչս» («Արցախ» եր. 107): Վներայ այս է Աւանայ բերդ («Արցախ» եր. 83):

իշխանի կամ Ցօրայ ամրոցն («Արցախ» եր. 72—83) և երբեմն Վնեսայ ղալան, ուր իշխած են.

Իշխան. որդի Իշխանի

Աջամի ՉՂԷ=1248 թուին.

Սւան մեծ իշխան (Յովհաննէս մեծ իշխան)

Թոմաս.

Ջալալ.

Ախիջան կամ Հախիջան։ Իշխանից մինչև Ախիջանս Գադիկ Թագաւորի հետակներից էին թէ այլ իշխող ցեղից, չունիմ հաւաստի տեղեկութիւն։ Սակայն հարկ է յայտնել որ Բէկնազարեանցն, Գաղտ. եր. 201, սոցա ծագումը համարում է սերած Վախտանգեանց Հասան թագաւորի որդի Վասակ թագաւորազնից՝ գրելով. Վասակ թագաւորազն, Վախտանգ, Սւան, Ջալալդէն, Աթաբ. Իշխան, Բասատար, Ջալալ, Խուդար, Վելիջան։

Ինձ անծանօթ պատճառաւ այնուհետև իշխանութիւնն փոխադրւում է Վարանդայ գաւառի Քօչիզ գիւղն (այժմ Ծոխատեղ) ուր իշխում են.

Մելիք-Պապի որդի Հախիջանայ.

Մելիք-Աղամ՝ որդի Մելիք-Պապու.

Մելիք-Սւան՝ որդի Մելիք-Պապու (1).

Մելիք-Փաշիկ կամ Մելիք-Փաշա (ռիե—ռծգ=1576—1604 Փրկչ.)

Վերջին Մելիքիս ժամանակակից և թերևս ազգակից էր Մելիք-Սուջումն, որ նստում էր Ցօր բերդում և իշխում միայն Դիզակ գաւառին, որոց անուններն յիշած է Առաք. պատ. գլ. Գ.։

Մելիք-Սուջում Դիզակի.

Մելիք-Սւան Ա. որդի Մելիք-Սուջումի.

1) Սոցա գերեզմանների արձանագրութիւնները տես «Արցախ» եր. 106—108։



Մելիք-Բախտամ Ա.

Մելիք-Սւան Բ.

Մելիք-Եկեան որդի Ղուկաս վարդապետի.

Մելիք-Արամ՝ որդի Մելիք-Եկեանի.

Մելիք-Եսայի որդի Մելիք-Եկեանի.

Մելիք-Բախտամ Բ.։ Սոցա մասին իւրեանց պատմութեանց մէջ յետոյ։

11 տարի (ըստ ոմանց 11 և կէս) հայրապետական պաշտօն վարելուց վերջն վախճանւում է Տէր Սողոմոն Բ. և գահակալում է 33) Տէր Յովհաննէս Գ. որ կաթուղիկոսական աթոռը փոխադրում է Պարտաւից Բերդակուր (կաթուղիկոսարան) վանք ըի, ինչպէս կանխաւ ասած ենք, Պարտաւը խլած էին ոստիկաններն։ Տէր Յովհաննէս Գ. 25 տարի մեծ նեղութեամբ պաշտօն վարելով վախճանւում է առ. Աստուած և գահակալում է 34) Տէր Մովսէս Գ. վեց ամիս միայն։

821—822 Պարտաւից գաղտաբար ելնում են արաբ ընտիր մարդիկ և աւազակօրէն աւարում և կողոպտում Վարանդայ գաւառը, գերի վարում հազար հայ մարդ և ամրանում Շիկաքար բերդում (1)։ Լուսածագին հասնում է իւր եղբայրներով և զօրքով Սահլի Սմբատեան Եռանշահիկ Տէրն, առհասարակ կոտորում արաբները և ազատում հայ գերիները և կողոպուտը (Դասխ. Ի. գլ.)։

Գահակալում է 35) Տէր Դաւիթ Գ. Կաղաղակայ առաջնորդութիւնից. օրհնում Շաքուայ իշխանի չհաս ամուսնութիւնը և յանդիմանուում իւր եղբօրից։

827—828 Պարսիկ Բաբան 150,000 զօրքով հեռզհեռէ տիրում է Վակունիք, Բերդաձոր, Սիսական, Հաբանդ, Ամարաս, Պազկանք, Մուխանք և Տրի գաւառներին։ Դիզակի Եսայի իշխանն, որ Ստեփաննոս իշխանի որդին էր և

1) Բերդիս նկարագրութիւնը տես «Արցախ» եր. 165։

քաջածանօթ Աբու-Մուսէ, յաղթական պատերազմու յետ է առնում նոյն բոլոր գաւառները և տիրում իշխանաբար։ Բուղան յետոյ զետեղում է իւր բանակը Ամարասի մօտերքում, բանակը յանձնում Ռոստամ անուն մի զօրավարի և ինքն դառնում Պարտաւ։ Իջնում է պաշարուած բերդից[1] քաջայաղթ Սմբատ-Աբու-Մուսէ-իշխանն իւր զօրքով և սաստիկ հարուած տալով Ռոստամի բանակին՝ հալածում մինչև Պարտաւ։

836-ին հրամանաւ Ամիրապետին գալիս է Աղուանից երկիրն Խազր-Փատգոսի որդին, սրով և գերութեամբ առնում երկիրը, այրում եկեղեցիները և դառնում Բաբելոն-Բաղդադ։ Կրկին գալիս է նոյն անձն արքունի հրամանաւ և գանձով և շինում Գանձակ քաղաքը Ուտեաց Շակաշէն կամ Արշակաշէն գաւառում[2]։ Այնուհետև Պարտաւի փոխարէն Ոստիկանների քաղաքն լինում է նորաշէն Գանձակը։

Մայր-Աթոռոյս Ս. Էջմիածնի Մատենադարանի 633 թիւ ձեռագիր Աղուանից Պատմութիւնից. «Իսկ յերկու. ՄՁԶ (=837—838) Հայոց՝ ԲԺան (երկոտասան) հազար հեծելոց յանկարծահաս ելեալ ի Բախտառաս՝ արշաւէին յերկիրս Աղուանից։ Անդ աւն ի վեր հարեալ Սահլի Սմբատեան, որ յարքայից Զաւմիհրական տոհմէն էր, գործակից իւր կալեալ զմեծ նահապետն Գէորգիոս, գիւղ ի վերայ որպէս արծուի խոյացեալ ի սկար թռչունս, այսր անդր ցրուեալ սատակեաց զաւշտայն արկեալ փախէր։ Եւ ի նոյն ամի նոյն տէրն Սահլի Սմբատեան ձերբակալ արարեալ զապստամբն Բաբան՝ զմարդասպանողն, աշխարհաւեր, արիւնարբու գազանն՝ և ետ ի ձեռն Ամիրմոմնայ[3] և ընդ-

1) Բերդիս մասին տես «Արցախ» եր. 135, Գ. բերդ։

2) Տես «Արցախ» եր. 35—52 և Դասխ. ԻԱ., գլ.

3) Վարդան Բարձ. եր. 109. Սահլ որդի Սմբատայ ըմբռնէ զԲաբան և առնու յԱփշնէն պարգևս հազարիցս հազար կշիռ արծաթոյ



փոստակոյն առնու յարքունեայն վարձս բարիս, զի առնու իշխանութիւն ի վերայ Հայոց, Վրաց և Աղուանից տիրել իշխանութեամբ ամենեցուն արքայաբար»։ «Ի սոյն ամի (839) տէրանց տէրն Յովհաննէս, որ Հայոց, Վրաց և Աղուանից եղև տէր, յարքունեայն կրկին անգամ զԲուլխար Խոյսա Փատգոս երկցս այսոցիկ աշխարհաց» (Նոյն եր. 225)։

28 Տարի հայրապետական պաշտօն վարելուց յետոյ վախճանում է Տէր Դաւիթ Գ. որին յաջորդում է **36**) Տէր Յովսէփ Բ.։ (Դասխ. Ի. գլ.)։

## ԻԱ. գլ.

## ԱՂՈՒԱՆԻՑ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՑԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ

Կարևոր ենք համարում մատնացոյց անել այս տեղ իշխող ցեղերը և իշխողաց ընտանիքները։

## ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԾԱՐԻ ԻՇԽԱՆԱՑ

### Ա. Առանշահիկ կամ Եռանշահիկ տոհմ.

ուն Հայկազեան մեծ իշխանական Սիւնի տոհմից էր այս ընտիր և իշխանազն ցեղն, որ բնակւում էր Վերին-Խաչենի Ծար գիւղաքաղաքում Սիսական-Ոստանում և իշխում էր սկզբում ամբողջ Արցախեան նահանգին։ Բայց յետոյ միայն իշխում էին Արաբացւոց ժամանակ Վերին-Խաչեն. Վակունիս, Սոդ և Գեղամայ լճի արևելեան գաւառներին։ Գրականութեան ծանօթ եղածներն են.

Սմբատ Եռանշահիկ մեծ իշխան.

և այլ ևս հարիւր հազար առնու ի նմանէ, և զԲաբանայ կտրեալ զոտս և զձեռս՝ հանէ ի փայտս։

Սահլ կամ Սահլի՝ որդի Սմբատայ.

Յովհաննէս Եսանշահիկ՝ եղբայր Սահլի.

Ատրներսեհ՝ որդի Սահլի։ Սասանեան թագաւորազն Միհրանի յետնորդներից օրիորդ Սպրամով՝ միանում է Առանշահիկ Ատրներսեհի հետ՝ Սասանեան թագաւորական շղթայի օղակն Առան-շահի օղակին հետ։

Գրիգոր(1) Ա. և Սրու-Սեթ որդիք Ատրներսեհի.

Սահակ-Սևադա և Դաւիթ, որդիք Գրիգորի Ա-ոյ.

Գրիգոր Բ. որդի Սահակ-Սևադայի.

Գրիգոր Բ-ից ծնւում են Ատրներսեհ Բ. Սևադա.

Իշխան և Փիլիպպէ։

Ատրներսեհ Բ. թագաւորում է Տարում, որից ծնւում է Իշխանիկ և թագաւորում նոյնպէս Տարում։ Իսկ Փիլիպպէ թագաւորում է նախ Կապաղակ գաւառում և յետոյ Դարբանդում։

Յովհաննէս որ է Սենեքերիմ՝ որդին Իշխանիկ թագաւորին, թագաւորում է Բաղաց-Մեծ-Սիւնեաց։

Ղարա-Գրիգոր Գ. որդի Իշխանիկ թագաւորի, կինն Դոփ դուստր Սարգիս-Բուրդ իշխանի։

Հասան Ա. որդի Ղարա-Գրիգորի, կինն Մամա(2) քոյր Սպասալար Զաքարէի։ Յովհաննէս եպիսկոպոս եղբայր Հասանայ Ա-ոյ, որ շինած է Գետամիջի և Խաթրայ վանքերը («Արցախ» եր. 206—207։

Գրիգոր Դ. որդի Հասանայ Ա-ոյ, կինն Ասփայ՝ դուստր Մեծ-Սիւնեաց Տարսայիճ իշխանին։

Վահրամ և Սարգիս եպիսկոպոս և Սևադա(3) որդիք Գրիգոր Դ-ի։

---

1) Եղբայրներից նախադաս գրուածներն գահակալած են։

2) Տեղ տեղ Մամքան անուանուած է, սա. բայց ինքն ասում է իր մասին «Ես Մամքան դուստր Քրդին և Խորիշահի. և ամուսին Հասանայ» «Արցախ» եր. 405։

3) Սևադան սպանւում է Տիգրանակերտի պատերազմում.



Վահրամից ծնւում են Գրիգոր(1) Ե. Հասան Բ. Բէկլի, Սարգիս եպիս. և Ալթուն։

Հասան Բ. որդի Գրիգորի Ե-ի, կինն Մամքան քոյր Ջալալ-Դօլայի։

Ապրուղէ, Գրիգոր, Ճահանչէ և Ջհանչէ որդիք Հասան Բ-ի
Տուրսուն՝ որդի Ապրուղէի.
Այտին՝ որդի Տուրսունի։
} «Արցախ» եր. 206-207։

## ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՍՕԴԻ ԻՇԽԱՆԱՑ

Սօդի իշխանական տոհմի ճիւղն շառաւիղած է Առանշահիկ բնից, Տարի Հասան Բ-իշխանից, ինչպէս ապացուցանում է Ազուանից Եսայի կաթուղիկոս Ջալալեանի հաւաքածուն, ուր մէջ ասում է. «Հասան (Բ) և այս Հասանէս բաժանին Դօփայ ցեղն, որք են այսոքիկ.

Ճահանչէն Ուլուբէկանց պապ.

Ապրուղէն Այտինցւոց պապ («Արցախ» եր. 207)։ Հասան (Միևնոյն վերևի անձն է) Բ.

Ճահանչէ որդի Հասան Բ-ի.

Սէյտի «եւ Սէյտիս որդի պարոն Ճանչին, թոռն պարոն Հասանայ.

Ճահանչահ որդի Սէյտու.

Ուլուբէկ, Հախնազար որդիք Ճահանչէի.

Մէլիք-Ուլուբէկ որդի Ճահանչէի (միևնոյնն է)

---

Վարդ. Բար. եր. 199։

1) Ես Գրիգորս, Հասանս, Պէկլիս, Ալթունս որդիք պարոն Վահրամայ, թոռունք պարոն Հասանայ «(Արցախ» եր. 208)։

*Մելիք-բեկ Ա.* 1579.[1]

*Մելիք-Շահնազար Ա. որդի Մելիք-բեկի* 1607.[2]

*Մելիք-Միրզաբեկ Բ.* 1657—70.

*Մելիք-Միրզախան.* 1671—1694.

*Մոտաւորապէս* 1673-*ին Սոթի մելիքական իշխանութեան շառաւիղից Մելիք-բեկ Բ-ից ծնուած Մելիք-Բաղի կամ Պաղիր իւր գերդաստանով փոխադրւում է Սոթից Վարանդայ գիւղի Աւետարանոց աւանն, որի մէջ և հաստատում բնակութիւն։*

*Մելիք-Բաղի որդի Մելիք-բեկ Բ-ի.*[3]

*Մելիք-Շահնազար Բ. որդի Մելիք-Բաղու.*[4]

*Մելիք-Յիւսէյին Ա.*[5]

*Մելիք-Շահնազար Գ.*[6]

---

1) «Ի թվին Հայոց ՌԻԸ 1579 .. ես պարոն Շահնազարս, Մաջիլ-բեկս, Տաթլու-բեկս, Միրզա-բեկս, Մելքոն-բեկս և մայր մեր Խանում աղէս կանգնեցաք զԽաչս բարեխօսս հօրն մերոյ Մելիք-բեկին»։

2) Այս է հանգիստ պարոն Մելիք-Շահնազարի Ա-ոյ ... որ փոխեցաւ առ Քրիստոս ի Թագաւորութեան Շահ-Աբասի, թվին ՌԾԶ=1607»։ «Այս է հանգիստ պարոն Նուրի-բեկին, որդի պարոն Մելիք-Շահնազարին (Ա-ոյ) անդորր մահուամբ մեռաւ»։

3) Ջալալեան Ճամփ. Ա. եր. 37 տող. Երուս.

4) «... շինեցաւ Ս. եկեղեցիս ... իշխանութեան երկրիս Վարանդու Մելիք-Բաղու որդի Մելիք-Շահնազարին ... թվ. ՌՃԻԲ 1673» («Արցախ» եր. 105)։

5) Այս է տապան Մելիք-Շահնազարի (Բ-ի) որդի Մելիք-Յիւսէյնի (Ա-նոյն) 1736»։

«Ողբամ բանս գովեստի ի վերայ Մելիք-Յիւսէյնի.
Զոր գրեցի յայս տապանի։ Սա էր տէր երկրին Վարանդի.
Երեսուն և հինգ ամսոն գեղի, սա էր հացով. սեղանով լի.
Ողորմէր ամեն ազգի, կերակրանօք էր գովելի,
Սա ոչ ետ հարկ թագաւորի, ամուր պարիսպ էր աշխարհի.
Թագ և պարծանք Հայոց ազգի. պատերազմեաց հետ Օսմանցի
Յոյժ կոտորեաց յաղթէն Տաճկի»։

6) «Այս է տապան Մելիք-Շահնազարի (Գ-ի) որ է որդի Մելիք



*Մելիք-Յիւսէյին Բ.* 1802

*Մելիք-Ջիմշիտ որդի Մելիք-Շահնազար Գ-ի*[1].

*Մելիք-Ջհանբաշխ.*

*Մելիք-Խուդատ։*

## ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՀԱԹԵՐՔԻ ԻՇԽԱՆԱՑ

*Այս տոհմը ծագած է Առանշահիկ իշխաններից։ Առաջին նահապետն անկարելի եղաւ ճշտիւ գտնել. որ իջնելով Սարից հիմնաւոր բնակութիւն հաստատած է Հաթերքում. վասն որոյ սկսում ենք շղթայի գտնուած օղակից։*

*Վախտանգ Ա.*

*Հասան Ա. և Սակո որդիք Վախտանգայ Ա-ոյ.*

*Վախտանգ Բ. որդի Հասանայ Ա-ոյ և հայր Ջալալ Դոլայի։*

*Վախտանգ Գ. որդի Սակոյ կամ Սակուայ։*

*Հասան Բ. և Գրիգոր որդիք Վախտանգայ Գ-ի։*

*Հասան Բ-ս հրաւիրւում է Մեծ-Սիւնեաց Բաղաբերդի Սմբատ իշխանից և Գրիգոր Թագաւորից, որք անզաւակ էին. Գրիգոր Թագաւորն ունէր միայն մի աղջիկ Կատայ անուն։ «Եա առել ի Խաչենոյ իշխանաց մանուկ մի Հասան անուն ի Գեղաքարեցեայն և ետ զդուստրն իւր Կատայն նմա ի կնութիւն և կացոյց ժառանգ թագաւորութեան իւրոյ. և ինքն և եղբայր իւր Սմբատ յառաջ քան զմանուկն բերդին մեռանին* 1166 *թուին։ Մինչ զերդն կամէին*

---

Յիւսէյինի (Ա-նոյն) վախճանեցաւ թվին ՌՄԽ=1792»։

1) «Այս է տապան Մելիք-Ջիմշիտին ....... Սա էր թոռն Մեծամեծին, որդին Մելիք.Յիւսէյինին (Բ-ին) (վախճան) թվ. ՌՄԿԱ=1812»։

առնուլ (թշնամիք) Հասան կացոյց բերդապահս և ինքն առեալ զկին իւր և զընտանիս՝ ի գիշերի ել ի բերդէն և անց գնաց ի դասառ. իւր և ի տուն ի Խաչենն» (Ս. Օրբել. Բ. հատ. եր. 79-81)։

Հասան Թագաւորս Կոտայից ունենում է երեք որդի-Վախտանգ Թագաւորազն, Սմբատ Թագաւորազն և Վասակ Թագաւորազն։ Վախճանւում է Կոտան և Հասան Թագաւորս կրկին ամուսնանում է Կիւրիկէ Թագաւորի Մամա անուն դստեր հետ, որից ծնում է երեք որդի-Գրիգոր, Խոյդան և Գրիգորիս(1)։ Թագաւորս արձանագրած է իւր մասին. «Կամաւն Աստուծոյ ես Հասան որդի Վախտանգայ. տէր Հաթերքոյ և Հանդաբերդոյ, Խաչենաբերդոյ և Հաւաքախաղացին կացի յաւագութեան ամս Խ. (40). չար պատերազմաւ յաղթեցի թշնամեաց իմոց աղօթականութեամբն Աստուծոյ. և եղեն ինձ Զ. (6) որդի, զերեքս և զդուստս ետու նոցա և ես եկի ի վանս (Դադի) ուր իմ եղբայր պարոն տէր Գրիգորէս և եղէ կրօնաւոր և բերի զխաչքարս ի յԱղուայ, չար աշխատութեամբ և բազում հնարիւք կանգնեցի սուրբ նշան հոգւոյ իմոյ ... ՈԼԱ.= 1182=թուիս» (տես «Արցախ» եր. 203 - 204)։

«Ես Մամա Թագուհի ամուսին Հասանայ՝ դուստր Կիւրիկեայ Թագաւորին՝ կացայ յաւագութեան ամս Լ. (30) ես և այր իմ; և թողեալ զհայրենիս որդւոց մերոց եկաք ի վանս ուր տէր Գրիգորիս և որդի մեր համանուն նորին

1) Այս խորթութիւնը հաստատում է Գօշ-Մխիթար քանդակեալ իւր վանքի ճակատին. «Ի ՈԽ 1191 թվին զկնի չորս ամաց առնլոյ զՆորաւաղէմ Սալահադինին՝ սկսեալ եկեղեցիս սուրբ ի Նորագետիկ և կատարի ամս Է (7) ի խանդար զամլին Յունաց ձեռամբ վարդապետին Մխիթարայ .. ձեռնտուութեամբ բարեպաշտ իշխանին Վախտանկայ և նորին զուգակցին Արզու խաթունին և նորին եղբարց Սմբատայ, Վասակայ և խորթն Գրիգորոյ ...»։ Խորդ որդւոց անունները յիշում է և Կիր. եր. 125. «Գրիգորոյ և Գրիգորիսի և Խոյդանայ»։



և զգեցաք զՃև. միանձանց ... ՈԼԱ.=1182=թուիս»։

Վեց որդիներից աւագն

Վախտանգ Թագաւորազն ստանձնում է իշխանութիւնը, թողլով երկու որդի-Հասան և Գրիգոր և երկու աղջիկ և ինքն վախճանւում։ Թաթարաց պատերազմում սպանւում է Հասանն և պատանի հասակում վախճանւում է Գրիգոր։ Կսկծանքով լի մայրն Արզու խաթուն ասում է արձանագրութեան մէջ (տես. «Արցախ» եր. 204—205.) «Ես Արզու խաթուն Նուաստ աղախին Քրիստոսի՝ դուստր մեծի իշխանաց իշխանի Քրդին և ամուսին Վախտանգայ Թագաւորազնոյ ... յուսով մեծաւ շինեցի զսուրբ կաթուղիկէս (Խօթայ վանքի հրաշալի նոր շինութիւնը) ի տեղւոջ հանգստարանի առն իմոյ և զաւակաց իմոց Հասանայ անդրանկին իմոյ և Գրիգորի՝ որ ի տէր կէսաւուրեայ վախճանեցաւ ... զի անդրանիկն իմ Հասան սպանաւ ի Թուրքաց պատերազմին ... շինեցի զքաւարանս ի փրկութիւն հոգւոց նոցա և իմ դստերաց ... ի Թուականութեանս Հայոց ՈԿԳ=1214=ի փառս Աստուծոյ։

Վասակ Թագաւորազն գնում է Գողաշտեան(1) և առնում է այն պատերազմաւ անօրէններից, բնակեցնում այն տեղ իւր որդին և ինքն նահատակւում ՈՁ=1231=թուին («Արցախ» եր. 196)։ Իսկ Գրիգորիսն կրօնաւորեցաւ իւր հօր և մօր հետ Դադի վանքում։

## ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՋԱԼԱԼԵԱՆ ՏՈՀՄԻՆ

Այս տոհմն ևս ծագած է Առանշահիկ ընկց-Վախտանգ Ա-ից, ինչպէս Հաթերքի իշխանաց տոհմն։

1) Գողաշտի անուամբ վանք և քար կան Մեծ-Սիւնեաց Վայոց ձոր գաւառում «Սիսական եր. 97 և 105» վանքի մասին, իսկ եր. 21 և 104 քարի մասին։ Բէկնազարեանց, Գաղտնիք եր. 199—201 ասում է թէ Վասակ Թագաւորազն իւր բնակութիւնը ձգեց Դիզակի կողմերն։

Վախտանգ Ա.

Հասան Ա. որդի Վախտանգայ Ա-ոյ.

Վախտանգ Բ. որդի Հասանայ Ա-ոյ.

Մայր-Աթոռոյս Մատենադարանում՝ ըստ մայր ցուցակի թ. 232 մագաղաթեայ ձեռագիր աւետարանի վերջում գրուած է. «Աստանօր յանկ ելեալ կատարեցաւ. Հրաշապատում մատեանս այսօրիկ որբոց, հրամանաւ և ծախիւք բարեսէր և աստուածահաճոյ տէր Վախտանգայ որդւոյ Հասանայ՝ որդւոյ Վախտանգայ և քրիստոսասէր ամուսնոյ նորա Խորիշահի՝ դստեր մեծ սպարապետին Սարգսի[1]։ Արդ ես Վախտանգ և ընկերն իմ Խորիշահ ըստ կամացն Աստուծոյ քաղաքավարեալ՝ ծնաք երիս ուստերս և երիս դստերս զաւակ մարմնաւոր և յիշատակ հոգւոյ...»։

Ջալալ-Դօլա-Հասան, Զաքարէ և Իւանէ և Մամքան. որդիք և դուստր Վախտանգ Բ-ի և Խորիշահի։ Ջալալ-Դօլա-Հասան, որի կինն է Մամքան խաթուն Բաղաց թագաւորին, շինում է Գանձասարի վանքը և պանծալի գաւիթը։

Աթաբակ և Իւքան որդիք Ջալալ-Դօլա-Հասանի.

Պարոն-Ջալալ որդի Աթաբակ Ա-ոյ.

Աթաբակ Բ. որդի Պարոն Ջալալի.

Այտին-բէկ և Աղբաստ որդիք Աթաբակ Բ-ի.

Պարոն-Աղբաստ

Սայտուն որդի Պարոն-Աղբաստի.

Հատիր-Մելիք որդի Սայտունի.

Սարգիս կաթուղիկոս որդի Հատիր-Մելիքի.

Մեհրաբ-բէկ որդի Հատիր-Մելիքի. Մեհրաբից ծնուել.

Ջալալ-բէկ Ա. որից

Վելիջան-բէկ Ա. որից

Բաղդասար-բէկ, որից

Վելիջան-բէկ Բ. որից

1) Խորիշահն քոյր է Զաքարէ և Իւանէ Սպասալարին։



Միւքրի-բէկ, որից

Մելիք-Գրիգոր, որին յաջորդում է իւր փոքր եղբայր

Մելիք-Ալլահվէրտին,

Մելիք-բէկ Մելիք-Գրիգորեան

Դանիէլ-բէկ[1] որից ծնուած է Բաղդասար մետրապօլիտն։

## ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԽԱՂԲԱԿԵԱՆ ՏՈՀՄԻ

Այս տոհմը, որ բնակած է Խաչէն գաւառի Համամի ձորում[2], մերթ կոչւած է Հաղբակեան և մերթ Խաղբակեան։ Տոհմիս էին պատկանում Հարճլանք գաւառի հիւսիսահայեաց մասերն և Խաչենագետի ու Թարթառի մէջ ընկած մասն։ Ջալալեանների զօրանալուց յետոյ՝ Հաղբակեանների ձեռքում մնում են միայն Նաւարի գալս[3] Կաչաղակաբերդ[4] ամրոցներն և Հաւապտուկ ու Կօշիկ[5] վանքերն։

Մի գրչագիր աւետարանի յիշատակարան տոհմիս ծագումը դնում է Բակ իշխանից։ «Ըստ կարի և յօժարութեան խնդրող եղեալ քրիստոսասէր և բարեպաշտ տիկին Վանենի՝ դուստր բարեպաշտ իշխանին Հայոց որդւոյն Խախրանայ թոռն Բակ իշխանին։ Իսկ յայնմ ժամանակի, յորժամ ի պարտութիւն մատնեցաւ սուրբն Վարդան զաւրավարն զաւրաւք իւրովք .. այս Բակ իշխան գնաց փախըս-

1) Տապանաքարի արձանագրութիւնը տես «Արցախ» եր. 150—151։

2) Բնակարանների հնութեանց բնկոյրների մասին «Արցախ» եր. 183։

3) Տես «Արցախ» եր. 199։

4) » » եր. 197—198։

5) » » եր. 181—182 և եր. 168—169։

տեալ ի յամրոց՝ իւր և զուրքն Պարսից և ուրացեալն Վասակ զհետ մտեալ պատեցին շուրջ զամրոցաւն։ Իսկ այս Բակ իշխան ելեալ ի պարիսպն նախատեաց զուրացողն Վասակ .... Եւ ելեալ ի գիշերի հանդերձ հարիւր արամբք գնաց փախստեայ ... յանուրն Արցախայ(1) և կեցեալ բարեպաշտութեամբ և քրիստոսասէր հաւատով .... Այսեալ Վանինի, որ և առացաւ զայս աւետարան յիշատակ հոգւոյ հաւրն իւրոյ բարեպաշտ իշխանին Ջաջռոյ, և ես ի սուրբ մենաստանն, որ կոչի Հաւապտուկ, որ է շինեալ յանուն սուրբ Աստուածածնի և է բնակարան, տուն և շիրիմ Ջաջռոյ իշխանին և նախնեացն իւրոց և է ի գաւառին Արցախայ, որ կոչի Խոխանաբերդ ի տէրութեան երից հարազատացն և բարեպաշտ իշխանացն Ջալալին, Զաքարիային և Իւանէին ... գրեցաւ սա ի թվին Հայոց ՈՁԱ=1232 =ի գաւառս Կայենոյ ի գերահռչակ սուրբ ուխտս Գետկայ— Գօշ-Մխիթարի վանքումս։

Բակ իշխան Ա.

. . . . . . . .(2)։

Բակ Բ.

Խախրան՝ որդի Բակ Բ-ի։

Հաղբակ՝ որդի Խախրանայ.

Ջաջուռ, Գրիգոր, Արու-Սէթ և Վասակ՝ որդիք Հաղբակայ.

Սմբատ, Հասան(3) Գրիգոր, Այսեալ՝ որդիք

Հասան | Ջաջռոյ քաջ իշխանին և Վանինի դուստր։
Խերխան, Մարձպան, Մամիկոն՝ թոռունք

1) Համանման հատուած կայ և Եղիշէ եր. 233։

2) Բակ Ա. իշխանից մինչև Բակ Բ.ն—452—855 անշուշտ եղած են շատ իշխաններ, որոց անունները անյայտ են մնում մեզ։

3) «Թուական ՈԾԳ=1224 էր, ես Ջաջուռ որդի Հաղբակայ կանգնեցի զխաչս ի տապանի որդւոյ իմոյ Սմբատայ»։ Սմբատին, իբրև իշխողի՝ անունն յիշուած է 1181-ին Փրկ. «ՈԼ. թուին և յիշխանութեան Սմբատայ ....» («Արցախ» եր. 180։



Հասան | Հասանայ .... Թվ. Հայոց ՉԺԳ. (Արցախ. եր. 168
—169)։

Ջաջռոյ եղբայր Վասակն իւր բնակութիւնը և իշխանութիւնը ձգում է Մեծ-Սիւնեաց կողմն(1)։

## ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԵԾ-ԿՈՂՄԱՆՑ ԿԱՄ ԿՈՒԵՆԻՑ ԻՇԽԱՆԱՑՆ

ակուր ..... Վաչական Գ-ի օրով (Տաղ եր. 69 Մոսկ) Ոստամ Վարազ-Աքբյեան

Շիրանշահ,

Ուզ.

Համբեր.

Սանոյ՝ եղբայր Համբերի(2).

Հնումն մի և անբաժան էր գաւառս և կոչւում էր Մեծ-կողմանք, Մեծ-Կուենք և Զարաբերդ. բայց Մէլիքութեան ծնունդ առնելուց յետոյ բաժանւում է երկու մաս, մին Ջրաբերդի անուամբ կոչւում՝ Ջրաբերդ գաւառ, իսկ արևմտեան կողմնն՝ Թալիշ, Կիւլստան, Ղըզըլղօր. երկուսն միասին Ջիւանշիրի անուամբ Ջիւանշիր։

1) Ս. Օրբել. Բ. հատ. եր. 95, «Վասակայ իշխանին Խաչենեցւոյ, որ էր հայր Պռոշոյ» նոյն եր. 97 և 143։

2) «Զաստուածակիր և պաշտպանեալս սուրբ աւետարանս որ ձեռօք Հասանայ՝ Ուզին որդոյ բերաւ ի Կեսարիոյ. և նոյն Հասանն և ամուսին Եղթի և պարծանաց որդիք իւրեանց Համբեր և Սանոյ ետուն զսա (զաւետարանս) յիւրեանց տապանատունն (Եղիշ Առաքելոյ վանքն) ուր էին տեղւոյս իշխանք. զսոյն Շիրանշահանց Գութի ձեռաւքն ի վանս Եղիշէի .... թվին Հայոց ՉԺԵ=1266 ՉԻԱ=1272 =շինեցաւ ժամատունս (Եղիշ Առաքելոյ վանքի)։ Շիրանշահանց իշխողների շառաւիղութիւնից—սկզբից և վերջից—պակասում են իշխողների անունները։ Սակայն անկարելի եղաւ գտնել պակասները։

## ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՋՐԱԲԵՐԴԻ ԻՇԽԱՆԱՑ

Մեծ-Սիւնեաց Խանածախ գիւղում իշխում է Մելիք-Իսրայէլը, որից ծնուած էր Մելիք-Եսային և յաջորդած իւր հօր, որ 1686-ին տեղափոխւում է Խանածախից Ջրաբերդ գաւառը Ջալալեան իշխողների հիւրընկալութեամբ.

Մելիք-Եսայի Մելիք-Իսրայէլեան, որից ծնւում և յաջորդում է

Մելիք-Ալլահ-ղուլի-Սօլթան, որից

Մելիք-Ադամ Ա.(1) որից

Մելիք-Մեժլում, որից

Մելիք-Ադամ Բ. որ տեղափոխւում է Բօյնիս.

Մելիք-Վանի, որից ծնւում են չորս որդի-Յովսէփ-բէկ, Սարգիս-բէկ, Աթա-բէկ(2) և Միրզայել-բէկ. Բայց Մելիք-Վանու եղբայր Յակոբ իւզբաշին ունենում է երեք որդի Ասլան-բէկ, Ջալալ-բէկ և Յարութիւն-բէկ. Ասլան-բէկից ծնուած են Եփրեմ-բէկ, Ներսէս-բէկ, Մովսէս-բէկ և Նիկոլայ-բէկ բարեհամբաւ զաւակներ. Իսկ անժառանգ վախճանւում են Ջալալ-բէկ և Յարութիւն-բէկ.

## ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԿԻՒԼԻՍՏԱՆԻ ԻՇԽԱՆԱՑ

[illegible]ար գիւղաքաղաքում բնակող Աւանշահիկենից ճիւղաւորւում է Այտին իւզբաշին, որ Ջահան-Շահից

1) Մելիք-Ադամ Ա. ունի երկու ապարան, ամառանոց ապարանն, որ գտնւում է Իննմաս կոչուած անտառին մօտ և ունի 49 մետր երկարութիւն և 29 մետր 25 սան. լայնութիւն, շինուած է (Մ.-Ադամ Ա.-ից) ՌՄԻ=1771=. իսկ ձմեռանոցն, Մայրաքաղաք կամ Քաղաքաշկերտ, 37 մետր երկարութեամբ, 34 մետր 40 սան. լայնութեամբ, որոց մասին տես «Արցախ» եր. 217—218 և 223—224.

2) Սա ունէր պօլկովնիկի աստիճան.



իբրև սեպհականութիւն ստանում է Նիժ և Սօլթան-Նուխի գիւղաքաղաքները, որք Կապաղակ գաւառումն են.

Այտին իւզբաշի, որից ծնւում և յաջորդում է

Ղարա-Հասան իւզբաշին, որից

Վարդան իւզբաշին, որից

Դաւիթ իւզբաշին, որ Մելիք-Սուճումի հետ գնում է Պարսկաստան և կրկին յետ դառնում, որից Աբով իւզբաշին, որ Սև-Աբով ևս է կոչւում:

Սա, Ջալալեան Մելիքների խորհրդով և Ջալալիների անմիջ-հաս աւերմունքներից զզուած լինելով, թողնում է Նիժը և Սօլթան-Նուխին և իւր յիսուն ծուխ ազգականներով 1600 թուին փոխադրւում է Կիւլստան. Սա յաջողում է ձեռք բերել Մելիքութիւն և կոչւում Մելիք-Աբով Ա. որից

Մելիք-Բէկլար Ա. որից

Մելիք-Աբով Բ. սա կոչւում է և կաղ Աբով.

Մելիք-Թամրազ՝ եղբայր Մելիք-Աբով Բ-ի վասն անչափահասութեան Մելիք ժառանգ Յովսէփին.

Մելիք-Յովսէփ, որ կոչուած է «Բաջամարտիկ Մելիք Յովսէփ» («Արցախ» եր. 242), որից

Մելիք-Բէկլար Բ. ապա սորա եղբայր

Մելիք-Աբով Գ.

Մելիք-Փրէյդուն՝ որդի Մելիք-Բէկլար Բ-ի.

Մելիք-Իսախան («Արցախ» եր. 228). Գաղտնիք եր. 191—192.

## ԱՐՑԱԽԻ ԳԱՐԴՄԱՆԻ ԻՇԽՈՂՆԵՐ

| | |
|---|---|
| [illegible]ուրս՝ Աւանշահիկ ցեղից.<br>Կարճ » »<br>Խոսրով նախարար (Կաղ. Բ. հատ. Գ. գլ.)<br>Մովսէս կուրացեալ Աշոտ Թագաւորից. | Յով. կաթ. եր. 377—379. |

## ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԿԻՒՐԻԿԵԱՆՑ

Այս տոհմն շառաւիղած է Բագրատունի Աշոտ-Ողորմածից իբրև ընից և հետզհետէ բնակած Ճանչուկոտէ, Զորագետ, Լօռի, Տաւուշ և Մածնաբերդ ամրոցներում և իշխած երբեմն Արցախի Գարդման, Փառիսոս, Քուռ, Կողթ և Ձուէ գաւառներին վերայ։

Գուրգէն թագաւոր՝ որդի Աշոտ-Ողորմածի.

Դաւիթ-Անհողին՝ որդի Գուրգէն թագաւորի։ Անհողինս շինում է Լօռի բերդաքաղաքը, որի մէջ և հաստատում իւր բնակութիւնը։

Կիւրիկէ թագաւոր՝ որդի Դաւիթ-Անհողինի.

Կիւրիկէիս թագուհին էր Թամար, որից ծնան

Աբաս, Դաւիթ, Մարիամ կամ Մամա (սա էր կին Հասան թագաւորին) Ռուսուդան և Բուսարխ։

Աբաս թագաւոր՝ որդի Կիւրիկէ թագաւորի և իշխող Տաւուշ բերդին։ Դաւիթ՝ եղբայր Աբաս թագաւորիս, իշխում է Մածնաբերդին, վախճանւում են երկու եղբայրք և ամփոփւում Հաղբատ վանքում։ Դաւիթից մնում է մի որդի Կիւրիկէ անուն։

Կիւրիկէ Ա. իշխանից ծնւում է

Աբաս իշխանն, որ ամուսնանում է Սարգսայ Զաքարէի քոյր Նանայի հետ և երկու տարուց յետոյ վախճանելով թողնում է մի որդի Աղսարթան անուն. Աղսարթան ամուսնանում է Բագրատունի Կաւակեան Դաւիթ իշխանի[1] դստեր հետ. Դաւիթ նենգութեամբ գրաւում է

1) Սա և իւր հայր Վասակ իշխանն, որ նստում էին Նոր բերդում, շինել են տալիս Տաւուշեցի Յովհաննէս ճգնաւորեաց եպիսկոպոսի ձեռամբ Կարապետ եկեղեցի վանքը (Վարդ. բարձ. եր. 201—204 և «Արցախ» եր. 336—338)։



Մածնաբերդը, բայց հալածւում է բերդի բնակիչներից. կրկին նստում և իշխում է Աղսարթան։

Կիւրիկէ Բ. իշխան՝ որդի Աղսարթանայ. կինն Թամար, որոյ որդիքն են Փահլուան, Թաղիադին և Աղսարթան Բ. (Վարդ. բարձր. եր. 141—142. Սիս. եր. 89—90 և 142։

Մելիքութեան ծագումից յետոյ Գարդման գաւառիս մի քանի գիւղերում բնակած և իշխած են մի քանի գիւղերի, ինչպէս են Գետաշէն, Ոսկանապատ և Մեծ-Բանանց:

Գետաշէնում բնակող Մելիք-Մնացականեանների մասին ոչինչ տեղեկութիւն չկարողացանք ձեռք բերել։ Ի՞նչ արմատից ծագած են. քանի՞ մելիք գահակալած է, ինչ եղան սոցա հետակաները, ինչպէս եղած է սոցա անցեալը։ —Ոչ ոք չգիտէ։ Սոցա հետականերից մին Թամիր-բէկ բնակւում էր Գանձակում, որի մօտ ասում էին թէ կան փաստաթղթեր և իւր ազգի պատմութեան համար նիւթեր. բայց անմատչելի եղաւ մեզ.... Մինչև անգամ «Արարատ» ամսագրի մէջ հրապարակաւ խնդրեցինք ձեռք բերել,— անկարելի եղաւ ստանալ։

## ՈՍԿԱՆԱՊԱՏԻ ԻՇԽԱՆՆԵՐՆ[1]

…ո անշահիկ ընից-Սօփի Մելիք-Շահնազարեաններից ընձիւղեալ մի բողբոջն է այս մելիքութեան առաջին անձն Նազար անուն։ Սա ուղղակի 1601—1902 մելիքութիւնը ստանում է Ս. Շահ-Աբասից, որ հիւր եկած է լինում Մելիք-Շահնազարին Մաղրա գիւղն և կոչւում է Շահ-Նազար[2], այս է Շահի քաղցր նայուածքն իմ վերայ է:

1) Արցախի Գարդմանում.

2) Սա չփոթելու չէ մեծ և Ա. Մելիք-Շահնազարի հետ

Համարեմ թէ Մելիք-Բաղուց շատ առաջ տեղափոխուած է նա Մաղրասից Ոսկանապատ, ապա հետզհետէ իշխում է և Միրզիկ, Բռաջուր և Մաւթ գիւղերին(1)

Մելիք-Շահ-Նազար (չգիտենք որի որդին է). որից
Մելիք-Յովսէփ Ա. որից
Մելիք-Եաւրի. (վախճանեալ 1720-ին)
Մելիք-Յովսէփ Բ. ( » 1730-ին)
Մելիք-Գաբրիէլ ( » 1780-ին)
Մելիք-Յովսէփ Գ. ( » 1826-ին)

Որդիք սորա Բէկլար-բէկ և Եաւրի-բէկ. իսկ եղբայր Մելիք-Յովսէփ Գ-ի՝ Բաշարի-բէկ, որ վախճանուած է 1740-ին, ինչպէս երևում է շիրմաքարի արձանագրութիւնից։ Այս տոհմից է և՛ Մելիք-Շահնազարեան Շախուբեանց Բէկլար-բէկ, որ իւր գերդաստանով բնակում է Կիւլատաղի Վերին-չէնում.

Մելիք-Շահնազար-Շախուր. որի հետնորդներից է եղել նաև

«Միր-Դաւիթ-խան Մարեան ի տանէ Մելիք-Շահնազարեանց Մաղրասցի, ասպետ Ա. աստիճանի կարգացն Արեգակն-առիւծոյ Պարսից արքային. երկեամ դեսպան ի կողմանէ նորին արքային (Պարսից) առ թագաւորն Փռանցիս 1816 թուին» (Տես «Արցախ» եր. 249)։ Այս իսկ տոհմից էր նա և՛ Դէ-Շախուր անուանեալ, որ բնակում էր Դարբանդում և մեռաւ մի քանի տարի առաջ առանց զաւակ թողնելու։

Անկարելի եղաւ մեզ տեղեկութիւն հաւաքել Մելիք-Մամթէոսեանների մասին, որ բնակած են Մեծ-Բանանց և Խաչակապ գիւղերում. նոյնպէս և Մելիք-Սիմոնի (Մէմէօն) մասին, որ բնակած է Հարցհանգիստ և Խաչակապ գիւղում (Տես «Արցախ» եր. 45). Մելիք-Հախնազարին,

1) Գիւղերիս մասին տես «Արցախ» եր. 272—278։



որ բնակած է Փիփ գիւղում (Արցախ եր 298) Մելիք-Ղորխմազին, որ բնակած է Թողուզ գիւղում (Արցախ եր. 330). և Մելիք-Ջհանկիրին՝ որ բնակած է Կաղէն գիւղում («Արցախ» եր. 59)։

## ՓԱՌԻՍՈՍ ԵՒ ՔԱՒՍ ԳԱՒԱՌՆԵՐԻ ԻՇԽՈՂՆԵՐ

…ասում իշխան՝ Աւանչահէկ տոհմից
Սենեքերիմ՝ իշխանաց իշխան և յետոյ թագաւոր.
Գրիգոր թագաւոր՝ եղբայր Սենեքերիմ թագաւորի։
Հասան իշխան Գեսուեանց.
Գրիգոր փառաւոր իշխան՝ որդի Հասան իշխանի.
Փիլիպպէ՝ որդի Գրիգորի (Վարդ. Բարձ. եր. 134—135)։

| | | |
|---|---|---|
| Խորէն | թվ. ՉԻ.=1271. | |
| Հայրապետ | | |
| Սանայ | թվ. ՋԼ.=1481. | «Արցախ» եր. 307 և 335։ |
| Սարգիս՝ որդի Սանայի. | | |
| Սադունոյ մեծ իշխան | | |
| . . . . . . . . | | |

Վասակ իշխանաց իշխան Բագրատունի.
Դաւիթ իշխան՝ որդի Վասակայ | Արցախ եր. 395 և 435։
Վասակ որդի Դաւթի, որ նստում էին Նոր-բերդում։
Մելիք-Աթա Ա. Մեծ-Ղարամուրատի, որ Միափոր գաւառում.

Մելիք....(1) գաւառի մէջ է

1) Զաքար. Սարկ. եր. 23—26 պատմում է թէ Շահ-Աբաս Ա. Մէլիքութիւն է տալիս Միափոր (այժմ Մեծ-Ղարա-Մուրատ գիւղ Միափոր գաւառում) գիւղացի չոբան Աթային՝ Վրաստանից դարձած ժամանակ գրելով. «և եա նոցա յորդւոց յորդիս լինել Մելիք այնմ գաւառի»։ Բայց չէ նշանակում թէ ինչ եղած է Մելիք-Աթայ Ա.-ոյն Մելիք-որդու անունն։

Մելիք-Աթամ Բ. թոռն Մելիք-Աթամի Ա-ի։

Այս տոհմից եղած է Մելիք-Սարգիս, որ իւրայիններով տեղափոխուած է Շուլաւեր։

## ՊԱՐՏԱՒԻ ԻՇԽԱՆՆԵՐՆ

Պարտաւում երկար ժամանակ իշխած են Աղուանից մեծ իշխանների որդիքն, թոռներն և հետականերն, ինչպէս էին Վարազ-Գրիգորի, Վարազ-Տրդատի և Ջիւանշիրի, են են որդիքն և թոռներն։

Վարազ-Գրիգոր.
Վարազ-Տրդատ Ա.
Ջիւանշիր.
Վարդան.
Գագիկ. են.
Վարազ-Տրդատ Բ. որդի Վարդանայ.
Շերոյ մեծ իշխան.
Ռոստամ Վարազ-Աբլեան.

## ԿՈՂԹ ԳԱԽԱԹԻ ԻՇԽՈՂՆԵՐՆ

| | |
|---|---|
| Սալ կամ Բաբ Հրահատեան<br>Վախտանգ Վարազմանեան<br>Վարազոյ որդի Վախտանգայ | Դասխ. ժԳ. գլ. |
| . . . . . . .<br>Բլու-Զաքարէ.<br>Վահրամ՝ որդի Բլու-Զաքարէի.<br>Ազարուզէ որդի Վահրամայ։ | Կիր. եր. 95։ |



## ՋԱԽԷԻ ԳԱԽԱԹԻ ԻՇԽՈՂՆԵՐՆ

| | |
|---|---|
| Սեւուկ իշխան Ղազախի<br>Գէորգ նահապետ.<br>Արուես եղբայր Գէորգայ<br>Սանփաննոս-Կոն. | Յով. Կաթ. եր. 235—236 և 135։ |

Հասան իշխան՝ շինող բերդին Կայենոյ (Վարդ. Բարձ. եր. 184)։

### Աղբերդ (այժմ աղդաշ) գաւառի իշխաններն

Այստեղ որդւոց որդի իշխում էին Վաչականեան թագաւորաց ցեղերն, նոյնպէս և Կապաղակ գաւառում. որպէս են

Պատրիկ Բարդեան յարքայից զարմէն.
Պապ Հրահատեան (Դասխ, եր. 244 տպ. Մոսկ.)։

### Կաղինան գաւառի իշխողներն

Վահան Վարազ-Ցոհանեան Մաքենացւոց զարմից։

### Հողի գաւառի իշխաններն որդւոց որդի

Զարմիհր Վարազ-Բրտակեան և,
Մանաս Շերյեան։

### Շամի գաւառում և քաղաքում իշխում էին

Արմիհր կամ Զարմիհր-Եռանշահիկ որդւոց որդի.

Բագրատեան ցեղն ունենում է իւր թագաւորը (Ուխտ. եր. 257) նոյնպէս և Լփնիք. նոյն եր. Զկուրկն քաջ զեղբայր թագաւորին Լփնաց. եր. 143։

Շամախու Գարդման բերդում և գաւառումն որդւոց որդի իշխում էին Միհրանեան քաջ Վարդանի ցեղն. Առանշահիկ իշխանները կոտորելուց յետոյ։

## ԽԲ. ԳԼ.

## ԱՂՈՒԱՆԻՑ ԲԵՐԴԵՐԻ ՄԱՍԻՆ

Ծար գիւղաքաղաքում բնակող Առանշահիկ տոհմի իշխաններին էին պատկանում Ծար և Հանդաբերդ ամրոցներն և Գլզլան (տես Արցախ եր. 409—410)։

Հասան Թագաւորին և իր սերնդոց էին պատկանում Հաւաքախաղաց և Հախտանաբերդ, Բերդաքար և Ակնայ Ամրոցներն. («Արցախ» եր. 211—213)։

Ջալալեաններին էին պատկանում Խոխանաբերդ, Անանուն կամ Ծիծառնաբերդ, Խաթրայ-բերդ և Ճիլաբար (Արցախ եր. 197—199)։

Խաղբակեաններին էին պատկանում Կաչաղակաբերդ, Նատալին Ղալա և Աղուանք կոչուած պարիսպն (Արցախ նոյն երեսներում)։

Վարանդայ, Դիզակ և Բերդաձոր գաւառներն ի հնուց մինչ պատկանում էին այդ գաւառների հայկական իշխաններին, բայց ինչպէս տեսանք Ներսէս-Դժնակին նոյն իշխանաց տոհմը երկաթեայ շղթաներով տանջելով սպանում է և տիրապետում այդ գաւառներին և բերդերին, որք են Բոզաննոց, Ղալին-Խութ, Աղչկայ բերդ. (Գլզլան) Վելիջան իշխանի բերդ կամ Յորս բերդ, Մեսոփ ղալա. Դող բերդ և Դիզափայտ բերդերն (Արցախ եր. 134—136 և 82—85). և Անու տեղ, Թոխա, Գոլալու և Խցաբերդ ամրոցներ (Արցախ եր. 401—402)։

Ճիրանշահանց տոհմն իշխում էր Ջրաբերդին և Մայրաքաղաքին (Արցախ եր. 239—24 և 222—224)։

Արցախի Գարդման, Մ'ղնաբերդ, Ղալա-Բերդակ Քարանբերձ և Կեռասավանք ամրոցներն պատկանում էին Առանշահիկ իշխաններին. Մելիք-Բէգլարեաններն եւ ունէին



իւրեանց առանձին ամրոցները՝ Քառասնուղ բերդակ և ուրիշ 3 բերդ. (Արցախ եր. 230 և 256—258)։

Փառխա, Մամուտ կամ Զարդար ամրոց, Ճամբրա-մայ, Ճաւ-Փարսաք և այլն բերդերն պատկանում էին Փառխասի Առանշահիկ իշխաններին և թագաւորներին (Արցախ եր. 324—327). իսկ Գալա-բոյունն յատուկ էր Վահրամ իշխանին։

Սրգևանք, Տաւուշ կամ Թովուզ[1] Կածարեթ, Դուրդ-կեան, Ճշարար, Գզլալա, և Ճնքար ամրոցներն պատկանում էին սկզբում Առանշահիկ իշխաններին, բայց յետոյ Կիւրիկեան իշխաններին և Բագրատունիներին (Արցախ եր. 357—360)։

Հայկական ցեղից էին Զաւէ գաւառի իշխողներն, որոց պատկանում էին Ճար-Խաչ գիւղի բերդն, Մանթաշ ղալան, Կայենի բերդն՝ որ պատկանում էր Հասան իշխանին. Մ'թնաձոր, Բերդաքար, Բերդատեղ, Ղեասի բերդ, Ճինօղն, Գաւարգին, Գագայ ամրոց Բագրատունի Գագ թագաւորից շինուած (Արցախ եր. 392—397)։

Թագաւորազուններից ոմանք բնակում էին Ճամքոր քաղաքում և իշխում Ճամքոր և Հոզաբերդ ամրոցներին («Թագաւորազն Կոլթա տեառն տուն. Կաղ. ԼԲ. գլ.)։

Առանշահիկ տոհմից Վարազ-Պերոժին էին պատկանում Ճարի քաղաքն իւր գաւառներով և բերդերով և վանքերով (Կաղ. Ա. Հատ. ԻԵ. գլ. և Բ. Հատ. ԼԲ. գլ.):

Ջիւանշիրի եղբայր Ցեղուտ-Խոսրովն, որ նստում էր Հողի գաւառում, շինած էր Խուտով նշանաւոր ամրոցը, Ջրաբերդը, Ղալայ-Բոյունը (Աղ. երկ. և Դր. եր. 225—229)։

Թագաւորազուններ և նախարարների մնացած ցեղերն բնակում էին Արաժանս (Արաշ) Աղսեր (Աղ-դաշ)

---

1) Կիւրիկեան Աբաս թագաւորն բնակում է Տաւուշ բերդում, իսկ Բագրատունի իշխանք Նոր-բերդում։

Հաբանդ և Քաշու գաւառներում, որոց պատկանում էին ԼԳ. ԼԴ. ԼԵ. ԼԶ. ԼԷ. բերդերը (Աղ. եր. և Դր. եր. 284—288)։

«Պատրիկ Յարյեան յարքայական զարմէ» տիրում էր Կապաղակ գաւառին, որին պատկանում էին Արնար (այժմ Կեաւուր ղալա-Ցրխտանէի բերդ) և ԻԲ. ԻԳ. բերդերն (Աղ. եր. և Դր. եր. 253—255)։

Լփնաց գաւառների բերդերին փոքր մասամբ տիրում էին ինքեանք Լփնիք. իսկ մեծ մասամբ Աղուանից թագաւորներն, ինչպէս են Խորը-Զնդան, Ալթի-Ագաճի մօտի բերդն, Դզզալա, Նախր-դշլաղ և Ցախ (Աղ. եր. և Դր. եր. 143—150) և Դալքանդ և սորա շուրջն եղածներն։

Պէտք չէ մոռանալ որ վերոյիշեալ բերդերն յաճախակի ենթարկւած են եղել յափշտակութեան, զի բոլորը յափշտակած են իրարից, օրինակ Պարսիկներն Աղուանցիներից, Արաբացիք՝ Պարսիկներից. Թաթարներ, Վրացիք, Սելջուկներն, Օսմանցիք, ևն. միմեանցից։

## ԻԳ. ԳԼ.

Արաբացւոց կասկածները.—Աղուանից իշխանների գերեվարութիւնը.—Եսայի մեծ իշխանի քաջագործութիւններն և գերութիւնը.—Նահատակութիւններ —ինքնակոչ կաթուղիկոս:

Արաբացւոց ոստիկաններն և զօրավարներն այնքան չէին կասկածում և վախում դաշտաբնակ իշխող հայերից, որքան կասկածում և վախում էին լեռնաբնակ իշխաններից։ Արդէն իւրացրած էին ոստիկաններն Դարբանդի, Վարդանեան, Աղուանից դաշտային և Տաքուայ և Շամախու դաշտային և լեռնային բոլոր գաւառները. բայց



Արցախի լեռնային գաւառների հետ ողորում էին անընդհատ, որ իւրացնէին։

Ըստ ասութեան Ասողկան, եր. 107, Հայոց Յ. թուականին (851—852-ին) Ջաֆար ամիրապետից յուղարկւում է Աբու-Սէթ ոմն, որ չղթայակապ անելով Արցախի Դարդմանի իշխան կորիճը, Վերին-Խաչենի իշխան Ատըրներսեհը, Դիզակի Եսային և Սևորդեաց Սահմանմուս Կոնը՝ Հայոց իշխանների հետ տանում է Բաղդադ և նահատակել տալիս շատերը (1)։

Այս գործողութիւնը հետևեալ ձևով է պատմում Թովմայ Արծրունին, եր. 177—185 և 191։ Բուղա ոստիկանն գնում է հիւսիսային ցեղերը նուաճելու, բայց դառնում է կոր ի գլուխ. վասն որոյ սաստիկ բարկացած՝ իւր զօրքով արշաւում է Եսայի-Աբու-Մուսէ անուանեալ —մեծ իշխանի վերայ, որ ամրացած էր Քթիշ (Գոխչ-Դաղ ամրոցում (2) իւր զօրքով)։ Աբու-Մուսէն—արդէն գիտենք որ Դիզակի Մոխէս իշխանի հայրն էր և Գագիկ թագաւորի պապն—խրախուսում է իբրև դաշնակից Արցախի միւս իշխանները կարել կիրճերը և յետ մղել՝ ասելով. «Մենք հիւսիսային ցեղերից ստոր չենք, յորոց Բուղան դարձաւ կոր ի գլուխ, պէտք է պատերազմենք քաջութեամբ»։ Բուղա ոստիկանն քանի և չորս անգամ յարձակւում է գործում Աբու-Մուսէի վերայ սաստիկի պատերազմներով, բայց 24 անգամն էլ չարաչար յաղթւում է։ Այս անճարացած ոստիկանն դիմում է խորամանկ, բայց անպատուաբեր միջոցի, այս է Ամիրապետից բերել է տալիս նշանաւոր պարգևներ—որպէս յաղթող զօրավարի վայելուչ ընծաներ Եսայու համար, որին և յանձնելով Ամիրապետի կողմից այն ընծաները, հաստա-

1) Պատմ. Գ. Հատ. ԽԱ. գլ. Վարդ. Բարձ. եր. 110—111, այս գործողութիւնք վերագրում են Բուղային։

2) Արցախ եր. 83—85։

*տում է յաղթողի հետ սէր, խաղաղութիւն և բարեկամութիւն։ Այնուհետև կեղծաւորութեամբ որսալով՝ հեշտութեամբ կալանաւորում է Բուղա նախ Աշոտին և ապա միւս յիշուած իշխաններին և չղթայակապ տանում Բաղդադ։ Այստեղ սկսում են տանջել և նահատակել անգլուխ մնացած Հայոց և Աղուանից ազնուական ժողովուրդը։ Բազմաթիւ նահատակուածների յիշատակը կատարելու համար տօն է սահմանում Յովհաննէս կաթողիկոսն (եր. 162)։*

*Այդ դառն միջոցին—851-ին, 25 տարի հայրապետութիւն անելուց յետոյ վախճանւում է տէր Յովհաննէս Բ. որին ինքնակոչ յաջորդում է Սամուէլ Մեծ-կողմանց եպիսկոպոսն։*

## ԽԴ. գլ.

## ԴԱՐՁԵԱԼ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Դարձ իշխանաց.—Երկարատև պատերազմ.—Ինքնակոչն օրէնքի տակ.—Թագաւորներ.—Ինքնակոչ Յովհանն.—Հայոց Գէորգ Բ. կաթողիկոսն Աղուանքում.—Հայրապետական յաջորդութիւններ.—Մոկացի Անանիա հայրապետի գրաւոր ջանքեր։

863 *թուին Բաղդադից դառնում են Հայոց և Աղուանից բանդարկեալ իշխանները և նախարարները, բայց ոչ ամբողջապէս, քանզի ոմանք նահատակուած էին քրիստոնէական հաւատքի վրայ հաստատ մնալով և ոմանք չարչարուելով վտանգուած։ Առանձնաշահիկ Ասոլներուհ մեծ իշխանն հասնում է իւր տունն, ուրախանում, ուրախացնում, սակայն վախճանւում է շատ չանցած, որին տեղակալում է իւր մեծ որդի Գրիգոր Ս. որից ծնւում են հինգ որդիք՝ Ապուլի՝ որ սպանւում է իւր ազգական*



*Սմբատից, Սահակ՝ որ կոչւում էր Սևադա, և ուրիշներն։ Գրիգոր Ս. շինում է Հաւրախաղաց բերդը և այն կողմն ձգում իր իշխանութիւնը։*

*Բացւում է երկարատև պատերազմ Շեխի՝ որդի Յուսէֆի և իր Պարտաւում նստող գործակալ Աբլ-Վահատ մէջ, որ կոչւում էր Էմէմիկ, ու ապստամբած և ապստամբեցրած էր Յուսէֆի դէմ Կովկասեան ցեղերը։ Այս ներքին պատերազմներն օժանդակում են տկարացնել Արաբացւոց զինուորական ուժը։ Անձամբ գալիս է Աղուանք ինքն Յուսէֆ, իր յետ օգնական առած Հայոց Բագրատունի Աշոտ իշխանը՝ Հայոց զօրաց մի մասովը, որին միանում է և Աղուանից իշխանների զօրքն։ Այդ ժամանակում Արաբացիք արդէն 100,000 զինուոր կորուսած էին Կ. Պօլսոյ Յունաց հետ եղած պատերազմում. Աղուանքում էլ 13 տարի մնում են սարսափելի և արիւնահեղ կռիւներ, որովք աւելի է տկարանում Հագարացւոց զինուորական ուժն։*

*Այդ իսկ միջոցին Բագրատունի խաղաղասէր Աշոտ իշխանի յորդորմամբ Սամուէլ ինքնակոչն գնում է և օծման կարգը ստանում Հայոց Գէորգ Բ. կաթողիկոսից և գահակալում օրինական սահմանած ճանապարհով*

37) *Տէր Սամուէլ։*

*Թ. դարն դոդցես յղացած էր բազմոթեակ թագաւորներով, քանզի ծնում էր զոյգ զոյգ թագաւորներ։ Խորամանկ Իսմայէլացիք Հայերը Հայոց ձեռնով ջարդել տալու քաղաքականութեամբ, միմեանց ետևից տալիս էին թագեր Բագրատունեաց, Արծրունեաց, Մեծ-Սիւնեաց Առանձնաշահիկ և Ներսեհ-Դժնդակի տոհմի մեծ իշխաններին և թշնամի յարուցանում եղբայր եղբօր դէմ, ազգ ազգի դէմ և հարևան հարևանի դէմ։ Ի չարս նորածին թագաւորաց թագ են ստանում Առանձնաշահիկ Ասոլներուհ մեծ իշխանն, Բագրատունի Համամ իշխանն և Աքամու-*

ւէի Թոռն Գագիկ իշխանաց իշխանն։ Առաջինն գահակալում է (1) Ծար գիւղաքաղաքում, երկրորդն՝ Պարտաւում և երրորդն Դիզակի Տումի գիւղում։

Տէր Սամուէլ 15 տարի (Պօղ. Մ. և Կիր. 15 ամ, Դասխ. Ճանկաթ. 17) պաշտօն վարելով վախճանւում է, որին յաջորդում է նոյնակոչ Յովհան, որ Հայոց կաթուղիկոսարանի եպիսկոպոսն եղած էր։

Բագրատունի Սմբատ թագաւորի և Ափշին ոստիկանի մէջ ծագած գժտութիւնը և թշնամութիւնը հեռացնելու և հաշտեցնելու համար միջամտում է Հայոց Տէր Գէորգ Գառնեցի հայրապետն, բայց կալանաւորւում է 893-ին և բերւում Պարտաւ։ Աղուանից Համամ թագաւորն տանում է Հայրապետից Հայոց նախարարների համար իբրև փրկանք բերուած գումարը, որի վերայ աւելացնում իւր կողմից և մի գումար, զոր վճարելով ոստիկանին՝ ազատում է Տէր Գէորգ կաթուղիկոսը (Դասխ. Գ. Հատ. ԻԲ. գլ. Յով. կաթ. եր. 210—215) որից խնդրում է Համամ թագաւորն՝ ներել Յովհան եպիսկոպոսի արածը և օծել զինքը կաթուղիկոս Աղուանից համար։ Երախտագէտ հայրապետն կատարում է թագաւորի խնդիրը և օծում 38) Յովհանը կաթուղիկոս Աղուանից, որ թէ ապօրինի և թէ օրինաւոր 8 տարի պաշտօն վարելով վախճանւում է, և տեղակալում է 39) Տէր Սիմէոն Բ. որ Աղ-

1) «Հալածեալ չրջեցաւ։ քաղաքէ ի քաղաք ի կողմանս արեւելեայ Աղուանից առ մեծ իշխանն Սահակ (Սեւադա) երթեալ առ թագաւորն նոցունց Ատրներսեհ» (Յով. կաթ. եր. 273)։

Համամ կոչւում էր թագաւոր Աղուանից (Դասխ. Գ. Հատ. ԻԲ. գլ. Ս. Օրբել. Բ. Հատ. եր. 43. Աստղ. եր. 161։ Սորա ծագման մասին յետոյ։

«Ի պետութեան տեառն Գագկայ» (Արցախ եր. 91)։

«Ի Նխթ. թվ. ի թագաւորութեանս տեառն Գագկայ որդւոյ Մուշէի....» (Արցախ եր. 79)։



ուանից կաթուղիկոսարանի եպիսկոպոսն է լինում։ Սա զարդարում է Ս. Խաչը։

899 թին հրաւիրում են Հայոց Յովհաննէս կաթուղիկոսն իւր եպիսկոպոսներով և Աղուանից Սիմէոն Բ. կաթուղիկոսն իւր եպիսկոպոսներով, որք մեծ հանդիսով օծում են Տաթևի նոր շինած եկեղեցին և հրաշալի սիւնը (Ս. Օրբել. Ա. Հատ. եր. 271—273)։

Սահակ-Սևադա մեծ իշխանն արդէն յաջորդած էր իւր հայր Գրիգոր Ա-ոյն։ Սահակ-Սևադան լինելով քաջ ողամարդ և յաջողակ՝ առհասարակ տիրում է Արցախի Գարդման, Բուս կամ Բուսափ և Փառիսոս գաւառներին, այլ և ամբողջ Ջորագետի ստորոտներին վերայ էլ իշխան. սա ուսումնասէր և գրագիտութիւն սիրող էր. իւր տան մէջ կարդւեց առանձին վարժապետներ։ Սահակ-Սևադայից հետ շատ տեսակ հնարքներով պատերազմում է Հայոց Սմբատ թագաւորն՝ բայց չէ կարողանում հպատակեցնել իւր կամքին։ Սահակ Սևադայից ծնւում են երկու որդի—Գրիգոր և Դաւիթ։ Գրիգոր Բ.-ս տեղակալում է իւր հօր. և ծնւում է Սևադան՝ որ կոչւում էր Իշխան, Ատրներսեհ և Փիլիպպէ. Սևադա-Իշխանից ծնւում է Յովհաննէս որ կոչւում է Սենեքերիմ։

Ատրներսեհ թագաւորում է Ծարում. ինչպէս ասել ենք, և ծնւում է Իշխանիկ անուն որդի։

Փիլիպպէն թագաւորում է Աղուանից վերայ.

Յովհաննէս-Սենեքերիմն թագաւորում է Մեծ—Սիւնեաց վերայ Բաղաբերդում, որը կը տեսնենք առաջակայում։

21 Տարի հայրապետութիւն անելուց յետոյ վախճանւում է Տէր Սիմէոն Բ. որին յաջորդում է 40) Տէր Դաւիթ Ե. Փառիսոսի առաջնորդութիւնից. սա վախճանւում է վեց տարի պաշտօն վարելուց յետոյ և նոյնակոչ յաջորդում է Մեծ-Կողմանց Սահակ եպիսկոպոսն և միա-

բանելով Մեծ-Սիւնեաց Ցախովք մետրապօլտի հետ, միա-սին ապստամբում են Մայր-Աթոռ Ս. Էջմիածնի դարաւոր սրբագործուած իրաւանց դէմ. — մինչդեռ ցայն վայր Աղուանից կաթուղիկոսներն օծումը միշտ ստացած էին ընդհանրական հայրապետից և Մեծ — Սիւնիքն սրբալոյս միւռոնը միշտ ստացած էր Էջմիածնից, ընդհակառակն Սահակն նստում է Խնձորեսկ և Ցախովքն միւռոնը տա-նում է Աղուանքից. և ի վերայ այսր ամենայնի այդ երկու ապստամբներն մոլորցնում են իշխաններից մի քանիսը, արտաքին դրդմամբ, դէպի Քաղկեդոնիկութիւն և պղտո-րում ժողովուրդը։ Հայոց Տէր Անանիա Մոկացի կաթուղի-կոսն երկար գրագրութիւններով շատ աշխատում է յուղ-ղութիւն ածել այդ ապստամբները, սակայն ապարդիւն էին անցնում իւր ջանքերն։

## ԽՆ. ԳԼ.

## ՀԱՄԱՄ ԹԱԳԱՒՈՐԻ ԾԱԳՄԱՆ ԵՒ ԳՈՐԾԵՐԻ ՄԱՍԻՆ

Մխիթար Այրիվանեցին եր. 55 տպ. Մոսկ. ասում է «Համամ, որ և Յովհաննէս Բագ-րատունի, մեկնեաց զԱռակսն և եդ զվերջին դասլայն ի գլուխ սաղմոսացն։ Իսկ Դասխուրանցին, Գ. Հատ. ԽԲ. գլ. ասում է. «Այս բարեպաշտն Համամ նոյնպէս զկործանեալ թագաւորութիւն տանն Աղուանից նորոգէր, որպէս Աշոտ Բագրատունի զՀայոց թագաւորութիւնն (1). որք ի մի-ում ժամանակի գործեցին։ Եւ նոյն ինքն Համամ ասէ առ Աստուած մեծապէս յանցանացն, որ վասն մնալի այսր կենացս զպարտ արեան եղբօրն ժողովեայ յանձն

1) Ասող. եր. 161 Ս. Օրբել. Բ. Հատ. եր. 42—43։



իւր, մեծագոյն բարեգործութիւնս առ եկեղեցիս և առ ամենայն կարօտեալս և չքաւորս առատազուարթ անսպառ կատարէր»։

Այդ խօսքերից պարզ երևում է որ Համամ կոչուած է և Յովհաննէս, որ Համամ-Յովհաննէսն ծագմամբ Բագ-րատունի իշխաններից է և ոչ թէ Աղուանից. պարզ երև-ւում է որ Համամ սպանած է իւր եղբայրը և նորոգած Աղուանից թագաւորութիւնը, և իւր յանցանքը քաւելու համար արած է շատ առատ ողորմութիւն և բարեկար-գութիւն. վերջապէս թէ Համամ թողած է և գրաւոր երկասիրութիւն։

Երկասիրութեանց մասին վկայում է և Վարդան Բարձ. եր. 117, «Համամ, որ գրեաց մեկնութիւն Առա-կացն և զՔերականին, և զՅոբայն «Ով է գայն» թարգմա-նեաց և զօրհնութիւնս՝ որ ի գլուխս Սաղմոսացն ասացեալ՝ գիր մի, և զամբիծսն՝ գիր մի»։ Համարեա թէ նոյնը կրկնում է և Ասողիկ, Գ. Գիրք Բ, գլ. «Եւ Համամ արե-ւելցի, որ զվերլուծութիւն Առակացն գրեաց և Յովբայ զՈվ է գայն թարգմանեաց և զօրհնութիւնսն, որ ի գլուխս Սաղմոսացն ասացեալ»։ Համամ թագաւորի գրածներն են.

1) Մեկնութիւն Առակաց Սողոմոնի.
2) » Յովբայ «Ո՞վ է գա».
3) » Կանոնագլուխ սաղմոսների.
4) » ԾԺԸ. Սաղմոսի «Երանեալ են ամբիծք».
5) Պատմութիւն Հայոց (որն ցարդ գտնուած չէ).
6) Վերլուծութիւն Քերականի.
7) Տաղական, որի տանց գլխատառերն կազմում են Հ. Ա. Մ. Ա. Մ։ Տաղական Համամայ որ է

«Հայր երկնաւոր, անկանիմ առաջի անոխակալ, ես
Որք անուրէնք կոչեցին զիս հաղորդել արեան մա-
հու, ես
Մեծ են յանցանք իմ, Տէր, զոր գործեցի յահէ

մահու հրամանաւ Խաղբակեան բռնաւորին, երադեցի հեղուլ զարիւն եղբաւրն, աղաչեմ զքեզ։

Աստուած ապաւէն և յոյս դարձելոցս ի քեզ, ևն։
Մեղայ, Տէր, մեղայ, Մանուէլ ձայնիւ գոչեմ.. ևն» (1)։

Ստուգիւ յայտնի չէ մեզ թէ որ թուին վախճանած է Համամ թագաւորն, միայն յայտնի է որ Համամ թագաւորի և իւր թագուհու գերեզմաններն գտնւում են Արցախի Վարանդայ գաւառի Աւետարանոց գիւղի Հին—հանգստարանում։ Թագուհու տապանաքարն չունի արձանագրութիւն, այլ միայն քանդակուած է քարի հարաւահայեաց երեսին թագուհու պատկերն։ Երևի թէ մաշուած է եղել թագաւորի շիրմաքարն և փխրուն, որը Մատան անուն քարեպաշտ ոմն 1241—1242-ին ձգած է նոր գերեզմանաքար, որի արձանագրութիւնն կարդացւում է խիստ դժուարութեամբ, որ է. «Ի ՈՂ.=(1241—1242).. ննջեց Հա.. թագաւոր Աղվց (Աղուանից)... ես տէր Մատան գրեցի. այս ով որ կարդէ. Աստուած ողորմի ասէ» (2)։

## ԽԶ. գլ.

Ատրներսեհ թագաւոր աղուանից.—Գագիկ Ինքնակոչ.—Յուհան կամ Յովհաննէս Գ.—Մոկացի Անանիա Հայոց կաթուղիկոսն Աղուանքում.—Մեծ ժողով Խաչենում.—Դաւիթ Զ։

Գրիգոր Բ. մեծ Իշխանի որդի Ատրներսեհ թագաւորն ամուսնանում է Համամ թագաւորի դստեր հետ, որից ծնւում է Իշխանիկ անուն մի

1) Մատեն, Ս. Էջմիած. ըստ Կարենեան ցուցակի թ. 1117։ Տպեալ 1896 Արարատ ամս. Ապրիլի մէջ։

2) «Արցախ» եր. 98. փորագրողի անհմտութեան պատճառաւ սխալ է ՈՂ. թուականն և ննջեցն. քանզի այս թուականն ոչ թէ



որդի, որ թագաւորում է իւր հօր մահից յետոյ։ Կան պատմագիրներ, որք վկայում են թէ Ատրներսեհ թագաւորն ևս խիստ աստուածասէր և գրասէր եղած է իւր պապ Սահակ-Սևադայի նման, նոյնպէս և Փիլիպպոս թագաւորն (1)։

18 տարի (2) յամառութեամբ գահակալելուց յետոյ վախճանւում է Ինքնակոչ Սահակ Բ. որին յաջորդում է իւր հարազատ, բայց յամառ, Ինքնակոչ Գագիկ։ Անանիա Հայրապետն յուշ է ածում Աղուանից իշխաններին Գագկայ անկարգութիւնը և բազմադարեան ընդունուած կանոնի դէմ գործած զեղծումը։ Օրինական կարգաւ ընտրւում է այնուհետև 42) Յուհան կամ Յովհաննէս եպիսկոպոսն, որ օրինասահման ճանապարհաւ ստանում է օծումը Տէր Անանիա կաթուղիկոսից և հովւում իւր բանաւոր հօտը, շնորհիւ Աղուանից հնազանդ և ունկնդիր իշխաններին։ Այսու ամենայնիւ Ինքնակոչ Գագիկն դարձեալ մնում է «անհնազանդ, խոտոր և խռովարար»։

Այս անկարգութեանց վերջ տալու համար Տէր Անանիա կաթուղիկոսն Հայոց ԵՂ.=941-ին ստիպեալ գնում է իւր գլխաւոր եպիսկոպոսներով և վարդապետներով և վանականներով միասին Խաչէն գաւառ։ Ի պատիւ Հայրապետին անձամբ դիմաւորում է Գրիգոր Բ. «Մեծ փառաւոր և ծերունազարդ իշխանն իւր եպիսկոպոսներով, վանականներով և բազմաթիւ եկեղեցականներով միասին

թագաւորի մահուան տարեթիւը ցոյց կը տայ, այլ նորա տապանաքարի փոխած տարեթիւը։

1) «Տիրանոյ վարդապետի Հայոց՝ պատասխանի հարցմանց թագաւորացն Աղուանից՝ Ատրներսեհի և Փիլիպէի։ Ընկալեալ ղհրամանս և զխնդիրս, Տէր, յոյժ փութով և յաւէտ բղձալի փափագանօք ուրախ եղաք ի սմա» (Հայկական Հին Դպ. եր. 793—794)։

2) Գօշ-Մխ. ամս 25։ Սահակ և Գագիկ եղբարցս անկարգութիւնները միջամտիջէ յիշում է և Ս. Օրբել Բ. Հատ. եր. 17—30։

և հիւրասիրում իր ապարանում Հայոց հայրապետը իւրայիններով հանդերձ։ «Եւ նոյն ժամայն հրամայեաց դրել մեծ իշխանն յամենայն գլխաւորս աշխարհին՝ առնուլ հրաման՝ առնել ժողով հանդերձ մեօք ի տան իւր ի Խաչենոյ գաւառի»։ Հաւաքւում են Արցախից, Աղուանքից և Մեծ-Սիւնիքից ժողովականները.

«Գագիկ կաթեցեալ կաթուղիկոսն.
Պետրոս ի նմանէ ձեռնադրեալն Գարդմանից եպիս.
Հայր Դաւիթ Փառիսոսոյ վանական.
» Պետրոս Կովախեղցի վանական.
» Մանաճիհր Յոհէփու վանից վանական.
» Գրիգորէս Նորավանից (Մեծ-Ս. բաղաց) վան.
» Սիմէոն Խանդոկան ( » » ) »
Սամուէլ երէց Սենեքերիմայ (Փառիսոսի) դրան քահանայ.
Սափան՝ Յողջագուրայ ս. Անանիանց քահանայ. (Մեծ-Սիւն) Ե (ի) Գրիգոր իշխանի կողմանէ.
Տէր Յովհաննէս Աթալայ եպիսկոպոս.
Տէր Յովհաննէս Մաքենոցաց »
Տէր Միքայէլ (1) Շիկաքարի վանական.
Տէր Սարգիս Գանձասարու (2) »
Տէր Մանուշակ Խաչենոյ »
Տէր Պօղոս Խանդլին վանից » (Մեծ-Սիւնեաց).
Տէր Գէորգ Ոսկեվանից (3) »
Տէր Արտավազդ Այծաքարայ » (Մեծ-Սիւնեաց).

1) Գուցէ սա է իմաստասէր կոչուած Աղուանից Միքայէլ եպիսկոպոսն, որ ունի ճառ ի Ս. Խաչն Վարագայ։

2) Այժմեան վանքի տեղում անկառոյց եղած է Գանձասար անուն ուրիշ վանք, ինչպէս երևում է։

3) Այժմ Ոսկեանց ուխտատեղի (տես Արցախ եր. 120)։



Սահակ քահանայ գիտնական որ կոչի Դարբնորդի.
Վարդան քահանայ.
Տիրանուն և Պետրոս և Պօղոս դրան քահանայք.
Հայր Ստեփան, որ կոչէր Բերական.
Եւ այլ բազում գլխաւորք, զորոց աւելորդ համարեցաք յիշատակել զանուանսն....»։

Սոյն ժողովում մերժւում են թէ ինքնակոչ Գագիկ և թէ Յունան օրինաւոր կաթուղիկոսն. ըստ որում ժողովը (որ կազմւած էր հոգևորական աշխարհական և իշխանական դասերից) խոստանում է կատարել նոր ընտրութիւն և նոր կաթուղիկոսացու։ Երկար մաքառում են նրանք պատճառաբանելով թէ Աղուանից ժողովուրդն աւելի նախահաւատ է Քրիստոսին քան Հայոցն, այսինքն որպէս թէ Եղիշ առաքեալն առաջ քարոզած է Աղուանքում, քան Թադէոս և Բարդուղիմէոս Առաքեալք Հայաստանում։ Անանիա կաթուղիկոսն, կամենալով ջրել այդ առարկութիւնը նոյն իսկ Կաղանկատուացու պատմութեամբ գրում է. «Խնդրէաք ի նոցանէ զՊատմութիւն Աղուանից՝ ուսանել զկիրըն լուսաւորութեան նոցա թէ զինչ պատճառաւ. քանզի նոքա (ինքնակոչներն և համախոհներն) այսր, անդր արծարծէին ունել զլուսաւորութիւն տանն Աղուանից նախադոյն լեալ քան զՀայոցս...։ Եւ ոչ եւսն մեր տեսանել, քանզի ցուցանէր զտունն Աղուանից՝ արքեպիսկոպոս և զտունն Հայոց պատրիարք. և զառ ինքեանս գիտելով զմասն խոնարհութեան գրաւեալ գաղէին զՊատմութիւնն Աղուանից» (1)։ Մի բարե-

1) Պարզ երևում է որ 941-ին արդէն ամբողջացած և կազմուած էր Կաղանկատուացու եռհատոր գիրքն միասին. պարզ է նաև որ Դասխուրանցին դեռ ևս կցած չէր նոյն գրքին Գ. Հատորը, քանզի վերջինս իր պատմութեան թելը հասուցած է մինչև 1000 թուականն։ Պարզ է նաև այն, որ ինքնակոչները երկար ժամանակ թագցրել և պահել էին Կաղանկատուացին, որպէս զի չյայտնա-

մինչ գրեթէ զայս ժամանակագրութիւնս մեր։ Ինչպէս Հրէայք «Որդի Դաւթի» էին անուանում Փրկչին, որ շատ դարերով յետոյ ծնած էր Դաւթից, նմանապէս Ս. Գրոց աշակերտ լինելով Ուռհայեցին՝ բարեպաշտ Վաչականի (Գ-ի) որդին է անուանում Գրիգոր Բ. մեծ իշխանը (Գաշակատակ առնելով, ինչպէս և Գուրգէնը՝ Գագիկ կոչելով)(1)։

Պատմութիւնից հաստատ գիտենք որ Գրիգոր Բ. մեծ իշխանից ծնուած էր Փիլիպպէ և իւր թագաւորանիստը հաստատած Գարդմանքում։ Հետևելով Ուռհայեցու պատմածին՝ երևում է 961—1085 թուականին Փիլիպպոս թագաւորից ծնուած է.

Սևադա, Սևադայից ծնուած է.

Սենեքերիմ թագաւորն, Սենեքերիմից ծնուած է Գրիգոր թագաւորն։

Տէր Յովհաննէս Գ-ին յաջորդում է 44) Տէր Պետրոս կամ Պեղենոս Ա. Գարդմանի (՞ր Գարդմանի) առաջնորդութիւնից։

## ԽԹ. գլ.

Դեղմ ցեղի եւ Ռուսաց արշաւանքներն.— Տէր Մովսէս Դ. Փառիսոսցի.— Խաչենի, Փառիսոսի, Գարդմանի եւ Ձորագետի թագաւորներն.— Տէր Մարկոս Ա. այր Աստուծոյ:

Անակնկալ արշաւում է Պարտաւի վրայ Դէլէմէնիկ (2) կոչուած ցեղն Սալար անուն մի զօրավարի առաջնորդութեամբ և խլեյն գրաւում քաղաքը։

1) Մեր հեղինակած «Ծննդ. Ծննդաբանութեանց» ի մէջ ընդարձակօրէն բացատրած ենք այս կէտը՝ համեմատելով սոյն թագաւորաց անունները և ժամանակը Բաղաց թագաւորաց հետ։

2) Մարաց ցեղի մի մասն՝ ապստամբելով Արաբներից՝ ամբա-



Նուսից մրկլի պէս հասնում է Ռուսաց զօրքն և հալածում Դէլէմէնիկները։ Մտնում է սարսափելի արիւնութեան Պարտաւ քաղաքն, անկարող լինելով դիմադրել անսպասելի խուժմանց։ Ռուսաց զօրքն վեց ամիս մնալով անխնայ կոտորում են կիները և մանուկները, կողոպտում են քաղաքը և հեռանում (Դուխ. Գ. Հատ. ԻԲ, գլ.):

Տէր Պետրոս Ա. 16 տարի (1) պաշտօնավարութիւնից յետոյ վախճանում է, որին յաջորդում է 45) Տէր Մովսէս Դ. Փառիսոսի վանքի վանահայրն։

Հարկաւոր ենք համարում տալ մի քանի ամենակարևոր տեղեկութիւններ.

Ա. Այդ միջոցներում Խաչենում թագաւորում էր Իշխանակ թագաւորն, որ Սմբատեան թագաւորի որդին էր. Փառիսոսում թագաւորում էր Գրիգոր թագաւորն, որ Սենեքերիմ թագաւորի եղբայրն էր, որոց քոյրն Կարուց Մուշեղ թագաւորի կինն էր (2), Գարդմանում թագաւորում էր Փիլիպպոս թագաւորի որդի Սևադա թագաւորն և Ձորագետում՝ Գուրգէն։

Բ. Վաղուց արդէն խնամխական կապ հաստատուած էր Աղուանից և Բաղաց (Մեծ-Սիւնեաց) իշխանական տանց մէջ։ Վարազ-Տրդատի դուստր Շահանդուխտ հարսնացած էին Մեծ-Սիւնեաց մի իշխանի համար (Ս. Օրբել. ԼԶ. գլ.)։ Աղուանից Ջիւանշիր իշխանն ամուսնացած էր

ցած էր Դելի կամ Դելումն Բուրդ ժողովրդեան մէջ, որ բնակւում էր Կասպից ծովի հարաւային լեռներում Գոլզան գետի ափերում, որ հոսում է Կասպից ծովի մէջ։ Այս քրդերն շատ տարիներ առաջ արշաւած էին հիւսիսային ցեղերի վրայ (Սեր. եր. 230—232. Թովմ. Արծ. եր. 302—303)։ Ահա այս է Դէլէմէնիկ կոչուածն։

1) Կիրակոս ասէ վիճաբանութ Գոշ-Մխ. ԺԲ. «Սորա ի կենդանութեան հրաժարեալ յաթոռոյն՝ յաջորդ է յաթոռ իւր Տէր Մովսէս վանական Փառիսոսայ»։

2) Ասող. եր. 19?։

Արևմտան տոհմից Խոսրովանուշ օրիորդի հետ։ Սևադա մեծ իշխանի դուստր Շահանդուխտն հարս տարած էին Մեծ-Սիւնեաց Սմբատ իշխանի համար, որ թագ է ստանում շնորհիւ Աղուանից իշխաններին (Ս. Օրբել. Բ. Հատ. եր. 43) Մեծ-Սիւնեաց Տարսայիճ իշխանի դուստր Սոփան հարս բերած էին Գրիգոր Գ. իշխանին և Մամքանը՝ Ջալալ-Դօլայի համար, որպէս տեսնելու ենք յետոյ։ Մեծ-Սիւնեաց Սենեքերիմ թագաւորի որդի Գրիգոր թագաւորն կին առած էր Աղուանից Սևադա իշխանի դուստր Շահանդուխտը, բայց անզաւակ լինելու պատճառաւ բերում են Շահանդուխտի եղբայր Յովհաննէս-Սենեքերիմ կոչուածը և որդեգրում, որն լինում է ամենադովելի թագաւորն (Ս. Օրբել. Բ. Հատ. եր. 62)։

Գ. Սենեքերիմ և Գրիգոր եղբայր թագաւորներ գահակալուած են Արցախի Փառիսոս քաղաքում մօտաւորապէս 970—1004 թուականն. (Ասող. եր. 198)։

Սենեքերիմ և Գրիգոր թագաւորներ հայր և որդի, որք թագաւորեցին Բաղաց և սիւնականին 1090—1166 թուականներ (Ս. Օրբել. Բ. Հատ. եր. 62—81)։

Սենեքերիմ և Գրիգոր հայր և որդի թագաւորներ թագաւորած են Դարբանդում մօտաւորապէս 1035—1086 (Մատ. Ուռհայեցի եր. 279)։

Տէր Մովսէս Գ. 6 տարի հայրապետութիւն անելով վախճանւում է, որին յաջորդում է 46) Տէր Մարկոս Ա. այր Աստուծոյ։



## ԽԹ. գլ.

Դաւիթ անհողին եւ Գագիկ Ա. թագաւոր Բագրատունի.—Դաւիթ-անհողին թագաւոր եւ Փայտուն Ամիրա.—Վախճան Փառիսոսի Սենեքերիմ եւ Գրիգոր թագաւորաց.—Տէր Յովսէփ Գ.—Սելջուկեանների ծագումն եւ զօրանալն.—Պետրոս-Գետադարձ կրկին կաթուղիկոս Հայոց.—Ապուսուարի արշաւանքն.—Գրիգոր իշխան Փառիսոսի.—Մամ կին պարսիկ.—Փայտնի արշաւանքն.—Գանձակի գրաւումն.—Տէր Մարկոս Բ.

Գուրգէն թագաւորի որդի Դաւիթ-անհողին թագաւորն՝ իւր Սմբատ եղբօր հետ միասին՝ տիրում է Տաշրայ և Վրաց դաշտի կողմերին. պատրաստում է իւր համար աթոռանիստ Շամշուլտէ քաղաքադղեակը. փութով տիրում է և Դմանեաց (Վրաստանում) քաղաքին, հնազանդեցնում է և Տփխիսի ամիրան իւր քաղաքովն։ «Եւ ի պատանեկութեան տիս պատանի եղեալ Դաւիթ շնորհաշուք հասակաւ և վայելչութեամբ՝ իմաստնանայր հանճարով, հաճոյ Աստուծոյ և մարդկան, արիացեալ քաջութեամբ, յաղթող եղեալ ամենայն հակառակորդաց իւրոց» (Ասող. եր. 256—257)։ Իսկ եր. 279—280 ասում է նոյն հեղինակն. Դաւիթ-անհողնի անհնազանդութեան պատճառաւ՝ Բագրատունի Գագիկ Ա. թագաւորն յարձակւում է Դաւիթ-անհողնիս սահմանների վերայ, քանդում և աւերում բոլոր գաւառները, և շինում իւր անուն կրող Գագայ բերդը՝ Գագայ ս. Սարգսի մօտ։ Սակայն Հայոց Սարգիս կաթուղիկոսի միջնորդութեամբ հաշտուում է Գագիկ թագաւորն Դաւիթ-անհողնի հետ՝ վերջինիս հնազանդութիւն խոստանալովն։

Գանձակի Փադլուն ամիրան աճապարում է պատերազմել Գուրգէն թագաւորի որդի Դաւիթ-անհողին թագաւորին հետ 990 թուին, բայց թագաւորի զօրաց ուժգին յարձակումից սրախողխող և գետնատէծ է լինում Փադլոնի զօրքն և ինքն Փադլունն հազիւ ազատւում է մազապուր փախչելով (Ասող. եր. 156—157)։

1004 թուին վախճանւում են Փառիսոսի երկու թագաւոր եղբայրներն-Սենեքերիմ և Գրիգոր, որք Հայկական բուն Սւանշահիկ տոհմի Գնտուեան ցեղից էին, որոց գաւառները բաժանում են իրենց մէջ Գագիկ թագաւորն և Գանձակի Փադլուն ամիրան (Ասող. եր. 283)։

Վախճանւում է Տէր Մարկոս Ա. և յաջորդում է
**47)** Տէր Յովսէփ Գ.։

Օսմանեան պատմութիւն (Ա. Հատ եր. 1—5 Թարգ. Գ. Այվազ.) ասում է՝ թէ Սելջուկեան և Օսմանեան ցեղերն ծագած են Յարեթի թոռն Թիւրքից, ուստի իրենց ազգը անուանում են Թիւրք և իրենց նախկին բնակութեան տեղին՝ Թիւրքեստան, որի հիւսիսային սահմանն է Սիբերիա, արևելեանն՝ Չինաստան, հարաւայինն՝ Թաթարստան, և արևմտեանն՝ Խարազմների երկիրն։ Ասում են որ Թիւրք նահապետից ծնուած է Գայան, Գայանից՝ Գարան (Սև), Գարայից՝ Ուղուզ կամ Օղուզ-խան։ Օղուզ-խանից ծնւում են վեց որդի—Կիւն (Արեգակ)-խան, Այ (Լուսին)-խան, Եըլդըզ (Աստղ)-խան, Գեօգ (Երկինք)-խան, Դաղ (Սար)-խան և Դէնիզ (Ծով)-խան։ Սոյն վեց որդիներից իւրաքանչիւրն՝ որպէս թէ՝ ծնած է չորս որդի, յորոց սերած են Թիւրքեստանի քսան և չորս ցեղերն։

Սելջուկեաններն, որ Տուքաքա Սելջուկ որդու անուամբ Սելջուկեան կոչուեցան, սերած են համարւում Դանիզ-խանից։ Սելջուկեաններն ընդունելով Մահմետական կրօնը և զօրանալով Ժ. դարուց յետոյ, հետզհետէ տիրում են Կասպից ծովից մինչև Միջերկրական ծովը, գրաւում



են Պարսկաստանը և հիմնում թագաւորութիւն։ Այնուհետև գրաւում են Դամասկոս, Հայաստանի մեծ մասը, Աղուանից երկրի մի մասը և Փոքր-Ասիայի արևելեան մասը։ Սոյն ցեղի գլխաւոր իշխողներն եղած են Մահմուտ, Տուղրիլ-բէկ, Ալփասլան և Մէլիք-Շահ, ևն։

1038-ին հրաւիրւում է Աղուանից Տէր Յովսէփ Գ. կաթուղիկոսն (1), որ իւր եպիսկոպոսներով գնում է Անի քաղաքն, նախագահում գումարուած մեծ ժողովին և և համոզում է կրկին նստեցնել Հայաստանի հայրապետական գահի վերայ գահընկեց եղած Տէր Պետրոս-Գետադարձ կաթուղիկոսը։ Հոգևորականներից և իշխաններից կազմուած խառն ժողովն գահընկեց է անում Դիոսկորոս ապօրինի կաթուղիկոսը և վերստին նստեցնում Տէր Պետրոս Գետադարձը։ Այնուհետև խաղաղանում է ժողովրդեան յուզումն։

1040-ին Ապուսուար ամիրան 150,000 զօրքով արշաւում է Աղուանից երկիրն և գրաւում Պարտաւ և Գանձակ քաղաքները և շատ բերդեր։ Մի տարի նստում է Գանձակում, նուաճում երկիրը և պատրաստւում որ առաջիկայ տարում արշաւէ Դաւիթ-անհողնի վերայ։ Դաւիթ-անհողին հաւաքում է իւր զօրքը, որին միանում է Բագրատունի Յովհաննէս թագաւորի յղած 3000, Դարբանդի Սենեքերիմ թագաւորի յղած 2000, և Ափխազաց թագաւորի յղած 4000 ռամկական զօրքերն ևս։ Դաւիթ-անհողին հրաւիրում է և Աղուանից Տէր Յովսէփ Գ. կաթուղիկոսը իւր ամեն եպիսկոպոսներով, վարդապետներով, վանականներով, քահանաներով և սարկաւագներով, որ միասին խաչերով, խաչվառներով և աւետարան-

1) Մատ. Ուռհայեցի եր. 89։ Վարդ. Բարձ. եր. 132 փորձագրութիւնս տալիս են Յովսէփ Գ-ին, (Վարդան աւելացնում է։ «Անձաւ բռնութեամբ (Տէր Պետրոս) և արգելաւ ի Ծջնի») իսկ Միր. եր. 50 Նախագահելը յատկացնում է Աղուանից Տէր Յովհաննիսին։

ներով միանում են Դաւթի բանակին և ճակատում թըշնամու դէմ. Հնչում են պատերազմի փողերն, զարկւում են ճակատներն, բորբոքւում են կիրքերն և վառւում են սրտերն յաղթութեան կրակով. յաղթում է Ալփասլան իւր ահռելի բանակով և ճեղքով յետ փախչում. իսկ Դաւիթ-անհողին թագաւորն իւր զօրքով հինգ օր հալածելով կոտորում է թշնամու զօրքերից շատերը, և մնացածները արտաքսում մինչև Պարսկաստան (Մատթ. Ուռհ. եր. 92—96, Սմբատ սպար. եր. 37—38).

Դաւիթ-անհողին թագաւորն շինում է Լօռի բերդը և ուրիշ 12 բերդեր (Վարդ. Բարձ. եր. 142).

Փառխոսի Սենեքերիմ և Գրիգոր թագաւորների մահից յետոյ, թագաւորներիս խնամում քրոջ այրն՝ Հասան, որ Խաչենի Գեղամեան Առանշահիկ իշխանների ցեղից էր, բնակութիւն է հաստատում Փառխոս քաղաքում (1). Հասանի որդին է Գրիգոր իշխանն, որի մասին գրած է Վարդան Բարձ. եր. 134—135. Մամ անուն մի կին գալիս է Պարսկաստանից իւր երեք որդիներով Փառխոսի Գրիգոր փառաւոր իշխանի մօտ. Որդիքն պատանդ են տալիս իւրեանց մայրը և առնում Շօթ և Շամիրամ բերդերը Գրիգոր իշխանից. բարեկամանալով Գանձակի Ալ-Աղիզ ամիրայի հետ՝ սպանում են նոյն ամիրան և տիրում Գանձակին. Երեք եղբայրներից կարճ միջոցում մեռնում է մեծն՝ Պարղուան, որի տեղ յաջորդում է միւս եղբայրն՝ Լէլքարի և առնում Սալարից Պարտաւ

1) Հնախ. տեղեկ. Հաղբատ. եր. 23 և 25 գրուած է. «Սեւադայ և Սենեքերիմ թոռն աւագ-Սենեքերիմայ, եղբարք Խաթունին տիկնոջ Հասանայ յազգէն Գեղամեանց. Իսկ աւագ-Սենեքերիմն էր վերջին արքայն Սիւնեաց վախճանեալ իբր 1104 ամին»—Մեծ-Սիւնեաց-Սենեքերիմ թագաւորն սպանուած է ոչ թէ 1104-ին, այլ 1075-ին (Վարդ. Բարձ. եր. 137—138. Ս. Օրբել. Ա. Հատ. եր. 63—64., Մխ. Այրիվանեցին, եր. 60, սպանումը դնում է 1094-ին:



և Շամքոր քաղաքները. Սրանց եղբայրն՝ Փադլուն՝ որսի ժամանակ սպանում է իւր Լէլքարի եղբայրը, առնում իշխանութիւնը. Գրիգոր իշխանի որդի Փիլիպպէն, իւր հօր մահից յետոյ՝ տեսութեան է գնում Փադլունի մօտ, վերջինս բռնում և կապում է Փիլիպպէն, որից և առնում Շօթ և Շամիրամ բերդերը. ապա կանչելով իւր մօտ Գանձակ քաղաքի տէր Համամայ որդի Գագիկը, որը սպանելով առնում է նորա երկիրը. Եւ այսպէս զօրանալով տիրում է Խաչենի, Գորոզի (Մեծ-Սիւնեաց մի գաւառի անունն է) և Սևորդեաց. և սկսում է պատերազմել Աղուանից Կիւրիկէ թագաւորին հետ.

Վախճանում է Տէր Յովսէփ Գ. և գահակալում է
48) Տէր Մարկոս Բ..

## Ծ. գլ.

Բաղաց (Մեծ-Սիւնեաց) Սենեքերիմ թագաւորի սպանումն.—Տէր Ստեփաննոս Ա.—Հայոց Բարսեղ հայրապետի ձեռնադրութիւնն.—Փառխոսցի Յովհաննէս—սարկաւագ վարդապետի բռնակալն.—Պուղայ զօրավարի արշաւանքն.—Կիւրիկէ Ա. թագաւորն Մելիք-Շահի մօտ.

1075-ին Գանձակի Փատլուն կամ Փադլուն ամիրան յղում է Գրիգոր Մագիստրոսի որդին՝ Վասակ Պահլաւունին Մեծ-Սիւնեաց այս է Բաղաց և Կապանին (այժմ Ղափան) անառիկ ամրոցն Սենեքերիմ թագաւորի մօտ՝ ամեն զօրքով, որը խաբէութեամբ հանելով բերդից սպանեցին (Վարդ. Բարձ. եր. 137—138). Իսկ Ս. Օրբելեան Բ. Հատ. եր. 63—64 պատմում է այսպէս. Իսմայէլացիք (Սելջուկներն) «Ընդ գեղեցիկ և ամուր թագաւորութիւնս Բաղաց, զոր խոչ մեծ համարէին ինքեանց, և եկեալ ամիրայն Պարտաւայ և Ռանայ և Գանձակայ բազում զօրօք գայ ի պատերազմ ընդ Սենեքերիմայ . . .

և տեսաւ (ամիրան) զի անհնարին էր ի մարդկանէ (առնուլ զամրոցն) յուղարկէր Գրիգոր իշխանն Անեցի... առ Սենեքերիմ արքայն... Գրիգոր մտեալ առ Սենեքերիմ և մեծամեծ երդմամբ հաւանեցուցանէ զնա գալ առ ամիրայն, որք և եկին ի միասին... և առեալ ուխտին... տուան զԹագաւորն (Սենեքերիմ)։ Իսկ նոյն հատ. եր. 76—78 ուրիշ տեսակ է պատմում։ Մխ. Այրիվանեցին եր. 60, Սենեքերիմ Թագաւորի սպանումը դնում է 1094 թուին։

Տէր Մարկոսի մահից յետոյ 1077-ին Աղուանից համար կաթուղիկոս է ձեռնադրւում Հաղբատում 49) Տէր Ստեփաննոս Ա. (Վարդ. Բարձ. եր. 139)։

Մխիթար Այրիվան. եր. 60, Մատթէոս Ուռ. եր. 265—266, վկայում են որ 1081-ին Աղուանից Կիւրիկէ Ա. Թագաւորն, Աղուանից Ստեփաննոս Ա. կաթուղիկոսի ձեռնով Հաղբատայ վանքում կաթուղիկոս է ձեռնադրել տալիս Հայոց համար Բարսեղ եպիսկոպոսը և իւր դրան երէց Սարգիսը՝ եպիսկոպոս (¹)։ Գրիգոր Վկայասէրի և Բարսեղ կաթուղիկոսի ձեռնադրութեան մասին հաւանած ենք մէջ բերել հետեւեալ համառօտը. «Որովհետեւ Գրիգոր Վկայասէրն Կիլիկիայի լերանց վերայ էր և Մեծն-Հայաստան. առանց կաթուղիկոսի, ուստի արեւելեան Հայք խնդրեցին Վկայասէրէն, որ կամ ինքն գայ Անիի կաթուղիկոսական աթոռը նորոգէ և կամ հաճութիւն տայ իւր տեղապահ Տէր Բարսեղը կաթուղիկոս ձեռնադրել։ Վկայասէրի հաճութիւնը ստանալով Արեւելեան Հայք կը հրաւիրեն և Աղուանից Ստեփաննոս և նորա ձեռնով կաթուղիկոս կօծեն Հաղբատայ մէջ զՏէր Բարսեղ» (Եկեղ. Պատ. Մեծ. վարդ. Մուրատեանց եր. 374—375)։

Մխիթար Այրիվ. եր. 60, ասում է Փառխոսցի Յով-

1) Տես. Յովսէփ կաթուղիկոսին է տալիս այս ձեռնադրութիւնը։



հաննէս-սարկաւագ վարդապետն 1085 թուին «արար անչափ տումար ըստ այլոց ազգաց» որ 1085-ին լինում է «Սկիզբն նոր թուականին». այս է «Փոքր թուականին» առաջին տարին (¹)։

1085-ին ըստ վկայութեան Ուռհայեցու եր. 279, տակաւին կենդանի էր Դարբանդի Գրիգոր թագաւորն, որ Սենեքերիմ թագաւորի որդին է, Սենեքերիմն էլ Սեւադայի որդին, Սեւադան էլ Փիլիպպոսի։

1088—1089 Մելիք-Շահի հրամանաւ Պուզա ամիրան, որ Սելջուկեան զօրավար էր, առնում է Գանձակ քաղաքը Փադլոնեաններից, որ կոչւում էին Շատադին (Վարդ. Բարձ. եր. 141)։ Իսկ Մատթէոս Ուռ. եր. 286, գրում է, Պուզան ժողովում է Պարսից ամեն զօրքերը Գանձակ քաղաքի վերայ և սաստիկ պատերազմաւ փորելով ձգեցին պարսպի մի բուրգը, առին Գանձակ քաղաքը և կոտորեցին քաղաքի բնակչաց փոքր մասը։ Պուզան արգելեց զօրքը կատարած աւերուց և արաւ խաղաղութիւն։ Եւ Աղուանից Տէր Ստեփաննոս կաթուղիկոսն, որ Գանձակումն էր, ազատուեցաւ Աստուծոյ օգնութեամբ. վասն զի պահպանուեցաւ հայ զօրքերիցն, որք Պուզայի հետ էին։

Սելջուկեան խաղաղասէր Մելիք-Շահ թագաւորին շատերն էին գնում այցելութեան։ Այցելութեան է գնում Խորասան նաեւ Աղուանից Կիւրիկէ Ա. թագաւորն և դառնում պատուով (Վարդ. Բարձր. եր. 139—140, Սամ. Անեցի եր. 118)։

2) Տես. եր. 63, պատմում է նոյնը։

## ԾԱ. գլ.

Կիւրիկէ թագաւորի վերջին գործերը.—Տէր Յովհաննէս Ե.—Խըզլ ամիրայի արշաւանքը.—Կիւրիկէ թագաւորի որդիքը.—Սարգիս Քուրդ իշխանի գերդաստանը.—Վրաց Գէորգի թագաւորի նուաճումները եւ պատերազմները.—Ապլսուարի որդի Փադլոն.—Ելտիգուզ զօրավարի արշաւանքը.—Տէր Գրիգորիս Բ.—Գօշ-Մխիթարի «Ճառ կոր. Աղուանից» վերջը։

Աղուանից Կիւրիկէ Ա. թագաւորն, որ չէինել տուած էր Հաղբատ և Սանահին վանքերը, իշխում էր Արցախի Գարդման, Փառիսոս, Կողթ, Բուսաի կամ Բուս, Ջուէ (Ղազախ) և Լոռի գաւառներին։ Հետզհետէ զօրանում էին Վրացիք և աշխատում էին տիրել և Աղուանից երկրին, որոց դէմ շարունակ մաքառելով Կիւրիկէ թագաւորն մինչև իւր մահուան օրն պահպանում էր իւր իշխանութեան տակ եղած գաւառները, խուռանքները և հայրենի հաստատութիւնները (Կիր. եր. 89)։

1103-ին վախճանում է Աղուանից Տէր Ստեփաննոս Ա. կաթողիկոսն Մեծ-Սիւնիքում և ամփոփւում Վահանայ վանքում (Ս. Օրբել. Ա. Հատ, եր. 287 և Մատ. Ուռ. եր. 365)։ Հայոց Տէր Բարսեղ հայրապետն Գանձակում գումարում է ժողով, ուր ընտրում և ձեռնադրում է 50) Տէր Յովհաննէս Ե. որ եղբայրն էր հանգուցեալ Տէր Ստեփաննոսի։ Մատթէոս Ուռ. նոյն երեսում ասում է՝ Տէր Յովհաննէսս կարգալոյծ եղաւ «վասն խոտոր վարուց իւրոց»։ Գօշ-Մխիթար ոչինչ չէ ասում սորա մասին. Կիրակոս, եր. 116, ընդհանրապէս ասում է «Տէր Յովհաննէս ամս յիսուն»։ Բայց հարկ է յայտնել որ Տէր Յովհաննէսս պաշտօն վարած է ոչ թէ յիսուն, այլ երեսուն տարի։



1105-ին Սկիւթացի Խըզլ անուն բռնաւորն-աւերում է Լոռի քաղաքը և այրում Հաղբատ և Սանահին վանքերը (Սամ. Անեցի եր. 121)։ Իսկ Կիրակոս «Յայնոսիկ ամս մարտն պատերազմի զքարեյարմարութիւն աշխարհիս ի բաց կորեցին... հասանէս արեանց իբրև զուխիչ լինէր ոչ միայն զինակիր նահատակաց, այլ և առհասարակ ազանց և գաւառաց (Հն. տեղ. Հաղ. եր. 8)։

Կիւրիկէ Ա. թագաւորի մահից յետոյ իւր երկու որդիքն՝ Աբաս թագաւորն և Դաւիթ թագաւորազն, նեղուելով (1) Վրացիներից, գնում են Առանի (Աղուանից երկրի) իշխանների մօտ և առնում Տաւուշ ամրոցը և Մածնաբերդը և ուրիշ տեղեր և այնտեղ թագաւորանոց։ Աբաս թագաւորն բնակում է Տաւուշ (2) բերդում և Դաւիթ թագաւորազն Մածնաբերդում (3)։

Բաւական ժամանակ առաջ Քուրդ ազգաւ մի իշխան գալիս է Զօրագետի թագաւորի մօտ (որ Բագրատունեաց ազգից է լինում) իւր գերդաստանով, հաւատում Քրիստոսին և մկրտուելով անուանւում Սարգիս։ Սորա՝ Սարգսի համար բնակութեան տեղ են շնորհում Խոժոռնիք։ Սարգիս իշխանից ծնւում է։

Զաքարիա, Զաքարիա իշխանից՝
Վահրամ. Վահրամ իշխանից՝
Սարգիս Բ. Սարգիս Բ. իշխանից՝

Զաքարէ և Իւանէ Սպասալար եղբարք։ Բայց երկու եղբարքս սովորաբար արիադոյն էին, վասն որոյ հետզհետէ յառաջանում էին պատուով և աստիճանով։ Ինչպէս Սարգիս Բ. նոյնպէս Զաքարէ և Իւանէ մտնում են Վրաց զինուորական ծառայութեան մէջ (Վարդ. Բար. 181. Կիր.

1) Կիր. եր. 89 «Դառնայք ի Վրաց». Վարդ. Բարձ. եր. 142։
2) Արցախ եր. 357—358։
3) » եր. 302։

եր. 94—95)։ Ցետոյ Վրաց Թամար թագուհին տալիս է Լոռի քաղաքը Զաքարէ և Իւանէ եղբայրց։

1118-ին Վրաց Գէօրգի թագաւորի որդի Դաւիթ թագաւորն զօրանալով առնում է պատերազմաւ Տփխիսը Պարսիկներից, սաստիկ հարուածներով զարկում՝ Գանձակի նոր գահակալած Մէլիք-Սուլթանը (1)։ Տփխիսում կախաղան բարձրացնելով կոտորում 500 պարսիկ. գրաւում Անի քաղաքը ներսի հայոց ձեռնտուութեամբ. բռնում է Մանուչէ իշխանի որդի՝ Ապլասարը իւր որդիներով և տանում իւր երկիրն։ Դաւիթ թագաւորս, ընդարձակելով Վրաց սահմանները, առնում է Գագ, Տէրունական, Տաւուշ, Կայան. և Կայծօն (2) ամրոցները և նուաճում Աղուանից երկրի դաշտային մասը, այս է Սելջուկեաններից առնում է Գագայ դաշտից մինչև Շամօրան. (Վարդ. Բարձ. եր. 156—157 և Մատ. Ուռ. եր. 447)։

Միևնոյն թուին Ապլասարի որդի Փադլոնն առնում է Դուին և Գանձակ քաղաքները և լինում բարւոք խնամակալ, նոյնպէս խաղաղութիւն անելով և իւր իշխանութեան տակ եղածներին՝ լինում է անուանի (Վարդ. Բարձ. եր. 158)։

1130-ին անօրէն ազգերից հաւաքուած անհամար ձիաւորներով լցւում է Գագայ դաշտն, որք կամենում են այրել այն Ս. Խաչը, որը սուրբն Մեսրոպ յանուն սրբոյն Սարգսի կանգնած էր Գագայ սարի վերայ։ Բայց Աստուծոյ բարկութիւնից խելացնորւում է զօրքն և կոտորում մէկզմէկ. գալիս է Վրաց Դեմետրէ թագաւորն և առնում սպանուածների բոլոր կարասիները (Վարդ. Բարձ. եր. 161)։

1) Վարդ. Բարձ. եր. 156—157։

2) Վերջին երկու բերդերս գտնւում են Հաղբատի կողմերում, առաջի բերդերի մասին տես Արցախ եր. 366 և 357—359։



1130-ին վախճանում է Աղուանից Տէր Յովհաննէս Ե. կաթուղիկոսն, որին յաջորդում է 51) Տէր Ստեփաննոս Բ. որ մի և կէս տարի միայն պաշտօն վարելով վախճանում է «ի սխս պատանեկութեան»։ Այս տեղում գրած է Գոշ-Մխիթար հետեւեալը, որը կարեւոր համարուեցաւ մէջ բերել ամբողջապէս։ «Ապա յետ վախճանելոյ նորա (Տէր Ստեփաննոս Բ-ի) զամս ը. (8) առանց հայրապետի եկաց նահանգս Աղուանից, յորում և ոչ գոյր ևս մի եպիսկոպոս, մինչ զի ընտրեալն ի քահանայութիւն յայլ գաւառ տանէին առ ձեռնադրութիւն . . . սպառեցաւ իւղն օծութեան . . . իսկ յետ անցանելոյ ը. ամացն ի չձը (1139—1140) թուականին Հայոց, ի Հայոց Սահակ աստուածընկալ եպիսկոպոս ի դրանէ սրբազան հայրապետին տեառն Գրիգորիսի Հայոց կաթուղիկոսի, որ ըստ հրամանի նորին և առաքմանն եկեալ ի գաւառն Աղուանից ի խնդրոյ և ի ձեռնադրութենէ Գրիգորոյ աշխարհիս մերոյ, որ էր աշակերտ Դաւթի փառաւոր և մեծահռչակ վարդապետի։ Արդ ի գալ Տէր Սահակայ յաշխարհս Աղուանից, ժողովէր զամենեսեան առհասարակ ի տուն թագաւորին Աբասայ Բագրատունւոյ՝ որդւոյ Կիւրիկէի արքայի, որ ժողովեալ ամենեցուն առաջի նորա ի բերդն՝ որ կոչի Տաւուշ, ուր և ժողովեալ հարանց սրբոց և եպիսկոպոսաց, թագաւորն Դաւիթ՝ եղբայր (1) Աբասայ թագաւորին, Տէր Ստեփաննոս որդի Կիւրիկէի նոցունց եղբայր, Սարգիս վարդապետ աշակերտ Դաւթի վարդապետի, Գրիգոր արհի եպիսկոպոս Գանձակայ, Սահակ եպիսկոպոս աշակերտ Սարգսի վարդապետի, Ստեփաննոս եպիսկոպոս Կողթ գաւառի և քաղաքին Շամքորոյ. Սարգիս եպիսկոպոս Շամիրամաձորոյ, Սամուէլ եպիսկոպոս Կաբրոյ (Կապաղակայ) Հայր Սարգիս Խամշի վանից. իսկ գլուխ ժո-

1) Կիր. անուանում է Դաւիթ իշխան (թագաւորազն)։

ղուլոյն էր Սահակ զրան եպիսկոպոս Հայոց կաթողիկոսին և Սարգիս ճգնազգեաց երանելի վարդապետ։ Եւ այսպէս հանդիսիւ և հռչակաւոր կոչմամբ ձեռնադրեցին կաթողիկոս Աղուանից 52) զԳրիգորիս՝ հօրեղբօրորդի տեառն Ստեփաննոսի (Բ-ի) Աղուանից կաթողիկոսի։ Եւ էր Գրիգորիս՝ յորժամ ձեռնադրեցաւ՝ և նա էր ի տիս պատանեկութեան՝ գոլով որդի Գէորգայ և եղբօրորդի Կարճեայ թոռն Կարապետին։ Իսկ որ ժողովեցան ի միասին էր տօն Պենտեկոստէին և գալուստ Հոգւոյն Սրբոյ յանուան տէր։ Եւ ապա յետ այսորիկ չուեցին ժողովեալքն յիւրաքանչիւր տեղիս իւր․ ապա դարձեալ ի տօնի Վարդավառին ժողովեալ ամենեցուն ի միասին ի բերդն՝ որ ասի կաթողիկոսի Բար (1)։ Նոյնք վերստացեալ եպիսկոպոսունք և վարդապետք և հարք սուրբք և այլ վարդապետք քան զառաջինն յոլովագոյն քահանայք․ յորում աւուր և ձեռնադրեցին երկու եւս այլ եպիսկոպոս և օրհնեցին զիւղն ծնութեան յոլովագոյն, բազում և առատ ընծայմամբ բաշխեցին ընդ ամենայն տեղիս, և այսպէս խրախութեամբ հոգևորական կատարէին մինչև ցաւուրս սրբոց Խաչին զուարճանալով ի միասին ի փառս Աստուծոյ։ Այս տեղ վերջացաւ Գոշ Մխիթարի «Ցարք հայրապետացն Աղուանից»։

Կիր. եր. 116—117, ասում է. «զամս քառն և հինգ» առանց կաթողիկոսի մնաց Աղուանից երկիրն, դուցէ գրչագրի սխալ է. բայց աւելացնում է. «Եւ յորժամ եղև այր կատարեալ կաթողիկոսն Գագիկ (Գրիգորիս Բ.) նա խնամովք աստուածայնովք փոխեցաւ յաշխարհէս»։

1) Տես Արցախ եր. 301 Բարաձորն և իւր 44 ծանօթ.



## ԾԲ. գլ.

Երկրաշարժ.—Զօլի ամիրայի արշաւանքը.—Իշխանական յաջորդութիւնները.—Դաւիթ իշխանի ննջումը.—Ելչկուզի արշաւանքը.—Տէր Բժշկեն.—Զրոճնեաց հանդես.—Տէր Յովհաննես Զ.—Զաքարէ Սպասալարի յաղթութիւնները և մահը.—Իւանէ-Զաքարէի յաջողութիւններն։

1140-ին սաստիկ երկրաշարժից կործանւում է Գանձակ (1) քաղաքն և փլւում է Կեփաս (այժմ Քեապազ (2) սարն, լցնում ձորը և գոյացնում Սրհալակ լճակը։ Փլատակներում վախճանւում են բազմաթիւ ժողովրդականք, գալիս է Վրաց Դեմետրէ թագաւորն և տանում իւր երկիրն Գանձակի բերդի երկաթեայ դռները (3)։

1143-ին Զօլի ամիրան խաբէութեամբ և դրդմամբ առնում է Խաչենի ամրոցները, մաշում երկիրը սովով, սրով և գերութեամբ, որոց հետ գերի է տանում նաև քահանաներ, կրօնաւորներ և ս. կուսակրօններ։ Իսկ 1145-ին նոյն ամիրան պաշարում է Տաւուշ բերդը 40 օր, ապա առնում բերդը և առանց վնասելու դուրս հանում Աբաս թագաւորը իւրայիններով (Սամ. Անեց. եր. 132 և 133)։ Աբաս թագաւորն այնուհետև իւրայիններով բնակւում է Մածնաբերդում իւր եղբայր Դաւիթ թագաւորազնի մօտ։ Վախճանւում են յետոյ երկու եղբայրքս և ամփոփւում Հաղբատ վանքում (Հնախ. Տեղ. Հաղբ. եր. 22)։

Դաւիթ թագաւորազնին յաջորդում է իւր որդի Կիւրիկէ իշխանն (Կիւրիկէ Բ. ըստ անուան), որի մասին գրում է Կիրակոս, «այր բարեպաշտ և կատարեալ ի գործս առաքինութեան քան զհայրս իւր»։ Վախճանւում է և Կիւ-

1) Հին-Գանձակը տես Արցախ եր. 416—417։
2) » » » եր. 255 և 428։
3) Կիր. եր. 65 և Վարդ. Բարձ. եր. 162։

ըկէ իշխանն՝ ժառանգ. թողլով 12 տարեկան Աբաս իշխանը, որ ամուսնանում է Սպարապետ Զաքարէի և Իւանէի քրոջ Նանայի հետ։ Աբաս իշխանն էլ վախճանւում է երկու տարի միայն կենակցելով իւր կնոջ Նանայի հետ. իշխանին քոյր Բուրիման՝ առնելով իւր եղբօրից ծնուած Ազարթան մանուկը, մեծացնում է, որ յետոյ լինում է ժառանգակալ Մածնաբերդին։ Աստուածասէր և Հոգեսէր Ազարթանս, Նոր-բերդի Բագրատունի Դաւիթ իշխանն խաբէութեամբ ամուսնացնում է իւր դստեր հետ և ինքն տիրում Մածնաբերդին կամ Մլխնաբերդին և հանում իւր պահած աղջիկը Ազարթանի մօտից։ Բայց Ազարթան իւր կողմն է գրաւում բերդի բնակիչներին, որք յանկարծ կալանաւորում են խարդախ Դաւիթը և դուրս հանում բերդից։ Ազարթան իշխան՝ յետոյ իւր կենդանութեան օրով իշխանութիւնը յանձնում է իւր որդի Սիւրիկէ Գ. իշխանին, ինքն կրօնաւորում Գետակից (1) վանքում։ Սիւրիկէ Գ. թողնում է երեք որդի՝ Բաղլուան, Թաղիադին և Ազարթան (Սիր. եր. 89—90)։

1163-ին Խորասանայ Մասուտ Սուլթանի որդին սպանող և Աթաբակութիւնը յինքն կորզող Ելտկուզ-Աթաբակն անչափ զօրքով գալիս է Դադայ դաշտն և կամենում է այրել այն հռչակաւոր Խաչը, որը ս. Մեսրոպ կանգնած էր Դադայ սարի գլխին յանուն սրբոյն Սարգսի (2)։ Աստուծոյ անհեղ բարկութիւնից բանակի մէջ եռում են անհամար մահաթոյն օձեր. օձահարների ճիչն և աղաղակն չէ դադարում գիշեր և ցերեկ։ Ելտկուզ թողնելով գերիներ և կարասին փախչում է. ապա հասնում է Վայոց Դեօրգի

1) Թերևս Ցխմուրտսայ վանքում, որ չինուած է Հասան գետակի ձախ ափին (Արցախ եր. 334—335)։ Յետածին է Ցխմուրտսա անունն, գուցէ առաջ Գետակից անուն եղած լինի։

2) Տես ս. Սարգսի չարչարանքի «Խաչարչարք» տան մէջ։



թագաւորին, հաւաքում ամենը և տանում (Սամ. Անեց. եր. 138. Վարդ. Բար. եր. 166—167)։

Վախճանւում է Աղուանից Տէր Գրիգորիս Բ. և յաջորդում է 53) Տէր Բժգէն, բայց յետոյ թողնելով կարգը՝ ամուսնանում է և մերժւում կաթուղիկոսութիւնից։ Ապա ընտրւում և օծւում է 54) Տէր Ստեփաննոս Գ. (1)։

Կարևոր է յայտնել որ այդ ժամանակներում Աղուանից ողորմելի հայրապետներն չունէին հաստատ աթոռանիստ, այլ ապրում էին աստանդական ամենամեծ նեղութեամբ և հեռուից հովւում իւրեանց բանաւոր հօտը։ «Ընաջինջ եղաք ի թագաւորաց և յիշխանաց. կաթուղիկոսունք Աղուանից այսր անդր յածելով՝ վասն ոչ ունելոյ հաստատուն տեղի աթոռոյ։ Դէպ եղև նոցա գալ ի Բարայր (Բարահերձ) մի ի սահմանս բերդին՝ որ կոչի Ջարեք (2) և անդ դադարել և անդուստ հովուել զհօտս իւրեանց» (Սիր. եր. 103)։

Գանձակ քաղաքի Կուրճի Բոտորադին ամիրայից հրաւիրւում է Աղուանից Տէր Ստեփաննոս Գ. որ կատարէ Ջրօրհնեաց տօնի հանդէսը Գանձակում։ Կաթուղիկոսն իւր եպիսկոպոսներով և վարդապետներով իջնում է Բարահերձից Գանձակ և փառաւոր հանդիսով կատարում հանդէսը քաղաքի մօտով հոսող գետում։ Մոլեռանդ պարսիկ բնակիչներն, խաչը գետի մէջ ձգելն համարելով անպատուութիւն պարսկական կրօնին, կալանաւորում և քանդակում են հանդիսատես ամիրան և կաթուղիկոսը։ Վերջապէս դրամով ազատւում է հայրապետն, գնում Խաչենի կողմերն և չէ վստահանում այլ ևս մտնել Գանձակի սահմաններն, այլ աստանդական թափառիկ ողորմելի հայրապետն

1) Սա գտնւում է Հռոմկլայի Բ. ժողովում։

2) Բերդ է կոչւում և Մաճառա, որի հանդէպ՝ Շամքոր գետի աջ կողմն բարձրութեան վերայ է Բարահերձն. տես Արցախ եր. 301 և 430։

փախճանում է Հեր գաւառում (Կիր. եր. 103—105)։

Այուանից եպիսկոպոսներն և վարդապետները, երբ տեսնում են որ վերջացաւ Այուանից Թագաւորութիւնն. և չկայ կաթուղիկոսական ցեղից եպիսկոպոս և կամ վարդապետ բացի մի փոքրահասակ սարկաւագից, առնելով սարկաւագը՝ տանում են Բջնի և Հայոց Վրդանես եպիսկոպոսի ձեռնով ձեռնադրել տալիս վարդապետ և բերելով՝ օծում են Գանձակում կաթուղիկոս (1) 55) Տէր Յովհաննէս Զ. անունով, որ Գանձակի Օմար ամիրայից ստանում է մեծ յարգանք և պատիւ և հաստատում իր աթոռը Բարաձերձում։ Տէր Յովհաննէս Զ. նեղուելով պարսիկներից, դիմում է Զաքարէ և Իւանէ սպասալար իշխաններին, որք ընդունում են զինքը մեծ պատւով և բնակեցնում իրենց իշխանութեան ներքոյ եղած Հողում-Մխիթար գաւառում (2), որ ազատ լինի նեղութիւնից։ Այդ խուլ գաւառում հայրապետը հիմնարկում է Խամշի վանքն (3). բայց մնում է կիսատ Ջալալադին Սուլթանի արշաւանքի պատճառաւ, սակայն յետոյ վերջացնում է շինութիւնը (Կիր. եր. 171)։

1153—1155 Պարսիկ մի աւագ-ուրբաթ օրում Գանձակի պարսպի վերայ խաչում է Խաչենցի Սարգիսը, (որ «անոյր խարած») ասելով. «Խաչակից լեր Քրիստոսին քում»։ Ինքն խաչողն եւ չարաչար սպանուում է Խաչենցի իշխաններից (Վարդ. Բարձ. եր. 173)։ Սարգիս Բ. իշխանի որդիքն՝ սպասալար Զաքարէ և Իւանէ մտնում են Վրաց զինուորական ծառայութեան մէջ. Զաքարէն կարգւում է սպասալար (զօրավար) Վրաց և Հայոց. իսկ Իւանէ աթաբէկութեան պաշտօնով. Զաքարէ լինելով քաջ, պատերազմասէր և քաջայաղթ, վրացի և հայ զօրքով յետ է առնում Սելջուկեան և Պարսից իշխանութիւնից հետզհետէ Գեղարքունեաց, Շիրակայ, Այրարատեան և Մեծ-Սիւնեաց բոլոր գաւառները և բերդերը և հարկատու անում Կարնոյ Սուլթանը։ Ապա արշաւում է Վանայ և Խլաթի վերայ՝ նուաճելով անցած տեղերը, և Շահի—Արմէնը զարկելուց յետոյ՝ պաշարում է Խլաթը։ Անզգուշութեան պատճառաւ թշնամու ձեռքն է ընկնում իր եղբայր Իւանէն, վասն որոյ Զաքարէն՝ ակամայ զիջանելով հաշտուում է Խլաթի իշխող Մէլիք-աշրաֆի հետ և ազատում իր եղբայրը։ Այնուհետև Զաքարէ զօրավարն գումարում է Անի քաղաքում երկու անգամ հոգևորականաց ժողով, որպէս զի ընդունել տայ Սոյ 1205-ի ժողովի ութ կանոնները, բայց չէ յաջողւում։ Իւանէն տկարանում է հաւատքի մէջ. իսկ հայութեան մէջ անդրդուելի մնում է Զաքարիան (Վարդ. Բարձ. եր. 181—183 եւ Եկեղ. Պատմ. Մ. վ. Մուրատեանց եր. 462—465)։

1) Որովհետև այդ ժամանակ Կիլիկիա էին նստում Հայոց կաթուղիկոսները։

2) Արցախ եր. 308—312, որ մասն է Փառիսոս գաւառի

3) » եր. 309—310 և եր. 432:



Ապա Զաքարէն և Իւանէն արշաւում են և իրենց զօրքով գրաւում Մարանդը և Արտաւիլը իրենց շրջականերով, աւարում և կոտորում շատ մարդիկ։ Դարձին հիւանդանում է Զաքարէն, վախճանում է Զաքարէն և թաղւում Սանահին վանքում՝ թողլով իր Թամթա կնոջից Շահանշահ անուն մի որդի, որ մեծանալով տիրում է հայրենի ժառանգութեան (Կիր. եր. 94—103, Վարդ. Բարձ. եր. 181—183)։

Իսկ Բլու-Զաքարէն, որ ազգական է լինում սպասալար Զաքարէի և Իւանէի, սոցա ձեռնտուութեամբ հետզհետէ գրաւում է Արցախի Գարդման, Բարաձերձ, Երգեվանք, Տաւուշ, Տէրունական (այժմ Դըզըկեան) Կածարեթ և Գագ ամուր բերդերը, և յետոյ Բլու-Զաքարէի որդի՝ Վահրամ իշխանն առնում է Շամքոր քաղաքը և իշխում այդ ամենի վերայ։

ԾԳ. ԳԼ.

## ՎԵՐՍՏԻՆ ԻՇԽԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Արցախի մնացեալ իշխանները եւ իրենց իշխանանիստ վայրերը.—Արցախի վանքերը եւ նշանաւոր հոգեւորականները.—Մնացեալ եւ կորուսեալ մատեանք։

Գագիկ Թագաւորի (Դմնդակի ցեղից) հետականերից Իշխանն իշխում էր Դիզակում Տումի գիւղում. Խաղբակեան Ջաջուռ իշխում էր իր հպատակների վերայ Նուտարի բերդում. Ջալալ-Դոլայ—Հասան Գանձասարում իր ապարանում (1). Վախթանգ Թագաւորազն Հաթերքում։ Առանշահիկ տոհմից Թափի որդի Գրիգորն՝ Վերին-Խաչենում Հաւքախաղացում, Ջրաբերդի և Մեծ-կողմանց-Կիւլստանի վերայ իշխում էր Ճիրանչահանց Հասանն, Արցախի Գարդմանում՝ Կիւրիկէ Բ-ի թոռն Աղսարթան, Փառիսոսում՝ Գրիգոր փառաւոր իշխանի որդին՝ Փիլիպպէ իշխանն, Կողթ գաւառում՝ Բլու-Ջաքարէի որդի՝ Վահրամ իշխանն, Ջաւէ գաւառի Կայենոյ բերդում Հասան իշխանն։

Չնայելով քաղաքական արհաւիրքի տագնապներին, չնայելով պարսիկ ամիրաների և Սելջուկ բռնաւորների արիւնահեղ պատերազմներին, Զօլների անդուլ նահատակութեանց և բանդագրաւութեանց և ծանրաբեռն ճնշմանց, այդ իշխանական տոհմերն ԺԱ.—ԺԳ. դարում կառուցանել են տալիս՝ ի պաշտպանութիւն քրիստոնէութեան, ի լուսաւորութիւն մանկանց՝ թէև ուսումնարաններ, թէև վանքեր և թէև Դամբարան իրենց տոհմի համար հետեւեալները։

1) Արցախ եր. 181։



Սարգիս և Վրդանէս եպիսկոպոսներն, որ Գագիկ Թագաւորի յառաջանորդներից էին, իրենց տոհմի հարըստութեամբ կառուցանել են տալիս Գտչայ վանքը Դիզակում։ Խաղբակեան Ջաջուռ իշխանն հիմնարկում է Խաչենում Հաւապտուկ և Կոշիկ անապատ վանքերը։ Ջալալ-Դոլայ-Հասան, իր մայրն Խորիշահ և իր ամուսինն շինում և ծաղկեցնում են Գանձասարի, Մեծ-Իրանաց ս. Յակոբայ, Վաճառ գիւղի ս. Ստեփաննոսի և Վաղահաս գիւղի Մայրաքաղաք և Կոճողոտ գիւղի Ամենափրկիչ վանքերը իրենց գաւիթներով և միաբանների բնակարաններով և ուսումնարաններով։ Վերին-Խաչենում Թոփեան Գրիգոր իշխանի հրամանաւ իր եղբայր Յովհաննէս եպիսկոպոսն կառուցանում է Խաթրայ և Գետամիջի և Ծարի և սորա սարոտի վանքերը։ Վախթանգ թագաւորազնի օրհնեալ տիկինն՝ Արզու խաթունն շինել է տալիս Դադի նոր, հրաշալի վանքը և հրաշագան գաւիթը և իր երկու զաւակաց հետ այծի կոկղադոյն բրդից գործում է հիանալի վարագոյրներ մին Դադի վանուց համար, երկրորդը՝ Գօշայ վանուց, երրորդը՝ Մակարայ վանուց և չորրորդը՝ Հաղբատայ։ Եղիչ-առաքելոյ և Գլխոյ վանքերը նախ շինել տուած էր Վաչական Գ. բարեպաշտ թագաւորն, յետոյ նորոգել տուած և ծաղկեցրած են Ճիրանչահանց իշխաններն, նմանապէս և Մայրաքաղաքի կամ Բաղաքատեղի ուսումնարանը Ջրաբերդ գաւառում Յովհաննէս եպիսկոպոսի ձեռնով, որ նոյն ցեղից էր. Մինջի և Երի և Եղնասար վանքերն Մեծ-Կողմանց կամ Կիւլստան գաւառում։ Արցախի Գարդմանի իշխաններն շինել տուած են Երմոլեայ, Պանդալինի, Ս. Աստուածածնայ, Ս. Սարգսի, Բարխանայ, Թարգմանչաց անապատ, Թարգմանչաց վանք, Մշնաբերդ վանք, Ամենափրկիչ, Հոռոմաշէն և Բարահերձ վանքերը Արցախի Գարդման գաւառում. Փառիսոսի իշխանների օժանդակութեամբ շինուած են Փառիսոսի, Ջարեքի, Խու-

նիսայ, Ս. Ստեփաննոսի, Ծաղկոցի, Հրեշտակապետաց, Խամշի և Խորանաշատ վանքերն։ Բասենի կամ Բասն գաւառի իշխանաց նիւթականով շինուած են Կաղոսայ, Ճխաւրառայ, Վարագայ, Սրվեղի, և Մարոյ-Ձորոյ վանքերն Բասե-Ղազախ գաւառում, իսկ Գօշ-Մխիթարի վանքն մասնաւորապէս Հաթերքի իշխանաց Վախթանգ թագաւորացնի և իր եղբարց ձեռնտուութեամբ։ Ձաւէ (Ղազախ) գաւառի իշխանների օժնութեամբ շինուեցան Ջախաւկ վանք, Հաղարծին, Մակարայ, Ս. Գրիգորի (Լուսաւորչի), Առաքելոց, Կիրանց, Դեղձուտի, Գողայ Ս. Սարգսի և Ս. Աստուածածնայ վանքերն և անապատներն։

Այդ վանքերից շատերն իւրեանց ժամանակին եղած են լուսաւորութեան բոյն, Քրիստոնէութեան ջերմեցիկ վառարան, աստուածպաշտութեան խնկելի ընակարան, հաւատոյ, յուսոյ և սիրոյ պաշտպան, ազգութիւնը, լեզուն, գրականութիւն պահպանող, և միանգամայն Հայաստանեայց եկեղեցու ինքնուրոյնութիւնը և ազգային դաւանութիւնը անխախտ և անխառն պահպանող սրբավայրեր։

Վերջիշեալ դարերում-ԺԱ.-ԺԳ. նշանաւոր եղած են Սարգիս և Վրդանէս եպիսկոպոսներն Գոշայ վանքում. Սարգիս և Վարդան եպիսկոպոսներն Գանձասարի, Մարգարէ եպիսկոպոս Մայրաքաղաքի (Վաղահասի). Յովհաննէս, Սարգիս և Գրիգոր եպիսկոպոսներն Գօփևանց Խաթրայ և Գետամիջի վանքերի, Աւագ, Գրիգոր, Աթանաս և Գրիգորիս եպիսկոպոսներն և Մանուէլ արեղան Դադի վանուց. Յովհաննէս եպիսկոպոս Ջրվշտիկ-Եղիշ առաքելի և Մայրաքաղաքի Ջրաբերդի. Յովհաննէս եպիսկոպոս Հիւբեկայ կամ Գլխոյ վանքի. Փառխոսցի Սարգիս և Յովհաննէս-Սարկաւագ վարդապետներն Փառխոսի վանքում, Տաւուշեցի Յովհաննէս-վանական վարդապետն Խորանաշատում, Տաւուշեցի կամ Տուեցի Յովհաննէս եպիսկոպոսն Վարագայ վանքի, Յովհաննէս և Գրիգորն Մարոյ-Ձորոյ վանքի,



Գրիգոր եպիսկոպոս Ճխաւրառայ վանքում. Գօշ-Մխիթար վարդապետն իր վանքում. Տարոնացի Խաչատուր և Արցախեցի Սաքիաս վարդապետներն Հաղարծին վանքում, Յովհաննէս եպիս. (Ջալալեան տոհմից) Մակարայ վանքում. Գրիգոր վարդապետ՝ Նոր-Կողբ գիւղից վերև եղած Ս. Աստուածածին վանքում.

Գլխաւոր ուսումնավայրերն եղած են Գոնչ, Ս. Յակոբ, Գանձասար, երկու մայրաքաղաքներն, Դադի և Խաթրայ վանքերն, Ծար գիւղաքաղաքն, Ջրվշտիկ վանք Փառխոսի և Խորանշատի, Վարագայ և Գօշ-Մխիթարայ, Մեծ-Իրանաց Ս. Յակոբայ, Գրիգոր և Եղիա վարդապետներն Հաղարծնի և Մակարայ և Ս. Աստուածածնայ վանքերն։

Փառխոսցի Յովհաննէս-Սարկաւագ վարդապետն թողած է գրաւոր երկասիրութիւններ,

*Տոմար, որ սարկաւագադիր է կոչւում.*

*Պատմութիւն Սելջուկեանց, որ ցարդ գտնուած չէ.*

*Ճառ յաղագս քահանայութեան. Ներբողեանք.*

*Աղօթագիրք. որոց Լևոնդեանց չարական Պայծառացան. Ի սարեանն:*

Փառխոսցի Սարգիս վարդապետի աշակերտներն եղած են Երեմիա-Անձրևիկ. Խաչատուր, Գրիգոր, Յովհաննէս և Սամուէլ Անեցիներն (Սամ. Անեց. եր. 128)։

Տուեցի կամ Տաւուշեցի Յովհաննէս բազմարդիւն վարժապետ եպիսկոպոսի աշակերտներն եղած են Գօշ-Մխիթար և Յովհաննէս վանական վարդապետներն։

Գօշ-Մխիթար Գանձակեցի վարդապետս թողած է

*Դատաստանագիրք*, որ (օգտակար ծանօթութիւններով բազմաշխատ հանգուցեալ Բաստամեանց Վահան վարդապետի ջնորհիւ տպուած է Էջմիածնում) երկասիրած է Աղուանից Ստեփաննոս կաթուղիկոսի և Վախթանգ թագաւորացնի խնդրանօք։

*Առակներ*, որք բովանդակում են օգտակար խրատներ։

Մեկնութիւն Երեմիա մարգարէի։

Աղօթք, որ շատ սրտաշարժ են և ուղղուած ի դէմս Ս. պատարագի։

Տուչեցի Յովհաննէս վանական-վարդապետի երկասիրութիւններն են,

Մեկնութիւն Յոբայ. Տեսութիւն չարականին Ուրախացիր պսակ կուսից. Ճառ Ս. Հոգու բղխման վերայ, բայց լատինական տեսութեամբ։

Համեմատութիւնք Հին և Նոր-Կտակարանաց։

Հարցմունք և պատասխանիք։

Պատմութիւն Հայոց, որ կորսուած է, որի համար վկայում են Կիրակոս և Վարդան, որ վանականի բոլոր գրուածների մէջ նշանաւորն եղած է։ Վանականիս աշակերտներից է Վարդան վարդապետ, որ յոմանց կոչուած է մեծ և յոմանց Բարձրբերդցի։ Սա երկասիրած է Ընդհանուր պատմութիւն.

Մեկնութիւն Դանիէլի,

Մեկնութիւն Սաղմոսաց Հաղբատի Յովհ. եպիսկոպոսի խնդրանօք

Մեկնութիւն Հնգամատենին Մովսէսի.

Մեկնութիւն Երգոց երգոյն.

Ներբող ի Ս. Լուսաւորիչն Տարական

Որ նախիմաց իմաստութեամբ.

Ի յանսահման ծոցէն.

Որք զարդարեցին անօրինաբար (Թարգմանչաց)

Առակներ. և

Մեկնութիւն Քերականին։

Վանական վարդապետի աշակերտներիցն էր և Գանձակեցի Կիրակոս վարդապետը, որ թողած է

Պատմութիւն, որ կրում է իւր անունը։

Յ. Սարկաւագ վարդապետի աշակերտներն եղած են Դաւիթ վարդապետ որդի Ալաւկայ Գանձակեցի.



«Սամուէլ Անեցին, որ զժամանակս յօրինեաց»

«Թորականի որդի... և այլ արք ճգնաւորք

Ի յԱղուանս, որպէս Պետրոս Խոնթկայ որդին և Ցակոբ սքանչելին (Վարդ. Բարձ. եր. 159)։

«Մխայէլ իմաստասէր եպիսկոպոս». Ներբողեան ի Ս. Խաչն... Միքայէլի Հայոց եպիսկոպոսի Մեծի-Կոզմանց (առաջնորդի-Կիւլոտանի)»։ Տես և այս գրքից ԽԶ. գլխի հոգևորական անձերի ցուցակը։

Իսկ Գանձասարի, Մայրաքաղաքի, Խոթայ վանքի և Ծարի ուսումնարանների, նոյնպէս և Ջրվշտիկ-Եղիշ առաքեալի, Բաղաքատեղի և Հոռեկայ (Գիլոյ վանք) ուսումնարանների ձեռագիր մատեանների մասին գրուած է Գաղտնիք եր. 89. «Բայց հարազատ-մելիքների, բոլոր ծեռագրերը և թղթերը արդէն կանխաւ երեք մասն բաժանուած և թաքցրած էին, յորոց առաջին մասը Գանձասարի և Խոթայ վանքի մէջ տեղում մի քարայրում և բերանը ամրացրած քարուկիր պատով և անյայտացրած. երկրորդ մասը Ջրաբերդի մի սարերկրեայ և անյայտ քարայրում. իսկ երրորդը՝ Կիւլոտան գաւառի Հոռեկայ վանքի մօտերքում։ Սոյն ձեռագիրներից առաջին մասն գտնուած է Բաղդասար մետրապօլտի օրով, տես նոյն երեսի ծանօթութիւնը. իսկ երկու մնացեալ մասերն գտնուած չեն ցարդ։

## ԾԴ. գլ.

Սեւ-Հոնաց արշաւանքն.—Մազուտն եւ աշխարհակալութիւն Թաթարաց.— Չինկիզ-խան.— Ջալալադդին Սուլթան Խորասանի եւ իւր արշաւանքները.—Թաթարների բարբարոսութիւնները.-Տէր Ներսէս Բ. Գանձասարի օծման հանդէսն: Զարմաղանի կնոջ մօտ.—Հայաստան աւերելոյ.—Հռոմայ Ս. Պապի առաջարկութիւնն եւ մերժումն.—Աշխարհագիր եւ գլխահարկ.—Հոգեւորականք եւ իշխանք Բաթու կուսակալին մօտ.—Հուլաւուի շինած քաղաքն.— Ջալալ-Դօլայի նահատակութիւն.—Տէր Ստեփաննոս Դ:

Գանձակի վերայ արշաւում է 1221—1222 Սեւ-Հոնաց(1) զօրքն. որից յաղթւում է սպարապետ Իւանէն. սպանւում են շատ վրացի եւ հայ զինուորներ, ձերբակալւում են իշխաններ, որոց մէջ են լինում եւ Խաչենցի Հաղբակայ որդի Վասակ իշխանի եղբայր Գրիգոր իշխանն եւ նոյն Վասակ իշխանի որդի Պապաքն. «Զի երեք որդիք էին Վասակայ՝ Պապաք, Միքայէլ եւ Հասան, զոր Պռօշն կոչէին, այրք քաջք եւ անուանիք, որ յահէ նոցա դողայր ամենայն զօրն Տաճկաց-Սելջուկեանց»։

Չինաստանի, Հնդկաստանի, Թիւրքեստանի եւ Սիբերիայի միջավայրում բնակւում էին այլ եւ այլ թափառող ցեղեր Մուղալ-Թաթար անուն, որոց առաջնորդ Չինկիզխանն ԺԳ. դարի Ա. քառորդում միաբանելով այդ թափառական ցեղերը՝ նախ արշաւում եւ նուաճում է Չինաստանը եւ գահազուրկ անում նորա իշխողները. ապա նուաճում է Հնդկաստանը, Խարազմները, Սմրղանդ, Բուխարա, Բահլ-Դուռնը եւ Պարսկաստանը, ուր մեռնում է Չինկիզխան. իշխանութիւնը թողլով իւր որդոց։

1) Վարդ. բարձ. եր. 187 «ի Հոնաց, զոր Խըշաղ անուանեն». Կիր. եր. 119—120 «Խուչախ». Մ. Այրիվ. եր. 65 «Խփչախ»:



Թաթարների երեսից յաղթուած եւ փախած Խորասանի Ջալալադդին Սուլթանն իւր զօրքով 1226-ին աւերակ դարձնելով Մեծ-Սիւնիքը, Հին-Նախիջեւանը, Դառնին, Կոտէից գաւառում ճակատում է սպարապետ Իւանէի բանակին հետ, կոտորում շատ վրացի եւ հայ զինուոր եւ գրաւում Տփխիսը եւ Գանձակը, կոտորած անելով անցնում Հայաստան եւ սպանւում Տիգրանակերտ քաղաքում (Վարդ. բարձ. եր. 188—189. Կիր. եր. 131—135).

1235—1236 Բաթու թաթարներն Չարմաղան, Բաթու, Հուլաւու եւ այլ զօրավարների առաջնորդութեամբ Դարբանդից սկսեալ մինչեւ Սուրբ երկիրն եւ Պարսկաստանից մինչեւ Կ. Պօլիս՝ ներկում են երկիրը անմեղ մարդոց արիւնով եւ հարկատու անում Ասիոյ պետութիւնները. Հետզհետէ գրաւում են Դարբանդ, Պարտաւ, Շամախի, Շաքի, Գանձակ, Շամքոր եւ Տփխիս քաղաքները իւրեանց գաւառներով, բայց մեծ արիւնհեղութեամբ. Այս փութով գրաւում են Երզնկանք, Տէրունական, Մածնաբերդ. Դարդման, Չարեք, Գետաբակ, Տաւուշ, Կածարեթ, Նոր-բերդ, Գագ, Գաւարզին (Վարդ. բարձ եր. 190) Ականայ, Հաթերք, Լօռի եւ Կայծակաբերդ ամրոցները, թափում շատ արիւն, կողոպտում եկեղեցեաց, վանօրէից եւ անապատաց զարդերը եւ սրբութիւնները. բանդարկում եւ չարչարում իշխաններ եւ հարուստներ, վարդապետներ եւ քահանաներ, եւ պահանջում մեծամեծ փրկանք. Վարդապետաց մէջ լինում են Վանական եւ իւր աշակերտ Կիրակոս վարդապետները(1). Այնուհետեւ որսական կիրթ բազէների պէս հետախուզում են դժուարատար խոռոչներ, մութ մութ քարայրեր եւ թաքնուած ծերպեր, գտնում պահուած մարդիկը, շատերը կոտորում, շատերը գերում. Դաղատագոյի մտնում են Հաւքախաղաց ամրոցն, այնտեղ հաւաքուած բազմութեան

1) Կիր. եր. 143—146.

կէսը ճարակ տալիս սրերի և միւս կէսը գահաւէժ անում բարձր քերծիցն, որոց ոսկերքն դեռ շատ ժամանակից յետոյ մնում են դիզուած քարակոյտի նման։ Պաշարում են և Խոխանաբերդ. անառիկ ամրոցը, որի մէջ ամրացած է լինում Խաչենի մեծ իշխան Ջալալ-Դօլա-Հասանն, որ խոհեմութեամբ իջնում է ընծաներով ամրոցից, հաճում գազանաբարոյ թաթարների սիրտը և կոտորածից ազատում զինքն էլ իւր ժողովուրդն էլ (Կիր. եր. 157—159)։

Այս դառնութեամբ լի աղէտալի օրերում վախճանում է Տէր Յովհաննէս Զ. 40 տարի հայրապետութիւն(1) անելով, որին յաջորդում է իւր եղբայր 56) Տէր Ներսէս Բ. կաթուղիկոսն։

1240-ին վերջանում է Գանձասար վանքի հրաշալի շինութիւնն և մեծ հանդիսով օծւում Տէր Ներսէս Բ-ի ձեռնով Վարդավառի տօնին, ուր ներկայ են լինում շատ եպիսկոպոսներ, վարդապետներ. 700 քահանայք և շատ իշխաններ։

Թաթարներն, Աղուանից երկիրը և Հայաստանը գրաւելուց յետոյ, իւրեանց հետ պատերազմի են տանում հայ իշխաններ կամ հասած իշխանորդիներ հայ զինուորներ։ Տանում են Շահնշահի որդի՝ Զաքարէ, Օրբելեան Էլիկումի որդի՝ Սմբատը, Թօփեանց Գրիգորի որդի՝ Սևադան(2), Կիւրիկէ Դ-ի որդի՝ Թաղիադինը(3) Պռօշի որդի՝ Հասանը, Շիրանշահանց Ուզի որդի՝ Հասանը(4), Լիպարիտի եղբօրորդի Բուրթէլը և Սադունը, ևն, ևն։

1) Տէր Յովհաննէս Զ.-ի անունն յիշուած է նաև մի յիշատարանում «Արցախ» եր. 263)։

2) Սևադան սպանւում է Տիգրանակերտում. (Վարդ. բարձ. եր. 199)։

3) Սա Տիգրանակերտից բերում է Հաղբատ Ս. Բարդուղիմէոս առաքեալի աջը (Մաղ. արեղ. եր. 28)։

4) Սա Կեսարիայից բերած է մի ձեռագիր աւետարան («Արցախ» եր. 226—227)։



Տէր Ներսէս Բ. Խամշի վանքից հրաւիրւում է Մուղանի դաշտն ներկայանալ Ելթի խաթունին՝ Զարմաղանի կնոջ, որ ազգաւ ասորի էր։ Ելթի խաթունն, իւր պատուաւոր հիւրը մեծապէս պատուելուց յետոյ, տալիս է հայրապետին ուրիշ ընծաների հետ Ըլտամղա (հրամանաթուղթ) և մին թաթար զինուորական առաջնորդ, որ տանէ և շրջեցնէ Աղուանից հայրապետը բոլոր քաղաքներում և գիւղերում անվնաս, որպէս զի ոչ ոք չհամարձակի նեղել հայրապետը։ Տէր Ներսէս Բ. իւր հօտը մխիթարելուց վերջն դառնում է իւր վեհարանն՝ Խամշի վանքն։

1243 և 1249 թուականներում արիւնլուայ են դառնում Հայոց և Վրաց դաշտերն և լեռներն անհամար մարդոց արիւններով, ոչ միայն բանականաց, այլ և անբանից, լերանց և դաշտաց, որք սողեցան արեամբ և արտասուօք ... անթիւս կոտորեցին և գերեցին գեղս և ագարակս .. ի Հայս և յաւելի յաշխարհս Վրաց(1)»։ Գերուածներից գնում և ազատում են Խաչենցի իշխաններն եպիսկոպոսներ, քահանաներ, սարկաւագներ, աշխարհականներ և ձեռագիր գրեանք(2)։

Մինչդեռ Հայոց, Աղուանից, Վրաց, Ասորոց և Յունաց երկիրներն այսպէս ներկւում էին անթիւ նահատակաց արիւններով և արտասունքներով, Հռոմայ Ս. Պապն, փոխանակ գէթ մխիթարական թղթերով մխիթարելու և սփոփելու այդ եկեղեցիները, Քրիստոսի ծննդենից 1251 տարի անցնելուց յետոյ՝ յարուցանում է Հոգւոյն Սրբոյ ի Հօրէ և յՈրդւոյ բղխման խնդիր և իբրև մի կռուածաղիկ խնձոր գլորում Հայոց, Ասորոց, Յունաց, Աղուանից և Վրաց արիւնլուայ դաշտերում։ Սակայն մինչև ցայսօր ևս մերժուած է այդ առաջարկութիւնն յիշեալ եկեղեցիներից։

1) Վարդ. բարձր. եր. 193—194։

2) Կիր. եր. 164 և 167։

«Եւ ոչ եղև հաճոյ Ասորոց և Յունաց և Հայոց և Վրաց (և Աղուանից)(1)։

1253—1255 Թաթարաց Մանգու-խանին հրամանաւ աշխարհագիր է անում Արղունն բոլոր նուաճուած ազգերը։ Բացի 60 տարեկան ծերերից, երախաներից, հոգևորականներից և իգական սեռից, սահմանում են գլխահարկ իւրաքանչիւր հարկատու անձի համար 21 արծաթ դրամ(2), 100 լիտր ցորեն, 50 լիտր գինի, 2 լիտր բրինձ, 3 տոպրակ, 2 չուան, 1 նետ, 1 պայտ և 20 անասուններից մինը անխափան վճարել։ Հարկեր են սահմանում նաև ձկնորսների համար, ծովերի, լճերի և գետերի և մինչև անգամ հանքերի վերայ։ Անտանելի է լինում մանաւանդ կաշառակերութիւնն և հարկահաւաքների տուած նեղութիւններն և զրպարտութիւններն(3)։

Զափազանց ծանրանում են հարկերն, յափշտակւում են սեփհական կարասիներն և կալուածներն. վասն որոյ ամեն ոք աճապարում է Բաթու մեծ իշխանին մօտ, որ գրաւելով Կովկաս մեծ սարի հիւսիսային կողմում բնակած ցեղերը, նստում էր այժմեան Հաշտարխանի մօտերքում։ Գնում են նաև եպիսկոպոսներ, վարդապետներ, քահանաներ և իշխաններ, որոց մէջ լինում են Խաչենի Գրիգոր եպիսկոպոսն, Մարկոս վարդապետն, Ջալալ-Դօլան, Վերին-Խաչենի Գրիգոր իշխանն և Փառախոսի Դեռում պատանի պարկեշտ իշխանն։ Բաթուն հրամանագրերով յետ է դարձնում իւրաքանչիւրի յափշտակուած իրաւունքները։ Ազատութեան հրամանաթուղթ է տալիս Ջալալ-Դօլա իշխանի միջոցաւ և Աղուանից Ներսէս կաթուղիկոսին վանքապատկան գոյից և ստացուածոց համար, որ կարողանայ համարձակ շրջել իւր վիճակի ամեն մասերում (Կիր. եր. 214—216)։

1) Վարդ. բարձր. եր. 194։
2) Ըստ Մաղաքիա աբեղայի 60 դրամ
3) Կիր. եր. 218 և 225։



1259-ին Հուլաւու-էլ-խանն Մուղանում(1) շինել է տալիս ձմերանոց քաղաք և պալատ իւր համար։ Մեծ-Սիւնեաց Սմբատ իշխանի վերակացութեամբ փայտեղէնը բերել է տալիս Բասենի (այժմեան Սողանլուի) անտառի մայրի փայտից(2)։

1261-ին հարկահան Արղունի անիրաւ հրամանաւ Ղազվինում նահատակւում է Ջալալ-Դօլա-Հասան իշխանն, որի մարմինը բերել է տալիս իւր որդի Աթաբակն և ամփոփել տալիս Գանձասարի գաւթումն։ Ջալալս թողնում է երկու որդի-Աթաբակ և Ուքան և երկու դուստր-Ռուզուքան և Մինա։ Իւր հօր յաջորդում է Աթաբակն(3)։

1262-ին Ջրգողութեան ցաւով վախճանւում է Աղուանից Տէր Ներսէս Բ. հայրապետն՝ 27 տարի պաշտօն վարելով, որին յաջորդում է 57) Տէր Ստեփաննոս Դ. պատանի հասակաւ, որի անունն յիշուած է Հոռեկայ վանքի և Դաս-դակիւլի արձանագրութեանց մէջ («Արցախ» եր. 229 և 233)։

## ԾԸ. ԳԼ.

Թաթարաց տարեմտի պատճառաւ։—Վախճան բազմարդիւն մեակից ոմանց Աղուանից.—Աւերմունք եւ փախուստ.—Ներքին պատերազմ. Բայտու-խան յաղթող եւ գրաւումն Ամարասի թանկագին հնութեանց.—Գահակալութիւն Ջալալեան, Թօփեան եւ Ծիրանեանց իշխանների.—Գահակալութիւնք Տէր Սուքիաս եւ Տէր Պետրոս Բ. կաթուղիկոսաց Աղուանից.—Գահակալութեան համար սաստիկ կռիւ խաների մէջ եւ արիւնհեղութիւն։

Թաթարաց տարեմտի պատճառաւ 1264-ին Հուլաւու-էլ-խանից հրաւիրւում է Թիֆլիսեցի Ծնորհաւոր

1) Դաւին կամ Դարան դաշտում, որի աւերակներն երևում են այժմ Լանքարանի կողմերում։
2) Ս. Օրբել. Բ. հատ. եր. 161. Վարդ. բարձ. եր. 199։
3) «ԶԹ. (1260) ... յիշխանութեան Ուքանին»։ Երևում է որ Ուքանս փոքր ժամանակ գահակալած է Աթաբակի բացակայութեան պատճառաւ (Արցախ եր. 222)։

անուն մի անձի ձեռնով Վարդան Բարձրբերդցին, որ ներկայանում է խանին Սարգիս և Գրիգոր վարդապետների և Թիֆլիսի առաջ–քահանային հետ։ Հուլաւու-էլ-խանին մօտ են լինում նաև Հայոց Հեթում թագաւորն և Վրաց Դաւիթ թագաւորն։ Վարդան վարդապետը թէև բաւական խօսակցութիւն է ունենում այն խանի հետ, սակայն. ասում է Վարդան. յարմար միջոց չեղաւ որ խնդրէի խանից հարկերը թեթևացնելու համար (Վարդ. պատմ. եր. 204—213)։

1213-ին վախճանում է բազմարդիւն Գօշ-Մխիթար վարդապետն և ամփոփւում իւր շինած Հոգին Սուրբ մատրան մէջ («Արցախ» եր. 355)։

1263-ին Խորին ծերութեան մէջ վախճանում է Տաւեցի-Տաւուշեցի Յովհաննէս արքեպիսկոպոսն, որ վարժապետն էր Գօշ–Մխիթարի և Վանական վարդապետի, և ամփոփւում իւր շինած Վարագ վանքում («Արցախ» եր. 336—338)։

1267-ին վախճանում է ս. եկեղեցու բազմաշխատ մշակն՝ Տաւուշեցի Յովհաննէս-Վանական վարդապետն և ամփոփւում իւր շինած Խորանաշատ վանքի արևելեան հանդէպ արտաքուստ («Արցախ» եր. 324)։

1271-ին վախճանում են պատմաբան Կիրակոս վարդապետն Գանձակեցին և Վարդան վարդապետն Բարձրբերդցին. որք Վանական վարդապետի աշակերտներն էին (Մաղաքիա Աբեղ.)։

Ս. Օրբել. եր. 178—179, ասում է. Այն ժամանակ (1290-ին) աւերմամբ ապականուած էր բոլոր երկիրն. խափանուած էին վանքերն իւրեանց պաշտամունքներից. և ամենքն առհասարակ դիմելով այս տեղ (Մեծ–Սիւնիք) գտնում էին հանգիստ. եկն և Աղուանից Տէր Ստեփաննոս (Դ) կաթուղիկոսն և բնակեց այս տեղ։ Եկին և ուրիշ եպիսկոպոսներ և վարդապետներ և իշխաններ։

Խանութեան գահակալութեան պատճառաւ ծագում է Թաթարաց մէջ ներքին խռովութիւն. կոտորում են մէկ-մէկի գահի հետամուտներն, ստանում են շատ զօրք և զօրացեալ, կողոպտում են գիւղեր և աւաններ և քանդում ու աւերատանում են գիւղեր։ Վերջապէս զէնքի զօրութեամբ խան է նստում Բայտու Սարայի դաշտում(1) և Մեծ-Սիւնեաց Տարսայիճ իշխանի որդի՝ Ջալալը և Թաթար զօրականների ձեռնով բերել է տալիս Ամարասից Ս. Լուսաւորչի թոռն Գրիգորիսի-Աղուանից կաթուղիկոսի զաւազանը և 36 պատուական քարերով զարդարուած համակ ոսկի ծնռաց խաչը։ Ապա այդ ազգային ամենաթանկագին անօթները և սրբութիւնը ուղարկում է իւր հօր Կ. Պօլիս-Յունաց կայսեր դստերն Դեսպինան, որ Ապաղա-խանի կինն էր և Բայտու-խանի մայրագիրն (Ս. Օրբել. Բ. հատ. եր. 217—218)։



Ջալալեան Աթաբակ իշխանն գահակալեց 1261-ին. Գանձասարի արձանագրութիւնից պարզ երևում է որ ՉԼԱ.=1282-ին սա իշխում էր տակաւին. բայց ոչ սորա վախճանն յայտնի է մեզ և ոչ սորա գերեզմանն։ Սակայն երևում է ակներև Մեծ-Իրանաց Ս. Յակովբայ վանքի արձանագրութիւնից՝ որ ՉԽԲ.=1293-ին Ջալալ Բ. արդէն տեղակալած էր իւր հօր՝ Աթաբակին Ա.-ոյ, նոյնպէս անյայտ է մեզ և սորա վախճանն։ Թօփեան Գրիգոր Գ-ին յաջորդում է իւր որդի՝ Վահրամն և Վահրամին իւր որդի՝ Աղբուղէն. իսկ Մեծ-կողմանց Հասան իշխանին յաջորդում է իւր որդի՝ Համբերն Տիրանշահանց («Արցախ» եր. 227)։

1323-ին Վախճանում է Աղուանից Տէր Ստեփաննոս Դ. որին յաջորդում է 58) Տէր Սուքիաս կաթուղիկոս. սրան էլ յաջորդում է 59) Տէր Պետրոս Բ.(2)։

1) Այժմ ևս Սարայ է կոչւում գիւղն, որ գտնւում է Ուտի-Առանձնակ գաւառում։

2) Անյայտ են մեզ սոցա միջնոցս գահակալած և վախճանած տարեթիւերն. բաց յայտնենք սոցա անունները չգտանք և ոչ մի տեղում։ Միայն գտած ենք «յառաջնորդութեան Տէր Սուքիասին»(Արցախ եր. 222) «թվ. ՉԹ.=1262, և եր. 233 թվ. ՉԻԵ=1276 ...ի հայրապետութեան Տէր Ստեփաննոսի ևս Տէր Սուքիասանց ցեղէն Տէր

Ագուանից, Հայոց, Ասորոց, Պարսից, Թիւրքեստանի և Ռուսաստանի իշխող Թաթար և Թիւրքման խաների, կառավարիչների, խանազուններին և զօրքի մէջ յաճախակի տեղի են ունենում արիւնահեղ կռիւներ և ստոկալի ճակատամարտներ։ Սպանւում են շատ թաթար խաներ և խանազուններ. կոտորւում և վիրաւորւում են չափազանց զօրք և զօրապետ. վասն որոյ աստիճանաբար քայքայւում է Թաթարաց ներքին կազմակերպութիւնն և օր աւուր տկարանում նոցա զինուորական ուժն, մանաւանդ Մահմետական կրօնը ընդունելուց յետոյ։ Թաթարական զօրք և զօրապետ անընդհատ չփսելով Պարսից, Թիւրքաց, Թիւրքմանաց և Արաբացւոց, ընդունում են նոցա սովորութիւնները և վարւում Քրիստոնէից հետ, մանաւանդ Հայոց և Ագուանից հետ խիստ թշնամութեամբ և սրածութեամբ։ Այս ներքին երկպառակութեամբ, հանրածաւալ խռովութեամբ և գահակալութեան բուռն ձգտմամբ վերջապէս կործանւում է Չինկիզ-խանի սարսափելի հզօր պետութիւնն և լայնատարած տիեզերակալութիւնն նոյն իսկ իւր ծնած տեղից սկսած մինչև Ռուսաստան, Յունաստան և Ասորեստան. (Ս. Օրբել. Բ. հատ. եր. 219—225).

## ԾԶ գլ.

Լանկ-Թամիրի ծագումն և զօրանալն.— Դէրբէնդի Թոխտամիշ-խանի չանքերն և Ջանիբէկի գերեվարութիւնն.— Լանկ-Թամիրի արշաւանքներն Բաբիլոնի, Արարատեան, Մեծ-Սիւնեաց, Վրաց, Ագուանից, Դամասկոսի, Վանայ, Ռուստամեանի նահանգների վերայ, և նորա մահն. —Այգին-բէկ.—Տէր Կարապետ.—Տաւրուն:

Նահանայում 1335-ին, որ Սմրղանդից հեռի չէ, ծնւում է Թամիրն, որ մօր կողմից Չինկիզ-խանի ցեղիցն էր և կրօնքով մահմետական։ Թամիր իւր

Ներբէնդ։ Կարծում ենք որ սոյն Սուքիաս և Պետրոս Բ. տոկառակոց են եղել և Ստեփաննոս Դ-ից առաջ պաշտօնական. քանզի Ստեփաննոս Դ-ս չէր կարող 61 տարի պաշտօնական լինել. Թէև անհնարին չէ.



հօրեղբօր՝ Սէյֆ-Էդ-դին-խանի մահից յետոյ ներքին խռովութեանց ժամանակ, 1357—1358 անցնում է Բերլաս ցեղի գլուխն, միանում Հիւսէյն-խանի հետ, դահընկեց անում Թաթարաց Ջաղաթայի որդի Թողլուք-Թամիր-խանը, բայց ինքն էլ ոտիցն վիրաւորուելով մնում է կաղ, վասնորոյ կոչւում է Լանկ-Թամիր(¹)։ Սա վեց տարուց յետոյ դահընկեց է անում նաև Հիւսէյն-խանը և միակ բացարձակ տէր դառնում Բահլ-Դրան և Բահլ-քաղաքին։ 1370-ին Լանկ-Թամիր իւր աթոռանիստը փոխում է Սմրղանդ, ապա հետզհետէ տիրում է Խորազմին, Կաշկարին, Խորասանայ, Պարսկաստանին և Բաբելոնին։

Դէրբէնդի Սարայ քաղաքում նստող Թաթար Թոխտամիշխանն, Ջանիբէկ անուն զօրավարի առաջնորդութեամբ 1386-ին զօրքը յղում է Պարսկաստան։ Ջանիբէկ մտնելով Թաւրէզ աւերում է քաղաքը, և գերում 200,000 հոգի, ապա մտնելով Հին-Նախիջևան և Մեծ-Սիւնիք՝ գերում շատ մարդիկ, բայց ձմրան խստութեան պատճառաւ թողում է գերիները և հեռանում։

Իսկ Լանկ-Թամիր միևնոյն 1386-ի գարնան Բաբելոնից դառնում է Թաւրէզ, ապա արշաւում Մեծ-Սիւնեաց վերայ, կրակում Տաթևի վանքագաւառը, կործանում Արտաշեան նահանգի գիւղերը, աւանները, քաղաքները, եկեղեցիները, կոտորում և գերեվարում շատ մարդիկ և շատ գրչագիր մատեաններ, սպանում Բջնու եպիսկոպոսը, անցնում Հաղբատի ձորով Վրաստան, թիւրքացնում Վրաց Բագարատ թագաւորը, գերի վարում Ագուանից 75000 (ըստ այլոց 25000) մարդ և ձեռագիրներ, և այսպէս իւր անցած տեղերը աւերակ և աւերակ թողլով, թիւրքացնում է գերիներից շատերը, կոտորում մի մասը և քնա-

1) Սա կոչւում է Լանկ-Թամուր, Լանկ-Թամիր, Թամիր-Լանկ, Տամուր-Լանկ, Թէմուր-Լանկ, Կաղ-Թամիր։

կեցնում Սմրղանդում մնացեալները, իսկ ձեռագիրները լցնել տալիս Սմրղանդում մի բուրգի մէջ։

Մարդկութեան այս հրէշն Լանկ-Թամուրը այնուհետեւ արշաւում է Դամասկոսի վերայ, կոտորել տալիս 700,000 մարդ, կոտորածների գլուխներից դիզել տալիս եօթն բուրգ, նոյնպէս եւ Բաբելոնում. գերի վարում Սեբաստիա քաղաքի եւ գաւառների աղքատ դասակարգը, չարչարում հարուստները, ժողովում թագցրած գանձերը, ձիերի ագիներից կապել տալով կիները նահատակում, մի դաշտի մէջ ժողովել տալով անհամար անմեղ տղայ եւ աղջիկ՝ իբրեւ մարդաշան կասել տալիս ձիերի ոտների տակ եւ կենդանի թաղել տալիս 4000 զինուոր։ Այս գրաւում է Վանայ ամրոցը, որի բարձր ժայռից թափել տալիս այնքան մարդիկ, որ վերջին ձգուածներն մնում են կենդանի. այնպէս որ ոչ նետուածների թիւն իմացուած է, ոչ սպանուածների եւ ոչ Հայաստանից գերուածների։ Վրաստանից եւ Աղուանից դարձեալ տանում է գերիներ եւ բնակեցնում Սմրղանդի սահմաններում. Թովմայ Մեծոփեցի պատմիչն, եր. 32, ասում է, «ի յՄրճիչոյ մինչեւ ի ստենն Պրուց եւ մինչեւ ի Կուր գետն Աղուանից չաղախեցաւ արեամբ անմեղաց երկիր ամենայն՝ չարչարանօք, սպանմամբ եւ գերութեամբ։ Եւ յետ երթալոյ նորա (Լանկ-Թամուրի) յաշխարհէս մերմէ. եկն սով սաստիկ ... զի ջնջեցաւ մարդկութիւնն, մանաւանդ Հայկազեանս»։

Լանկ-Թամուրն 1396-ին արշաւում է Ռուսաստանի վերայ, սպանում Թօխտամիշ-խանը, աւերում Սարայ քաղաքը, աւերում նաեւ Դոնից մինչեւ Մոսկվա. Թագաւորեցնում Ռուս խանի որդին եւ շատ գերիներով դառնում Սմրղանդ։ Այս 1398-ին արշաւում է Հնդկաստանի վերայ, յաղթում Սէյկաց եւ Աֆղաններին. հիմնայատակ կործանում Դելի եւ Մուլթէ եւ ուրիշ քաղաքներ եւ գիւղեր ... վերջապէս մեռնում է Սիհուն գետի յ (Թով. Մեծոփ. եր.
ծոփ



13-ից մինչեւ գրքի վերջն եւ Ս. Անեցի 171—172)։

Ջալալ Բ-ին յաջորդում է իր որդի Աթաբակ Բ.[1]. Ազգուզէին յաջորդում է Տարսաին եւ Տարսաինի Այտինն, որի մասին ասում է Աղուանից Ջալալեան Եսայի կաթողիկոսի ժողոված արձանագրութիւնն. «ի ժամանակի սորա (Այտնի) ի զօրանալ Իսմայէլացւոցն եւ ի նուազել տանն Հայոց. ցիր եւ ցան-լինել իշխանացն Հայոց. յայնժամ այլազգիքն եւ գմուքն մեծ իշխանին Հասանայ պէթարմալ արարին. զնոյն պարոն Այտինն ի գլուան եւ երեք ամ աշխատեալ եւ թողում ինչ տալեալ՝ ազատեալ ի ձեռաց այլազգեացն զվանորայքս եւ զշինարէքն» (Արցախ եր. 207)։

Մի կնճռոտ խնդրի առթիւ հարկ եղաւ ձգել մի յետադէմ հոյլեայք եւ չեղուկ կարգից։ Տաշում 1838-ի տպուած ժամանագրքում ի շարս կաթուղիկոսացն Աղուանից գրուած են Ներսէս Գ. եւ Ստեփաննոս Ե. զկնի Տ. Ներսէս Բ-ի եւ Տ. Ստեփաննոս Դ-ի. Յ. Ե. Տահիաթունեան ասում է. «Տէր Սուքիաս, Տէր Պետրոս Բ. ի ՉՀԲ. թուականէն Հայոց մինչեւ ցՊԾԵ. (1323—1406) երկու կաթուղիկոսունք յետ նստեալ յաթոռ, որոց անուանք Սուքիաս եւ Պետրոս. ամք որոց անդեկութեամբ իշխանութեան նոցին անյայտ»։ Այսու ամենայնիւ երկոցունց պաշտօնավարութեան միջոցը նշանակած է 83 (ութսուն երեք տարի)։ Բայց թէ ո՞ր տեղ յիշատակուած են.—բնաւ չէ խօսում այս մասին։ Տահիաթունեանցն սխալմամբ կրկին տպագրուած է հաս մարում Ներսէս Գ. եւ Ստեփաննոս Ե. իսկ իմքն Ստեփաննոս Դ-ին Տէր Սուքիաս եւ Պետրոս կաթուղիկոսներին տալիս է 144 տարի։ Սակայն արդէնեւ անյայտ են դէթ երկու կաթուղիկոսներիս գահակալութեան եւ վախճանման տարեթիւերն եւ այլ հանգամանքներն, վասն որոյ թողնում ենք զանուածին այէս անփոփոխ, սպասելով ի կամաց թերցողաց եւ բանասիրաց։

1) «Արցախ» եր. 177, հատուած երրորդ։

Ըստ Շահխաթունեանցի 1406-ին Տէր Պետրոս Բ-ին 60) յաջորդում է Տէր Կարապետ. չգիտենք թէ սա ինչ գիտուածով հայրապետական աթոռը Գանձասարից փոխադրում է Ճալէթ գիւղի կողմն և շինում Ճալէթի վանքը Կապաղակ գաւառի լեռնամասում, հետևեալ արձանագրութեամբ. «Ցանուն Աստուծոյ ես Կարապետ կաթուղիկոս շինեցի զեկեղեցիս ի թվին ՊԿ.=1411-ին յիշատակ հոգւոյ իմոյ. յաղաւթս յիշեցէք». (Աղ. նրկ. եւ Դր. եր. 249).

## ԾԷ գլ.

Լանկ-Թամուրի ցեղի ջնջումը.—Սքանդարի արշաւանքը.—Երնջակ բերդի պաշարումը.—Ջահանշահի աշխարհակալութիւնը.—Օսմանցւոց ծագումը եւ զօրանալը.—Աթոռակալութիւն Տէր Դաւիթ Է.-ի, Տէր Յովհաննու Գ-ի, Տէր Աթանասի եւ Տէր Գրիգորի Ա-ոյ.—Ծագումն Մելիքութեան եւ իշխանութեան.—Մելիք-Շահի, Հասիր-Մելիք եւ Մելիք-Ուլուխանի.

Դարձեալ ծագում է նորից, արիւնահեղ պատերազմ մեռած Լանկ-Թամուրի որդւոց և թոռանց մէջ 1404-ին, որք յարձակվելով միմեանց վերայ, կոտորում են մէկմէկի նախագահութիւնը յափշտակելու համար. վերջը մնում է միայն Շահ-Ռուխ որդին Լանկ-Թամուրի.

Սելջուկեան Մահմուտի որդի՝ Կարա-Եւսուֆն, որ Սասունոյ ամիրան է լինում, տալիս է Հայաստանին և Պարսկաստանին մեծամեծ վնասներ. Իսկ սորա որդի՝ Սքանդարն աւերում է երկիրը, անում շատ կոտորած Վանայ կողմերում. փոխադրում իւր գերդաստանն Երնջակի ամրոցն, արշաւում Շամախու վերայ, անում կոտորած և գերեվարութիւն. անցնում Դարբանդի դռնով, կոտորում անհամար թաթարներ. և դառնում Երնջակի ամրոցն.



Շահ-Ռուխ, լսելով Սքանդարի գործած չարիքները, գալիս է Խորասանից և պաշարում Երնջակ ամրոցը. Սքանդարիս կինն և Շահղուբաթ որդին, տեսնելով որ ազատում չկայ Շահ-Ռուխի ձեռքից՝ ուրիշ որևէ միջոցաւ, խաւարեցնում են Սքանդարին, կտրում նորա գլուխը 1436-ին և յղում Շահ-Ռուխին.

Սպանուած Սքանդարիս եղբայր Ջահան-Շահն, որ Շահ-Ռուխից կուսակալ կարգուած էր Թաւրիզի նահանգին վերայ, Շահ է հաստատւում Պարսկաստանի վերայ և այնուհետև կոչւում Ջահան-Շահ (Թով. Մեծոփ. եր. 99—107).

Ջահան-Շահս տիրում է Արարատեան, Մեծ-Սիւնեաց և Աղուանից նահանգներին. ապա օր աւուր զօրանալով 1440-ին առնում է Շամշուլտէ քաղաքը, կոտորում 3000 մարդ և գերեվարում 9000 Վրացի և Հայ. 1444-ին գրաւում է Ախալցխա քաղաքը և գերի տանում շատ մարդիկ. Ջհան-Շահն այնուհետև հետզհետէ նուաճում է Շիրազ, Քիրման, Ասպահան, Խորասան և Հրէ քաղաքները, Եօզբէկ կոչուած թաթարները և սպանում Հրէ քաղաքին տիրող Պուսայիս-խանը, որ Լանկ-Թամուրի ցեղից էր. և հեռացնում թաթարները Աղուանքից, Վրաստանից և Հայաստանից և իւր որդի Հասան-Ալի-խանն կուսակալ կարգում Հին-Նախիջևանում(1).

Օսմանցիք ծագած են Գեօզ (Երկինք) խանի սերնդից. Դայալփի որդի՝ Սիւլէյման-խանն, որ իւր 5000 ծուխերով Սելջուկեանների հետ եկած և բնակած էր Եկեղեաց Երզնկայ գաւառում, Չինկիզ-խանի մեռնելուց յետոյ՝ դառնում է իւրայիններով գնալ իւր երկիրն Թիւրքեստանի Մահանս գաւառն, բայց խեղդւում է Եփրատ գետում,

1) Սամ. Անեցի եր. 172—174): Պատ. Առ. վ. եր. 485. Ջահան-Շահս Արաքացւոց պատմութեան մէջ կոչւում է Ջահան-Ամիրա, Ջահան-Սօլթան և Ջահան-Փաթիշահ:

որի մարմինը հանելով թաղում են իր չորս որդիքն Ճամ-պեր ամրոցի մոտերքում։ Չորս եղբայրներից երկու մեծերն դառնում են Խորասան. իսկ երկու փոքրներն-Դունդար և Էրթօղուլն բնակում են Բասենի դաշտումն։ Էրթօղուլն իր քաջութիւններով գրաւում է Ալահադդին-Սուլթանի ուշադրութիւնը, որից բնակութեան տեղ է ստանում Ղարաջա անուանեալ սարը, որ կայ Անկիւրիայ գաւառի արեւմտեան կողմում։ Էրթօղուլն պատերազմով առնում է մերձակայ Յոյներից Ղարաջա-Հիսարը և Կուտինայի ու Բեթանիայի մոտերքում ուրիշ տեղեր և մեռնում թողլով երեք որդի-Օսման, Կիւնդիւզալփ և Սաւճի, որ թաղում են իրենց հայրը Սէօկիւթ աւանում(1)։ Հետզհետէ յառաջադիմելով հիմնում են թագաւորութիւն, որ կոչւում է Օսմանի անուամբ Օսմանեան պետութիւն, Օսմանցիք, Թիւրք և Տաճիկ անունով սովորաբ։

1406—1442 Դահակալում են Աղուանքում: Տէր Կա-
61) րապետին յաջորդում է Տէր Դաւիթ Է.(2)
62) Տէր Մատթէոս Դ.
63) Տէր Աթանաս Դ.(3)։
64) Տէր Գրիգոր Ա.։

Թիւրքերն առնում են Կ. Պոլիսը և սկսում աջ ու ձախ ընդարձակել իրենց պետութիւնը։

Ջահան-Շահն, հետամուտ լինելով փառքը և առնելով Օսմանցւոց օր առաջ յառաջանալը, սկսում է զօրեղացնել իր տէրութեան ներքին քայքայուած ուժերը և մէն մի գաւառում վերանորոգել և կազմակերպել նոյն գաւառի սեփհական ուժը, որ նուաղած էր Թաթարաց և Սելջուկեանց երկարատեւ պատերազմներով, մանաւանդ Այրարա-

1) Պատ. Օսման. Ա. հատ. եր. 3—21։

2) «Այս է հանգիստ Դաւիթ կաթուղիկոսի ՊՂ. (1441) թվին»

3) Աթանասիս անունն և գերեզմանն կայ Դադի վանքում («Արցախ եր. 157. և 206)։



տեան, Մեծ-Սիւնեաց և Աղուանից բոլոր գաւառներում։ Այս պատճառաւ այդ նահանգների գաւառներում եղած իշխանները անուանում է Մէլիք և իրաւունք է տալիս իւրաքանչիւր Մէլիքի՝ պատրաստելով պահել զօրք և իւզ-բաշի անուանել իր զօրքի զօրավարը։ Իւրաքանչիւր Մէլիք պարտաւոր է 1000—2000 զինուոր պահել ըստ կարողութեան և ըստ քանակութեան հպատակ ժողովրդեան. և միենոյն ժամանակ ծանրացնում է հպատակների աչքունք հարկերը։

Այժմ համարեցինք զետեղել այս տեղ հետեւեալ հատուածը, որ գրուած է մի գրչագիր աւետարանի յիշատակարանում (Արցախ եր. 281). «Ի թուականութեան Հայոց ՋԴ=1455 ի կաթուղիկոսութեան տեառն Գրիգորի (Աղուանից) ի գահութեան Տաճկաց (Պարսից) Ջիհան Շահի ի դառն և ի նեղ ժամանակիս, որ ի խառնութենէ այլազգեաց սեռի, որ յահէ և յերկիւղէ նոցա մաշեալ և հալածական լինէաք, փախստեայք և մոլորեալք, գերեալք և տառապեալք։ Ի յառաւել խառնութենէ հարկապահանջութեան և հոլովութենէ գերելոյն և չքաւորութենէ ընչից ոչ կարէր օգնել եղբայր եղբօր և ոչ ողորմէր աղքատ աղքատի ...։ Եւ ես ... տառապեալ ծերունիս Գրիգոր՝ երերուն տառապեալ չքեցայ»։ Ահա այսպիսի մի դառն ժամանակում ծնունդ է առնում Մէլիքութիւնն։

Դիզակ և Վարանդայ գաւառների վերայ իշխում է Ախիջան կամ Հախիջան իշխանի որդի Մէլիք-Պապին. Խաչէն և Ջրաբերդ գաւառների վերայ՝ Ջալալեան Սայատն իշխանի որդի Մէլիք-Հասան կամ Հասան-Մէլիքն. Ծար և Սոդ գաւառների վերայ Շահնշահ իշխանի որդի Մէլիք-Ուլուբէկն, յորոց ամեն մին իւր իւզբաշիով և զօրքով սկսում է կառավարել իր գաւառը։

ՎԵՐՋ Ա. ՀԱՏՈՐԻ

# ՑԱՆԿ

## ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒԱՆՑ


Աբանդ գետ. Գետ—չայ 49.
Աբաս թագաւոր 183. 185. 187.
Աբաս իշխան 188.
Աբգար թագաւոր 51.
Աբդլ-Ազիզ քանաւոր 124
Աբլ-Աբաս թագաւոր 85.
Աբդլ-Մէլիք-Ամիրա. 118.
Աբդլ-Մէլիք ներքինի 123.
Աբու Մուսէ խալիֆ 131. 133. 134. 156. 157. 158.
Աբու-Սէթ Աշանշահիկ 157.
Աբու-Սէթ Հայրապետեան
Աբու-Սէթ Ցատիկեան 157.
Աբրահամ նահապետ 43.
Ազգաբանութիւն Աւետարանացի իշխ. 138—139.
Ազգաբանութիւն Գնտունեանց 151—152.
Ազգաբանութիւն Դաղայ իշխ. 132—133.
Ազգաբանութիւն Դիզակի իշխ. 131—132.
Ազգաբանութիւն Խաղբակեանց 143.
Ազգաբանութիւն Հաթերքի իշխ. 139—141.
Ազգաբանութիւն Ծարի իշխ. 135—137.
Ազգաբանութիւն Մեծ-կողմանց 145.
Ազգաբանութիւն Կիւրիկեանց 148—149.
Ազգաբանութիւն Շափուրեանց 149—151.
Ազգաբանութիւն Ջրաբերդի իշխ. 146—147.
Ազգաբանութիւն Ջալալեան իշխ. 141—143.
Ազգաբանութիւն Փոյիզի 132.
Ազգաբանութիւն Ոսկանապատի իշխ. 149—150.
Աթաբակ Ա. Ջալալեան 142. 203.
Աթաբակ Բ. 142. 209
Աթանաս եպիս. 194.
Աթանաս վարդապ. 72.
Աթաշկեաշ 40. 41.
Աժդահակ թագ. Մարաց 40.
Ալազան գետ 95.
Ալադիզ ամիրա 178.
Ալահադդին սուլթան 212.
Ալանք 5. 19. 24. 52. 53. 78. 95.
Ալբանիա 9. 20. 21.
Ալհարակ լեռ 187.
Ակհուալան 117
Ախալցխա քաղաք 211.
Ախիջան կամ Հախիջան 213.
Ախտի քաղաք 27.
Ակնայ ամրոց 199.
Աղեքսանդր Մակեդոնացի 43. 53. 67. 95. 96.
Աղուանից ազգ 12. 20. 29.
Աղուանից երկիր 6. 9. 10. 12. 20. 21. 33.
Աղուանից, Լփնաց եւ Չողայ կաթ. 101.
Աղուանից պատմութիւն 33. 37.
Աղուանք բնակիչք 9. 11. 14. 18. 27. 28. 29. 33. 34. 36. 38. 39. 40. 42. 43. 44. 45. 46. 47. 48. 49. 50. 51. 52. 53. 58. 59. 60. 63. 65. 67. 69. 71. 72. 73. 74. 79. 87. 89. 91. 92. 94. 96. 97. 102. 106. 110. 111. 113. 116. 118. 119. 125. 130. 135. 156. 162. 177. 179. 183. 185. 201. 202. 211.
Աղուէ գաւառ.
Աղսարթան որդի Աբասայ 188. 192.
Աղսարթան որդի Կիւրիկէի 188. 192.
Աղ-սու գետ 90.
Աղստեւ գետ 18
Աղփիւրի թուեր 113. 114. 115.
Ամարասայ վանք 57. 62. 83. 134. 203. 205.
Ամենափրկիչ վանք կանգուածի 193.
Ամենափրկիչ վանք
Ամիր Մամին 134.
Այ-խան 176
Այդին իշխան Գոմեանց 209.
Անաստաս կայսր 85.
Անկիւրիա 212.
Անդակ իշխան 69. 70.
Անի քաղաք 171. 191.
Անուշ 41
Աշոտ իշխան Բագրատ. 159.
Աշոտ ողորմած 169. 170. 171.
Ապաղա-խան 205
Ապլասար ամիրա 177. 184.
Ապլասար որդի Փաղլոնի 182. 184.





Աջամի իշխան 123
Առանոյ կամ Ըռնոյ երկիր. տե՛ս Աղուանք:
Առան կուսակալ. 9. 14. 21. 43. 45. 46. 47. 91. 98.
Առան շահ 9. 21.
Առան-Շահիկ կամ Եռան-Շահիկ տոհմ 13. 14. 15. 90. 91. 98.
Առաքելոց վանք 194.
Առայ թագաւոր Աղուանից 65.
Ասիա 11. 12. 199.
Ասորիք 40. 41. 44. 69. 108. 201. 202.
Ասպահան քաղաք 93.
Աստղաբլուր 71. 72. 110.
Աթիս ափկին 174.
Ադրանոյ 42.
Արա գեղեցիկ 41
Աստա խոտխոռնի 92.
Ատրներսեհ թագաւոր Աղուանից 33. 136. 160. 164. 165.
Ատրներսեհ իշխան Աղուանից 129. 130. 136. 157. 158. 159. 161.
Ատրներսեհ իշխան Վրաց 105.
Արաբացիք 9. 16. 19. 21. 102. 103. 107. 109. 110. 113. 117. 118. 122. 156. 159. 170.
Արածանի Արուճ գաւառ 90.
Արամ նահապետ 40. 41.
Արարատ ամնագիր 42
Արարատեան թագաւորութիւն 42.
Արարատեան նահանգ 77. 191. 211.
Արբէլայի պատերազմ 42.
Արզու խաթուն 193.
Արծրունիք 159.
Արղուն 202.
Արմեյէլ Սասմնեան 93. 94.
Արշակ Ա. թագաւոր Հայոց 44.
Արշակ Բ. թագաւոր Հայոց 63
Արշակ Ա. թագաւոր Պարսից 43. 44.
Արշակունիք 28. 30. 43. 48. 73.
Արուեծան 106.
Արսվաղէն թագ. Աղուանից 65.
Արտաշէս Ա. 19. 23. 45. 46.
Արտաշէս Բ. 52. 53.
Արտաւազդ Ա. 46.
Արտաշատ քաղաք 47.
Արտաւէլ 191.
Արտաշիր 69. 73.
Արտեւան թագ. Պարթեւաց 47.
Արցախ նահանգ. 6. 9. 19. 44. 52. 57. 62. 71. 94. 97. 99. 157. 166. 182. 189. 191. 192. 209.
Աւագ եւ Գրիգոր եպիս. 194.
Աւագ որդի Շահանշահի 200.
Աւան մեծ իշխան 132
Աւպեթլա կամ Օբեթլա 129
Աւշարան Թերակղի 11
Ափիոպք 197.
Աֆշին ոստիկան 160.
Աֆղաններ 208.
Բաբ ի Հրաճատեան ազգէ 123.
Բաբան 129. 133. 134. 135.
Բաբիկ 70. 71.
Բաբիլոն-Բաղդատ 41. 42. 134. 157. 158. 207. 208.
Բագտորիա 44.
Բագու 5. 30. 51.
Բադուր թագաւոր Վրաց 66.
Բագրատունիք 159.
Բաթու 198. 199.
Բաթլարբեան 95.
Բակ իշխան Ա. 144.
Բակ իշխան Բ. 144.
Բաշլուան 188.
Բահլ-Պուան 12. 21. 23. 74. 198. 207.
Բաղք կամ Բաղաբերդ 69. 86. 161. 173. 179.
Բաղանիս գետ 29.
Բաղասական գաւառ 5. 24. 25. 127.
Բաղասական գետ 12. 23. 24. 30.
Բաղդասար Մետրապոլիտ 197.
Բայտու-խան 203. 205.
Բասեն գաւառ 203. 212.
Բալայց գետ 54. 59.
Բարդուղիմէոս առ. 56. 120. 167.
Բելուկան քաղաք 19.
Բեխ գաւառ 127.
Բերդակուր 133.
Բերդաձոր գաւառ 130. 133.
Բերդաձորի բերդերն Ամատեղ-Թոհմաս, Գլալուլու եւ Խցաբերդ 154.
Բերլան գետ 207.
Բէկնազարեանց 132
Բիւրիոն քոյր Աբասայ 183.
Բու-Ջաբարէ 152. 191.
Բնդոյ եւ Վասամ 90.
Բնոս աղանդաւոր 88.
Բուխարա 198.
Բուղա ոստիկան 157. 158.
Բում 40.
Բուրթել եւ Սաթուն 200.
Բէնի 177. 190.
Բոզ-դաղ 28
Բոռամ աւեր. քաղաք 19.
Գագ բերդ 6. 184. 194. 199.
Գադայ դաշտ 18. 184. 188.
Գադայ Ս. Սարգիս 18. 175. 184. 188. 194.
Գագիկ թագաւոր Դիզակի 131. 157. 160. 192. 193.

Գագիկ Ա· Բագրատունի 175· 176·
Գագիկ իշխան Աղուանից 131· 152·
Գագիկ իշխան Վանանդի 179·
Գագիկ որդի Վարազ-Տրդատի 118· 123· 124· 129·
Գազան 71·
Գաղբիկ 24·
Գայլ եւ Կարա 176·
Գայլուփ 211·
Գայշակ 97·
Գանձակ քաղ· 17· 19· 22· 134· 175· 177· 178· 179· 181· 184· 187· 189· 193·
Գանձասար վ· 192· 193· 195· 203· 210·
Գառնի գաւառ 199·
Գասքուն գետ
Գարաջա սար 212·
Գարդ-ար գետակ 18·
Գարգարացւոց դաշտ 6· 10· 17· 18·
Գարգարացիք 14· 18· 19· 21· 37· 56· 57·
Գարդմանի բերդերն Աղուանի· Ուղենաբերդ, Գարդման, Գայլ-Բերդակ, Բարձներէ եւ գետառակն.
Գարդման գաւառ Արցախի 13· 14· 15· 56· 68· 182· 191· 192· 193·
Գարդման բերդ Շամախու 90· 91· 98· 102· 108· 117· 121· 127·
Գարդման գաւառ Շամախու 13· 14· 15· 30· 56·
Գարդմանցիք 12· 13· 14· 15· 21· 37·
Գաւարգին ամրոց
Գաւ գաւառ 27·
Գեգեհոն թագ· Բասլաց 59·
Գեղամայ լիճ 19· 135·
Գեղարքունի գաւառ 191·
Գեղաւնու· տես Կապաղակ·
Գեոււմ պատանի իշխան 202
Գետաբակ 199·
Գետակից վանք Շամբուրա 188· 194 195·
Գետամիջի վանք Դարի 193·
Գերմանիկոս 20· 47·
Գեօզ-խան 176· 211·
Գեօրգի Թագաւոր Վրաց 182· 184· 189·
Գէորգիոս մեծ նահատակ 134·
Գիս վանք 51· 52· 67· 110·
Գիւտ եպիս· կաթ· 58· 77· 79·
Գլխոյ-Հիւսիսոյ-վանք 52· 83· 193· 194· 203·
Գղուար 27· 56· 67·
Գոմեր 20·
Գովզայ երկիր 112·
Գոր 71·
Գուգարք 19·
Գուրգէն թագ· 169· 171· 172·
Գուսար գաւառ 27·
Գուրի գաւառ 27· 28·
Գոշայ վանք եւ տաճարք 123· 193· 195·
Գրիգոր իշխան Անեցի 179· 180·
Գրիգոր Ա· իշխան Ճարի 159· 161·
Գրիգոր Բ· իշխան » 136· 161· 164· 165·
Գրիգոր Գ· իշխան » 136· 192· 193· 202·
Գրիգոր իշխան Մամիկոնեան 115·
Գրիգոր եպիս· Գանձակայ 185·
Գրիգոր եպիս· Դադի վանքի 195·
Գրիգոր եպիս· Շամբուրայ 195·
Գրիգոր եւ Եղիա վարդապետք 195·
Գրիգոր թագ· Բաղաց 139·
Գրիգոր թագ· Գարքանդի 180· 181·
Գրիգոր թագ· Փառիսոսի 176· 178·
Գրիգոր փառաւոր իշխան 192·
Գրիգոր եպիս Խաչենի 202·
Գրիգոր Մագիստրոս 178· 180·
Գրիգոր իշխան որդի Համամայ 175· 178·
Գրիգոր իշխան Հաղբակեան 198·
Գրիգոր Նարեկացի 32·
Գոշ-Մխիթար վարդ· 6· 37· 41· 58· 91· 195·
Դաւութ-խան 176·
Դաղստան 5·
Դամասկոս 177·
Դաշտաւորան գիւղ 117·
Դաշտուրանցի 160
Դադի վանք 56· 130· 193· 195·
Դարբանդ 5· 9· 12· 17· 23· 25· 30· 60· 76· 95· 96· 97· 125· 156· 170· 171· 173· 177· 181· 199· 210·
Դարբանդեանք 23· 25· 73·
Դարբանդական պարիսպ 26· 27· 28· 44· 97·
Դարբանդի դրան անուններն 28· 53· 54· 97· 95·
Դարեհ թագ· 42·
Դարեհ-Կոդոմանոս 42· 48·
Դաւալի գետ 26
Դաւթակ բանաստեղծ 112·
Դաւիթ Անհողին 171· 175· 176· 177· 178·
Դաւիթ վարդ· Աղուանից 196·
Դաւիթ թագ· Վրաց 184· 188·
Դաւիթ թագաւորազն 183· 185· 187·
Դաւիթ իշխան Նոր-բերդի 187· 188·
Դաւիթ փառաւոր վարդ· 185·





Դեղմն կամ Դեղեմէնի ցեղ 105· 172·
Դեղձուտի վանք 194·
Դեմետրէ թագ· Վրաց 184· 187·
Դերբենտ 205·
Դէնիզ-խան 176·
Դիզակ գաւառ 15· 19· 83· 130· 131· 133· 160· 192· 193· 213·
Դիզակ գաւառի բերդերն Դիզափայտ, Դող կամ Դոխ, Կենաց զալա, Կերճաքի կամ Քերթ բերդ 154· 157·
Դիզափայտ վանք 62·
Դիլի եւ Միւլթէ քաղ· 208·
Դիւտական գիւղ 31· 94·
Դիւտական մատուռն 84·
Դմանեաց քաղ· 175·
Դոն գետ 24· 208·
Դուան Զաղայ· տես Դարբանդի անուններն·
Դունդար եւ Երգուղուզ 212·
Դունի քաղ· 88· 89· 184·
Դոփ կին Վարազ-Գրիգորի 136·
Եղեկիէլ մարգարէ 71·
Եղէգ-խան 176·
Եւթի խաթուն 201·
Եւթի Շիրուանշահանց 145·
Եղակուզ 182· 187· 188·
Եղիազար եպիս· 121·
Եղիշ կամ Եղիշ-Առաքեալ Ջրվշտիկ վանք 51· 52· 58· 59· 61· 86· 120· 167· 168· 183· 194· 195·
Եղիշէ եւ Խաչ աշակերտք Թադէոս Առաքելոյ 56·
Եղիա աղանդաւոր 88·
Եղիա եւ Դանիէլ որդիք Մանասեանայ 62·
Ենիքա 111·
Երասխ գետ 44·
Երանշահիկ-Պասարիկ 124·
Երեմիա մարգարէ 41·
Երզնկայ գաւառ 211·
Երի (Վերի) վանք 193·
Երմողեայ մատուռն 192
Երնջակ բերդ 210· 211·
Երուանդ թագ· 52· 53·
Երուսաղէմ 51· 71· 89· 116·
Եւրոպա 11· 12· 21· 29·
Եփրատ գետ 57· 212·
Զարդմանոս թագ· 23·
Զարդուն 52·
Զարմիհր 99·
Զարմիհր ի Վարազ-Բագրատեան ազգէ թագաւորաց 123·
Զաւէ (Զաղախ) գաւառ 29· 171· 182·
Զաւէ գաւառի բերդերն Շար-խաչ գիւղի մօտ· Մանքայ-դղյա· Կայծնիբերդ· Մրճանոր· Ներդաքար· Գոշկարի (Դեմիր) բերդ· Նիկոյ-Ծառ-բերդն եւ Դաթայ բերդերն 155·
Զաքարիա սարկաւագ 151·
Զաքարէ ամիրսպասալար 183· 184· 188· 190· 191·
Զաքարիա որդի Սարգսի 183·
Զաքարիա վարդ· ապա կաթ· 94·
Զօկեր (Ագուլեցիք) 17·
Զենոն կայսր 85
Զենոն 47·
Զուբով զօրավար 20·
Էմին պրոֆեսոր 30·
Էօզբէկ թաթարք 211·
Ըստատակ գաւառ 73·
Ըստատակ գաւառի բերդերն Հաւքախաղաց· Հաւաշաներկո· Բերդաքար (Ջաթերք) եւ Ականնոյ 154·
Թագուհի նահատակ 72·
Թադէոս Առաքեալ 51· 56· 120· 167· 168·
Թադէ աշակերտ յառաքելոյ 56·
Թաթարներ 156· 176· 198· 202· 204· 206· 207· 209·
Թալխադին 188· 200·
Թամար թագուհի 184·
Թամթա տիկին 191·
Թանգրի-խան արձան 114·
Թարթառ կամ Տրտու գետ 56· 71· 75· 121·
Թարմաշ զօրավար 125·
Թաւասպարան կամ Թաւսպարք 26· 27·
Թաւրէժ (Թաւրէզ) 59· 207· 214·
Թէոդորոս ի Յանդուղեան ազգէ 123·
Թէոփիլոս ձնդաղետ 72· 84·
Թիւրքեստան 106· 109· 198· 211·
Թիւրք կամ Թուրք· Տաճիկ· Մամանցիք 176·
Թիֆլիս (Տփխիս) 97· 99· 175· 184· 199·
Թոքլեան զօրագունդ 71·
Թոխթամիշ-խան 207· 208·
Թոզլու-Բէկմիր-խան 207·
Թովմա իշխան 132·
Թրակիա 93·
Իբաս եւ Թովմաս 88·
Իզմիրեան մրցանակ 6·
Ինքնակալ կաթուղիկոսներ
Սիմէոն, Դաւիթ, Սահակ եւ Գագիկ } 34·
Իշխան 132· 161· 192·
Իշխանակ կամ իշխան թագ· 93· 136· 161· 164· 168·

Իսրայէլ եղիա 113. 114. 115. 116. 121.
Իսմայէլացիք. Հագարացիք եւ Արաբացիք. տես Արաբ.
Իրթկին խրանց 115.
Իւանէ Երկայն Ջալալ-Դօլայի 142.
Իւանէ սպասալար 183. 190. 191. 198. 199.
Լամբարան 19.
Լանկ-Թամուր 206. 207. 208. 210. 211.
Լեկ. Լեկզի 24. 26.
Լէլքարի 178.
Լիւլաստղ (Վարնկաթաղ) գիւղ 31.
Լփնաց երկիր 5. 28. 51.
Լփնիք 25. 26. 27. 28. 30. 51. 56. 67. 74. 87. 100. 170.
Լոռէ կամ Լոռի բերդ 171. 178. 182. 188. 199.
Լոռի գաւառ 171.
Խաղը-փաթգոս 133.
Խազիրք 5. 11. 12. 24. 29. 35. 54. 69. 90. 124. 125.
Խազրաց դուռն 31. 87. 97. 99. 101. 108. 119. 122. 126.
Խաթրայ վանք 193. 195.
Խաղխաղ քաղ. 71. 76.
Խամշի վանք 190. 194. 201.
Խաչատուր վարդ. Տարօնացի 195.
Խաչենաք կամ Խաչենաանք 12.
Խաչէն գաւառ 33. 164. 165. 166. 173. 178. 187. 189. 190. 213.
Խաչէն գաւառի բերդերն Սկրտեանբերդ. Խօխանաբերդ. Շիկաքար-կայաղաշատերդ. Նափարիզ գղյակ խոխանաբերդ 154. 200.
Խաչէն գաւառի ժողովն 166—167.
Խալ-մաս գիւղ Դուքայի 26.
Խենիգաւառ 127.
Խըզըլ ամիրա 182. 183.
Խլաթ 191.
Խողման կամ Հողման (Հողի) գաւառ 127.
Խոշնի-խոշորնի գիւղ 183.
Խոյտա փաոգոն 135.
Խոսրով Ա. թագ. Հայոց 54.
Խոսրով Բ. թագ. Հայոց 63.
Խոսրով Բ. · Պարսից 90. 92. 94. 97. 98. 102.
Խոսրովանուշ տիկին 106. 174.
Խորազմների երկիր 69. 176. 198. 207.
Խորանաշատ վանք 194. 195.
Խորասան 69. 181. 207. 211. 212.
Խորիշահ տիկին 142. 193.
Խուձիպայ վանք 194.
Խուբա իշխան 68.
Խրանց-խորզիկ 27. 28.
Ծաղկոցի վանք 194.
Ծանոր 19. 90.
Ծոփ-Միաֆարկին Աստան 14. 130. 154. 160. 161. 193. 195. 213.
Ծիրանի Գրիգոր.
Ծովքեացիք 14. 19. 57. 74.
Կազբէկ սար 23.
Կախուան 40.
Կածարէթ 199.
Կաղանկատու գիւղ 30. 31. 94. 123.
Կաղանկատուացի Մովսէս 5. 11. 14. 20. 22. 26. 30. 32. 33. 34. 35. 48. 100. 101. 113. 167. 168.
Կամրջէձ (կամրջաձոր) գաւառ 105. 127.
Կայեան եւ Կոյծոն բերդեր 184.
Կայծոյ բերդ 192.
Կաշկար 207.
Կապաղովկացիք 22.
Կապաղակ գաւառ (Կապաղատ) 16. 51. 59. 112. 127. 170. 200.
Կապոյտ-կասպից-ցեղ 12. 23. 28. 67.
Կասպից երկիր 23. 28.
Կասպից ծով 9. 10. 21. 23. 25. 26. 29. 44. 49. 96. 176.
Կապուտայ վանք 194.
Կատայ թագուհի Հասան թագ. 139. 140.
Կատարոյ վանք (Մուսաքի սուրբ) 123.
Կարին 191.
Կ. Կոստանդեանց 15. 23.
Կ. վարդ. Շահնազարեանց 20. 30. 49. 94.
Կաւատ Բ. 98.
Կեսարիա 57.
Կեսարացիք 17. 18.
Կեսուրացիք-կէլար 20.
Կեփաս 187.
Կիլիկիա 180.
Կիւն խան 176.
Կիւնդիւղ Ալի եւ Ապշի 212.
Կիւրիկէ թագ. 171. 179. 180. 181. 182. 183. 185.
Կիւրիկէ իշխան 187. 194.
Կիւրիկէ վերջին իշխան 188.
Կիւրիոն կաթ. Վրաց 91. 120.
Կիւրոս թագ. 21. 22. 40. 41. 42. 43.
Կողթ աշխարհի Բերդաւուր. Կեթըղկեատրան 100. 121. 171. 182.
Կոճողուտ գիւղ 193.
Կողթ գաւառ 16. 192.
Կոշիկ անապատ 193.
Կովկաս մեծ լեռնաշղթայ 26. 44. 96.
Կովկաս մեծ սար 10. 24. 49. 67.



96. 169.
Կ. Պօլիս 93. 109. 118. 124. 159. 199. 205. 212.
Կոսիս կամ Օրեգես որդի Վաչականի Ա-ոյ 48. 49.
Կոստանդիանոս Ա. կայսր 59. 94.
Կոստանդին կայսր 106. 107. 109.
Կոտէից գաւառ 199.
Կորսուած եւ գտնուած ձեռագիրք 197.
Կուր գետ 9. 16. 18. 19. 29. 49. 53. 71. 105. 126. 169.
Կուրճի Բաարագին 189.
Կուզեն գիւղ 151.
Կորիճ իշխան 157.
Հաբանդ. գետ Գեօղ չայ 127.
Հաբանդ. գաւառ տես Վարանդայ.
Հաթերք 71. 192. 199.
Հակարի գետ 9. 10.
Հաղարծին վանք 195.
Հաղբատ վանք 178. 180. 182. 183. 187. 193.
Համամ թագ. 33. 34. 159. 160. 162. 163. 164.
Համամ իշխան Գանձակի 179.
Հայաստան 16. 18. 20. 22. 23. 26. 38. 40. 44. 46. 47. 51. 53. 55. 57. 58. 64. 65. 73. 76. 77. 94. 110. 117. 118. 201. 202.
Հայք 9. 13. 14. 21. 24. 27. 37. 38. 40. 42. 48. 52. 54. 63. 65. 69. 72. 73. 76. 78. 79. 89. 91. 92. 116. 118. 119. 135. 157. 158. 165. 177. 198. 209.
Հանդաբերդ եւ Դզզալա 154.
Հաշտարխան 202.
Հասան-Ալի-խան 211.
Հասան Ա. 209.
Հասան իշխան Գետուտեանց 178.
Հասան-Դայա գիւղ 16.
Հասան Կայենոյ բերդին 192.
Հասան որդի Պռօշի 200.
Հասան Ճերանչահանց 200.
Հարճլանք գաւառ 15.
Հաւապտուկ վանք 193.
Հաւարիկ գիւղ 16.
Հեփթաղ 28.
Հեթում թագ. 204.
Հեճար գաւառ 91. 127.
Հեծկաստակ ցեղ 12. 27.
Հեռան թագ. 24.
Հերակլ կայսր Յունաց 31. 93. 94. 97. 98. 107.
Հին-Նախիջեւան 199. 211.
Հիւսէյին-խան 207.
Հնախօսութիւն Գ. Վ. ինճ. 23. 29.
Հնդկաստան 198.
Հոմնք 40. 52.
Հուլաւու 198. 203. 204.
Հում 54. 55. 198. 201.
Հռովմայեցիք 18. 46. 48.
Հրահատ եւ Տրդատ իշխան 47.
Հրեշտակապետաց վանք 194.
Հրէայք 12. 30.
Հրէ քաղաք 211.
Ձագիկ 125.
Ձիրաւ դաշտ 64.
Ձորաբնակք 29.
Ձորագետ 9. 18. 29. 161. 171. 183.
Ձորագետացիք 29.
Ղազար փարպեցի 34.
Ղազուին 203.
Ղափիլար (Խաղլու) գիւղ 16.
Ղառը-Բիօրփի կամ Քառասի կամուրջ 31.
Ղարա Իւսուֆ 210.
Ղուշղաթան գիւղ 29.
Ղուբա քաղաք 5. 26. 27. 30. 40. 170.
Ղուբա գիւղ 26.
Ղրիմ քաղ. 20.
Ճալէթ վանք 210.
Ճալէթ գիւղ 210.
Ճամպէր ամրոց 212.
Ճառ 5. 19.
Ճիղբ 26.
Ճղբաց երկիր 51.
Ճղբաց տոհմ 26. 27. 56.
Ճշեվանք չէն 29.
Մազքթաց ցեղ 12. 25. 30.
Մազքութք 25. 61. 62. 75.
Մակարայ վանք 193. 194. 195.
Մամակ գիւղ 27.
Մահանայ գաւառ 211.
Մահմատ ի Ճերաջեան ազգէ 123.
Մահմուտ 210.
Մամ պարսիկ կին 175. 178.
Մամասէ նահատակ 89.
Մամասէի վանք 83. 89.
Մամաստ զօրավար 124.
Մամքան տիկին Հասանայ 136.
Մամքան տիկին Ջալալ Դօլայի 174.
Մայրաքաղաք ամրոցի Ջրաբերդի 193.
Մայրաքաղաք վանք Վաղահասի 193.
Մանկիկ եւ Միրզագամ 124.
Մանուչէ 184.
Մաշտոց. տես Ա. Միսրոպ.
Մաջառ գիւղ 26.
Մասոն 164.
Մասուտ սուլթան 188.
Մատաղիս չէն Ջրաբերդի 31.
Մարանդ գաւառ 191.

Մարաց Թագաւորութիւն 22· 23·
Մարալեան Սարով 16·
Մարգարէ եպիսկոպոս 194·
Մարզպան գաւառ· տես Գարդման գաւառ Շամախու·
Մարկոս վարդապետ 262·
Մարք 40· 41· 53·
Մեծ-Արանց կամ Մեծ Իրանաց գաւառ 87·
Մեծ-կողմանք կամ Կուանք (Կիւլստան) գաւառ 31· 116· 192· 193·
Մեծ-կողմանց բերդեր Ջրաբերդ· Մայրաբերդ· Մելիք-Բէգլարեանների ամրոցներ· 154—155
Մեծն Երիտասարդ 20·
Մեծն-Կիրակոս 14· 16· 19· 23· 64·
Մեծ-Սամուէլ գետ 10· 27·
Մեծ-Սիւնի 18· 33· 34· 56· 69· 70· 86· 94· 103· 109· 166· 178· 182· 191· 199· 212· 213·
Մելիք-Աշրաֆ 191·
Մելիք-Շահ 177· 179· 181·
Մելիք-Սուլթան 184·
Մելիք-Համիր 213·
Մելիք-Մամեթ Խանեանները 150·
Մելիք-Նորիման 151
Մելիք-Ուլուբէկ 213·
Մելիք-Ուլուխան 210·
Մելիք-Պապի 213·
Մելիքներ Նոլլասեր գիւղի 132·
Մելիքներ Գեղամի 132—133·
Մելիքներ Մեծ-Մազրայ գիւղի-Սօղի- 137—138·
Մելիքներ Վաղարշապատ Աւետարանոցի 138—139·
Մելիքներ Ջալալեան տոհմի 143·
Մելիքներ Ջրաբերդի 146·
Մելիքներ Կիւլստանի 147·
Մելիքներ Ոսկանապատի 150·
Մելիքներ Մեծ-Վարանդայի 151·
Միայնէլ ճգնաւորէր եպիս· 197·
Միափոր գաւառ 190·
Միլին քաղաք 19·
Միհրդատ 47· 48· 49·
Միհրան Սասանեան 29· 30·
Միհրաւան 64· 91·
Միջին վանք 193·
Մինիմ 125·
Միրզաբէկլու 16·
Միր-Դաւիթ-խան 150·
Միւժի գիւղ 30·
Միրայէլ տէրտի 61·
Մլընաբերդի վանք 193·
Մխիթար Այրիվանեցի 63· 180·
Մծբին 44·
Մոդղուկ 26·
Մամիկոն 43·
Մոնկես 208·
Մովսէս Գաղանկատուացի 33· 35· 36· 117·
Մովսէս եւ Անդրոնիկէս 72·
Մորոյ Ձորոյ վանք 194·
Մուխանք գաւառ 133·
Մուծիք եւ միւսք 82·
Մուղանի դաշտ 5· 10· 18·
Մուշ 24·
Մսոսի (Կոստանդնի) սուրբ 84·
Մօրիկ կայսր 90· 92· 93·
Յազկերտ Բ· 21· 74· 76·
Յազկերտ Գ· 103· 104·
Յակոբոս Ռուփեան 51·
Յակոբ պատրիարք եպիս· 33· 34· 162·
Յակոբ եւ Իշխանուհի 85·
Յեղուտ—կապոյտ 104·
Յեսէ 159·
Յոյներ 76· 92· 102· 103· 118· 119· 159· 201· 202·
Յովել եպիսկոպոս 113·
Յովհաննէս եպիս· Խրոտա· 88· 89·
Յովհաննէս եպիս Խաթրայ վան· 193·
Յովհաննէս եպիս· Կապան· 121· 123·
Յովհաննէս եպիս· Մակարայ վ· 195·
Յովհաննէս եպիս· Շիրուանշահեանց 193·
Յովհաննէս Թագ· Բագ· 177·
Յովհաննէս եւ Գրիգոր վարդ· 195·
Յովհաննէս սարկաւագ վարդ· 37· 179· 180· 194· 195·
Յովհաննէս վարդ· Նորքեցի 37·
Յովհաննէս Տէրանց տէր 135· 136·
Յովնաթան աշակ· Ս· Մեսրոպայ 66·
Յովսէփոս պատմ· Հրէից 53· 95· 96·
Յովսէփոս որդի Կարբէրի 95·
Յովսէփայ վանք 121·
Յուստինիանոս կայսր 63·
Նանա տիկին Աղուանայ 188·
Ներսէհ—Պժնդակ 129· 130· 131· 159· 192·
Ներքին—Խաչէն· Խաչէն 15·
Նիժ 6·
Նոր—Արմուտիր 18·
Նոր—Բերդ 199·
Նոր—Ոսկեպար 29·
Նոր—Պիպիս—Ջողաս 29·
Շատ արքայորդի 35· 99· 100· 101·
Շաթ խաչր 115·
Շակաշէն գաւառ 16· 22· 106· 134·
Շանք կամ Սանք 12· 16· 18· 21· 22·
Շահի—Արմէն 19· 190·





Շահանշահ իշխան· Սօղի 213·
Շահանշահ որդի Զաքարէի 191·
Շահ—Ռուհ 210· 211·
Շահանդուխտ դուստր Սեւադայի 174·
Շահանդուխտ դուստր Վասակ—Տէրդատայ 173·
Շալաթ գիւղ 69·
Շահր—Վարազ 94·
Շամախի 50· 90· 192· 210·
Շամախու գաւառ 5· 156· 169·
Շամիրամ Թագուհի 41·
Շամիրամայ բերդ 178· 179·
Շամիրամաձոր 185·
Շամշուլտէ 175· 211·
Շամքոր քաղաք 19· 129· 178· 189· 191· 199·
Շապուհ Ա· 55·
Շապուհ Բ· 53· 59· 63· 64· 68· 70·
Շապօրան քաղ· 184·
Շարունակութիւն ազգ· Միհ· տոհմի 129—135·
Շարի գաւառ 15· 90· 127· 169·
Շաքի գաւառի բերդերն 155—156·
Շաքի (Նուխի) քաղ· 14· 40· 90· 124· 133· 156· 199·
Շերոյ մեծ իշխան 121· 123· 152·
Շիկաքար ամրոց 129· 133·
Շիրազ· Փիրման 211·
Շիրակ 191·
Շիրվանշահեանց տոհմ 192· 193·
Շիրին Թագուհի 84·
Շուշանիկ Թագուհի 84·
Շուշի 209·
Շօթ ամրոց 178·
Ոսկի 131
Ոստանի գաւառ 127·
Որմիզդ Դ· 77· 90·
Որոգիս Թագաւոր· տես Վաչական Ա·
Որոտն 47·
Ուռնայր Թագ· 55· 56· 57· 58· 59· 60· 63· 64·
Ուտեաց դաշտ 10· 18·
Ուտեաց տոհմ 16· 22· 31·
Ուտեաց նահանգ 16· 51· 67· 72· 93·
Ուտէացիք 15· 16· 18· 19· 21· 28· 37· 56· 93· 113·
Ուտի—Առանձնակ գաւառ 9· 16· 31· 75· 94·
Ուրացեալ Միհրանժան 63· 64·
Ուքան որդի Ջալալ—Դօլայի 103·
Չարաբերդ· տես Ջրաբերդ·
Չարեք կամ Մամուշա բերդ 193· 199·
Չարաղան 198· 199· 201·
Չերքէզ· Չէչէն 24·
Չինատաւն 178· 198·
Չինկիզ—խան 198· 206· 211·
Չողայ քաղաք 25· 28· 151· 64· 67· 75· 87·
Չոլի ամիրա 187· 192·
Պազկանք գաւառ 133·
Պանդալիոն որդի Վաչական Գ-ի 84·
Պանդալիոնի վանք 89·
Պապուք Հաղբակեանց 198·
Պապ Հրահատեան 152·
Պապ Թագաւոր 63·
Պարգեւան 178·
Պատրիկ ի Բարթեան ազգէ Թագ· 123·
Պարթեւք 43· 44·
Պարթեւաց երկիր 73·
Պարթեւաց Թագաւորութիւն 44·
Պարսիկ 9· 12· 16· 21· 22· 24· 27· 29· 42· 43· 54· 59· 62· 63· 65· 69· 73· 76· 93· 96· 105· 106· 156·
Պարսկաստան 44· 94· 98· 99· 102· 103· 104· 134· 177· 178· 198·
Պարտաւ քաղաք 19· 28· 31· 35· 75· 87· 94· 97· 98· 99· 101· 103· 108· 111· 113· 121· 124· 126· 127· 128· 133· 152· 160· 177· 178· 179· 199·
Պըլեման 47·
Պետրոս եպիս· Տիգրանակ 123·
Պերոզ Թագ· 24· 75· 77· 78· 80· 83·
Պլինիոս 25·
Պոմպէոս 48· 49· 50·
Պոնդացիք 22·
Պոնդոս 47·
Պուղար զօրավար 179· 181·
Պուղա ոստիկան 157· 158·
Փանահ—խան 211·
Պաղոմեան եղբարք 11·
Պօղոս Աղուանից վանական 123·
Ջալալադին Սուլթան 190· 198· 199·
Ջալալ—Դօլա 174· 192· 198· 200· 203·
Ջալալ Բ· 209·
Ջալալ իշխան 132· 205·
Ջահան—Շահ 210· 211· 212· 213·
Ջաղու 66·
Ջանի-բէկ 207·
Ջաջուռ իշխան 192· 193·
Ջաւաց զօրավար 125·
Ջափար ամիրապետ 157·
Ջիւանշիր իշխան 35· 36· 104· 105· 106· 107· 108· 109· 110· 111· 112· 152· 173·

Ջերու խարան 97. 99. 100.
Ջոխտակ կամ Պետրոսի վանք 194.
Ջուլու գիւղ 16.
Ջուանքու ասպարապետ 123.
Ջրաբերդ ամրոց 100 եւ Մայրաքաղ. 154.
Ջրաբերդ գաւառ 15. 31. 192. 193. 213.
Ռաժթարխան 126.
Ռոստոմբեկեան Թագաւոր 71. 119.
Ռուսաստան 26. 206.
Ռուսք կամ Ռուզք 170. 178.
Սագաստան 17. 18. 21.
Սաթենիկ Թագուհի 19. 53.
Սահակ եպիս. Ամարասայ 121. 123.
Սահակ » Հայոց 185. 186.
Սահակ եւ Համազասպ Արծր. 126.
Սահակ—Սեւադայ 136. 159. 160. 161.
Սահլի Սմբատեան 130. 133. 134. 135.
Սամուէլ Վաչեւունի 92.
Սայտուն իշխան Ջալալեանց 213.
Սանատրուկ Թագ. 52. 62. 63.
Սանահնի վանք 132.
Սանեսան Թագ. 59. 61. 62. 63. 84.
Սասանեան Միհրան 14. 90. 91. 93. 98. 102.
Սասուն 210.
Սադոյ Թագաւոր 64.
Սարայ քաղ. 207. 208.
Սարափան գիւղ 26.
Սարգիս եւ Գրիգոր եպիս. Հաղբատայ 180.
Սարգիս եւ Գրիգոր եպիս. Դօփեանց 136. 194.
Սարգիս եւ Վրդանէս Դուչայ 131. 193. 194.
Սարգիս եւ Վարդան վարդ. ս. Յակոբայ 194.
Սարգիս վարդ. փոխանորդի 194.
Սարգիս եպիս. Շամիրամաձորոյ 185.
Սարգիս Նահատակ խաչենցի 190.
Սարգիս—Բուրդ իշխան 182. 183.
Սարգիս Բ. 183.
Սարմատացիք 24.
Սարով գիւղ 16.
Սեն—Մարտեն 35.
Սերուխա 76.
Սելեւկացիք 43. 44.
Սելջուկեանք 156. 175. 176. 179. 191. 192. 210. 211.
Սենեքերիմ Թագ. Բաղաց 136. 161. 168. 169. 174. 178. 179. 180.
Սենեքերիմ Թագ. Գարդմանի 169. 177. 180. 181.
Սենեքերիմ իշխան եւ Թագ. Փառիսոսի 136. 168. 169. 170. 178.
Սեւադա Թագ. Գարդմանի 181.
Սեւադա Թօփեանց 136. 200.
Սեւադա իշխան Վերին Խաչենի 136.
Սեւորդիք 12. 29. 157.
Սեւ—Հոնք 16. 19. 23. 24. 25. 27. 49. 58. 68. 71. 73. 74. 109. 111. 113. 114. 119. 121. 198.
Սէյկաց ցեղ 208.
Սէյփուլան գիւղ 16.
Սիբերիա 176. 198.
Սիհուն 208.
Սիմէօն եպիս. Հողի գաւառի 121. 123.
Սիւլէյման խան 211.
Սկիւթացիք 21. 23. 25. 44.
Սմբատ Առանշահիկ 14. 135.
Սմբատ Թագ. 53. 160. 161.
Սմբատ զօրավար Հայոց 23.
Սմբատ մեծ իշ. Մեծ-Արեւ. 174. 203.
Սմբատ որդի Եղիկեսի 200.
Սմրղանդ. 198. 206. 207. 208.
Սոլթան—Դուշի 16.
Սուգայլու գետ 26.
Սուրբ Աստուածածնայ վ. 193. 194.
Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ 26. 32. 33. 48. 55. 57. 59. 60. 62. 67. 88. 120
Ս. Գրիգոր. Լուսաւորչի վան. 194.
Ս. » Լուսաւորչէ մայր եկեղ. Պարտաւայ 117.
Ս Եջմիածին 6. 84. 103. 122. 134. 162.
Ս. Մեսրոպ 17. 24. 28. 36. 66. 67. 68. 71. 110. 184. 188
Ս Յակոբայ վանք 193. 195. 205.
Ս. Ստեփաննոսի վանք 193.
Սուքիաս վարդապետ 195.
Սպիտակ—Հոնք—Հեփթաղ—Բուշանք—Թետալք 23. 24. 28. 73. 74. 75. 76. 79. 80. 107.
Սպրամ տիկին Արտներսեհի 130.
Սպրամ » Վարազ—Տրդատայ 120. 121.
Ստեփաննոս եպիս. Եւրիկեան 185.
Ստեփաննոս » Շամքորի 185.
Ստրաբոն 21. 22. 23. 48. 49.
Սրհան քաղաք 51.
Սօդ գաւառ 19. 135. 213.
Վախտանգ Թագաւորազն 192. 193. 194.
Վախտանգ Հայր Ջալալ-Դօլայի 142.



Վախտանգ Վարազմանեան 123. 152.
Վակունիք 15. 130. 135.
Վահագն 42. 43. 44.
Վահան Թագաւորազն 76.
Վահան ի Դարայ Յոհանեան 123.
Վահանայ վանք 182.
Վահէ 43.
Վահրամ իշ. Դօփեան 136. 205.
Վահրամ որդի Բլու-Զաքարէի 152. 183. 191. 192.
Վաղարշակ Ա. Հայոց 9. 14. 21. 43. 44. 45.
Վաղարշակ Բ. Հայոց 54.
Վաղարշ Պարսից 79. 80. 81.
Վաղարշապատ 84.
Վաճառ գիւղաքաղաք 193.
Վան քաղ. 191. 208. 210.
Վաչական Ա. 45. 46. 48. 49. 50. 51.
Վաչական Բ. 64.
Վաչական Գ. 52. 63. 79. 80. 81. 83. 84. 85. 86. 90. 193.
Վաչական իշխան Պարտաւայ 168.
Վաչէ Ա. 52. 54.
Վաչէ Բ. 74. 76. 77. 78. 79. 80. 81.
Վասակ Սիւնի 26. 76.
Վասակ Պահլաւունի 179.
Վատ 27.
Վատնեան դաշտ 10. 45. 62. 156.
Վարագայ վանք Արցախի 194. 195. 204.
Վարազման 102. 104.
Վարազ—Գրիգոր 102. 104. 106. 152.
Վարազ—Պերոժ 14. 104. 112.
Վարազ—Տրդատ Ա. 35. 111. 112. 113. 115. 116. 117. 118. 120. 121. 122. 124. 129. 152
Վարազ—Տրդատ Բ. 130. 152.
Վարանդայ գաւառ 15. 19. 57. 58. 83. 130. 132. 133. 184. 213.
Վարանդայի բերդերն՝ Բրդաձոր. Դաշին—խուր. Ռուխոյ բերդ 154.
Վարաչան քաղ. 114. 115. 116.
Վարդ Ա. 94.
Վարդ Բ. 99. 102.
Վարդանակերտ 19.
Վարդան Վարազ-Տրդատեան 118. 123. 124. 129. 152.
Վարդան Մամիկոնեան 27. 76. 96.
Վրացիք 9. 17. 40. 41. 42. 43. 49. 50. 53. 60. 65. 66. 69. 72. 73. 79. 90. 91. 99. 105. 135. 156. 182. 201. 202.
Վշտասպ 100.
Վրդանէս վարդապետ 103.
Վրդանէս եպիսկոպոս 190.
Վրկանք 22.
Տաթեւի վանք 56. 207.
Տաթեւի սիւն 161.
Տակիտոս 45. 47.
Տաշիր 176.
Տարայիճ 136. 174.
Տաւուշեցի Յովհաննէս եպիսկ. 194. 204.
Տաւուշեցի Յովհան. վանական վարդ. 194. 196. 204.
Տարսու Սելջուկ 176.
Տէր Աբրահամ կաթուղ. Հայոց 33. 91.
Տէր Անանիա Մոկացի կաթուղ. Հայոց 32. 34. 158. 162. 164. 165. 167. 169.
Տէր Բարգէն կաթուղ. Հայոց 80. 84.
Տէր Բարսեղ » » 179. 180. 182.
Տէր Գէորգ Բ. » » 158. 159. 160. 168.
Տէր Գրիգոր Վկայ » » 180.
Տէր Եղիա կաթուղ. Հայոց 33. 121. 122. 168.
Տէր Եսայի » » 128.
Տէր Պետրոս Գետադարձ կաթուղիկոս Հայոց 175. 177.
Տէր Սահակ Գ. կաթուղ. Հայոց 35. 115. 116.
Տէր Սիոն կաթուղ. Հայոց 127. 168.
Տէր Վրթանէս կաթուղ. Հայոց 60.
կաթուղիկոսունք Աղուանից
Տէր Աբաս կաթուղ. 87. 88. 89. 91.
Տէր Աթանաս Ա. կաթուղ. 210.
Տէր Աթանաս Բ. » 212.
Տէր Ահարոն » 128.
Տէր Անաստաս » 126.
Տէր Բժգէն » 187. 189.
Տէր Գրիգոր Ա. կաթուղիկոս 210. 212. 213.
Տէր Գրիգորիս Ա. » 59. 60. 61. 62. 83. 205.
Տէր Գրիգորիս Բ. կաթուղիկոս 182. 185. 186. 189.
Տէր Դաւիթ Ա. կաթուղ. 64.
Տէր Դաւիթ Բ. » 127.
Տէր Դաւիթ Գ. » 127.
Տէր Դաւիթ Դ. » 133. 135.
Տէր Դաւիթ Ե. » 161.
Տէր Դաւիթ Զ. » 34. 164. 169. 170.
Տէր Դաւիթ Է. » 210.

Տէր Դաւիթ Ը. » 212.
Տէր Եղիազար » 35. 36. 110. 112. 115. 116. 117. 121.
Տէր Եսայի Ա. կաթուղ. 65.
Տէր Զաքարիա Ա. » 64. 102. 106.
Տէր Թէոդորոս » 128.
Տէր Կարապետ » 210. 212.
Տէր Ղազար » 64.
Տէր Մատթէոս Ա. » 59. 62.
Տէր Մատթէոս Բ. » 128.
Տէր Մատթէոս Գ. » 210. 212.
Տէր Մարկոս Ա. » 172. 174. 176
Տէր Մարկոս Բ. » 175. 179. 180.
Տէր Միքայէլ » 122. 124. 126. 129.
Տէր Մովսէս Ա. » 64.
Տէր Մովսէս Բ. » 128.
Տէր Մովսէս Գ. » 133.
Տէր Մովսէս Դ. » 172. 173. 174.
Տէր Յովհան Ա. » 65. 160.
Տէր Յովհան Բ. » 104. 106. 107.
Տէր Յովհաննէս Գ. » 133. 177.
Տէր Յովհաննէս Դ. » 164. 165. 169. 170. 171. 172.
Տէր Յովհաննէս Ե. կաթուղ. 182. 185. 190.
Տէր Յովհաննէս Զ. կաթուղ. 187.
Տէր Յովնան » 34.
Տէր Յովսէփ Ա. » 126. 127.
Տէր Յովսէփ Բ. » 135. 158.
Տէր Յովսէփ Գ. » 175. 176. 177.
Տէր Ներսէս Ա. » 33. 117. 120. 121.
Տէր Ներսէս Բ. » 198. 200. 201 203 209.
Տէր Շուփհաղիշէ » 58. 61. 79. 80. 81. 84. 85. 87.
Տէր Ոսկանէս կաթուղ. 106. 107. 110.
Տէր Պանդ » 64.
Տէր Պետրոս Ա. » 169. 172. 174.
Տէր Պետրոս Բ. » 203. 205. 209. 210.
Տէր Սահակ Ա. » 121. 122. 123.
Տէր Սամուէլ » 158. 160.
Տէր Սիմէօն Ա. 121. 122. 123.
Տէր Սիմէօն Բ. 160. 161.
Տէր Սողոմոն Ա. 128.
Տէր Սողոմոն Բ. 128. 133.
Տէր Սուքիաս 203. 205. 209.
Տէր Ստեփաննոս Ա. 179. 180. 181. 182.
Տէր Ստեփաննոս Բ. 185. 186.
Տէր Ստեփաննոս Գ. 189.
Տէր Ստեփաննոս Դ. 198. 203. 209.
Տէր Վրոյ 35. 90. 91. 92. 93. 97. 98. 99. 100. 102. 103.
Տիբերիոս կայսր 46. 47.
Տիգրանակերտ քաղ. 199.
Տիգրան Ա. թագ. 21. 22. 40. 41. 42.
Տիգրան Բ. թագ. 23. 45. 46.
Տիգրանուհի 41.
Տիկին Վարդուհի 128.
Տիրան Բ. թագ. 63.
Տիրան վարդապետ 165.
Տուղրիլ-բէկ 177.
Տումի գիւղ 130. 131. 160. 199.
Տօրոս Ախկոէ 20.
Տրդատ թագ. 54. 55. 57. 59. 62. 63.
Տրի գաւառ 133.
Ցախ քերդաքաղաք 83.
Ցոր բերդ 132.
Փայտառ 16.
Փայտակարան նահանգ. 21. 22. 23. 42. 125.
Փաւստոս ամիրա 175. 176. 177. 179.
Փաւստոսն եղբայր Պարզուհին 179.
Փառիսոս գաւառ 182. 192.
Փառիսոս քաղաք 161. 178. 193.
Փառիսոս գաւառի բերդերն՝ Փառիսոս. Մամռոտ կամ Զարեր. Շամիրամ և Շահփեշեար 155.
Փառիսոսի վանք 193. 195.
Փարսման թագ. 47.
Փիլիպէ հայր Գծնդունի 131.
Փիլիպպոս թագ. 136. 165. 169. 170. 176. 181.
Փիլիպու ամրոցներ 170.
Քաղա-քաղաղաշա գաւառ 91. 127.
Քաղկեդոնի ժողով 33. 84. 85. 123. 168.
Քարաշիրժ 189. 190. 191. 193.
Քարխանայ վանք 193.
Քուռ կամ Քուռի գաւառ 16. 161. 171. 194.
Գաւառին բերդերն՝ Երգեվանք. Ձագաւ. Կամարբեր. Գողթեան. Հաւքար. Դզգալա.
Քոլիգ 132.
Քոնդորան 21. 38.
Օմար ամիրա 190.
Օսմանցիք 156. 176. 210. 211. 212.




Schaefer & Co. Verlagsanstalt G. m. b. H. Charlottenburg 2